Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
մարտի 22-ի N 383 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ 2012-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ 4

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ **6**

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **8**

2. ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ **10**

3. ՓՄՁ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ **12**

3.1 ՓՄՁ ոլորտի իրավիճակի վերլուծություն 12

3.2 Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրները 17

3.3 Մասնավոր հատվածի զարգացման 2012-2015թթ. առաջնահերթությունները 19

4.Զբոսաշրջության զարգացում **21**

4.1 Զբոսաշրջության ոլորտի իրավիճակի վերլուծություն 21

4.2 Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները 22

4.3 Զբոսաշրջության զարգացման 2012-2015թթ. առաջնահերթությունները 22

5. **ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ** 27

5.1 Առողջապահություն 27

5.1.1 Առողջապահության ոլորտի իրավիճակի վերլուծություն 27

5.1.2. Առողջապահական համակարգի կառուցվածքային փոփոխությունները և ներկայիս խնդիրները 30

5.1.3. Առողջապահության ոլորտի զարգացման նպատակները և ուղղությունները 33

5.2 Սոցիալական պաշտպանության 44

5.2.1Քաղաքականության վերլուծություն 44

5.2.2. Իրականացման առաջընթացը 44

6. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ **59**

6.1 Կրթություն 59

6.1.1 Կրթության ոլորտի իրավիճակի վերլուծություն 59

6.1.2 Կրթության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը 67

6.2. ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ **73**

7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ 76

7.1 Գյուղատնտեսության 76

7.1.1 Անասնաբուծություն 77

7.1.2.Սերմնաբուծությունը և տնկարանային տնտեսությունը 81

7.1.3.Անասնաբուժություն 86

7.2. Ոռոգման համակարգ 88

7.2.1. Մարզի ոռոգման համակարգերում լուծում պահանջող հիմնախնդիրները 88

7.2.2. Գյուղատնտեսության ոլորտի նպատակները և ռազմավարության ուղղությունները 97

7.2 **ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ** 106
7.2.1 Բնապահպանական ոլորտի հիմնախնդիրները 106
7.2.2. 2012-2015թթ. զարգացման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքը և խնդիրները 108
7.2.3 Բնապահպանական ոլորտի զարգացման ուղղությունները 2012-215թթ 110

8. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 120
8.1 Տրանսպորտ և ճանապարհաշինություն 120
8.2 Ջրամատակարարում և ջրահեռացում 126
8.3 Գազամատակարարում 129
8.4 Հիդրոէներգետիկա 130
8.5 Քաղաքաշինություն 130
8.5.1 Քաղաքաշինության ոլորտի իրավիճակի վերլուծություն 130
8.5.2 Բազմաբնակարան շենքերի պահպանում 134

9. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ **143**
9.1 Տարածքային կառավարում 143
9.1.1 Վարչատարածքային բաժանում 143
9.1.2 Գերակայություններ և հիմնախնդիրներ 144
9.2 Քաղաքացիական ծառայություն 146
9.3 Էլեկտրոնային կառավարում 147
9.4.Տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում 148
9.4.1 Վարչատարածքային բաժանում և համայնքային կարողություններ 148
9.5 Համայնքային ծառայություն 151
9.6 Տեխնիկական ապահովվածություն 151
9.7 Համայնքային զարգացման ծրագրեր 152
9.8. Քաղաքացիական հասարակություն 153
9.9. Ռիսկերի նվազում 168

10. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ **168**
11. ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ **184**

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ

ՀՀ Տավուշի մարզի առանձնահատկությունները, տնտեսական միջավայրի ու հասարակական կյանքի տարբեր բնագավառներում առկա իրողությունների համակողմանի վերլուծությունները հստակ ուրվագծվում և ներկայացվում են 2012-2015 թվականներին իրականացվող ռազմավարական ուղղություններում, որոնք կխթանեն մարզային ենթակառուցվածքների բնականոն գործունեությունը, մարզի համայնքների շարունակական և համաչափ զարգացմանն ու բնակչության կենսապայմանների բարելավմանը:

Ծրագիրը կազմվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N38 արձանագրային որոշմամբ հաստատված հայեցակարգի համաձայն: 2012-2015թթ. մարզի զարգացման ծրագրի մշակման ընթացքում օգտագործվել են ՀՀ կառավարության կողմից 2005 թվականի մարտի 31-ի թիվ 404-Ն և 2009 թվականի մայիսի 7-ի թիվ 505-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Տավուշի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը:

Տավուշի մարզի զարգացման ծրագիրն ամբողջությամբ մաս է կազմում մեր երկրում ընթացող բարեփոխումների տրամաբանությանը, համապատասխանում է ՀՀ Նախագահի ու Կառավարության՝ մարզերում դրական զարգացումներ ապահովելու ծրագրային մոտեցումներին և դիրքորոշումներին, ինչպես նաև ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարության և խնդրի հետ կապված այլ կարևորագույն փաստաթղթերի հիմնական դրույթներն ու գերակայությունները:

Այս ամենի արդյունքում վստահաբար կարող ենք ընդգծել, որ ծրագիրը լիարժեքորեն կնպաստի տարբեր բնագավառների շարունակական զարգացմանը, ինքնատիպ դերակատարում կունենա մարզի համայնքների գերակա խնդիրների լուծման ու հետագա առաջընթացի ասպարեզներում, կհանդիսանա մարզի տարեգրության առանցքային էջերից մեկը և կդառնա առօրյա աշխատանքի բացառիկ ուղեցույցն ու կողմնորոշիչը:

Մարզի զարգացման ծրագրի կազմման բոլոր փուլերում իր նշանակալի մասնակցությունն է ունեցել և հստակ աջակցություն ցուցաբերել ՀՀ Տարածքային կառավարման նախարարությունը: Ոլորտային աշխատանքային խմբերն իրենց գործունեությունը կազմակերպել և վերլուծություններն իրականացրել են համապատասխան նախարարությունների և պետական կառավարման այլ մարմինների հետ համագործակցության արդյունքում:

Մարզի զարգացման ծրագիրը Տավուշում նաև ներդրումներ կատարելու առաջարկ է՝ ուղղված միջազգային, դոնոր և այլ կազմակերպություններին, գործարարներին, շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց: Տավուշի մարզպետարանն ակնկալում է, որ նշված շահագրգիռ սուբյեկտների համար ծրագրում ընդգրկված խնդիրներն ու առաջարկները հետաքրքրություն կներկայացնեն և բոլոր ներդրողների հետ պատրաստ է փոխշահավետ համագործակցության՝ հանուն Տավուշի մարզի կայուն զարգացման:

Ծրագրի մշակմանն աջակցած պետական կառավարման մարմիններին, Տավուշի մարզի խորհրդի անդամներին, Մարզային զարգացման հանձնաժողովին, ստեղծված աշխատանքային խմբերին և աշխատանքների հաջող իրականացման գործում կարևոր ներդրում ունեցած բոլոր անձանց Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի անունից հայտնում եմ խորին շնորհակալություն:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱՀՀՀ	Առավել աղքատ համայնքների համալիր հետազոտություն
ԱԽ	Աշխատանքային խումբ
ԿԶԾ	Կայուն զարգացման ծրագիր
ԱՄԳ	Աղքատության մասնակցային գնահատում
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԲՊԿՉՆ	Բնական պաշարների կառավարում և չքավորության նվազեցում
ԳԶՄՀ	Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ
ԳԷՖ	Գլոբալ էկոլոգիական ֆոնդ
ԵՄ	Եվրամիություն
ԿՈՀ	Կրթության որակ և համապատասխանություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀՈԲԾ	Հայաստանի հանրային ոլորտի բարեփոխումների ծրագիր
ՀՊԾ	Համաշխարհային պարենի ծրագիր
ՀՏԶԾ	Հայաստանի տարածքային զարգացման ծրագիր
ՀՕՖ	Հայ օգնության ֆոնդ
ՄԱԿ ԶԾ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ՄԱՄՀ	Մարդկային աղքատության մոդիֆիկացված համաթիվ
ՄԳ	Մոնիտորինգ և գնահատում
ՄԶԱՀ	Մարդկային զարգացման ազգային հետազոտություն
ՄԶԾ	Մարզի զարգացման ծրագիր
ՄԶՀ	Մարզային զարգացման հանձնաժողով
ՄԶՄԿ	Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
ՄԶՆ	Միջազգային զարգացման նախարարություն
ՄԺԾԾ	Միջին ժամկետ ծախսային ծրագիր
ՄՄՈՒՀ	Միջին մասնագիտական ուսումնական հաստատություն
ՆԴՀ	Նախադպրոցական հաստատություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՋԱՀԿ	Ջրհավաք ավազանների համայնքահեն կառավարում
ՍԾՏԳ	Սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություն
ՍՄՎ	Սոցիալական մոնիտորինգ և վերլուծություն
ՏԻ	Տեղական ինքնակառավարում
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՀԻ	Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ
ՏՀՏ	Տարածքային հարկային տեսչություն
ՈՒԹՀՎ	Ուժեղ և թույլ կողմեր, հնարավորություններ, վտանգներ
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՓՄՁ ԶԱԿ	ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն
ՓՄՁ ԶՄԽ	ՓՄՁ զարգացման մարզային խորհուրդ
ՕՔԿ	Օքսֆորդի քաղաքական կառավարում
ՖՆ	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Տավուշի մարզի 2012-2015թթ. զարգացման ծրագրի գլխավոր նպատակն է կանխորոշել մարզի սոցիալ-տնտեսական զարգացման այն ուղղությունները, որոնք առավելագույնս նպաստում են եկամտային և մարդկային աղքատության հաղթահարմանը: Այդ ուղղությունների կանխորոշման նպատակով կատարվել է մարզի աղքատության մակարդակի վերլուծություն, որի եզրահանգումները հիմք են հանդիսացել 2012-2015թթ.-ի գերակայությունների, ռազմավարական ուղղությունների սահմանման համար: Դրանք են՝

1) ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացումը: Մասնավոր հատվածի և ՓՄՁ-ների զարգացումը մարզի տնտեսական զարգացման և աղքատության հաղթահարման կարևորագույն ուղղություններից են: Անհրաժեշտ է խթանել գործարար ակտիվությունը մարզում՝ ցուցաբերելով տարածաշրջանային առանձնահատուկ մոտեցում գործարար պլանավորման և կառավարման խնդիրներին և ներգրավելով այդ գործընթացներում ՏԻՄ-երի ու գործարար աշխարհի ներկայացուցիչներին: Ոլորտում առանձնակի կարևորություն է տրվում զբոսաշրջության զարգացմանը, գյուղմթերքի վերամշակման և իրացման կազմակերպությունների մրցունակության բարձրացմանը, ինչպես նաև մասնավոր ներդրումների խթանմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:

2) կրթության, մշակույթի և սպորտի ոլորտի զարգացում: Կրթության բնագավառում առաջարկվում է շարունակել դպրոցների վերանորոգման և նյութատեխնիկական բազայի արդիականացման աշխատանքները, բարձրացնել ուսուցիչների որակավորումը, դպրոցների ինքնակառավարման կարողությունները, զարգացնել ներառական կրթության և նախադպրոցական կրթության համակարգերը, աշխուժացնել մարզամշակութային կյանքը, ինչպես նաև զարգացնել ավագ դպրոցների ցանցը:

3) Առողջապահական և սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության բարձրացումը: Առողջապահության բնագավառում առաջնահերթ է համարվում առաջնային բուժօգնության ծառայությունների բարելավումը և դրանց մատչելիության բարձրացումը հեռավոր գյուղական բնակավայրերում, տարափոխիկ հիվանդությունների, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պայքարի ուժեղացումը, բուժհիմնարկների կառավարման արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև դրանց շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավումը: Սոցիալական պաշտպանության բաղադրիչով առաջարկվում է բարձրացնել բնակչության իրազեկության մակարդակը սոցիալական ծրագրերի վերաբերյալ, բարելավել սոցիալական սպասարկման համակարգի կառավարումը, նյութատեխնիկական պայմանները, ոլորտի մասնագետների կարողությունները, ինչպես նաև ընդլայնել սոցիալական ծառայությունները խոցելի խմբերի համար:

4) Գյուղատնտեսությունը, գյուղի կայուն զարգացումը և բնապահպանական վիճակի բարելավումը: Գյուղատնտեսությունը, որն ապահովում է մարզի բնակչության հիմնական զբաղվածությունը, հետապնդում է գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացման, ազգաբնակչությանը էկոլոգիապես մաքուր սննդամթերքներով ապահովմանը և արդյունքում գյուղական աղքատության կրճատման նպատակը: Գյուղատնտեսության ոլորտի ռազմավարությունը նպատակաուղղված է մարզի ոռոգման համակարգի բարելավմանը, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և արտադրության արդյունավետության բարձրացմանը, գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ավելացմանն ու հիվանդությունների կանխմանը, անասնապահական մթերքի որակի և արտադրության արդյունավետության բարձրացմանը, հողային և մարդկային ռեսուրսների լիարժեք օգտագործման ապահովմանը, հողային ռեսուրսների կայուն կառավարմանը, որն ուղղված է արոտավայրերի և գյուղատնտեսական նշանակության հողերի պահպանությանը, բարելավմանը

և նպատակային օգտագործման ապահովմանը, գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների բարելավմանը, գյուղմթերքի իրացման հնարավորությունների ընդլայնմանը, գյուղացիական տնտեսությունների մասնագիտական կարողությունների բարձրացմանը, գյուղատնտեսության վարկավորման մատչելիության բարձրացմանը և գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի զարգացմանը: Ծրագրի գյուղատնտեսության բաղադրիչն առաջարկում է նաև խթանել ոչ գյուղատնտեսական գործունեությունը գյուղական բնակավայրերում, օրինակ՝ հանքարդյունաբերությունը, արհեստագործությունը, զբոսաշրջությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք, բնականաբար, կնպաստեն գյուղաբնակների զբաղվածության աճին և կենսամակարդակի բարձրացմանը: Մարզի բնապահպանական վիճակի բարելավման ուղղությամբ ՄԶԾ-ն առաջարկում է մի շարք խնդիրներ, որոնց արդյունավետ լուծումը կնպաստի հետևյալ արդյունքների ապահովմանը՝ մարզի անտառային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում, ԲՀՊՏ-ի կառավարման համակարգի կատարելագործում, արտադրական և կենցաղային թափոնների տեղադրման համակարգի կատարելագործում, հողային և ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում, հողային ռեսուրսների օգտագործման և պահպանության արդյունավետության բարձրացում, հողի բերրի շերտի օգտագործման հետ կապված վերահսկողության ապահովում և բնապահպանական խնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացում:

5) Համայնքային ենթակառուցվածքների բարեկարգումը: ՄԶԾ-ի համայնքային ենթակառուցվածքների ոլորտը բաղկացած է 5 բաղադրիչներից՝ ճանապարհաշինություն, խմելու ջրամատակարարում և ջրահեռացում, ոռոգում, գազիֆիկացում և քաղաքաձինություն: Նշյալ ենթակառուցվածքների վերականգնումն ու զարգացումն ուղղակիորեն ազդում են ինչպես տնտեսության զարգացման, այնպես էլ սոցիալական ծառայությունների հասանելիության և որակի վրա, և հանդիսանում են մարզի աղքատության հաղթահարման կարևոր նախապայման:

6) Տարածքային կառավարման քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացումը, տեղական ինքնակառավարման ուժեղացումը և քաղաքացիական հասարակության ակտիվության խրախուսումը:

2. Սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական ուղղությունները ՄԶԾ-ում ներկայացված են հետևյալ կառուցվածքով՝

1) ներկա իրավիճակի վերլուծություն՝ 2009-2011թթ.-ին ոլորտում իրականացված աշխատանքների նկարագրություն և վերլուծություն, հիմնախնդիրների և դրանց միջև պատճառահետևանքային կապերի բացահայտում,

2) 2012-2015թթ.-ի ոլորտային նպատակների և զարգացման ռազմավարության մշակում,

3) ռազմավարական ծրագրերի/միջոցառումների ֆինանսավորում,

4) համապատասխան ոլորտի զարգացման ծրագրերի տրամաբանական հենքի պատրաստում:

3. Վերջինս կապում է ոլորտային նպատակները, խնդիրները, միջոցառումների կենսագործումից ակնկալվող արդյունքները միջանկյալ և վերջնական ցուցանիշների հետ, ինչպես նաև նկարագրում է նպատակներին հասնելու կարևոր նախապայմաններն ու հնարավոր խոչընդոտները, ռիսկերը: Տրամաբանական հենքը կազմում է ՄԶԾ-ի տարեկան աշխատանքային պլանի բաղկացուցիչ մասը, որը տարին երկու անգամ ենթարկվում է մոնիտորինգի:

4. Մոնիտորինգի և գնահատման համակարգը բաղկացած է 4 տարրերից՝

1)քաղաքականության վերլուծություն,
2)ՄԶԾ-ի ցուցանիշների և թիրախների վերանայում,
3)մասնակցային մոնիտորինգ և գնահատում,
4)ոլորտային ազդեցության գնահատում:

5. Առաջին երկուսը՝ քաղաքականության վերլուծությունը և ՄԶԾ-ի ցուցանիշների ու թիրախների վերանայումը իրականացվում են մարզպետարանի մոնիտորինգի և գնահատման խմբի կողմից, իսկ վերջին երկուսը՝ մասնակցային մոնիտորինգն ու ոլորտային ազդեցության գնահատումը՝ ՀԿ-ների և անկախ փորձագետների կողմից: Նշենք, որ ՄԶԾ-ի մոնիտորինգի և գնահատման աշխատանքային խումբը ձևավորվել է ՀՀ Տավուշի մարզպետի թիվ 48-Ա կարգադրությամբ 2011թ.-ի հուլիսի 1-ին: Խումբը կազմավորված է մարզպետարանի ստորաբաժանումների մասնագետներից և ղեկավարվում է մարզպետի տեղակալի կողմից: Որպես համակարգի ինստիտուցիոնալացման կարևոր պայման՝ մոնիտորինգի գործառույթն ամրագրվել է մարզպետարանի համապատասխան աշխատակիցների պաշտոնների անձնագրերում: Մոնիտորինգի վերոնշյալ չորս տարրերն օգնում են տարածքային իշխանություններին առավել արդյունավետ կառավարել մարզի զարգացման ծրագիրը, հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի տեսակետներն ու կարծիքներն իրականացված աշխատանքների վերաբերյալ և դրանց հիման վրա նախանշել հետագա անելիքները:

2. ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

6. ՀՀ Տավուշի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիս-արևելյան հատվածում: Այն ընդգրկում է Իջևանի, Դիլիջանի, Նոյեմբերյանի և Բերդի (Շամշադինի) տարածաշրջանները և 5 քաղաքներ՝ Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան, Բերդ, Այրում: Մարզը հարավում սահմանակից է ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերին, արևմուտքում՝ ՀՀ Լոռու մարզին, հյուսիսում՝ Վրաստանին և արևելքում՝ Ադրբեջանին: Մարզն ունի մոտ 400կմ միջպետական սահման, որից 350կմ-ը Ադրբեջանի Հանրապետության հետ, 50-ը՝ Վրաստանի:

7. Մարզկենտրոնն է Իջևան քաղաքը: Մարզի տարածքը կազմում է 2704ք.կմ., ընդհանուր հողատարածությունը՝ 270393հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 105931.2հա կամ ընդհանուր տարածքի 39.2%-ը: Մարզը զբաղեցնում է ՀՀ տարածքի 9.1%-ը, բնակչության խտությունը 1ք.կմ-ի վրա կազմում է 50 մարդ: Մարզն ունի 5 քաղաքային և 57 գյուղական համայնքներ: Համայնքներից 43-ը ՀՀ կառավարության 17.11.1998թ.-ի թիվ 713 որոշմամբ ճանաչվել են սահմանամերձ:

8. Բնակչությունը կազմում է 134.4հազ. մարդ, որից 52.6հազ. բնակվում են քաղաքներում: Տղամարդիկ կազմում են բնակչության 48.9%-ը, կանայք՝ 51.1%-ը: Մարզի տնտեսապես ակտիվ բնակչության թիվը կազմում է 53.5հազ. մարդ, ոչ ակտիվ բնակչության թիվը՝ 35.0հազ. մարդ: Տնտեսապես ակտիվների մեջ 49.4հազ. զբաղվածներ են, 4.1հազ.՝ գործազուրկ:

9. ՀՀ Տավուշի մարզը տարածվում է Փոքր Կովկասի լեռնաշղթաների արտաքին շարի վրա (Վիրահայոց, Գուգարաց և Միափորի լեռներ): Ծովի մակերևույթից ամենացածր կետը (ՀՀ ռելիեֆի ամենացածր կետը) գտնվում է Դեբեդավան գյուղի մոտ՝ 380մ, ամենաբարձր կետը Միափորի լեռնաշղթայի Մուրղուզ լեռն է՝ 2993մ: Մարզը գտնվում է ՀՀ չափավոր խոնավ

տարածաշրջանում: Արևափայլքի տարեկան տևողությունը 1900-2000 ժամ է: Ամառները լինում են տաք, ձմեռները՝ մեղմ: Գետերը պատկանում են Կասպից ծովի (Քուռ գետի) ավազանին և սնվում են հալոցքային, ստորերկրյա և անձրևային ջրերից: Բնական լիճը Դիլիջանի մոտ գտնվող Պարզ լիճն է:

10. Մարզի բնությունը գեղատեսիլ է: Ընդհանուր մակերեսի 51%-ը զբաղեցնում են խառը անտառները, որոնք աչքի են ընկնում բուսական և կենդանական աշխարհի բազմազանությամբ, բնական ժառանգության անզուգական հուշարձաններով:

11. Մարզի բնության, այդ թվում անտառային էկոհամակարգերի եզակի կենդանի և անկենդան բաղադրիչների պահպանության և կայուն օգտագործման նպատակով ստեղծվել են բնության հատուկ պահպանվող տարածքներ / <<Դիլիջան >>ազգային պարկ, <<Արջատխլենու >>, <<Իջևանի >>և <<Գանձաքարի / Վերին Աղդան / պետական արգելավայրեր, թվով 12 երկրաբանական և կենսաբանական բնության հուշարձաններ /՝ ինչպես նաև Իջևանի ու Բերդի <<Սորաններ >> դենդրոպարկերը >>:

12. Մարզի և հատկապես Աղստևի հովտի բնակլիմայական պայմանները (մեղմ կլիմա, թթվածնով հարուստ լեռնային մաքուր օդ, հանքային բուժիչ ջրեր, անտառներ, դեղաբույսերով հարուստ լեռնաշխարհ) չափազանց նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգնման և միջազգային տուրիզմի ծավալման համար: ՀՀ Տավուշի մարզի տարածքը չափազանց հարուստ է պատմամշակութային կառույցներով՝ վանքային համալիրներ, բերդեր, խաչքարեր, կամուրջներ, դամբարաններ, հուշակոթողներ, հուշաղբյուրներ: Հատկանշական են Գոշավանքը, Հաղարծնի ու Մակարավանքի համալիրները, Տավուշի բերդը և այլն: Տավուշի մարզում է գտնվում ՀՀ ամենախոշոր աղյուսակերտ եկեղեցին՝ Կիրանցի վանքը: 1998թ.-ին մարզկենտրոն Իջևանում օծվեց ս.Ն.Շնորհալի եկեղեցին:

13. Մարզի տարածքով հոսում են բազմաթիվ մեծ և փոքր գետեր (Աղստև, Պաղ ջուր, Տավուշ և այլն): Գետերի միջին տարեկան հոսքը 3խմ/վրկ է, որը կազմում է 530 մլն խմ ջրային պաշար: 1970-1980թթ.-ին ոռոգման նպատակով կառուցվել են Ջողազի (45 մլն խմ), Հախումի (12 մլն խմ), Տավուշի (5 մլն խմ), Այգեձորի (4 մլն խմ և Խաշթառակի (0.12 մլն խմ) ջրամբարները: Ընդհանուր ծավալը կազմում է 67.12 մլն խմ: Ոռոգման ջրանցքերի երկարությունը 310կմ է, ներտնտեսային ցանցերինը՝ 1460կմ: Մարզում կառուցված են 50 ջրհան կայաններ:

14. Մարզի կենտրոնով անցնում է Հյուսիսային Կովկաս-Թբիլիսի-Երևան գազատարը: Մարզով ձգվում են 152.6կմ միջպետական նշանակության, 459.6 կմ հանրապետական նշանակության /որից 282.6 կմ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ենթակայության, 177 կմ-ը՝ մարզի ենթակայության/, 189 կմ մարզային նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ: Աղստևի ձորով անցնում է Իջևան-Հրազդան երկաթուղու 70կմ հատվածը: Հյուսիսային սահմանի երկայնքով՝ Դեբեդի ափով անցնում է Երևան-Թբիլիսի երկաթուղու 7կմ հատվածը:

15. Մարզի բնակլիմայական պայմանները բարենպաստ են այգեգործության, մեղվաբուծության, ծխախոտագործության, կերարտադրության զարգացման համար:

16. Մարզը համեմատաբար աղքատ է օգտակար հանածոներով: Արդյունաբերական նշանակություն ունեն բենտոնիտային կավը, կրաքարերը, վիմագրական քարը, դոլոմիտը, ֆելզիտը: Աղստև գետի հովիտը հարուստ է հանքային ջրերով, որոնք նաև շշալցվում են:

17. Մարզի արդյունաբերության առաջատար ճյուղը մշակող արդյունաբերությունն է: Առավել գերակշռող են սննդարդյունաբերությունն ու փայտամշակումը: Մարզում արտադրվում է բենտոփոշի, գորգեր, ուղեգորգեր, երեսապատման սալիկներ, գինիներ, պահածոներ և այլն: Մարզում արտադրվող արդյունաբերական արտադրանքից արտաքին շուկա են արտահանվում գինիներ, հանքային ջուր, քարե և փայտե արտադրատեսակներ: 2011թ.-ի տվյալներով մարզում գործում են 1028 մանրածախ առևտրի օբյեկտներ, այդ թվում՝ 992 խանութ և կրպակ, 2 գյուղատնտեսական արտադրանքի և 1 սպառողական ապրանքների շուկաներ, 33 այլ օբյեկտներ:

18. Տավուշի մարզում գործում են 81 հանրակրթական դպրոցներ, /որից չորսը ավագ դպրոցներ/ մեկ արհեստագործական ուսումնարան, 46 նախադպրոցական հաստատություններ, պետական 6 միջին մասնագիտական հաստատություններ, 2 պետական և 1 ոչ պետական ԲՈՒՀ-եր, ինչպես նաև 16 երաժշտական և արվեստի դպրոցներ:

19. Առողջապահության համակարգը ներկայացված է մարզային ենթակայության 26 բուժհիմնարկներով, այդ թվում՝ 4 ԲԿ-ներով, 3 առողջության կենտրոններով, 18 առողջության առաջնային պահպանման կենտրոն, 1 ատամնաբուժարան:

20. Մարզում հրապարակվում են մի շարք մարզային, համայնքային, մասնագիտական և ուսանողական ամսաթերթեր և երկշաբաթաթերթեր: Գործում են երկու տեղական և մեկ մարզային հեռուստաալիքներ:

3. ՓՄՁ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

3.1 ՓՄՁ ոլորտի իրավիճակի վերլուծություն

21. ՓՄՁ պետական աջակցության ուղղությամբ իրականացվող հետևողական քաղաքականության արդյունքում վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է ՓՄՁ ոլորտը բնութագրող ցուցանիշների դինամիկ աճ: 2009թ. ՓՄՁ տեսակարար կշիռը երկրի համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) կազմել է 42.5%՝ 2008թ. 41.7% դիմաց՝ կրկնակի գերազանցելով 1999 թվականի մակարդակը: Դրա հետ մեկտեղ, ավելացել է նաև ՓՄՁ ոլորտի մասնաբաժինը երկրի արտահանման ծավալում՝ կազմելով 17.9% 2008 թվականի 17.0%-ի և 2003 թվականի 14.3%-ի դիմաց:

22. Նշանակալի է ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը նոր աշխատատեղերի ստեղծման գործում: 2009թ. ընթացքում հանրապետությունում ստեղծված ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը կազմել է ավելի քան 14 հազար, որի արդյունքում ստեղծվել է շուրջ 18 հազար նոր աշխատատեղ, որից 53.2%-ը կամ 9,5 հազարը՝ ՀՀ մարզերում: Հայաստանում ՓՄՁ զարգացման ինդեքսը հաշվարկված ՄԱԿ-ի կողմից սահմանված մեթոդոլոգիայով, 2009 թվականին կազմել է 404.7, որը 2002 թվականի համեմատությամբ ավելացել է շուրջ 7 անգամ:

Աղյուսակ 3.1. Գրանցված ՓՄՁ սուբյեկտների մարզային բաշխվածքն ըստ անհատ ձեռնարկատերերի և տնտեսական գործունեության իրավունք ունեցող առևտրային իրավաբանական անձանց (01.01.2010թ. դրությամբ)

	ՓՄՁ սուբյեկտներ					
	ԱՁ		ԻԱ		Ընդհամենը	
	քանակ	%	քանակ	%	քանակ	%
ԸՆԴԱՄԵՆԸ, ՀՀ	**73,693**	**100%**	**59,230**	**100%**	**132,923**	**100%**
Արարատ	5,394	7,3%	2,763	4,7%	8,157	6,1%
Արմավիր	6,187	8,4%	2,597	4,4%	8,784	6,6%
Գեղարքունիք	3,369	4,6%	3,334	5,6%	6,703	5,0%
Լոռի	5,904	8,0%	4,248	7,2%	10,153	7,6%
Կոտայք	6,223	8,4%	4,522	7,6%	10,745	8,1%
Շիրակ	4,046	5,5%	2,899	4,9%	6,946	5,2%
Սյունիք	3,872	5,3%	2,872	4,8%	6,744	5,1%
Վայոց Ձոր	1,541	2,5%	795	1,3%	2,636	2,0%
Տավուշ	**3,698**	**5,0%**	**1,906**	**3,2%**	**5,603**	**4,2%**

23. 2009թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ Տավուշի մարզում գրանցված է եղել 5402 ՓՄՁ սուբյեկտ,որը կազմում է հանրապետությունում գրանցված ՓՄՁ սուբյետների 4.1% -ը: Միայն 2009թ. ընթացքում ՀՀ Տավուշի մարզում գրանցվել է 544 ՓՄՁ սուբյեկտ՝ ապահովելով շուրջ 602 նոր աշխատատեղ: ՀՀ Տավուշի մարզում 1000 բնակչի հաշվով գրանցված ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը 2009թ. կազմել է 40:

24. 01.01.2011թ-ից լուծարվել են ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի Նոյեմբերյանի և Բերդի ներկայացուցչությունները՝ պայմանավորված հիմնադրամի ֆինանսական սուղ միջոցների պատճառով:

ՓՄՁ աջակցման գործընթաց



25. Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի գործունեությունն ուղղված է.

1) Պետական կառույցների և ՓՄՁ-ների միջև կապի հաստատմանը,

2) ՓՄՁ-ների գործունեության արդյունավետության և մրցունակության բարձրացմանը,

3) ՓՄՁ-ների համար բիզնեսի զարգացման ծառայությունների մատչելիության ապահովմանը,

4) ՓՄՁ-ների համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության ապահովմանը,

5) Նորարարական, հետազոտական և զարգացման ծրագրերի իրականացմանն աջակցությանը,

6) Նոր ՓՄՁ-ների ստեղծմանն աջակցությանը,

7) ՓՄՁ-ների գործունեության միջազգայնացմանը:

26. Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնը ՓՄՁ սուբյեկտներին աջակցություն է ցուցաբերում հետևյալ աջակցության ծրագրերի միջոցով.

1) Հայաստանում գործարարությամբ զբաղվելու հետ կապված ցանկացած տեղեկատվության տրամադրում

2) Բիզնես խորհրդատվության և ուսուցման ապահովում

3) Իրացման խթանում

4) Սկսնակ գործարարներին աջակցություն

5) Հետազոտական և զարգացման ծրագրերի իրականացմանն աջակցություն

6) Վարկային երաշխավորությունների տրամադրում

7) Սեփական կապիտալի ֆինանսավորում

8) Սկսնակներին վարկային երաշխավորությունների տրամադրում

9) Վարկային տոկոսադրույքի մասնակի ֆինանսավորում

27. Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ–ը իր ծառայությունները մատուցում է մրցութային կարգով ընտրված մասնագիտացված գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջոցով: Տրամադրվող ծառայությունները համաֆինանսավորվում են ազգային կենտրոնի կողմից:

28. Կազմակերպությունների Եվրոպական Ցանցը Եվրահանձնաժողովի նոր նախաձեռնություններից է, որի նպատակն է գործարար աջակցություն տրամադրել կազմակերպություններին Եվրոպայում և նրանից դուրս: Կազմակերպությունների եվրոպական ցանցը, որը պաշտոնապես սկսել է իր գործունեությունը 2008 թվականի փետրվարից, իր մեջ ներառում է ավելի քան 44 անդամ երկրների շուրջ 600 գործընկեր կազմակերպություններ, տրամադրելով բազմաթիվ մասնագիտացված գործարար ծառայություններ իր շահառու կազմակերպություններին: Այն աջակցություն և խորհրդատվություն է տրամադրում գործարարներին և օգնում առավելագույնս օգտագործել

Եվրամիության կողնից ընձեռած հնարավորությունները: Սկսած 2008 թվականից Հայաստանի ՓՄՁ ԶԱ –ը դարձել է Հայաստանում ԶԵՑ-ի հյուրընկալող գործընկեր կազմակերպություն:

29. ԶԵՑ-ը առաջարկում է հետևյալ ծառայությունները.

1) տեղեկատվության տրամադրում Եվրամիության քաղաքականության, օրենսդրության, ստանդարտների, ֆինանսավորման հնարավոր աղբյուրների, գործարար համագործակցության հնարավորությունների և ԵՄ այլ ընդհանուր հարցերի վերաբերյալ,

2) աջակցություն կազմակերպություններին նոր գործարար համագործակցությանուղղության որոշման, շուկայի հետազոտությունների և պոտենցիալ գործընկերների հայտնաբերման գործում,

3) աջակցություն բանակցությունների վարման և համագործակցության համաձայնագրերի կնքման գործընթացներում,

4) աջակցություն կազմակերպություններին միջազգային շուկայում գործունեության իրականացման համար իրենց պատրաստվածության և հնարավորությունների գնահատման առումով,

5) աջակցություն նորարարություններ կիրառող ՓՄՁ սուբյեկտներին իրենց նախաձեռնությունների փորձարկման և կոմերցիալիզացիայի գործում,

6) հետադարձ կապի ապահովում, արձագանքում կազմակերպությունների կողմից բարձրացված խնդիրներին:

30. ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագրի շրջանակներում ՀՀ Տավուշի մարզում 2008թ., 2009թ., և 2010թ.-ին ընդհանուր տրամադրվել է 25 488 976 ՀՀ դրամ գումարի երաշխավորություն: Վարկային երաշխավորություն են ստացել 3 ՓՄՁ սուբյեկտ՝ ապահովելով 69 900 000 ՀՀ դրամի վարկային փաթեթ: Վարկային երաշխավորությունները տրամադրվել են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործընկեր Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկի (2) և ՎՏԲ բանկի (1) միջոցով:

Ինչպես նաև 8 ՓՄՁ սուբյեկտներ՝ մարզի սահմանամերձ գյուղերից ստացել են, վարկային տոկոսների մասնակի սուբսիդավորման աջակցություն:

31. Նույն ժամանակահատվածում ՀՀ Տավուշի մարզի Բերդ, Նոյեմբերյան և Իջևան քաղաքներում իրականացվել է սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցության 4 ծրագիր: Ծրագրերի շրջանակներում աջակցություն է տրամադրվել ՀՀ Տավուշի մարզի 64 սկսնակ գործարարի, որոնցից 13-ն ստացել են վարկային երաշխավորություններ և արդեն իսկ ծավալել են գործունեություն՝ ստեղծելով 18 նոր աշխատատեղ:

32. 2008-2010թթ-ին 865 ՓՄՁ սուբյեկտների խորհրդատվական աջակցություն է տրամադրվել օրենքներում կատարվող փոփոխությունների, արտաքին տնտեսական գործունեության իրականացման, հոսքագծերի և սարքավորումների ձեռքբերման, նորարարությունների և նոր տեխնոլոգիաների ներդրման, գործընկերների որոնման, ֆինանսական միջոցների ներգրավման և կառավարման, լիցենզավորման, ստանդարտացման, գործարար և ներդրումային ծրագրերի մշակման, հաշվապահական հաշվառման և այլ հարցերով:

33. 2008-2010թթ-ին ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված տեղեկատվական և խորհրդատվական աջակցության այն մասը, որը պահանջում է նեղ մասնագիտական հմտություններ, իրականացվել է մրցույթով ընտրված գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների

միջոցով: 35 ՓՄՁ սուբյեկտ ստացել են նեղ մասնագիտական հմտություններ պահանջող խորհրդատվական աջակցություն ֆինանսների կառավարման, հաշվապահական հաշվառման, հարկային և աշխատանքային օրենսդրության վերաբերյալ:

34. 2008-2010թթ-ին 186 ՓՄՁ սուբյեկտ ուսուցողական աջակցություն է ստացել՝ մասնակցելով 'Ձեռներեցության հիմունքներ և միկրոպլանավորում', 'Գործարարության հիմունքներ', 'ՀՀ հարկային օրենսդրության պարզաբանումներ', 'ՀՀ աշխատանքային օրենսդրության պարզաբանումներ' և այլ թեմաներով դասընթացներին:

35. 2008-2010թթ-ին շուկաներ առաջմղմանն աջակցության ծրագրի շրջանակներում մարզից 32 ՓՄՁ սուբյեկտներ ստացել են գովազդային վահանակների պատրաստման, պիտակների տպագրման, ԻՍՈ որակի կառավարման համակարգի ներդրման, ինտերնետային կայքի պատրաստման, ֆիրմային անվանումով տուփերի պատրաստման և այլ աջակցություն:

36. Գործող ՓՄՁ սուբյեկտների և սկսնակ գործարարների բաշխվածությունն ըստ աջակցման ուղղությունների 2008-2010թթ. ժամանակահատվածում /Աղյուսակ 3.2/, որտեղ հստակ երևում է, որ դեռևս սկսնակների ներգրավվածությունն աջակցման ծրագրերում քանակական առումով (77 սկսնակ 1129 գործող ՓՄՁ սուբյեկտների դիմաց) չափազանց ցածր է:

Աղյուսակ 3.2

ՓՄՁ սուբյեկտներ Աջակցման գործիքներ	Ընդամենը Աջակցություն ստացած սուբյեկտներ	Գործող ՓՄՁ-ներ	%	Սկսնակ գործարարներ	%
Ֆինանսական աջակցություն	24	11	45.8	13	54.2
Տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական ծրագրեր	1150	1086	94.4	64	5.6
Շուկաների առաջմաղման աջակցություն	32	32	100	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ	1206	1129	93.6	77	6.4

37. Այս անհամաչափությունը խորանում է հատկացված ֆինանսական աջակցության գումարային առումով: Այսպես, գործող 3 ՓՄՁ-ներին հատկացված ընդհանուր վարկային երաշխիքների գումարը կազմել է 25 488 976 ՀՀ դրամ, իսկ թվով 13 սկսնակներինը՝ 20 160 257 դրամ, չնայած նշեմ, որ նախկին տարիների համեմատությամբ սկսնակների ֆինանսավորման մասնաբաժինը ընդհանուրում, բավականաչափ աճել է, այնուամենայնիվ առկա ֆինանսական ռեսուրսների վերաբաշխումը հօգուտ սկսնակների կարող է զգալիորեն ավելացնել շահառու սկսնակների քանակը:

38. Ֆինանսական և ոչ-ֆինանսական աջակցություն ստացածների հարաբերությունը՝ 24 և 1182 (2% և 98%), վկայում է այն մասին, որ անհրաժեշտություն կա հանգամանորեն վերլուծել ոչ-ֆինանսական աջակցության գործիքների մատուցման արդյունավետությունը: Այս առումով անհրաժեշտ է, որ ՓՄՁ

զարգացման մարզային խորհուրդն ստեղծի և պարբերաբար վերլուծի ծրագրի շահառուների իր տեղեկատվական բազան:

39. Աջակցություն ստացածների տարածքային բաշխվածության մեջ առայժմ գերակշռում են մարզկենտրոնում և քաղաքային համայնքներում գործող ՓՄՁ-ները: Ծրագրի սկզբնական փուլում այս հանգամանքը թերևս հասկանալի է, սակայն հետագայում պետք է տարածաշրջանների ավելի համամասնական ընդգրկում ապահովել: Դա միաժամանակ հնարավորություն կստեղծի ծրագրի աջակցման մեխանիզմներն ավելի հասանելի դարձնել գյուղական համայնքների համար, որտեղ գործող ՓՄՁ-ների քանակը դեռևս չնչին է: Անհրաժեշտ է հետևողականորեն մեծացնել գյուղական համայնքներից շահառուների տեսակարար կշիռը ՓՄՁ աջակցության հաջորդ տարիների պլաններում:

40. Ծրագրի շահառուների շրջանակներն ընդլայնելու գործում կարևոր դեր ունեն կատարելու տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց մասնակցությունը ՓՄՁ աջակցման ծրագրերի պլանավորման և իրագործման գործընթացներում նախատեսված է, սակայն դեռևս թույլ է դրսևորվում:

3.2 Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրները

41. 2008-2011թթ. ՄՋԾ ՓՄՁ աջակցման ծրագիրը զգալիորեն բարելավեց վարկային ռեսուրսների հասանելիությունը մարզի գործող և սկսնակ այն ՓՄՁ-ների համար, որոնք գրավային ռեսուրսների անբավարարության պատճառով չէին կարողանում օգտվել վարկավորման առկա հնարավորություններից: Ծրագրի առաջին տարվա արդյունքում ըստ փորձագիտական գնահատումների մարզում մոտ 10%-ով աճեցին մեկ տարի և ավելի ժամկետով ՓՄՁ-ներին տրամադրված վարկային միջոցները և 25%-ով ավելացավ վարկառու ՓՄՁ-ների թվաքանակը:

42. Ծրագրով իրականացված նախաձեռնությունները, աջակցելով հանդերձ շահառու ՓՄՁ-ների գործունեության բարելավմանը, դեռևս բավարար չեն էականորեն նպաստելու համար մարզի մասնավոր հատվածի կայուն և մրցունակ զարգացմանը:

43 .2009-10թթ. ընթացքում մի շարք տարաբնույթ հարցումներ են իրականացվել գործարար համայնքի ներկայացուցիչների շրջանում, որոնց արդյունքում պարզ է դառնում, որ բանկերից վարկ ստանալը դժվար չէ, սակայն առաջարկվող վարկերի պայմանները, տոկոսադրույքները և վարկային մասնագետների մեծ մասի ոչ լիարժեք կոմպետենտությունն իրենց գործին, թույլ չեն տալիս լուրջ կապիտալ ներդրումներ կատարել, կամ ընդհանրապես ցանկալի պայմաններով և ժամկետներում վարկ ստանալ և կամ ընդհանրապես այն ստանալ: Նրանց կարծիքով այդ պայմաններով վարկերը նպաստավոր են միայն առևտրի և ծառայությունների ոլորտներում, իսկ շինարարության և արտադրության ոլորտներում նոր սարքավորումների ձեռքբերման և այլ կապիտալ ներդրումներ կատարելու համար անհրաժեշտ են ավելի երկարաժամկետ վարկեր (5-7 տարի), ավելի ցածր տոկոսադրույքով և մարման արտոնյալ ժամանակահատվածով:

44. Ներդրումային ռեսուրսների սահմանափակ հնարավորություններից բացի որպես զարգացման խոչընդոտներ են նշվում նոր շուկաներ մուտք գործելու դժվարությունները: Հարցվողների մոտ 70% շուկան նույն տարածաշրջանում է, իսկ 25%-ինը նույն մարզում: Միայն 5% է մարզից դուրս՝ այլ մարզերում կամ արտասահմանում իրացնում իրենց ապրանքները:

45. Հարցմանը մասնակցած ՓՄՁ-ների կարծիքով մասնավոր սեկտորի զարգացման խոչընդոտ է նաև ձեռներեցների կառավարման գիտելիքների և փորձի պակասը, մասնավորապես ֆինանսական

կառավարման և շուկայավարման հարցերում: Փորձառու գործարարներն իրենց հերթին զարգացման կարևոր խոչընդոտ են համարում մասնագետների, հատկապես միջին օղակի կառավարիչների պակասը:

46. Ըստ փորձառու գործարարների, մասնավոր ներդրումներ ներգրավելու համար անհրաժեշտ է նաև բարելավել տարածաշրջաններում ենթակառուցվածքների վիճակը՝ տեղական ճանապարհները, ջրամատակարարումը և այլն:

47. Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ վերջին տարիներին մարզում գործարար միջավայրի որոշակի բարելավումներ են նկատվում: Սակայն մասնավոր հատվածի զարգացման և հատկապես մասնավոր ներդրումների ներգրավման առումով լուրջ խոչընդոտ են կարգավորող մարմինների (հարկային, լիցենզավորման, անշարժ գույքի կադաստրի և այլն) կողմից գործարարների իրավունքների ոտնահարման և վարչական մեթոդներով մրցակցային դաշտի սահմանափակման դրսևորումները:

48. Համայնքի ղեկավարների մեծամասնության կարծիքով գործարարությունը դեռևս լուրջ ազդեցություն չի ունեցել համայնքի սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման վրա, քանի որ այն դրսևորվել է հիմնականում փոքր և գերփոքր ձեռնարկատիրությամբ:

49. Մարզի համայնքներում մասնավոր հատվածը ձևավորված է

1) Առևտրի ոլորտում՝ մանրածախ առևտրի կետեր և խանութներ,

2) Ծառայությունների ոլորտում՝ կենցաղային ծառայություններ, իսկ Դիլիջանի և Իջևանի տարածաշրջաններում՝ նաև զբոսաշրջային,

3) Արտադրության ոլորտում՝ տեղական գյուղմթերքի վերամշակում և տեղական հումքից շինանյութերի արտադրություն,

4) Շինարարության ոլորտում՝ փոքրածավալ շինարարություն և վերանորոգման աշխատանքներ:

3.3. Մասնավոր հատվածի զարգացման 2012-2015թթ. առաջնահերթությունները

50. Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության հետագա զարգացման համար կարևոր է, շարունակելով առանձին ՓՄՁ-ների մակարդակով ցուցաբերվող աջակցությունը, անցում կատարել առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով մասնավոր հատվածի զարգացման հետևյալ ծրագրային միջոցառումների իրականացմանը.

1)ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում: Ծրագրերի մշակման առաջին փուլում պետք է հստակեցվեն գործարարության զարգացման այն ռեսուրսները, որոնք տարածաշրջանի համայնքները պատրաստ են տրամադրել մասնավոր ներդրումները խրախուսելու համար:

2) Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում: Մասնավոր ներդրումների ներհոսքին նպաստող մեկ այլ կարևոր գործոն կարող է հանդիսանալ մարզի համար գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի ընդունումը: Հայտնի է, որ մարզի բոլոր տարածաշրջանների համար գերակա ոլորտներ են հանդիսանում գյուղմթերքի վերամշակումը և իրացումը, ինչպես նաև զբոսաշրջությունը և հարակից ծառայությունները: Սակայն, որպեսզի ներդրումներն արդարացված լինեն և նվազի դրանց ռիսկայնությունը, անհրաժեշտ է հստակեցնել այդ ապրանքների և ծառայությունների պահանջարկի ծավալները և իրացման շուկաները:

3) Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում: Տարածաշրջաններում մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի, ինչպես նաև մարզում գերակա ոլորտների զարգացման հայեցակարգերի հենքի վրա պետք է ձևավորվեն մասնավոր ներդրումների ներգրավման առաջարկներ, ինչը էապես կբարելավի գործարար միջավայրը և հատկապես մասնավոր ներդրումների մրցակցային պայմանները: Հետազոտությունները վկայում են, որ ներդրումներ կատարելու ցանկություն և մտադրություններ ունեն ինչպես տեղացի արտագնա, այնպես էլ այլ արտաքին ներդրողներ, սակայն այդ գործընթացները հաճախ դանդաղում և չեն իրագործվում տեղերում պատշաճ շահագրգռվածության և համագործակցության բացակայության պայմաններում: Այս առումով մասնավոր հատվածի զարգացման ծրագրերի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է կազմել տարածաշրջանային և մարզային ներդրումային առաջարկների փաթեթներ և պարբերաբար կազմակերպել իրազեկման միջոցառումներ տեղացի արտագնա և այլ արտաքին ներդրողների համար:

4) Մատչելի դարձնել առկա վարկային ռեսուրսները գերակա ոլորտներում սկսնակ կամ գործող կազմակերպությունների ներդրումային ծրագրերը ֆինանսավորելու համար: Ստեղծել վարկավորման բարենպաստ պայմաններ, օրինակ արտադրության, վերամշակման և ծառայությունների ոլորտների վարկավորումն իրականացնել մարման պարտադիր արտոնյալ ժամանակահատվածով, այլ ոչ բանկերի հայեցողությամբ: Արտադրության վերազինման և նոր տեխնոլոգիաների ներդրման համար վարկերի մատչելի և խթանիչ պայմաններ ստեղծել: Սահմանամերձ մարզերի ՓՄՁ ոլորտի վարկավորման տոկոսադրույքը սահմանել ոչ ավել, քան տարեկան 15 տոկոս:

5) Հզորացնել ՓՄՁ-ներին աջակցող կառույցներին: Նպատակաուղղել առկա ֆինանսական և մասնագիտական ռեսուրսները (Տեղական կառավարման և ինքնակառավարման մարմիններ, ՓՄՁ ԶԱԿ, Առևտրաարդյունաբերական պալատ, ՀԿ –ներ և այլն) գերակա ուղղություններում գործող կամ սկսնակ կազմակերպությունների վարկային և կադրային կարիքների բավարարմանը:

6) Սահմանել ՓՄՁ-ների գործունեության գերակա ոլորտներն ըստ գյուղական և քաղաքային համայնքների (գերակա ոլորտները սահմանելիս պետք է նկատի ունենալ, որ ՓՄՁ-ների կայուն

զարգացման համար պետք է նախ իրատեսորեն գնահատել տվյալ տարածաշրջանում և համայնքում առկա ռեսուրսները, ապա դրանք խելամիտ համադրել՝ գործարար ծրագրերում կիրառելու նպատակով):

51. Այստեղ որոշիչ է մարզպետարանի, մարզային խորհրդի, ինչպես նաև ՓՄՁ ԶՄԽ-ի դերը ինչպես տարածաշրջանային ծրագրերի մշակման, այնպես էլ տարեկան աշխատանքային պլանների շրջանակներում մասնավոր ներդրողներին խրախուսելու գործում:

52. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման միջոցառումների իրագործման փուլային սխեման ներկայացված է Գծապատկերում.



4. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

4.1 Զբոսաշրջության ոլորտի իրավիճակի վերլուծություն

53. Մարզի զարգացման ծրագրի նպատակն է բնութագրել և գնահատել ՀՀ Տավուշի մարզի զբոսաշրջային ռեսուրսները, զբոսաշրջության զարգացման միտումները և հեռանկարները՝

1) Սահմանել զբոսաշրջության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակները.
2) Գնահատել մարտահրավերները և որոշել նպատակի իրականացման համար պետական քաղաքականության խնդիրներն, ուղղություններն ու սկզբունքները:

54. ՀՀ Տավուշի մարզում զբոսաշրջության ոլորտը գնահատվում է որպես գերակա ճյուղերից մեկը, որը զարգացման հիմնախնդիր ունի: Այդ ոլորտում կան զարգացման համար նշանակալի նախադրյալներ.

1) Մարզում է գտնվում իր տեսակի մեջ եզակի՝ <<Դիլիջան>> ազգային պարկը (33765հա), համաձայն ՀՀ կառավարության 18.01.2007թ. <<Դիլիջան>> ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի /հողերի օգտագործման սխեմայի հաստատման մասին>> N 204-Ն որոշման/: Նրա ֆլորան ընդգրկում է ավելի քան 900 բուսատեսակ, որոնցից 29-ն ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Հարուստ է նաև ֆաունան:
2) Մարզում կան նաև բուսական աշխարհի պահպանության այլ օբյեկտներ՝ մասնավորապես՝ Իջևանի և Բերդի <<Սորաններ>> դենդրոպարկերը>>, որտեղ վերջին կեսդարյա ընթացքում հավաքվել և կլիմայավարժեցվել են մոտ 700 տեսակի տարաշխարհիկ ծառեր և թփեր:
3) Տավուշի մարզը հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով: Այստեղ հայտնաբերված են տարբեր ժամանակաշրջանների կիկլոպյան ամրոցներ, միջնադարյան քարանձավային բնակավայր Լաստիվերում, ինչպես նաև վաղ, միջին և ուշ միջնադարյան վանական համալիրներ և փոքրիկ մատուռներ, որոնք էապես նպաստում են տուրիզմի զարգացմանը:
4) Մարզն ունի զբոսաշրջային շուկա առաջարկելու՝ բազմաբնույթ, մրցունակ, զբոսաշրջային արդյունքի և ծառայությունների մեծ ներուժ:

55. Զբոսաշրջության զարգացումն ինքնին կպահանջի ավելի բարձր որակվորված աշխատուժ, ավելի մեծ ներդրումներ, ավելի բարձրակարգ ենթակառուցվածքներ և ծառայություններ, հետազոտությունների ավելի ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ և ավելի նպաստավոր գործարար միջավայր:

56. Անհրաժեշտ է մարզի բնակչությանը ներգրավել տուրիզմի զարգացման գործում, այդ թվում՝ տարածաշրջանի ժառանգության, բնության և կենսաձևի պահպանման, մասնավոր և հասարակական կազմակերպությունների միջև կապի ստեղծման, տուրիստական արդյունքի որակի բարելավման միջոցով:

4.2 Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները.

57. Զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության իրականացման նպատակով արնհրաժեշտ է ապահովել զբոսաշրջության կայուն զարգացում: Իսկ կայուն զարգացումը պահանջում է բոլոր շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության ակտիվ և արդյունավետ համագործակցություն: Կայուն զարգացման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ զբոսաշրջային ուղղությունները զարգանում են հիմնականում զբոսաշրջային ռեսուրսների հիման վրա՝ (բնական, պատմամշակութային, մարդկային), առանց որոնց պահպանության և վերարտադրության զարգացում ապահովել հնարավոր չէ:

58. Շրջակա միջավայրի կամ մշակույթի վրա ցանկացած բացասական ազդեցություն կարող է անդառնալի բացասական հետևանք ունենալ տուրիզմի երկարաժամկետ զարգացման համար:

59. Մարզի զբոսաշրջության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է մեծացնել ոլորտի ներդրումը ազգային տնտեսության ոլորտում, ապահովել համաչափ տարածքային տնտեսական զարգացում՝ միևնույն ժամանակ պայքարելով աղքատության դեմ:

60. Այս ամենի իրագործումը կնպաստի ներգնա և ներքին զբոսաշրջիկների թվի աճին, միաժամանակ ավելացնելով զբոսաշրջությունից ստացվող եկամուտները՝ առաջարկելով ավելի բարձրորակ զբոսաշրջային արդյունք, ստեղծելով նոր աշխատատեղեր:

61. Տավուշի մարզի զբոսաշրջության ոլորտում առկա խնդիրների լուծման համար, անհրաժեշտ են՝

1) զարգացնել առկա զբոսաշրջային կենտրոնները
2)առաջնայնացնել թիրախային շուկաները,
3)շարունակաբար ուսումնասիրել դրանց զարգացման միտումները,
4)զարգացնել մարզի ներդրումների և ձեռնարկատիրական գործունեության համար բարենպաստ պայմաններ, ավելացնելով զբոսաշրջության զարգացման համար գրավչությունները,
5)ապահովել կեցության և այլ ենթակառուցվածքների որակական և քանակական աճը:
6)զբոսաշրջության զարգացման և շրջակա միջավայրի պահպանման նպատակով պատմամշակույթային վայրեր և հանգստի գոտիներ այցելող զբոսաշրջիկների համար հասարակական զուգարանների կառուցման ապահովում:

4.3 Զբոսաշրջության զարգացման 2012-2015 թթ առաջնահերթությունները

62. Համայնքների զարգացում – Զբոսաշրջությունը տարբեր միջոցներով կարող է նպաստել համայնքների զարգացմանը: Զբոսաշրջիկների համար համայնքային բնակիչների կողմից կազմակերպած միջոցառումները կամ տոները, նրանց նկատմամբ ցուցաբերած հյուրասիրությունը նպաստում են համայնքի սոցիալական ակտիվությանը, իսկ զբոսաշրջության որոլտում ստեղծած աշխատատեղերը և դրանց արդյունքում ստացվող եկամուտները խթան կհանդիսանանտեղի բնակչության կողմից գյուղական համայնքները չլքելուն:

63. Ենթակառուցվածքներ–Քանի որ զբոսաշրջությունը նպաստում է հանրային ծառայությունների զարգացմանը, այն գյուղական համայնքներում կարող է բարձրացնել բնակչության

կենսամակարդակը: Այն ներառում է բարելավված ճանապարհային և հաղորդակման ենթակառուցվածքները, առողջապահության և տրասպորտի ոլորտների բարելավումը, նոր սպորտային և հանգստի համար նախատեսված զանազան համալիրները, հանգստի, սպասարկման, զվարճանքի և հասարակության համար նախատեսված այլ վայրեր:

64. Մշակույթի և ավանդույթների վերագնահատում– Զբոսաշրջությունը կարող է մեծապես ազդել մշակութային և պատմական ավանդույթների վերականգնմանը, պահպանմանն ու փոխանցմանը, ինչը հաճախ իր հերթին նպաստում է բնական ռեսուրսների պահպանմանն ու ռացիոնալ օգտագործմանը, ազգային ժառանգության պահպանմանը, մշակույթի, արվեստի և արհեստագործության զարգացմանը:

65. Քաղաքացիական գիտակցություն և հպարտություն – Զբոսաշրջությունը նպաստում է բնակչության մոտ բնական և մշակութային ռեսուրսների թե ֆինանսական նշանակության գիտակցության և թե դրանց նկատմամբ հպարտության զգացման բարձրացմանը՝ մեծացնելով դրանք պահպանելու ձգտումը:

66. Ֆինանսական–Զբոսաշրջությունից ստացված եկամուտները կարող են ուղղվել ենթակառուցվածքների զարգացմանը: Շրջակա միջավայրի պահպանության բարձրացմանը: Հասարակության գիտակցության բարձրացումը բնական արժեքի նկատմամբ, որը ձևավորում է բնության պահպանության համապատասխան վարքագիծ:

67. Շրջակա միջավայրի պահպանություն–Զբոսաշրջությունը նպաստում է բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը, շրջակա միջավայրի պահպանությանը և կենսաբազմազանության վերականգմանը, շրջակա միջավայրի պահպանության, հասարակության գիտակցության բարձրացմանը:

Հ/հ	ՄԶԾ ոլորտ	Պլանավորվող ֆինանսավորումը 2012-2015թթ.				Ընդամենը՝ 2012-2015թթ.
		2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	
1.	ՓՄՁ ոլորտի աջակցություն	15.0	15.0	20.0	20.0	70.0
2.	Մարզում զբոսաշրջության զարգացման աջակցություն	2.5	3.5	6.0	8.5	20.5
	Ընդամենը	**17,5**	**18,5**	**26,0**	**28,5**	**90.5**

Մասնավոր հատվածի և ՓՄՁ զարգացման ծրագրի տրամաբանական հենքը

Ռազմավարական նպատակներ և առաջնահերթ ծրագրեր	Ցուցանիշներ	Ռիսկներ/Նախադրյալներ
Ռազմավարական նպատակ 1. Մշակել ՓՄՁ աջակցության և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրեր՝ ներգրավելով այդ գործընթաներում ՏԻՄ և գործարար համայնքի ներկայացուցիչներին***:***	ՓՄՁ և մասնավոր հատվածի զարգացումը պլանավորվում և կառավարվում է տարածաշրջանի մակարդակով:	ՏԻՄ ղեկավաների աջակցությունը և մասնակցությունը ծրագրերի մշակման գործընթացում
Ծրագիր 1. ՓՄՁ աջակցման և մասնավոր հատվածի զարգացման տարածաշրջանային ծրագրերի մշակում: Առաջնահերթ միջոցառումներ. *Ծրագրերի մշակման խորհրդատվական աջակցում *Տարածաշրջանային և համայնքային ծրագրերի ընդունում	-Խորհրդատվական ծառայությունների մատուցման մրցույթների կազմակերպում -ՏԻՄ և մասնավոր հատվածի ներկայացուցիչների ներգրավում ծրագրերի մշակման գործընթացում -Հստակեցված են գործարար ծրագրերի իրագործման համար տեղական ռեսուրսների օգտագործման հնարավորությունները	Մրցույթների կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների անբավարարությունը
Ռազմավարական նպատակ 2. Աջակցել գերակա ճյուղերի, մասնավորապես զբոսաշրջության, գյուղմթերքների վերամշակման և իրացման կազմակերպությունների մրցունակության բարձրացմանը:	Գերակա ոլորտների կազմակերպությունների եկամուտների աճ: Գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալների աճ: Հյուրընկալության և հարակից ծառայությունների որակի բարելավում: Զբոսաշրջիկների և այցելուների	Գյուղմթերքների իրացման համար զբոսաշրջության շուկայում մրցակցային միջավայրի անբարենպաստ պայմաններ

	թվաքանակի աճ:	
Ծրագիր 2. Գերակա ոլորտներում մասնավոր հատվածի զարգացման մարզային հայեցակարգերի ընդունում: **Առաջնահերթ միջոցառումներ.** *Զբոսաշրջության և գյուղմթերքների շուկաների հետազոտում * Գյուղմթերքների վերամշակման և իրացման մարզային հայեցակարգի մշակում *Մարզում զբոսաշրջային կենտրոնների ձևավորման հայեցակարգի մշակում *Գերակա ոլորտներում գործող ձեռնարկատիրությունների աշխատուժի պահանջարկի ուսումնասիրում *Գերակա ոլորտներում մասնագետների և կառավարիչների վերապատրաստման կոորդինացում	Տեղական ապրանքների և ծառայությունների իրացման շուկաները և պահանջարկի ծավալները հստակեցնել - Հետազոտության իրականացում - Գյուղմթերքներքների վերամշակման և իրացման համակարգի զարգացման միջոցառումների պլանի ընդունում - Զբոսաշրջային կենտրոնների զարգացման միջոցառումների պլանի ընդունում - Աշխատուժի պահանջարկը ըստ մասնագիտությունների և տարածաշրջանների գնահատում - ՓՄՁ աջակցման տարեկան ֆինանսական պլաններում նախատեսնել գումարներ գերակա ոլորտների մասնագետների և կառավարիչների վերապատրաստման համար -	Շուկաների հետազոտման գործընթացում որակյալ սսնագիտական կադրերի ներգրավում: Մարզի գերակա ոլորտների զարգացման միջոցառումների պլանը համահունչ լինի շահագրգիռ նախարարությունների քաղաքականությանը: Օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների աջակցություն վերապատրաստման ծրագրերին:
Ռազմավարական նպատակ 3. Նպաստել տեղացի արտագնա, ինչպես նաև այլ արտաքին ներդրողների ներգրավմանը մարզում	Տարածաշրջաններում և առանձին համայնքներում մասնավոր ներդրումների ծավալների աճ:	Գործարարության զարգացման տեղական ռեսուրսների և

մասնավոր հատվածի զարգացման ներդրումային ծրագրերում:		ենթակառույցների անբավարար վիճակը
Ծրագիր 3. Մասնավոր ներդրումների խթանման միջոցառումների կազմակերպում: **Առաջնահերթ միջոցառումներ**. *Ներդրումային առաջարկների վերաբերյալ տեղեկատվական նյութերի մշակում *Ներդրումային հնարավորությունների ներկայացման միջոցառումների կազմակերպում	- Տարածաշրջանային և/կամ ոլորտային ներդրումային առաջա վերաբերյալ տեղեկատվական նյութերը հրապարակված են - Տեղական արտագնա և այլ արտագնա ներդրողների իրազեկման նպատակային միջոցառումները իրագործված են	Ներդրումային առաջարկների և դրանց իրագործման պայմանները համապատասխանում են պոտենցիալ ներդրողների ակնկալիքներին:

5. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

5.1 Առողջապահություն

5.1.1 Առողջապահության ոլորտի իրավիճակի վերլուծություն

68. Մարզի առողջապահական համակարգը ներկայացված է 26 Փակ բաժնետիրական ընկերություններով,որոնցից 4–ը բժշկական կենտրոններ, քաղաքային ԱԱՊԿ-1, ԱԿ-3, մնացած 16-ը ԳԲԱ-ներ են և ԱԱՊԿ-ներ: Բոլոր ԲԿ-ները ապահովված են շուրջօրյա ջրամատակարարման, կեղտաջրերի և բժշկական (կենսաբանական թափոններ, ներարկիչներ) թափոնների պատշաճ հեռացման, ինչպես նաև ջեռուցման համակարգով, տաք ջրով, սարքավորումներով /օդի վարակազերծման սարքեր, չոր օդային մանրէազերծիչ, ավտոկլավ և այլն/: Կապված վերը նշվածի հետ որոշ գյուղական բուժհաստատություններում դեռևս կան խնդիրներ:

69. Բնակչության առողջական վիճակն ու առողջապահության մատչելիությունը Տավուշի մարզի հանրային առողջության վիճակի մասին պատկերացում առաջին հերթին կարելի է կազմել՝ հիմնվելով այնպիսի ցուցանիշների վրա, ինչպիսիք են ծնելիությունը, մահացությունը և բնակչության բնական աճը:

Աղյուսակ 5.1. 2010թ. բնական աճի ցուցանիշները.

Մարզ	Ծնվածների թվաքանակը	Մահացածների թվաքանակը	Բնական աճ
ՏԱՎՈՒՇ	**1670**	**1342**	**328**

70. Մարզի բնակչության առողջական վիճակի մասին կարելի է դատել՝ ելնելով նաև հիվանդությունների տարածման միտումներից: Այսպես, հիվանդությունների տարածման մասին վկայող տվյալները ցույց են տալիս, որ մարզում վերջին տարիներին մեծ տարածում ունեն դիաբետի (հատկապես ինսուլինաանկախ) բարդություններով հիվանդությունները, «սրտանոթային հիվանդությունները», նորագոյացությունները: Բացի դրանից, մարզի համար լրջագույն խնդիր են սոցիալական հիվանդությունները՝ տուբերկուլյոզը, հոգեկան խանգարումները, ինչպես նաև մինչև 1 տարեկան երեխաների հիվանդացությունը՝ հատկապես անեմիայով, որոնց հայտնաբերման բարելավման արդյունքում այդ հիվանդությունները բնութագրող ցուցանիշներում թվացյալ աճ է գրանցվել:

Աղյուսակ 5.2. Շաքարային դիաբետի դինամիկան Տավուշի մարզում (մարդ) (աղբյուրը՝ Տավուշի մարզպետարան)

Հիվանդություն	2007թ.	2008թ.	2009թ	2010թ.
Շաքարային դիաբետ ինսուլինակախյալ	235	245	260	278

Շաքարային դիաբետ ինսուլինաանկախ	2285	2288	2290	2285

71. Տարածված «վարակիչ հիվանդություններ» շարքում առանձնանում է աղիքային ինֆեկցիան, հեպատիտը:

Աղյուսակ 5.3. Վարակիչ հիվանդությունների համաճարակային իրավիճակը Տավուշի մարզում (աղբյուրը՝ Տավուշի մարզպետարան)

	Ինֆեկցիոն հիվանդություններ	**2008 թ**	**2009 թ**	**2010թ**
	Որովայնային տիֆ «աղիքային վարակիչ հիվանդությունները, վիրուսային հեպատիտները»	1	-	-
	Այլ սալմոնելոզային հիվանդություններ	5	4	6
	Բակտերիալ դիզենտերիա	30	21	39
	Մանրեաբանական հաստատված	26	21	36
	Աղիքային վարակիչհաստատված հարուցիչով	50	70	63
	Աղիքային ինֆեկցիա չհաստատված հարուցիչով	169	151	352
	Քութեշ	41	47	44
	Ջրծաղիկ	220	361	491
	Կարմրուկ	24	-	-
	կարմրախտ	3	-	-
	Վիրուսային հեպատիտ արտընդերային	26	105	54
	Հեպատիտ Ա,Բ	25/1	104/1	52/2
	Ինֆեկցիոն մոնանկլեոզ	2	4	13
	Համաճարակային պարոտիտ	3	-	-
	Հաշվառված ակտիվ տուբերկուլոզով	100	111	117

	հիվանդների թիվը			
	լեյշմանիոզ	-	3	1

72. Տավուշի մարզի բոլոր տարածաշրջաններում (Իջևան, Նոյեմբերյան, Բերդ, Դիլիջան) քաղաքների բժշկական կենտրոնների կազմում գործում են տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետներ, որոնք ՀՀ ԱՆ տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի շրջանակներում իրականացնում են տուբերկուլոզի կանխարգելման, հայտնաբերման, բուժման և դինամիկ-դիսպանսերային հսկողության գործառույթներ: Դիլիջանում գործում է մանկական հակատուբերկուլոզային առողջարանը, որտեղ ուղեգրվում են հանրապետության բոլոր մարզերի տուբերկուլոզով հիվանդների հետ շփված, ինչպես նաև՝ տուբերկուլոզով հիվանդ և վարակի տեսանկյունից վտանգ չներկայացնող երեխաները:

73. «Տավուշի մարզը ՄԻԱՎ վարակի գրանցված դեպքերի և° բացարձակ թվով, և° 100 հազար բնակչի հաշվով արձանագրված դեպքերի թվով գտնվում է 10-րդ տեղում հանրապետության մարզերի շարքում» արտահայտությամբ:

74. Մարզի համար պոտենցիալ վտանգ է ներկայացնում այն փաստը, որ բնակչության մեծ զանգված են կազմում աշխատանքային միգրանտները, որոնք մեկնում են ՁԻԱՀ-ի և սեռավարակների բարձր ցուցանիշ ունեցող երկրներ: Այս առումով տարափոխիկ հիվանդությունների ,մասնավորապես ՁԻԱՀ-ի և սեռավարակների վերաբերյալ բնակչության լայն շերտերի իրազեկման, ինչպես նաև սկրինինգային հետազոտությունների անհրաժեշտությունն ակնհայտ է: \

75. Առողջապահության բնագավառում որպես հիմնական հիմնական գերակայություն շարունակվում է համարվել մոր և մանկան առողջության պահպանումը: 2008 թվականից հաջողությամբ ներդրվել է ծննդօգնության հավաստագիրը, իսկ 2011թ-ի հունվարից առողջապահության նախարարության կողմից իրականացվել են մի շարք բարեփոխումներ,որոնք համաձայն համապատասխան իրավական ակտերի սահմանված կարգով ներդրվել են մարզի առողջապահական համակարգում:2011թ-ի հունվարի 1-ից սկսվել է երեխայի առողջության պետական հավաստագրի ներդրման գործընթացը,փետրվարի 1-ց՝ համավճարի ծրագիրը:

76. Մարզի բուժհաստատությունները սահմանված կարգով ստացել են հավաստագրեր և իրականացրել են բաշխումը: Տարվել են իրազեկման աշխատանքներ ,սահմանված կարգով հաշվարկվել է բուժ.անձնակազմի աշխատավարձը: Բնակչության կողմից ծրագրերի հետ կապված բողոքներ չեն արձանագրվել: Հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարի 2011թ. հունվարի 31-ի թիվ 97-Ա հրամանը, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության աշխատակիցներից մարզպետի 2011թ. փետրվարի 9-ի թիվ 6-Ա կարգադրությամբ ստեղծվել է մշտադիտարկում իրականացնող աշխատանքային խումբ: Ստեղծվել է նաև թեժ գիծ մարզպետարանում:

5.1.2. Առողջապահական համակարգի կառուցվածքային փոփոխությունները և ներկայիս խնդիրները

77. Առողջապահական համակարգի ապակենտրոնացման արդյունքում Տավուշի մարզի առողջապահական հաստատությունների կառավարման իրավասությունները փոխանցվեցին մարզպետարանին: Կենտրոնական շրջանային հիվանդանոցները և պոլիկլինիկաները բաժանվեցին առանձին հիմնարկների՝ ձեռք բերելով փակ բաժնետիրական ընկերության կարգավիճակ: Ներկայումս Տավուշում գործում է մարզային ենթակայության 23 բուժհիմնարկ, որից՝

1) 4 բժշկական կենտրոն (Իջևան, Դիլիջան, Բերդ, Նոյեմբերյան),
2) 1 ԱԱՊԿ քաղաքային Իջևանում
3) 3 առողջության կենտրոն (Աչաջուր, Արծվաբերդ,Այգեձոր),
4) 8 գյուղական բժշկական ամբուլատորիա
5 7 գյուղական ԱԱՊԿ

78. Շարունակելով առողջապահական համակարգի ապակենտրոնացման գործընթացը՝ 2006թ. առողջապահական համակարգի օպտիմալացման երկրորդ ծրագրի շրջանակներում (կառավարության որոշում թիվ 1911-Ն) ստեղծվել են՝ ‘Իջևանի ԲԿ’ ՓԲԸ, <Իջևանի ԱԱՊԿ> ՓԲԸ, ‘Դիլիջանի ԲԿ’ ՓԲԸ, ‘Նոյեմբերյանի ԲԿ’ ՓԲԸ, ‘Բերդի ԲԿ’ ՓԲԸ: Նույն որոշմամբ ստեղծվել են Ազատամուտի, Այգեհովիտի, Գետահովիտի, Խաշթառակի, Հաղարծնի, Բագրատաշենի, Հաղթանակի, Ոսկեվանի, Մովսեսի, Ներքին Կարմիր Աղբյուրի և Նավուրի առողջության առաջնային պահպանման կենտրոնները, իսկ Իջևանի ստոմատոլոգիական պոլիկլինիկան ներկայացվել է լուծարման:

79. Հարկ է նշել, որ բուժհաստատությունների միավորման և օգտագործվող ռեսուրսների օպտիմալացման արդյունքում զգալիորեն բարելավվել է նրանց ֆինանսական վիճակը: Սակայն, վերոհիշյալ ինստիտուցիոնալ բնույթի փոփոխությունները բավարար չէին համակարգի լիարժեք վերագործարկման համար: Տարիների ընթացքում մարզի առողջապահական համակարգի առջև կուտակվել են նաև այլ կարևոր խնդիրներ, որոնց լուծումից է այսօր կախված ինչպես առաջնային, այնպես էլ հիվանդանոցային բուժսպասարկման որակի և մատչելիության բարձրացումը: Ստորև ներկայացվում են այդ խնդիրները:

80. Ներկայումս աշխատող բժիշկ-մասնագետները հիմնականում 60-ն անց են,իսկ որոշ տարածքներում 80 տարեկանին մոտ մարդիկ են,որոնք տիրապետում են մասնագիտական հին տեխնոլոգիաներին,նրանց վերապատրաստումները նպատակահարմար չեն,հետևապես հրամայական պահանջ է դարձել մարզի բուժհաստատությունները երիտասարդ կադրերով համալրելու հարցը: Բոլոր ԲԿ-ներում կա նյարդաբանի, հոգեբույժի,քիթ-կոկորդ-ականջաբանի, պաթոլոգ–անատոմի,վիրաբույժի,մանկաբարձ-գինեկոլոգի, «հոսպիտալային համաճարակաբանի, իմունաբանի և վարակաբանի» կարիք: Միջին բուժանձնակազմի առումով ևս անհրաժեշտություն կա կադրերի երիտասարդացման:

81. Մինչև 2008թ-ը Համաշխարհային Բանկի, Համահայկական Հիմնադրամի և այլ միջազգային կազմակերպությունների միջոցներով վերանորոգվեցին և վերազինվեցին մարզի առաջնային օղակի բուժհաստատությունները,ինչպես նաև վերապատրաստվեց բուժ.անձնակազմը:

82. Սկսած 2008թ-ից վերանորոգման և վերազինման աշխատանքներ սկսեցին մարզի հիվանդանոցային բուժհաստատություններում:2009թ-ին ավարտվեցին Դիլիջանի ԲԿ-ի ,իսկ 2010թ-ին Իջևանի ԲԿ-ի վերանորոգման, վերազինման և բուժանձնակազմի վերապատրաստման աշխատանքները:

83. 2008թ. ընթացքում ՀԲ-ի ծրագրի շրջանակներում կառուցվել է Ազատամուտի ամբուլատորիան, վերանորոգվել է Արծվաբերդի առողջության կենտրոնի ամբուլատոր մասը:

1) 2010թ-ին Համահայկական Հիմնադրամի միջոցներով վերանորոգվեց և մասնակի վերազինվեց <Նոյեմբերյանի ԲԿ> ՓԲԸ-ն:

2) 2011թ-ին նախատեսվում են Բերդի ԲԿ-ի վերանորոգման աշխատանքները:

3) Վերը նշվածից երևում է ,որ մարզում գործող բուժհաստատությունների 80%-ը վերանորոգված է և մնում է լուծել 4-5 գյուղական բժշկական ամբուլատորիաների և 5 բուժակ մանկաբարձական կետերի վերանորոգման խնդիրներ:

84. Ընտանեկան բժշկության համակարգի ներդրումը մեծապես նպաստեց գյուղական համայնքների բուժսպասարկման մատչելիության բարձրացմանը: Մարզում ընտանեկան բժշկության կայացել է, ըստ բնակչության թվի, անհրաժեշտ է ունենալ առնվազն 67-68 ընտանեկան բժիշկ: 2008թ. վերջին մարզի առաջնային օղակի բոլոր ընտանեկան բժիշկները և բուժքույրերը անցել էին վերապատրաստման դասընթացները, իսկ ԲՄԿ-ների բուժքույրերը դասընթացները անցել են Համայնքային բուժքրոջ ծրագրով:

85. 2007 թվականից Առողջապահության համաշխարհային կազմակերպության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ յուրաքանչյուր տարի մարզի բոլոր բուժաշխատողները, ովքեր ներգրավված են իմունականխարգելման գործընթացում, համաձայն ՀՀ առողջապահության նախարարի հրամանների, բազմաթիվ անգամ վերապատրաստվել են իմունականխարգելման հարցերի վերաբերյալ:

86. «Իջևանի, Բերդի և Դիլիջանի տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետները չեն համապատասխանում ՀՀ–ում տուբերկուլոզի համաճարակային հսկողության ՍՊ 3.1.1-010-08 սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի 12-րդ գլխով նախատեսված տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետի տեղակայմանը և կառուցվածքին ներկայացվող հիգիենիկ պահանջներին»: Մարզում բարձր է տուբերկուլոզով հիվանդների բուժման ընդհատումների քանակը, որը հետևանք է նաև աշխատանքային միգրացիայի:

87. Ի կատարումն ՀՀ Կառավարության 2008թ հունիսի 19-ի թիվ 24 արձանագրային որոշման և համաձայն Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարի 2008թ. նոյեմբերի 18-ի թիվ 1661-Ա հրամանի և մարզպետի թիվ 53-Ա 15.06.2009թ որոշման համաձայն մարզում շարունակվել են ԱԱՊ որակի բարելավմանն ուղղված աշխատանքները:

88. Ի կատարումն ՀՀ կառավարության 2006թ.մարտի 30-ի թիվ 420-Ն որոշման և ՀՀ Առողջապահության նախարարի հունվարի 18-ի թիվ 57-Ն հրամանի մարզում շարունակվում է առողջության առաջնային պահպանման բժշկի ընտրության գործընթացը,ինչպես նաև ԱԱՊ բժշկի մոտ բնակչության ավտոմատացված համակարգի ամենամսյա թարմացման ընթացիկ աշխատանքները: Ներդրվել է ավտոմատացված համակարգը, ԱԱՊ ծառայությունների որակը և ֆինանսավորման արդյունավետությունը բարելավելու նպատակով: Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միջազգային Զարգացման Նախարարության կողմից Տավուշի ՄԶԾ շրջանակում 2006-07թթ. մարզի առողջապահության համակարգի կատարելագործման նպատակով հատկացվել է 25.8 մլն. դրամ: Վերը նշված գումարը տրամադրվել է բուժհիմնարկների վերանորոգման, առաջին անհրաժեշտության պարագաներով վերազինման, ընտանեկան բժշկության գծով բժիշկների և բուժքույրերի վերապատրաստման, ինչպես նաև Իջևանի հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքի համար «էնդոսկոպիկ» սարքավորում ձեռք բերելու նպատակով:

89. Սկսած 2008թ-ից հիվանդանոցային համակարգը ենթարվեց վերափոխման: Օպտիմալացման արդյունքում ստեղծվեցին Բժշկական կենտրոններ, արդյունքում կրճատվեցին կրկնվող ծառայությունները և այդ ծառայություններ իրականացնող հաստիքները: վերանորոգման և վերազինման արդյունքում նոր սարքավորումներով հագեցված Բժշկական կենտրոնները դարձան ավելի բարեկարգ,հրապուրիչ բնակչության համար: Կտրուկ բարելավվեց վճարովի ծառայությունների վիճակը:

90.Համավճարի ներդրումը մարզի բուժհաստատություններում անցել է առանց խոչընդոտների: Տնօրենների հրամանով ստեղծվել են <Համավճարների զեղչման կամ ազատման հանձնաժողովներ>: Համավճարի չափը սահմանող ցանկերը և պաստառները փակցված են բուժհաստատություններում՝ տեսանելի վայրերում:

91. Իրազեկման աշխատանքներ են իրականացվել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից, կազմակերպվել են Կլոր սեղաններ մարզում, գործող ՀԿ-ների մասնակցությամբ, ինչպես նաև լուսաբանվել է <Տավուշ> մարզային թերթի միջոցով, ինտերնետային կայքում:

92. Մարզի առողջապահության ոլորտի ռազմավարությունը և Հազարամյակի զարգացման նպատակները - ՀՀ կառավարության կողմից հաստատված ԿԶԾ-ի առողջապահության ոլորտի հանրապետական միջոցառումները կունենան անմիջական ազդեցություն Տավուշի մարզի վրա: Մասնավորապես, կարևորվում են ընտանեկան բժշկության զարգացման, համակարգի ֆինանսավորման մեխանիզմների բարելավման, գյուղական բնակչության բուժօգնության բարելավման, հիվանդանոցային համակարգում պետական միջոցների արդյունավետ օգտագործման, մոր և մանկան առողջության պահպանման, վերարտադրողական առողջության բարելավման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի, տարափոխիկ, սիրտ-անոթային հիվանդությունների, շաքարային դիաբետի, չարորակ նորագոյացությունների կանխարգելման, հիվանդացության ու մահացության իջեցմանն ուղղված միջոցառումները: Այդ միջոցառումները տարածքային մակարդակով լրացնելու և հետևաբար ուժեղացնելու համար նպատակահարմար է մշակել առողջապահության համակարգի զարգացման միջոցառումները՝ ուշադրություն դարձնելով մարզային յուրահատկություններին:

93. Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը, մարզում բնակչության առողջական վիճակի բարելավման համար զարգացման գերակա նպատակ է համարվում բուժծառայությունների որակի և մատչելիության բարձրացումը: Սույն նպատակի իրագործման ռազմավարությունը ներառում է առողջության առաջնային պահպանման մակարդակի բարելավման, առաջնային և երկրորդային բուժօգնության հաստատությունների նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման, տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ուժեղացման ուղղությունները:

5.1.3. Առողջապահության ոլորտի զարգացման նպատակներն ու ուղղությունները

94. Մարզի առողջապահության ոլորտի ռազմավարությունը և Հազարամյակի զարգացման նպատակները: Նշված զարգացման ուղղությունները համահունչ են ՄԱԿ-ի կողմից հռչակված և Հայաստանի կողմից ընդունված Հազարամյակի զարգացման նպատակներին: Նրանց իրագործումը երկարաժամկետ հեռանկարում պետք է նպաստի մարզում մասնավորապես մանկական մահացության նվազմանը և մայրական մահացության առկա ցածր մակարդակի պահպանմանը, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և այլ տարափոխիկ հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետությանը (տես՝ Աղյուսակ 5.4):

Աղյուսակ 5.4. Հազարամյակի զարգացման նպատակներն առողջապահության ոլորտում

Նպատակ և խնդիրներ	ցուցանիշներ այլ վարակիչ հիվանդությունների	2003թ.	2004թ	2006թ	2009թ	2012թ	2015թ
Նպատակ 4. Կրճատել մանկական մահացությունը							
Խնդիր 5. Մինչև 2015թ-ը կրճատել 2/3-ով մինչև 5 տարեկան երեխաների մահացության մակարդակը	13.Մինչև 5 տարեկան երեխաների մահացության մակարդակը	15.6	15.3	14.4	13.0	11.5	5.0
	Տավուշի մարզ						
	14.Մինչև 1 տարեկանների Մանկական մահացությունը/ԿՀԾ/	13.2	13.0	12.2	11.0	9.8	8.5
	Տավուշի մարզ	14.8					
	15.Կարմրուկի դեմ պատվաստված մինչև մեկ տարեկան երեխաների տեսակարար կշիռը /ԿՀԾ/				96%		97%
	Տավուշի մարզ						
Նպատակ 5 Մոր առողջության բարելավում							
Խնդիր 6.Մինչև 2015թ 3/4-ով կրճատել մայրական մահացության մակարդակը	16. Մայրական մահացության մակարդակը (ԿՀԾ) (հիմք է ընդունվել երեք տարիների միջին ցուցանիշը՝ հիմնվելով Վիճվարչության տեղեկատվության վրա):	27.0	24.0	22.0	15.5	13.0	10.0
	Տավուշի մարզ						

	17.Բժշկական որակյալ անձնակազմի կողմից ընդունված ծնունդների տեսակարար կշիռը /ԿԶԾ/				98		98
	Տավուշի մարզ	100					
Նպատակ 6: Պայքարել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի,մալարիայի և այլ վարակիչ հիվանդությունների դեմ, լեյշմանիոզ,վիրուսային հեպատիտ							
Խնդիր 7:Մինչև 2015թ կանգնեցնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածումը	18.15-24 տարեկանների մեջ ՄԻԱՎ-ով հիվանդ հղի կանանց թիվը/ԿԶԾ/				< 1%		< 1%
	Տավուշի մարզ				< 1%		< 1%
	19.Հակաբեղմնավորիչների օգտագործման աստիճանը/ԿԶԾ/				33%		44%
	Տավուշի մարզ						
Խնդիր 8:Մինչև 2015թ կանգնեցնել և այլ վարակիչ հիվանդությունների տարածումը	23.Պալարախտի հետևանքով առաջացած մահվան դեպքերը նվազեցնել տուբերկուլոզից մահերի թիվը (2009թ-ին մարզում տուբերկուլոզից մահացել է 8 մարդ, 2010թ-ին՝ 3 մարդ):				70		50
	Տավուշի մարզ						

	24. բարելավել տուբերկուլոզի դեպքերի հայտնաբերումը և բարձրացնել բարեհաջող բուժման մակարդակը (85%)”:				< 600 100%		< 300 100%
	Տավուշի մարզ	222					

95. Ի կատարումն ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 52 արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի 2007-2015 թվականների ազգային ծրագրի» նպատակների՝ մարզում բարելավել տուբերկուլոզի հայտնաբերման մակարդակը, նվազեցնել տուբերկուլոզից հիվանդացության և մահացության ցուցանիշները, բարձրացնել տուբերկուլոզով հիվանդների բարեհաջող բուժման մակարդակը:

Աղյուսակ 5. 5. ՄԶԾ ծրագրավորվող առողջապահության ոլորտի ֆինանսավորումը 2012-2015թթ.
(մլն. դրամ)

Հ/հ	ՄԶԾ ոլորտ	Պլանավորվող ֆինանսավորումը 2012-2015թթ				Ընդամենը՝ 2012-2015թթ.
		2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	
1.	**Առողջապահություն**	**2.0**	**2.5**	**2.8**	**3.1**	**10.4**

96. Այսպիսով՝ ամփոփելով Տավուշի մարզի առողջապահության ոլորտի հիմնախնդիրների և իրավիճակի վերլուծությունը, ինչպես նաև հաշվի առնելով ԿԶԾ-ում առողջապահության առաջնահերթությունները և Հազարամյակի զարգացման նպատակները՝ ստորև ներկայացվում է ոլորտի տրամաբանական հենքը, որտեղ ամփոփված են ոլորտի զարգացման նպատակները և դրանց հասնելու համար առաջարկվող առաջնահերթ միջոցառումները:

Առողջապահության ոլորտի տրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	Արդյունքների ցուցանիշ	Ռիսկեր
Ոլորտային նպատակ Բարելավվել բուժսպասարկման մատչելիությունը և որակը Տավուշի մարզում	1.Մինչև 1 տարեկան երեխաների մահացություն, 1000 կենդանածիների հաշվով 2. 1.Մինչև 5 տարեկան երեխաների մահացություն, 1000 կենդանածիների հաշվով 3.Մայրական մահացություն, 100000կենդանածիների հաշվով 4.Հաճախումների քանակն ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկներում,հազ.մարդ 5. .Հաճախումների քանակն ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկներում 1 բնակչի հաշվով 6.Որակյալ բժշկական միջամտությամբ ընթացած ծնունդները 7.Բնակչության հիվանդացությունը սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով,դեպքերի թիվը 100000 բնակչի հաշվով 8.ՄԻԱՎ տարածվածության աստիճանը,վարակակիրների թիվը 100000 բնակչի հաշվով 9.Բնակչության հիվանդացությունն ակտիվ	ՀՀ Կառավարության ծրագրային ցուցանիշների համաձայն՝առողջապահության համար պետական բյուջեյի ծախսերը շարունակելու են աճել Ֆինանսական միջոցները բաշխված են և ժամանակին հատկացված

	տուբերկուլյոզով ,դեպքերի թիվը 100000 բնակչի հաշվով	
1.Մարզում առողջության պահպանման առաջնային բուժօգնության ծառայությունների բարելավվում,ինչը կնպաստի բուժօգնության որակի բարելավմանը,մայրական և մանկական հիվանդությունների մահացության նվազմանը,ծնելիության և բնակչության բնական աճի բարձրացմանը		
1.1Բժշկական անձնակազմի վերապատրաստում `առավելագույնս ուշադրություն դարձնելով գյուղական ամբուլատորիաների աշխատակազմին	Վերապատրասված բժիշկների և բուժքույրերի թիվն ամբուլատոր-պոլիկլինիկական մակարդակի անձնակազմի ընդհանուր թվում %	Առողջության պահպանման առաջնային օղակի անձնակազմը կանոնավոր կերպով մասնակցում է դասընթացների և կիրառում է վերապատրաստումից ստացած գիտելիքները Մասնագետների արտահոսքը ցածր է
1.2 Մոր և մանկան առողջության վերաբերյալ կանանց համար դասընթացների կազմակերպում	1.Մինչև 1 տարեկան երեխաների մահացություն, 1000 կենդանածիների հաշվով 2. 1.Մինչև 5 տարեկան երեխաների մահացություն ,1000 կենդանածիների հաշվով 3.Մայրական մահացություն, 100000կենդանածիների հաշվով	Երեխաներ ունեցող կանայք և հղի կանայք ցանկանում են մասնակցել դասընթացների և օգտվել խնամքի ծառայություններից Բուժանձնակազմը և ծնողները համագործակցում են միմյանց հետ
1.3 Հղի կանանց համար նախածննդյան խնամքի կազմակերպում	Որակյալ բժշկական միջամտությամբ ընթացած ծնունդների տեսակարար կշիռը Մայրական մահացություն,1000000 կենդանածիների հաշվով	

Մանկապարտեզներում և դպրոցներում երեխաների կանխարգելիչ զննումների հաճախակի իրականացում	Երեխաների խրոնիկ թերսնուցման և սակավարյունության դեպքերի քանակը Պատվաստված երեխաների տեսակարար կշիռը երեխաների ընդհանուր թվում	
2. Բուժսպասարկման ենթակառուցվածքի /առաջնային և երկրորդային/ և նյութատեխնիկական բազայի բարելավում,ինչը կնպաստի ծառայությունների արդյունավետության և որակի բարձրացմանը		
2.1Բժշկական հաստատությունների /հատկապես գյուղական/ շենքային պայմանների բարելավում	վերանորոգված բուժհիմնարկների տեսակարար կշիռը %	Շենքերի ,սարքավորումների շրջիկ բուժսպասարկման պարագաների պահպանման և կառավարման կարողությունները մարզում առկա են
2.2 Պոլիկլինիկաների հագեցում ախտորոշիչ սարքավորումներով	Ախտորոշիչ սարքավորումներով ապահովված հիմնարկների /պոլիկլինիկական-ամբուլատոր հիվանդանոցային/ տեսակարար կշիռը ,%	
2.3 Գյուղական համայնքների ամբուլատորիաների, բուժկետերի ապահովում առաջին օգնության պարագաներով	Առաջին օգնության պարագաներով ապահովված պոլիկլինիկական ամբուլատոր հիմնարկների տեսակարար կշիռը%	
2.4 Հիվանդանոցների ապահովում ժամանակակից սարքավորումներով, բուժհաստատությունների կադրային ներուժի թարմացում,նոր տեխնոլոգիաների ներդրում,	Ժամանակակից սարքավորումներով ապահովված հիվանդանոցների տեսակարար կշիռը % ք. Երևան ուղեգրված հիվանդների տեսակարար կշիռը բուժօգնություն ստացածների ընդհանուր թվում %	

շարժական թվայնացված ֆլյուրոգրաֆիկ մեքենայի առաջնահերթ ձեռք բերում՝ հաշվի առնելով մարզի տուբերկուլյոզ հիվանդության վիճակագրությունը:		
3. Բուժհաստատությունների կառավարման բարելավում,կառավարման արդյունավետության բարձրացում		
3.1Բուժհաստատությունների ղեկավար անձնակազմի ուսուցում ժամանակակից կառավարման մեթոդների և այլընտրանքային ֆինանսական աղբյուրների ներգրավման հմտությունների վերաբերյալ 3.2 Առողջապահական հաստատությունների օպտիմալացման ծրագրի շարունակում	Վերապատրաստումների մասնակցած ղեկավար անձնակազմի տեսակարար կշիռը% Բուժհաստատության կողմից մատուցվող մասնավոր ծառայություններից գոյացող միջոցների տեսակարար կշիռը ընդհանուր բյուջեյում վերամիավորված բուժհաստատությունների թիվը	Բուժհիմնարկների ղեկավար անձնակազմը կիրառում է նոր գիտելիքներ
4.տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման պայքարի ուժեղացում,ինչը կնպաստի եռավարակակիրների թվի կրճատմանը և մահացության դեպքերի նվազմանը		
4.1 Անվտանգ սեռական վարքագծի վերաբերյալ դպրոցներում դասընթացների կազմակերպում	սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով վարակված հիվանդների թիվը՝100000բնակչի հաշվով Դասընթացներին ներգրավված դպրոցների տեսակարար կշիռը%	Տեղական իշխանությունները,դպրոցները, բուժհիմնարկները շահագրգռված են կանխարգելման միջոցառումների շարունակելիության մեջ:
4.2. ՁԼՄ-ների միջոցով տարափոխիկ հիվանդությունների, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի	ՄԻԱՎ վարակակիրների թիվը `100000 բնակչի հաշվով ՄԻԱՎ տարածվածությունը հղի կանանց շրջանում	Մշակութային արժեքները չեն խոչընդոտում անվտանգ սեռական հարաբերությունների,բեղմնակ անխիչ միջոցների,ՁԻԱՀ-ի վերաբերյալ

վերաբերյալ բնակչության լայն շերտերի իրազեկում 4.3«Վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումներ», որտեղ նախատեսել, օրինակ՝ հակակատաղության պատվաստանյութի ձեռք բերումը, տուլարեմիայի դեմ կանխարգելիչ միջոցառումները /կրծողազերծման աշխատանքներ/ և այլն:	Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ իրազեկված բնակչության տեսակարար կշիռը %	տեղեկատվության տարածմանը

97. «Առողջապահության ոլորտի տրամաբանական հենքը» աղյուսակում չեն արտացոլվել մարզում իմունականխարգելման ոլորտում առկա խնդիրներին ուղղված բարելավման ուղիները, քանի որ վերջինս համահունչ պետք է լինի Հազարամյակի զարգացման նպատակներին և Կայուն զարգացման ծրագրի դրույթներին: Մասնավորապես՝ ՀՀ առողջապահության նախարարի 2011 թվականի հուլիսի 6-ի թիվ 1308-Ա հրամանով ընտրանքային կարգով իրականացված իմունականխարգելման գործընթացի մոնիթորինգի արդյունքների համաձայն մարզում առկա են առանձին համայնքներ, որտեղ դեռևս բավական ցածր են բնակչության պատվաստումներում ընդգրկման ցուցանիշները, պատվաստումներն իրականացվում են տուրային մեթոդով՝ գյուղից–գյուղ փոխադրելով պատվաստանյութի բացված սրվակները՝ բարձրացնելով պատվաստանյութերի կոնտամինացիայի ենթարկման ռիսկը: Մարզում առկա է նաև պատվաստանյութերի պահպանման սառնարանների խնդիրը՝ կամ հին են և չեն համապատասխանում միջազգային ստանդարտներին, կամ էլ՝ սառնարանների ծավալը շատ փոքր է և չի բավարարում պատվաստանյութերի պահպանման պահանջներին:

98. Ստորև ներկայացված են Տավուշի մարզի տուբերկուլոզով հիվանդների ընդհանուր թվերը, տուբերկուլոզից հիվանդացության և մահացության ցուցանիշները (100 000 ազգաբնակչի հաշվով)՝ 2008-2010թթ. համար.

Աղյուսակ 5. 6

Տուբերկուլոզի դեպքեր	2008թ.	2009թ.	2010թ.
Հաշվառված ակտիվ տուբերկուլոզով հիվանդների քանակը	100	111	117
Հիվանդացություն (100 000 ազգաբնակչի հաշվով)	40.3	44.0	38.0
Մահացություն (100 000 ազգաբնակչի հաշվով)	3.0	6.0	2.2

5.2 Սոցիալական պաշտպանություն

5.2.1 Քաղաքականության վերլուծություն

99. ՄԶԾ առաջարկվում է մարզի բնակչության սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման նպատակով սոցիալական ծառայությունների իրականացման գործընթացը տեղափոխել այլ հարթություն. խոցելի խմբերի համար իրականացվող ծրագրերն ու միջոցառումները դարձնել բազմազան և բազմաբնույթ, կատարել սոցիալական հիմնախնդիրների և դրանց առաջացման պատճառների բացահայտմանն ուղղված աշխատանքներ, ինչպես նաև շարունակել իրականացնել սոցիալական ծառայություններ մատուցող կադրերի շարունակական վերապատրաստում, բարձրացնել հանրային իրազեկման մակարդակը սոցիալական ծրագրերի իրականացման վերաբերյալ, կարողությունների զարգացում, բարելավել սոցիալական ծառայությունների կառավարումը, նյութատեխնիկական բազան և այլն:

100. Մարզում հաշվառված բնակչության թիվը կազմում է 141663 /42784 ընտանիք/, որից 131876-ը մշտական են բնակվում, իսկ 9787-ը երկարատև բացակայում են: Մարզում տեղի ունեցող ժողովրդագրական գործընթացների վրա նշանակալի ազդեցություն ունի գործազրկության մակարդակը, միջպետական և միջմարզային միգրացիան:

101. Ժողովրդագրական վիճակի բարելավման նպատակով նախատեսվում է ընդլայնել մանկապարտեզների ցանցը, մշակել և ՀՀ կառավարություն ներկայացնել երիտասարդ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված առաջարկություններ /այդ թվում՝ բնակարանաշինական/:

Սոցիալական պաշտպանության ոլորտի 2011թ. բյուջե

Աղյուսակ 5.7

Հ/	Միջոցառման անվանումը	Պլանավորված /մլն.դրամ/	Փաստացի /մլն.դրամ/
		Տարեկան	Տարեկան
1.	Վարձատրվող հասարակական աշխատանքների ծրագրերի իրականացում	10.0	26.8
	Ընդամենը	10.0	26.8

5.2.2.Իրականացման առաջընթացը

102. Սոցիալական ծառայությունների և ծրագրերի վերաբերյալ հասարակության իրազեկում: Սոցիալական աջակցության բնագավառում ընթացող ծրագրերի և դրանցում ընդգրկվելու չափանիշների վերաբերյալ առաջին կիսամյակում հեռարձակվել է երեք

հեռուստահաղորդում, տպագրվել են հոդվածներ ‘Տավուշ’ մարզային թերթում, որոնք նվիրված են եղել պետական նպաստների և կենսաթոշակների նշանակման համար անհրաժեշտ փաստաթղթերի և ներկայացման ժամկետների պարզաբանմանը, համապատասխան օրենքներում և այլ իրավական ակտերում կատարված փոփխություններին, տեղեկատվություն է ներկայացվել: Բացի այդ ‘Իջևան’ հեռուստաընկերությունով անհրաժեշտ տեղեկություններ են ներկայացվել ԽՍՀՄ խնայբանկերում ներդրված ավանդների դիմաց փոխհատուցումների վճարումների գործընթացի վերաբերյալ:

103. Միջազգային, ոչ պետական (այդ թվում հասարակական) կազմակերպությունների աջակցությամբ մարզում սոցիալական ապահովության բնագավառում իրականացվել են մոտ 30 ծրագրեր (նաև մարդասիրական օգնություն է տրամադրվել), որտեղ ներգրավված են եղել մոտ 4000 շահառուներ՝ մարզի համայնքներում բնակվող խոցելի խմբերի ներկայացուցիչներ:

104. Ստորև ներկայացվում է իրականացված պետական միջոցառումների առաջընթացը արդյունքային ցուցանիշների և թիրախների նկատմամբ:

Սոցիալական պաշտպանության ոլորտում արդյունքային ցուցանիշների և թիրախների վերանայում

Միջոցառման անվանումը	Արդյունքային ցուցանիշ	Թիրախ	Փաստացի
Ոլորտային նպատակ՝ Բարձրացնել Սոցիալական ծառայությունների մատչելիությունը և որակը մարզում	1. Սոցիալական ծառայությունների հասցեականությունից սոցիալապես խոցելի բնակչության բավարարվածության աստիճան,	40%	40%
	2. Ծառայության որակից սոցիալապես խոցելի խմբերի բավարարվածության աստիճան,	00%	40%
	3. Աշխատանքի տեղավորված գործազուրկների տեսակարար կշիռը,%	9%	9%
	4. Ոչ նյութական		

	աջակցություն ստացած հաշմանդամների, ծերերի տեսակարար կշիռը, 5. Սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված խոցելի խմբերի ներկայացուցիչների տեսակարար կշիռը,	25% 10%	55% 1%
1. Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների նյութատեխնիկական պայմանների բարելավում՝ համակարգի գործունեություն արդյունավետության և որակի բարձրացման նպատակով			
1.1 Սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների /պետական և ոչ պետական /համակարգչային գույքով,տեխնիկայով հագեցում և ինտերնետ կապով ապահովում	Սոցիալական ծառայություններում նոր համակարգիչների տեսակարար կշիռը, Կայուն ինտերնետ կապ ունեցող սոցիալական ծառայությունների թիվը,	50% 100%	50% 100%
2. Երեխաների խնամքի կենտրոնների ստեղծում՝ ապահովելով սոցիալ-հոգեբանական ,մանկավարժական և իրավաբանական ծառայություններ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երաեխաներին և նրանց ընտանիքներին			
2.1.Դժվարին իրավիճակում հայտնված երեխաների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում 2.2 Ժամանակավոր	Մարզում դժվարին իրավիճակում հայտված երեխաների թիվ	1359	1359

խնամքի կարիք ունեցող երեխաների ցերեկային կենտրոնների ստեղծում	Խնամքի և սոցիալ հոգեբանական վերականգնողական աջակցության ծառայություններից օգտված երեխաների թիվ	260	260
3. Բնակչության սոցիալական ծառայությունների ընդլայնում, որը կնպաստի խոցելի խմբերի համար մատուցվող ծառայությունների բազմազանությանը			
3.1 Խնամողների վերապատրաստում հաշմանդամների, ծերերի խնամքը, այդ թվում տնային խնամք իրականացնելու համար	Մարզում խնամողների մասնագիտական վերապատրաստում անցած կամավորների թիվը		22
3.2 Սոցիալապես անապահով ընտանիքների անդամների սննդապահովում	Հումանիտար ճաշարանների կողմից սպասարկվող բնակչության թվաքանակը,	2.5%	2.5%
3.3. Ծեր և հաշմանդամ անձանց խնամքի կենտրոնի ստեղծում Ծերերի խնամքի ծառայությունների իրականացում	Կենտրոնի ծառայությունից օգտվող հաշմանդամների և ծերերի տես. կշիռը	20%	20
3.4 Հաշմանդամներին /հատկապես հաշմանդամ	Վերականգնողական և տեխնիկական անհրաժեշտ այլ		

երեխաներին և նրանց ծնողներին/ վերակնգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում Հաշմադամ երեխաների առողջա-վերականգնողական ցերաեկային կենտրոնի ստեղծում	միջոցներ ստացած հաշմանդամների թիվը Կենտրոնի ծառայությունից օգտվող հաշմանդամ երեխաների թիվ	8 600	8 600
3.5Խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացում	Հաշվառված խնամատար ընտանիքների թիվ Խնամատար ընտանիքներ տեղավորված ծնողազուրկ երեխաների թիվը	0 0	0 0
3.6 Գործազուրկների համար մասնագիտական միջոցառումների կազմակերպում	Մասնագիտական Ուսուցումն ավարտածների թվաքանակը՝ նրանցից աշխատանքի տեղավորվածներ՝25	96	96 36
3.7Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպում	ա/ Վարձատրվող հասարակական աշխատանքների համայնքային ծրագրերի թիվը՝ և ծրագրերում ընդգրկված շահառուների թիվը՝	64 720	64 720
4.Սոցիալական սպասարկման համակարգի կառավարմնան բարելավում,ինչի արդյունքում խոցելի բնակչության սոցիալական սպասարկման գործում կավելանան համագործակցությամբ իրականացվող ծրագրերը			
4.1ՀԿ-ների,ՏԻՄ-	ՀԿ-ների և ՏԻՄ-երի		

եր,ՍԾՏԳ-երի միջև տեղեկատվության փոխանակման,մարզի մակարդակով իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակում և ներդրում	համատեղ սոցիալական ծրագրերի թիվը	25	25
4.2 Պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով խոցելի խմբերի կարիքների գնահատման միջոցառումների կանոնավոր իրագործում			
4.3 Մարզի խոցելի խմբերի վերաբերյալ տվյալների հավաքագրում՝ նրանց սոցիալական պաշտպանությանն ուղղված միջոցառումների ընդլայնման և հասցեականության բարձրացման նպատակով	Խոցելի խմբերի համար իրականացված ծրագրերի և միջոցառումների թիվը	64	64
4.4Մարզային երիտասադական կենտրոնի զարգացում, երիտասարդների շրջանում կամավորական շարժման խթանում	Սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված կամավորների թիվը	46	46
5.Մարզում սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկման բարձրացում,ինչը կնպաստի մարզում սոցիալական ծառայությունների գործունեության հրապարակայնության, նրանց հաշվետվողականության աճին և հետևաբար նաև նրանց աշխատանքի նպատակայնության բարձրացմանը			
5.1Մարզում Սոցիալական ծառայություններ	Հրապարակային ներկայացումների թիվը Սոցիալական	4	4

մատուցող կազմակերպությունների /պետական, հասարակական, միջազգային/ և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրատարակում և տարածում բնակչության լայն շերտերում համացանցում տեղադրում	ծրագրերի և ծառայություն մատուցողների մասին իրազեկված խոցելի բնակչության տեսակարար կշիռ՝ Հասարակական կարծիքի հարցումների ժամանակ սոցիալական ծառայությունների նպատակայնությունից և հասցեականությունից բավարարված հարցվողների տեսակարար կշիռը հարցվողների ընդհանուր թվում	40% 10%	60% 10
6. Սոցիալական ծառայությունների բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում			
6.1Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար դոնորներ և հովանավորներ որոնելու հմտությունների զարգացում /դասընթացներ, արտասահմանյան փորձ և այլն/	Մատուցվող ոչ նյութական ծառայությունների թիվը՝	2	2
6.2Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների	Կարիքի գնահատման դասընթացներին մասնակցածների թիվը /մարզպետարան և ՍԾՏԳ-	30	30

/պետական և ոչ պետական/ կադրերի ռապատրաստում կարիքների գնհատման հմտությունների զարգացման վերաբերյալ	ներ,ՏԻՄ,ՀԿ-ներ/	30	30

105. Խնդիրներ - Մարզի ՀԿ–ների, ՏԻՄ–ի և սոցիալական ոլորտի կազմակերպությունների համագործակցությունը գտնվում է ոչ այնքան բարձր մակարդակի վրա. չկա շահագրգռվածություն: Ներկայացված մի շարք միջոցառումներ հնարավոր է իրականացնել դոնոր կազմակերպությունների աջակցությամբ, որոնց գտնելու գործընթացը լավ չի կազմակերպվում: Այս ուղղությամբ որոշ աշխատանքներ են տարվում համապատասխան ֆինանսավորում ստանալու թե պետությունից և թե դոնոր կազմակերպություններից:

106. Քաղած դասեր և հետագա քայլեր - Անհրաժեշտ է առաջացած հրատապ խնդիրները ժամանակին ներկայացնել ՀՀ Կառավարություն և միջազգային կազմակերպություններ, որպեսզի հնարավորության դեպքում դրանց լուծման նպատակով գումարներ հատկացվեն:

107. Սոցիալական պաշտպանության ոլորտի զարգացման նպատակներն ու ուղղությունները ներկայացված են գծապատկերում՝



Աղյուսակ 5.8. ՄԶԾ ծրագրավորվող սոցիալական ապահովության ֆինանսավորումը 2012-2015թ.թ.

(մլն. դրամ)

ՄԶԾ ոլորտը	**Պլանավորվող ֆինանսավորումը 2012-2015թթ.**				
	2012թ.	**2013թ.**	**2014թ.**	**2015թ.**	**Ընդամենը 2012-2015թթ.**
Սոցիալական պաշտպանություն	15.0	20.0	15.0	20.0	70.0

Սոցիալական պաշտպանության ոլորտի ծրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Նախադրյալներ
Ոլորտային նպատակ՝ Բարձրացնել սոցիալական ծառայությունների մատչելիությունը և որակը Տավուշի մարզում	1. Սոցիալական ծառայությունների հասցեականությունից սոցիալապես խոցելի բնակչության բավարարվածության աստիճանը 2. Ծառայության որակից սոցիալապես խոցելի խմբերի բավարարվածության աստիճանը 3. Աշխատանքի տեղավորված գործազուրկների տեսակարար կշիռը, % 4. Ոչ նյութական աջակցություն ստացած հաշմանդամների, ծերերի տեսակարար կշիռը, % 5. Սոցիալական պաշտպանության ծրագրերում ընդգրկված խոցելի խմբերի ներկայացուցիչների տեսակարար կշիռը, %	Սոցիալական պաշտպանության ոլորտը ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում է: Ֆինանսական միջոցները բաշխված են և ժամանակին հատկացված:
1. Մարզում սոցիալական ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացում, ինչը կնպաստի մարզում սոցիալական ծառայությունների գործունեության հրապարակայնության, նրանց հաշվետվողականության աճին և հետևաբար աշխատանքի նպատակայնության բարձրացմանը		
1.1 Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, հասարակական, միջազգային) և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության հրատարակում և տարածում բնակչության լայն շերտերում	Հրապարակային ներկայացումների թիվը Սոցիալական ծրագրերի և ծառայություն մատուցողների մասին իրազեկված խոցելի բնակչության տեսակարար կշիռը, %	Մարզում գործող սոցիալական ծառայություններ մատուցողները շահագրգռված են տրամադրել տեղեկատվություն իրենց սոցիալական ծրագրերի մասին:

1.2 Մարզպետարանի սոցիալական ապահովության վարչության/ ՍԾՏԳ-ների կանոնավոր հաշվետվությունների հրապարակային ներկայացում բնակչությանը սոցիալական աջակցության բնագավառում ընթացող ծրագրերի, նրանց մեջ ընդգրկման չափանիշների վերաբերյալ	Հասարակական կարծիքի հարցումների ժամանակ սոցիալական ծառայությունների նպատակայնությունից և հասցեականությունից բավարարված հարցվողների տեսակարար կշիռը հարցվողների ընդհանուր թվում, %	
1.3. Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական, հասարակական, միջազգային) և նրանց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տեղադրում համացանցում		
2. Սոցիալական ծառայությունների բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստում		
2.1 Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար դոնորներ և հովանավորներ որոնելու հմտությունների զարգացում (դասընթացներ, միջազգային փորձ և այլն)	Մատուցվող ոչ նյութական ծառայությունների թիվը Դոնորների և մասնավոր բարերարների կողմից ֆինանսավորվող կարիքավոր խմբերին ուղղված աջակցության ծառայությունների թիվը	
2.2 Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների (պետական և ոչ պետական) կադրերի վերապատրաստում կարիքների գնահատման հմտությունների զարգացման վերաբերյալ	Կարիքի գնահատման դասընթացներին մասնակցածների թիվը (մարզպետարան և ՍԾՏԳ-ներ, ՏԻՄ, ՀԿ-ներ)	
3. Սոցիալական սպասարկման համակարգի կառավարման բարելավում, ինչի արդյունքում կավելանան խոցելի բնակչության սոցիալական սպասարկման համատեղ իրականացվող ծրագրերը		
3.1 ՀԿ-ների, ՏԻՄ-երի, ՍԾՏԳ-ների միջև տեղեկատվության փոխանակման, մարզի մակարդակով	ՀԿ-ների և ՏԻՄ-երի համատեղ սոցիալական ծրագրերի թիվը	Միջոցառումների իրականացման համար ակնկալվում է ֆինանսավորում

իրականացվող սոցիալական ծրագրերի համակարգման մեխանիզմների մշակում և ներդնում		դոնոր կազմակերպություններից:
3.2 Պետական և ոչ պետական կառույցների համատեղ ջանքերով խոցելի խմբերի կարիքների գնահատման միջոցառումների կանոնավոր իրագործում		
3.3 Մարզի խոցելի խմբերի քարտեզագրում, տվյալների բազայի ստեղծում՝ նրանց սոցիալական պաշտպանությանն ուղղված միջոցառումների ընդլայնման և հասցեականության բարձրացման նպատակով	Խոցելի խմբերի վերաբերյալ տվյալների բազայի առկայություն Խոցելի խմբերի համար իրականացված ծրագրերի և միջոցառումների թիվը	
3.4 Մարզային երիտասարդական կենտրոնի զարգացում, երիտասարդների շրջանում կամավորական շարժման խթանում	Սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված կամավորների թիվը	Երիտասարդությունը ցանկանում է հասարակական հիմունքներով ծառայություն մատուցել խոցելի խմբերին:
4. Տարեցների և հաշմանդամների խնամքի մարզային կենտրոնի ստեղծում՝ ապահովելով սոցիալ-հոգեբանական, մանկավարժական և իրավաբանական ծառայություններ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող անձանց համար		
4.1 Դժվարին իրավիճակում հայտնված անձանց վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում 4.2 Խնամքի կարիք ունեցող տարեցների և հաշմանդամների ցերեկային կենտրոնների ստեղծում	4.1 Դժվարին իրավիճակում հայտնված անձանց վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում 4.2 Խնամքի կարիք ունեցող տարեցների և հաշմանդամների ցերեկային կենտրոնների ստեղծում	4.1 Դժվարին իրավիճակում հայտնված անձանց վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում 4.2 Խնամքի կարիք ունեցող տարեցների և հաշմանդամների ցերեկային կենտրոնների ստեղծում
5. Մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների նյութատեխնիկական պայմանների բարելավում՝		

համակարգի գործունեության արդյունավետության և որակի բարձրացման նպատակով		
5.1 Սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների (պետական և ոչ պետական) համակարգչային տեխնիկայով հագեցում և ինտերնետ կապով ապահովում	Սոցիալական ծառայություններում նոր համակարգիչների տեսակարար կշիռը, % Կայուն ինտերնետ կապ ունեցող սոցիալական ծառայությունների թիվը, %	

6. Բնակչության սոցիալական ծառայությունների ընդլայնում, որը կնպաստի խոցելի խմբերին մատուցվող ծառայությունների բազմազանությանը		
6.1 Խնամողների վերապատրաստում հաշմանդամների, ծերերի խնամք, այդ թվում տնային խնամք իրականացնելու համար	Մարզում խնամողների մասնագիտական վերապատրաստում անցած կամավորների թիվը	Միջոցառումների իրականացման համար ակնկալվում է ֆինանսավորում դոնոր կազմակերպություններից: Անհրաժեշտ փորձ և հմտություններ ունեցող պետական և ոչ պետական սոցիալական ծառայություններ մատուցողների առկայություն: Պետական և ոչ պետական կազմակերպությունների միջև համագործակցության բարձր աստիճան:
6.2 Սոցիալապես անապահով ընտանիքների անդամների սննդապահովում	Հումանիտար ճաշարանների կողմից սպասարկվող բնակչության թվաքանակը, %	
6.3 Խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացում	Հաշվառված խնամատար ընտանիքների թիվը Խնամատար ընտանիքներում տեղավորված	ՀՀ կառավարությունն աջակցում է խնամատար

	ծնողազուրկ երեխաների թիվը	ընտանիքի ինստիտուտի կայացմանը հանրապետությունում:
6.4 Գործազուրկների համար մասնագիտական ուսուցման կազմակերպում (վերամասնագիտացում, որակավորման բարձրացում և նախնական արհեստագործական, մասնագիտական պատրաստում)	Մասնագիտական ուսուցումն ավարտածների թվաքանակը, նրանցից աշխատանքի տեղավորվածները	Մասնագիտական ուսուցում կազմակերպելու համար ակնկալվում է ֆինանսավորում դոնոր կազմակերպություններից:
6.5 Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպում	Վարձատրվող հասարակական աշխատանքների համայնքային ծրագրերի թիվը և ծրագրերում ընդգրկված շահառուների թիվը Աշխատանք փնտրող անձանց սոցիալ-տնտեսական վիճակի ժամանակավոր բարելավում	Գյուղական բնակավայրերի բնակչության զբաղմունքների բազմազանեցում, ոչ գյուղական ոլորտի ճյուղերի առաջանցիկ զարգացման խրախուսում և ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծում պետական և մասնավոր ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման մեխանիզմների ու ուղղությունների մշակման և կիրարկման միջոցով

6.6. ,,Մասնագիտական ուսուցում կազմակերպում/վերամասնագիտացում, որակավորման բարձրացում և նախնական արհեստագործական, մասնագիտական պատրաստում/ հաշմանդամների, երկարամյա ծառայության և արտոնյալ կենսաթոշակ ստացող անձանց, գյուղնշանակության հողի սեփականատեր հանդիսացող աշխատանք փնտրող անձանց համար''	Հաշմանդամների զբաղվածության և մասնագիտացման հարցերի կարգավորում	
7. Մարզի ժողովրդագրական իրավիճակի բարելավում		
7.1.Երիտասարդ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված առաջարկությունների մշակում և ՀՀ կառավարություն ներկայացում /այդ թվում՝ բնակարանաշինական/:	Երիտասարդ ընտանիքների բնակարանային պայմանների բարելավում	Միջոցառումների իրականացման համար ակնկալվում է ֆինանսավորում դոնոր կազմակերպություններից և պետբյուջեից
7.2. Նախադպրոցական ծառայություններ մատուցողների ցանցի ընդլայնում	Նախադպրոցական կրթության կազմակերպման այլընտրանքային մոդելների ներդրում, Ցանցում ընդգրկված երեխաների թիվը	ՀՀ կրթության նախարարություն, համայնքներ

6. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ

6.1Կրթություն

6.1.1.Կրթության ոլորտի իրավիճակի վերլուծություն

108. Համաձայն ԿԶԾ-ի՝ կրթության բնագավառը դիտվում է որպես ‘‘Երկրի’’ տնտեսության առաջընթացն ապահովող և մարդկային աղքատության հաղթահարման առաջնային գործոն: Կրթության ոլորտը ներառում է, կրթության տարբեր աստիճաններ, որոնց համաձայնեցված գործունեությունը հանգեցնում է որակյալ կրթության ապահովմանը: Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը, կրթություն ստանալու հավասար մատչելիությունը: Կրթության որակի և մատչելիության բարձրացումը միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում պետության և հասարակության առաջընթաց զարգացման, ինչպես նաև աղքատության և անհավասարության հաղթահարման կարևորագույն գործոններից է: Վերջին տարիներին կրթության ոլորտում իրականացված բարեփոխումները հնարավորություն տվեցին լուծել համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնել իրավիճակը և նախադրյալներ ստեղծել հետագա զարգացման համար:

109. Նախադպրոցական կրթություն - Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է: Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2008 թվականին հաստատել է «Նախադպրոցական կրթության բարեփոխումների 2008-2015 թվականի ռազմավարական ծրագիրը», որը ծախսարդյունաետ կրթական ծառայությունների ներդրման միջոցով նախատեսում է մինչև 2015 թվականը ավագ նախադպրոցական տարիքային խմբի (5-6 տարեկանների) ընդգրկվածությունը հասցնել մինչև 90%: Ծրագրում առաջնայնությունը տրվում է աղքատ ընտանիքներին և այն համայնքներին, որտեղ նախադպրոցական հաստատություններ չեն գործում:

110. Ըստ 2008-2015 թվականների ռազմավարական ծրագրի>> պետք է ապահովվի բազմաֆունկցիոնալ նախադպրոցական կրթական հաստատությունների գործարկումը տարբերակված ծրագրերով (այլընտրանքային ծառայություններով), ինչպես նաև խթանվի տարաբնույթ նախադպրոցական կրթական ծառայությունների ներդրումը քաղաքային և գյուղական համայնքներում: Նախադպրոցական կրթության որակը բարելավելու նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարի 30.03.2011թ. թիվ 257-Ն հրամանով հաստատվել է <<Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչները>>, իսկ 26.04.2011թ. թիվ 416-Ն հրամանով հաստատվել է <<Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրերը>>:

111. Ինչպես և ամբողջ հանրապետությունում, մարզում մանկապարտեզների, հետևաբար նաև երեխաների թիվը մանկապարտեզներում, նվազում էր անկախության առաջին միջոցներ (փայտ, կերոսին և այլն) ձեռք բերելու դժվարությունները, իսկ հետո նաև ֆինանսական ռեսուրսների սղությունը պայմանավորեցին մանկապարտեզների և հաճախող երեխաների քանակի նվազումը: Բացի այդ, մանկապարտեզների փակման և երեխաների թվաքանակի

նվազման վրա իր ազդեցությունն ունեցավ նաև ղարաբաղյան հակամարտությունը, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, ինչպես նաև նախադպրոցական հաստատությունների ՏԻՄ-երի ենթակայությանը հանձնելը:

112. Տավուշի մարզում 1998-2002թթ.-ին ընկած ժամանակահատվածում գրանցվել է նախադպրոցական հաստատությունների թվաքանակի նվազում: Թեև նվազման դինամիկան այդքան նշանակալից չէր, ինչպես այլ մարզերում, սակայն կարելի է ենթադրել, որ այդ դինամիկան ավելի բարձր էր մինչև 1998թ.-ը, քանզի մեծ էր այն բնակավայրերի (հիմնականում գյուղական) թիվը, որտեղ մանկապարտեզների գործունեությունը դադարեցվել էր մինչև 1998թ.-ը:

113. 2002թ. համեմատ ներկայումս գործող մանկապարտեզների թիվը կայունացման միտում ունի, իսկ հաճախող երեխաների թիվը համեմատաբար ավելացել է: 2011թ-ին Տավուշի մարզում նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիվը ավելացել է ևս մեկով: Ներկայումս գործում է 46 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ 2554 երեխայով, նախորդ տարվա՝ 2355 երեխայի փոխարեն:

114. Մարզի 21 համայնքներում մանկապարտեզներ ընդհանրապես չկան, իսկ 7համայնքներում էլ չնայած, որ շենքային պայմաններն առկա են, սակայն մանկապարտեզները չեն գործում:

115. Նախադպրոցական կրթության որակը բարելավելու նպատակով ՀՀ կառավարությունը կապահովի նաև նախադպրոցական կրթության չափորոշիչներին համապատասխան ծրագրային նյութերի մշակումն ու ներդնումը: Նախադպրոցական հաստատությունները հիմնականում գործում են համայնքային ենթակայությամբ, և նշված ոլորտում մինչև 2011 թվականը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին ծառայություններ չեն մատուցվել, այլ դրանք իրականացվել են համայնքային հատկացումներից, ծնողական վճարներից, երբեմն նաև՝ միջազգային կազմակերպությունների կողմից հատկացված աջակցություններից:

116. Մանկապարտեզների առջև այսօր ծառացած են մի շարք խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն: Մասնավորապես.

1) Կապիտալ վերանորոգում: Նախադպրոցական հաստատությունների գերակշռող մեծամասնության շենքային պայմանները գտնվում են ոչ բարվոք վիճակում:

2) Անբավարար ջեռուցում: Կենտրոնական ջեռուցման համակարգը չի գործում, մարզում գործող մանկապարտեզներից միայն 11-ը ունեն լոկալ ջեռուցում, իսկ մյուս մանկապարտեզները հիմնականում ջեռուցվում են էլեկտրական սարքերի և վառարանների օգնությամբ, ինչը մեծ տարածքի պայմաններում այդքան էլ արդյունավետ չէ:

3) Սնունդ: Չնայած, որ նախադպրոցական հաստատությունների գերակշռող մասում (հատկապես համայնքային ենթակայության), որոնք աշխատում են 8-ժամյա ռեժիմով, երեխաների համար կազմակերպվում է որոշ սննդի մատուցում, այնուամենայնիվ, ըստ ԿԳՆ ուսումնասիրությունների, երեխաները թերսնվում են, իսկ սահմանված նորմատիվներն

ապահովվում են նախատեսվածի 1/4 մասով: Բացի այդ, սննդի կալորիականությունը և սննդարարությունը չի համապատասխանում նորմերին և շատ ցածր է: Սննդի տեսականին ևս միատարր է: Վերջին տարիներին ինչպես դպրոցներին, այնպես էլ մանկապարտեզներին սննդապահովման հարցում մեծապես աջակցում է ՄԱԿ-ի Համաշխարհային պարենի ծրագիրը: ՄԱԿ-ի ՀՊԾ-ի 'Դպրոցի սնուցման' ծրագրի շրջանակում ս/թ հուլիսից կազմակերպվում է մարզում գործող բոլոր՝ 46 մանկապարտեզ հաճախող 2554 երեխայի սննդապահովումը:

4) Գույք: Մանկապարտեզների գույքը և պարագաները թե բարոյապես և թե ֆիզիկապես մաշված են: Գրեթե բոլոր նախադպրոցական հաստատություններն ունեն փափուկ և կոշտ գույքի, պարագաների, խմբասենյակների և դահլիճների կահավորման կարիք:

5) Ուսուցողական նյութեր: Նախադպրոցական հաստատությունների կրթական միջավայրը չափազանց աղքատիկ է և չի համապատասխանում կրթության ժամանակակից պահանջներին: Մանկապարտեզներն ունեն խաղալիքների և ուսուցողական դիդակտիկ պարագաների կարիք:

6) Մասնագիտական կադրեր: Եթե հանրակրթության բնագավառում վերջին տարիներին իրականացվում են մանկավարժների վերապատրաստման ակտիվ միջոցառումներ, ապա նախադպրոցական ոլորտում կադրերի վերապատրաստման խնդիրը չափազանց արդիական է: Չնայած, որ ՀՀ ԿԳՆ Կրթության Ազգային ինստիտուտի միջոցով իրականացվում են լայնածավալ միջոցառումներ մանկավարժների վերապատրաստման ուղղությամբ, վերապատրաստման որոշ միջոցառումներ, այնուամենայնիվ դրանց ծավալները սահմանափակ են: Բացի այդ, կարևոր է նաև համապատասխան մասնագիտական կրթությամբ մասնագետ կադրերի ապահովման խնդիրը, դրանք սահմանափակ բնույթ են կրում: Առաջիկայում Կրթության ազգային ինստիտուտի կողմից կկազմակերպվի նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական կադրերի վերապատրաստման 30-ժամյա և 60-ժամյա վճարովի դասընթացներ: Բացի այդ, կարևոր է նաև համարժեք մասնագիտությամբ մասնագետ կադրերի ապահովման խնդիրը:

117. 5-6 տարեկանների ընդգրկվածությունը մեծացնելու և դպրոցի համար հավասար մեկնարկային պայմաններ ապահովելու նպատակով <Կրթության որակ և համապատասխանություն>> վարկային ծրագրի շրջանակներում 2012 թվականին Տավուշի մարզում ներդրվելու է ծախսարդյունավետ նախադպրոցական ծառայություններ: Այս ծրագրի շարունակականության ապահովման համար հետագա տարիներին ընթացիկ ծախսերը կիրականացվեն ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ելնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևով մեկ սովորողին բաժին ընկնող տարեկան գումարի չափից: Այդ նպատակով 2013-2014 թվականներին <<Նախադպրոցական կրթություն>> ծրագրի գծով Տավուշի մարզին 2013 թվականին հատկացվելու է 17664,4 հազար դրամ, 2014 թվականին՝ 52887,5 հազար դրամ:

118. Նախադպրոցական որակյալ կրթության ապահովման տեսանկյունից ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ մարզում կարևորվում է այլընտրանքային ծառայությունների մատուցումը նախադպրոցահասակ երեխաներին, որոնք կարող են լրացնել կրթության այս օղակում առկա բացերը:

119. **Հանրակրթություն-**Վերջին տարիներին կառավարության կողմից հանրակրթության ոլորտում իրականացված միջոցառումները (հանրակրթության կառավարման ապակենտրոնացում, հաստատությունների ինքնավարության աճ, անցում ըստ աշակերտների թվի ֆինանսավորման համակարգի, ուղղված են համակարգի կառավարման բարեփոխմանը, արդյունավետության բարձրացմանն ու հան¬րակրթության որակի բարելավմանը: Բարելավվել է նաև հատկացվող պետական ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը՝ ի հաշիվ դպրոցների օպտիմալացման և ուսուցիչների շաբաթական ծանրաբեռնվածության բարձրացման:

120. Տավուշի մարզի հանրակրթական համակարգում ընդգրկված է 81 դպրոց (մեկ տարրական դպրոց փակվել է և Դիլիջանի թիվ 1 հատուկ դպրոցն անցել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տակ), այդ թվում՝ 21-ը՝ հիմնական, իսկ մնացած 54-ը՝ միջնակարգ, որոնցից էլ 2-ն վարժարաններ են (Իջևան, Բերդ), և 1-ը՝ արհեստագործական դպրոց (Նոյեմբերյանում նախկինում գործող ևս մեկ արհեստագործական դպրոց ներկայումս գործում է քոլեջի համակազմում) և 4 ավագ դպրոցներ: Բերդ քաղաքում գործում է արհեստագործական ուսումնարանը՝ 7 խմբով:

121. Վերջին տարիներին Տավուշում ևս, ինչպես և ՀՀ այլ մարզերում, նվազել է առաջին դասարան ընդունվածների թվաքանակը:Մասնավորապես, 2011-2012թթ. ուսումնական տարում առաջին դասարան են ընդունվել 1555 երեխա: Դրա հիմնական պատճառներն են ծնելիության անկումը և բնակչության շարունակվող արտագաղթը:

122. Ինչ վերաբերում է ուսուցիչ-աշակերտ թվաքանակի հարաբերակցությանը, ապա 2010-2011թթ. ուսումնական տարում այն կազմել է 1/9.9:

123. ՀՀ ԱՎԾ տվյալների համաձայն՝ 2010-2011թթ. ուսումնական տարում մարզի 81 հանրակրթական դպրոցներում աշխատել է 2119 ուսուցիչ: 2010-2011թթ. ուսումնական տարում մարզի հանրակրթական հաստատություններում սովորել է 16362 աշակերտ, որը 2009-2010թթ. ուսումնական տարվա համեմատ ավել է 955 աշակերտով:

124.Դասարանների թիվը 2008-09թթ. եղել է 987, 2009-10թթ. դարձել է 940, 2010-11թթ 935, և 2011-12թթ. 897:Դասարանների նվազման միտումը պայմանավորված է ավագ դպրոցների կարգավիճակի փոփոխության հետ: Այնուամենայնիվ, իր ընդգրկվածությամբ հանրակրթական ոլորտը Տավուշի մարզում ունի ամենամեծ շահառուների խումբը և, ըստ էության, կրթական այս մակարդակում ծառայությունները գրեթե հավասարաչափ մատչելի են բնակչության բոլոր խմբերի համար: Այսպես. զուտ ընդգրկվածությունը տարրական դպրոցում Տավուշի մարզում կազմում է 100%:

125. 2006թ.-ի դրությամբ մարզի բոլոր դպրոցներն անցել են ֆինանսավորման նոր կարգի: Այդ կապակցությամբ մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հետ համատեղ 2006թ., ըստ տարածաշրջանների, անց են կացվել հաշվապահների վերապատրաստման դասընթացներ «որի ժամանակ ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթերի վարման և ֆինանսավորման նոր կարգի հետ կապված խնդիրները: Թեև

հանրակրթական ոլորտը պետության գերակա ուղղություններից է և հատկացվող բյուջետային միջոցները տարեցտարի ավելանում են, սակայն դրանք դեռևս բավարար չեն դպրոցների լիարժեք պահպանման և գործարկման համար:

126. Մարզի հանրակրթության ոլորտում միայն 2007-11թթ. իրականացվել են մի շարք ծրագրեր (շենքերի վերանորոգման, գույքի թարմացման, ուսուցիչների, տնօրենների և խորհրդի անդամների վերապատրաստման ծրագրեր), որոնք անշուշտ դրական ազդեցություն են ունեցել հանրակրթական ծառայությունների որակի վրա:

127. Վերոհիշյալ ժամանակահատվածում մարզում վերանորոգվել/հիմնանորոգվել է դպրոցների ավելի քան 80 տոկոսը: 47 դպրոց, որից 37-ը՝ գյուղական: Այնուամենայնիվ, բյուջեով նախատեսվող միջոցները բավարար չեն վերանորոգման աշխատանքներն ամբողջությամբ կատարելու համար: Այս հարցում զգալի աջակցություն են ցուցաբերում նաև Համաշխարհային բանկը, Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամը (ՀՍՆՀ) և այլն:

128. Միայն 2011թ. ՀՀ պետբյուջեով և այլ ներդրումային ծրագրերով վերանորոգել է 17 դպրոց: Տավուշի մարզի առաջնահերթ վերանորոգման կարիք ունեցող դպրոցներն ըստ վթարայնության աստիճանի ներկայացված են **հավելված 2-ում**:

129. Մարզի 46 դպրոցներ ունեն համակարգչային դասասենյակներ: Բոլոր դպրոցներն ընդգրկված են 'Համակարգիչների շրջանառու հիմնադրամի' մեջ: 46 դպրոցներում արդեն գործում են ինտերնետային կապով ապահովված համակարգչային սենյակներ, որոնք մատչելի են նաև բնակչության լայն շերտերի համար:

130. 1997թ. հիմնադրված 'Դասագրքերի շրջանառու հիմնադրամի' շրջանակում դասագրքերի ապահովվածության խնդիրը մեծ մասամբ լուծված է: Դպրոցներին իրավունք է վերապահված աշակերտների թվի 8% շրջանակում սոցիալապես անապահով աշակերտներին ապահովել անվճար դասագրքերով:

131. Ակնհայտ է, որ կրթական գործընթացի որակը կախված է ոչ միայն համապատասխան նյութատեխնիկական բազայի առկայությունից, այլև ուսուցչական անձնակազմի գիտելիքների մակարդակից: Այսօր մարզի համար արդիական խնդիր է մանկավարժների պատրաստվածությունից և հմտությունների համապատասխանեցումը ժամանակակից պայմաններին: Այս առումով կարևորվում է նրանց մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումը, ինչը վերջին տարիներին ակտիվ ընթացքի մեջ է:

132. 2010-11թթ. մարզի դպրոցների ուսուցիչները հինգ առարկաների գծով անցել են վերապատրաստում Կրթության ազգային ինստիտուտում, որից հետո տեղերում (մարզի չորս դպրոց-կենտրոններում) կազմակերպել են մարզի բոլոր դպրոցների ուսուցիչների վերապատրաստումը:

133. Վերջին տարիներին ներդրվել է մանկավարժական կադրերի շարունակական վերապատրաստման համակարգը, որը հնարավորություն է տալիս ապահովել ուսուցչական

համակազմի վերապատրաստման 5-ամյա պարբերաշրջանը և տարեկան վերապատրաստել նրանց շուրջ 20%-ը:

134. Միաժամանակ, <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի համաձայն, հանրակրթական դպրոցների ուսուցիչների թափուր տեղերը համալրվում են մրցույթով: Ներդրվել է ուսուցիչների ատեստավորման կարգը:

135. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպելու նպատակով մարզի հանրակրթական դպրոցներում ներդրվել է ներառական կրթության ծրագիր: ՀՀ կառավարության 27.01.2011թ. թիվ 46-Ն որոշման համաձայն ծրագիրը տարածվել է մարզի բոլոր դպրոցների վրա: Վերապատրաստվել են մոտ 150 ուսուցչի օգնականներ: Ավարտվել են կաբինետների ստեղծման և կահավորման աշխատանքները:

136. Կրթության ոլորտում դոնոր հանրության աջակցությամբ մարզում գործունեություն են ծավալում ինչպես միջազգային, այնպես էլ տեղական կազմակերպությունները: Այսպես օրինակ՝ 2002թ.-ից ի վեր մարզում Մեծ Բրիտանական կազմակերպությունը ֆինանսավորում է 'Հույսի կամուրջ' ՀԿ-ի բանավեճի ակումբը մարզի բոլոր տարածաշրջաններում գործող կենտրոններում: Իսկ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի Հայաստանյան գրասենյակը 2000թ.-ից տրամադրում է գրենական պիտույքներ, խաղալիքներ, գույք 'Հույսի Կամուրջ' ՀԿ-ի չորս կենտրոններին: 2001թ.-ից ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը մարզում ֆինանսավորում է նաև այդ կենտրոնների հաշմանդամ երեխաների կրթական ծրագրերը:

137. Արտադպրոցական դաստիարակություն ոլորտում պետության ռազմավարությունն ուղղված է համակարգի արդիականացմանը և զարգացման նախադրյալների ստեղծմանը: Մասնավորապես, գործունեության առաջնային ուղղություններն են օրենսդրական դաշտի և կառավարման համակարգի կատարելագործումը, կադրերի մասնագիտական կարողությունների զարգացումը, նյութատեխնիկական և ուսումնանյութական հիմքի բարելավումը, ծառայությունների մատչելիության և ընդգրկվածության մեծացումը: <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի համաձայն հանրակրթական դպրոցների տնօրենները անցել են համապատասխան վերապատրաստում և հավաստագրում: Այսուհետ հանրակրթական դպրոցների տնօրենների թափուր տեղերը կարող են համալրվել միայն մրցութային կարգով՝ սահմանված կարգով վերապատրաստում անցած և ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք՝ հավաստագիր ունեցող անձանց կողմից:

138. Մարզի 4 քաղաքներում ընդհանուր թվով գործում են սպորտային, արվեստի և երաժշտության արտադասարանական 12 դպրոցներ: Յուրաքանչյուր դպրոցում սովորում է 100-150 երեխա: Խմբերի միջին քանակը կազմում է 7-10:

139. Ընդհանուր առմամբ, մարզում կազմակերպվում են տարբեր առարկաներով համայնքային և միջհամայնքային օլիմպիադաներ, մարզական մրցումներ, ցուցահանդեսներ, ամառային ճամբարներ, որոնց հեռավոր համայնքների աճակերտները դժվարանում են մասնակցել:

140. ***Մասնագիտական կրթության բնագավառում*** պետության ռազմավարությունն ուղղված է աշխատաշուկայում մրցունակ մասնագետների պատրաստմանը, կրթական ծրագրերի համապատասխանեցմանը երկրի և տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին, կրթության բովանդակության միջազգային չափանիշներին համադրելիության և ուսումնական գործընթացի թափանցիկության, ինչպես նաև մատչելիության և հավասար հնարավորությունների ապահովմանը:

141. ***Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն -*** ներկայումս Տավուշի մարզում գործում են տարբեր գերատեսչությունների ենթարկայության պատկանող հետևյալ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ, այդ թվում.

1) Իջևանի տարածաշրջանային պետական քոլեջը,
2) Դիլիջանի պետական քոլեջը,
3) Դիլիջանի պետական բժշկական քոլեջը,
4) Դիլիջանի արվեստի պետական քոլեջը,
5) Նոյեմբերյանի պետական քոլեջը,
6) Բերդի պետական քոլեջը,
7) ք. Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի մասնաճյուղ,
8) Մարզում գործում է նաև Բերդի արհեստագործական ուսումնարան:

142. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտի կարևորագույն խնդիրներից է աշխատաշուկայի պահանջներին միտված մասնագիտական կրթության բարձր որակի ապահովումը: Համակարգը ծերացման կայուն միտում ունի և առկա է որակյալ մանկավարժական կադրերի արտահոսք: Վերջինս հիմնականում պայմանավորված է համակարգում առկա ցածր աշխատավարձերով: Դասավանդող անձնակազմը վերապատրաստման և մասնագիտական որակավորման բարձրացման կարիք ունի: Կրթական գործընթացի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է ընդլայնել տեղեկատվական հաղորդակցման և դասավանդման նոր տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, թույլ է կազմակերպություն-ուսումնական հաստատություն կապը, բացակայում են արդյունավետ մեխանիզմները ուսումնական և արտադրական պրակտիկաների կազմակերպման առումով:

143. Աշխատաշուկան, ի դեմս գործատուների, թույլ է ներգրավված այս համակարգի կառավարման աշխատանքներում: Նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում լիարժեք ձևավորված չէ սոցիալական գործընկերությունը: Ներկայիս համակարգը բավարար ճկուն չէ և չի հասցնում ինքնակամ արձագանքել տնտեսության արագ զարգացող որոշ ճյուղերի պահանջներին: Ցածր է նաև հասարակության սոցիալական խոցելի խմբերի ընդգրկվածությունը, ինչն առաջին հերթին պայմանավորված է վճարովի ուսուցման համակարգում այս խմբերի համար բավական բարձր համարվող ուսման վարձավճարների չափով, և սա առավել հատկանշական է գյուղական երիտասարդության համար: Գործնական աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան վերազինման կարիք ունի:

Ներկայումս աշխատաշուկան կարիք ունի որակյալ զոդող, հյուսն, ատաղձագործ, պատշար և մի շարք այլ որակյալ մասնագետների:

144. Նշված խնդիրների լուծման նպատակով վերջին տարիներին ոլորտում իրականացվում են բարեփոխումներ, որոնք պայմանավորված են նաև <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքի դրույթներով: Ոլորտի բարեփոխումների գծով ՀՀ կառավարության հավանությանն են արժանացել մի շարք իրավական ակտեր, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության զարգացման հայեցակարգը և Հայաստանում մասնագիտական կրթության բարեփոխումների 2009-2011 թվականների միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը, Հայաստանի նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերության հայեցակարգը: ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի <<Կրթություն ուղղված Հայաստանի ապագային>> ծրագրի շրջանակներում հանրապետությունում 12 փորձարարական քոլեջներ վերակազմակերպվել են տարածաշրջանային քոլեջների, ամբողջովին նորացվել և վերազինվել է դրանց նյութատեխնիկական բազան, բարելավվել են շենքային պայմանները:

145. Հայաստանում Բրիթիշ Քաունսիլի գրասենյակի կողմից իրականացվում է <<Աշխատանք և հմտություններ>> ծրագիրը, որի նպատակն է Հարավարևելյան Եվրոպայի երկրներում՝ Մեծ Բրիտանիայի հետ կապեր հաստատելու միջոցով, կրթությունը համապատասխանեցնել աշխատանքի շուկայի պահանջներին, դրանով իսկ նպաստելով արտադրողականության բարձրացմանը և աշխատանքի շուկայում աշխատուժի ազատ տեղաշարժմանը:

146.<<Անուշավան Աբրահամյան>> բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների շենքերի ու ջեռուցման համակարգի վերանորոգում, կաբինետ-լաբորատորիաների վերազինում:

147. Ներկայումս ընթացող բարեփոխումներով պայմանավորված տարեցտարի ավելանում է ոլորտի պետական ֆինանսավորումը, որն ուղղված է աղքատության կրճատմանը: Սոցիալական խոցելի խմբերի համար կրթության այս օղակում մատչելիությունը ապահովելու նպատակով 2011-2012թթ. ուսումնական տարում կտրուկ ավելացվեցին միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին հատկացված ընդունելության անվճար տեղերի քանակը՝ ելնելով աշխատաշուկայի պահանջներից:

148. ՄԿՈՒ ոլորտում իրականացվող բարեփոխումների այս գործընթացում ընդգրկվել են նաև Տավուշի մարզի հաստատությունները: Նշված բարեփոխումների և վերակազմավորման արդյունքում ներկայումս գործում է Իջևանի տարածաշրջանային քոլեջը, որի շենքը վերանորոգվել է, իսկ նյութատեխնիկական բազան՝ հարստացվել: Ուսումնական գույքով ու տեխնիկայով են համալրվել նաև Դիլիջանի, Նոյեմբերյանի և Բերդի պետական քոլեջները:

149. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում ձեռնարկված բարեփոխումների գործընթացում, որը ներառում է կրթության կառուցվածքը, բովանդակությունը և կառավարումը, ներգրավվել են նաև Տավուշի մարզի բարձրագույն ուսումնական հաստատությունները:

150. Մարզում գործում է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը՝ հինգ ֆակուլտետներով, 1200 ստացիոնար և 400 հեռակա ուսանողներով: Դիլիջանում գործում է Գեղարվեստի ակադեմիայի մասնաճյուղը՝ 150 ուսանողով: Մարզկենտրոնում գործում է նաև 2 մասնավոր ԲՈՒՀ:

6.1.2.Կրթության ոլորտի զարգացման նպատակները և ռազմավարությունը

151. Կրթության ոլորտի իրավիճակի բարելավման նպատակով, Կրթության զարգացման 2011-2015թթ. Պետական ծրագրում ամրագրված ռազմավարական մոտեցումները կիրառվելու են նաև Տավուշի մարզում: Մասնավորապես, Կառավարության կողմից առաջնահերթ են համարվում նախադպրոցական կրթության մատչելիության ապահովման, հանրակրթական համակարգի արդյունավետության բարձրացման, դպրոցների նյութատեխնիկական բազայի, ուսումնաձրագրային և ուսումնամեթոդական նյութերի բարելավման, մասնագիտական կրթության բովանդակության արդիականացման և որակի բարձրացման ռազմավարական ուղղությունները և համապատասխան միջոցառումները:

152. Ելնելով Տավուշի մարզում կրթության ոլորտի ներկա իրավիճակից՝ կրթության որակի և մատչելիության բարձրացումը դիտվում է որպես այս ոլորտի զարգացման գերակա նպատակ: Հատկապես ուշադրություն է դարձվելու միջնակարգ կրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներին, որոնք ուղղված են դպրոցների ապակենտրոնացմանը և ժողովրդավարացմանը, կառավարման մեխանիզմների կատարելագործմանն ու թափանցիկության ապահովմանը, միջազգայնորեն ընդունված չափանիշներին հասնելու համար ուսումնական գործընթացը տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցմանը, ինչպես նաև 12-ամյա կրթության, ուսումնական ծրագրերի և գնահատման նոր համակարգի, դպրոցի ավարտական, բուհական ընդունելության նոր քննական համակարգի ներդրմանը: Անհրաժեշտ է նաև իրականացնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հանրակրթական դպրոցներում ներառման ուղղությամբ:

153. Կարևոր պայման է դպրոցներում հեռահաղորդակցման կենտրոնների ստեղծումը: Դրա միջոցով ակնկալվում է դպրոցը վերափոխել ինտերնետային կապով ապահովված համակարգչային, կրթական համայնքային կենտրոնի, որի արդյունքում կընդլայնվեն համայնք-դպրոց Շրունակական կապերը: Մարզի կրթության ոլորտի զարգացման տեսանկյունից չափազանց կարևորվում է այլընտրանքային ծառայությունների ներդրումը ու ծախսարդյունավետ մոդելների կիրառումը:

Կրթության ոլորտի զարգացման նպատակներն ու ուղղությունները



154. *Տավուշի մարզի* **կրթության ոլորտի ֆինանսավորումը - 2**012-2015թթ. *հանրակրթական դպրոցներ*

Աղյուսակ 6.1

(հազար դրամներով)

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրերն իրականացնող պետական մարմինների անվանումը	Ծրագրերի ցանկը (անվանումը)	2012թ. բյուջե[1]	**հաստատված ՄԺԾԾ** 2013թ.	**հաստատված ՄԺԾԾ** 2014թ.	Կանխատեսում՝ 2015թ
				Ընդամենը ՊՄ 1, որից	**3247622.4**	**3800702.9**	**3937460.5**	**3891671.1**
				Ընթացիկ ծախսերին (առանց հանրությանը տրամադրվող տրանսֆերտների) առնչվող ծրագրեր	3218719.6	3798826.1	3935583.7	3889794.3
09	01	01	ՀՀ Տավուշի մարզպետարան	Նախադպրոցական կրթություն		17664.4	52887.5	
09	01	02		Հանրակրթական ուսուցում	1022921.3			
09	02	01		Հանրակրթական ուսուցում	1462421.5	3781161.7	3882696.2	3889794.3
09	02	02		Հանրակրթական ուսուցում	733376.8			
				Հանրությանը տրամադրվող տրանսֆերտների առնչվող ծրագրեր	28902.8	1876.8	1876.8	1876.8
09	05	01		**Երաժտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում**	**27026.0**			

09	06	01		12. Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում	1876.8	1876.8	1876.8	1876.8

Կրթության ոլորտի տրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Նախադրյալներ
Ոլորտային նպատակ՝ Բարձրացնել կրթական ծառայությունների մատչելիությունը և որակը Տավուշի մարզում	1. Համախառն ընդգրկվածությունը տարրական և հիմնական դպրոցում 99% 2 Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների թիվը 50% 3. 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական հաստատություններում ընդգրկվածության տեսակարար կշիռն այդ տարիքի երեխաների ընդհանուր թվում,50 % 4. ԲՈՒՀ ընդունված դպրոցի շրջանավարտների տեսակարար կշիռը տվյալ տարվա շրջանավարտների ընդհանուր թվաքանակի մեջ	Կրթության համար պետական բյուջեի ծախսերը շարունակելու են աճել համաձայն ՀՀ կառավարության ծրագրային ցուցանիշների Ֆինանսական միջոցները բաշխված են ըստ առանձին ծրագրերի և տրամադրված են ժամանակին:
1.Դպրոցների շենքային պայմանների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում		
1.1 Դպրոցների շենքային պայմանների բարելավում	Վերանորոգված դպրոցների թիվը 90%	Կառավարության կողմից դպրոցական շենքերի վերանորոգման և նյութատեխնիկական բազայի համալրման նպատակով հատկացվող
1.2 Դպրոցների մարզադահլիճների և խաղահրապարակների վերանորոգում, մարզագույքով և տեխնիկական պարագաներով հագեցում	Բարեկարգված մարզադահլիճներ և խաղահրապարակներ ունեցող դպրոցների տեսակարար կշիռը,50 % Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների տեսակարար կշիռը,50 %	

1.3 Ջեռուցման լոկալ համակարգի ներդրում	Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցների տեսակարար կշիռը,50 % Ջեռուցման լոկալ համակարգ ունեցող դպրոցներում սովորող աշակերտների թիվը,65 %	ֆինանսական միջոցները տարեցտարի ավելանում են:
1.4 Համակարգչային դասասենյակների ստեղծում, համալրում և ինտերնետ կապով ապահովում	Համակարգչային դասասենյակներ ունեցող դպրոցների թիվը 77 Հանրակրթական դպրոցներում համակարգիչների թիվը՝ 13 աշակերտին 1 համակարգիչ: Ինտերնետային կապով ապահովված դպրոցների թիվը 46 կամ 57տոկոս	
2.Ուսուցչական անձնակազմի որակավորման բարձրացում		
2.1 Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստման դասընթացների պարբերաբար կազմակերպում, կրթության օրենսդրության մասին իրազեկում	Որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցած ուսուցիչների թիվը 500 Համակարգչին տիրապետող ուսուցիչների թիվը 1500-1600	Ուսուցիչների վերապատրաստումը կառավարության ուշադրության կենտրոնում է և գործընթացին աջակցում է նաև ՀԲ ‘Կրթության որակ և համապատասխանություն’ վարկային ծրագիրը:
2.2 Ուսուցիչների համար համակարգչային դասընթացի կազմակերպում՝ դասապրոցեսում համակարգչային տեխնոլոգիաներ կիրառելու նպատակով		
2.3 Ուսուցիչների պարտադիր ատեստավորման կազմակերպում	Ատեստավորված ուսուցիչների թիվը	
3.Դպրոցների ինքնակառավարման կարողությունների բարձրացում		

3.1 Հանրակրթական դպրոցների ղեկավարների կառավարման հմտությունների, այդ թվում՝ արտաբյուջետային աղբյուրների ներգրավման կարողությունների զարգացում	Որակավորման բարձրացման և վերապատրաստման դասընթացների մասնակցած ղեկավարների թիվը 77 Արտաբյուջետային միջոցների տեսակարար կշիռը դպրոցների ընդհանուր բյուջեում -0	Դպրոցների ղեկավար կադրերի վերապատրաստումը կառավարության ուշադրության կենտրոնում է և իրականացվում է ՀԲ 'Կրթության որակ և համապատասխանություն' վարկային ծրագիրը:
4.Ներառական կրթության համակարգի զարգացում		
4.1 Հանրակրթական դպրոցներում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման նպաստավոր պայմանների ստեղծում և զարգացում	Կրթական հաստատություններում սովորող առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների/աշակերտների թիվը 344	
5. Մարզական, մշակութային և արտադպրոցական հաստատությունների ենթակառուցվածքների բարելավում և նյութատեխնիկական բազայի արդիականացում		
5.1 Մարզական, մշակութային և արտադպրոցական հաստատությունների շենքերի կառուցում, վերանորոգում և նյութատեխնիկական բազայի բարելավում		
5.2 Մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում	Մարզային/համայնքային մարզամշակութային միջոցառումների թիվը 26 Հանրապետական և միջազգային մրցույթներում հաղթող սաների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ 10% Ցուցահանդեսների այցելուների քանակը տարեկան կտրվածքով 2000 Թատերական միջոցառումների քանակը 10 / մասնակիցների քանակը 1000	
6. Նախադպրոցական կրթության համակարգի զարգացում՝ հատկապես գյուղական համայնքներում		

6.1 Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների բարելավում, ջրամատակարարում, ջրահեռացում	Վերանորոգված մանկապարտեզների թիվը 14	այլ աղբյուրներ
6.2 Նախադպրոցական հաստատությունների նյութատեխնիկական բազայի թարմացում և կրթական միջավայրի բարելավում	Թարմացված ուսումնական և նյութատեխնիկական բազա ունեցող մանկապարտեզների թիվը 6	
6.3 Նախադպրոցական հաստատությունների կադրերի շարունակական վերապատրաստում	Վերապատրաստված դաստիարակների թիվը - Վերապատրաստված ղեկավար կադրերի թիվը -	
6.4 Նախադպրոցական կրթության մատչելիության բարձրացում:	5-6 տարեկան երեխաների նախադպրոցական հաստատություններում (հատկապես՝ հեռավոր և սահմանամերձ գյուղերի) ընդգրկվածության % 40% Գործում է 46 մանկապարտեզ:	

6.2. Հանգիստ, մշակույթ և կրոն

155. Կրթության ոլորտի հետ սերտորեն կապված է նաև մշակույթի ոլորտը: Ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ Տավուշի մարզում մշակույթի ոլորտի հիմնախնդիրները կապված են հիմնականում գրադարանների, թանգարանների, պատմամշակութային հուշարձանների և ոչ նյութական մշակութային արժեքների, արվեստի ճյուղերի պահպանման և զարգացման հետ: Ոլորտում առկա է նաև մասնագետ կադրերի վերապատրաստման խնդիր:

156. Գրադարաններ - 2010թ. ՀՀ պետբյուջեի միջոցներով սկսվեց Դիլիջանի կենտրոնական և Իջևանի մարզային գրադարանների հիմնանորոգման աշխատանքները: Մարզում գրադարանային ֆոնդը համալրվում է, սակայն դեռևս թարմացնամ կարիք ունի, ինչպես նաև աանհրաժեշտ է ժամանակակից տեխնիկա՝ համկարգչային ծառայությունների սպասարկումը կազմակերպելու նպատակով:

157. 2011թ. մարզում գործում է 65 գրադարան, որոնցից 1-ը՝ մարզային, 9-ը՝ քաղաքային, 54-ը՝ գյուղական, 1–ը՝ մանկական գրադարաններ են: Ինչ վերաբերում է թանգարանների գործունեությանը, ապա նույն ժամանակահատվածում մարզում գործել է 4

թանգարան, որոնցից 1-ը՝ ժողովրդական արվեստի, իսկ 3-ը՝ երկրագիտական: Վերջին տարիներին գրադարանների ընթերցողների թիվը նվազել է, իսկ թանգարանների հաճախողների թիվը աճել է:

158. Պատմամշակութային հուշարձանների պահպանում: Պատմամշակութային հուշարձարնների ուսումնասիրման, հաշվառման, պեղումների, պահպանության, վերականգնման և օգտագործման գործընթացների համակարգման նպատակով անհրաժեշտ է ընդլայնել այլ աղբյուրներից աջակցությունը: Անհրաժեշտություն է առաջացել կատարել պատմա-ճարտարապետական բարձրարժեք հուշարձանների՝ Շախմուրադի, Առաքելոց, Կիրանց, Ջուխտակ վանական համալիրների վերականգնում, ամրակայում, բարեկարգում, մոտեցման ճանապարհի կառուցում և ընդգրկում զբոսզշրջության երթուղիներում, ինչպես նաև անհրաժեշտ է շարունակել Նոր Վարագավանք բարձրարժեք վանական համալիրի վերականգնման աշխատանքները, կատարել Մակարավանք վանական համալիրի պատմա-ճարտարապետական հուշարձանի տարածքի սողանքային երևույթների ուսումնասիրական-հետազոտական աշխատանքներ՝ սողանքները կանխարգելու նպատակով:

159. Անհրաժեշտություն է առաջացել 2012-2015թթ. միջնաժամկետ ծրագրերի մեջ ընդգրկել նաև Մշկավանք բարձրարժեք վանական համալիրի վերանորոգման, ամրացման, բարեկարգման, մոտեցման ճանապարհի կառուցման աշխատանքները, ինչպես նաև այն ընդգրկել զբոսզշրջության երթուղիներում:

160. Ոչ նյութական մշակութային արժեքների պահպանում-Այս ոլորտի պետական մշակութային քաղաքականությունն ուղղված է մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանն ու պաշտպանությանը, ՀՀ ազգային ավանդական ոչ նյութական ժառանգության (բանավոր ստեղծագործություններ և հմտություններ) պահպանմանը, տարածմանը և զարգացմանը՝ գործընթացին ՀՀ մարզերի ընդգրկվածության ապահովմամբ:

161. Մարզում կրթական, սոցիալական և մարզամշակութային միջոցառումների համատեքստում կարևորվում է երիտասարդական քաղաքականության զարգացումը և նրա արդյունավետության բարձրացումը:

162. Պետության քաղաքականությունն այս ոլորտում սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպական պայմանների ու երաշխիքների ապահովումն է՝ երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժը հասարակության շահերին առավել լիարժեք ծառայեցնելու համար:

163. Հարկ է նշել, որ 2007թ. ՄԶՆ կողմից տրամադրված միջոցների (3 մլն դրամ) և պետբյուջեի հաշվին Իջևան քաղաքում վերանորոգվել է մարզային երիտասարդական կենտրոնը, որն ունի հետևյալ նպատակները.

1) Հայաստանում պետական երիտասարդական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը մասնակից դարձնել առավել մեծ թվով երիտասարդական կազմակերպությունների:

2) Նպաստել մարզային երիտասարդական կառույցների, ինչպես նաև երիտասարդական քաղաքականության սուբյեկտների խնդիրների մասին առկա տեղեկատվության հավաքմանը, համակարգման և հրապարակման կազմակերպմանը:

3) Երիտասարդությանը մատուցել սոցիալական, իրավաբանական և այլ անհրաժեշտ ծառայություններ:

4) Աջակցել երիտասարդության շահերն ու իրավունքներն ամրագրող օրենսդրական դաշտի ստեղծմանը և այդ գործընթացում երիտասարդական կազմակերպությունների ներգրավմանը:

5) Երիտասարդական ոլորտում իրականացնել գիտահետազոտական աշխատանքներ (ուսումնասիրություններ, հոդվածներ, այս բնագավառում միջազգային փորձի ուսումնասիրություն):

6) Մարզի երիտասարդության համար հաստատել և ամրապնդել արտաքին կապեր, իրականացնել փորձի փոխանակում:

164. 2010թ.կազմակերպված են անցել 'Ազգային Ժողովի' գավաթի դպրոցականների մրցաշարը, դպրոցականների շախմատի օլիմպիադաները:

165. Ինչպես 2010թ. այնպես էլ 2011թ. մարզական ընտանիքները ակտիվորեն են մասնակցել արդեն ավանդույթ դարձած ՀՀ Նախագահի մրցանակի՝Լավագույն մարզական ընտանիք' մրցույթին, որի թիվը տարեցտարի բազմապատկվում է: Հաղթողները Ծաղկաձորում մասնակցել են եզրափակիչ փուլին:

166. Մարզի 4 տարածաշրջաններում կազմակերպվում է մարզական փառատոն մասսայական միջոցառումը: 2010թ. կազմակերպվել են 'Բանակ 18' ռազմամարզական, 'Բազե'երիտասարդական, միջոցառումները և մարզական փառատոն՝ չորս տարածաշրջաններում: Կազմակերպվել և ընթացքի մեջ են ֆուտբոլի և մինի ֆուտբոլի տարբեր մրցաշարեր: Բարձր մակարդակով կազմակերպվել է նախազորակոչային և զորակոչային տարիքի պատանիների մրցաշարը: Անց է կացվել դպրոցականների շախմատի օլիմպիադա: Կազմակերպված են անցել <<Ֆիզկուլտուրայի օր>> և <<Ֆիզիկական ակտիվության մարզային օր>> միջոցառումները:

167. Ավարտական փուլում է դեռևս 2007թ. Սկսած Նոյեմբերյանի մարզադաշտի հիմնանորոգման աշխատանքները, որն իրականացվում է ՀՀ պետբյուջեի միջոցներով:

168. Վերջին տարիներին հիմնանորոգվել կամ կառուցվել են ավելի քան 10 մարզադահլիճներ և ապահովվել անհրաժեշտ գույքով:

169. Այսպիսով՝ Տավուշի մարզում մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառներում զարգացման հիմնական գերակայություններն են.

1) Մարզի մշակութային կյանքի զարգացում:

2) Նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների հավաքածուների համալրում, պահպանություն, պաշտպանություն և հանրահռչակում:

3) Մշակութային կազմակերպությունների շենքերի ու շինությունների հիմնանորոգում:

4) Պատմական հուշարձանների պահպանություն, ամրակայում, նորոգում, վերականգնում, բարեկարգում և օգտագործում:

5) Սոցիալտնտեսական, իրավաքաղաքական, հոգևորմշակութային, կազմակերպական պայմանների ու երաշխիքների ապահովում երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործելու համար:

6) Ըստ բնակության վայրի ֆիզկուլտուրային-առողջարարական, զանգվածային մարզական աշխատանքների բարելավում, բնակչության ազատ ժամանցի և ակտիվ հանգստի կազմակերպում, առողջ կենսակերպի արմատավորում:

7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

7.1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

170. Մարզի բնատնտեսական պայմանները. Տավուշի մարզը հանրապետության վառ արտահայտված գյուղատնտեսական տարածաշրջաններից է: Ըստ հողային հաշվեկշռի՝ մարզի գյուղատնտեսական հողատեսքերի կառուցվածքը բնութագրվում է ստորև ներկայացված տվյալներով:

Աղյուսակ 7.1. ՀՀ Տավուշի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը և դրանց կառուցվածքը

	Վարելա-հողեր	Բազմամյա տնկարկներ*	Խոտհարք-ներ	Արոտավայրեր	Այլ հողատեսքեր	Ընդամենը
Գյուղատնտեսական նշանակության հողեր, հա (2010/2011թթ.)	25223.0 25600.3	2033.6 1926.9	12537.6 9473.0	60252.3 47780.7	11846.4 9691.4	111892.9 94405.2
Տեսակարար կշիռը, (2010/2011թթ.)	22.5 27.0	1.8 2.0	11.2 10.0	53.9 50.6	10.6 10.2	100 100

* բնակավայրերի հողերում (տնամերձերում) առկա է 1629.4 հա բազմամյա տնկարկների տարածք:

171. Ըստ բնական պայմանների, որը որոշակիորեն կանխորոշում է գյուղատնտեսության մասնագիտացումը, մարզը բաժանվում է 2 ենթագոտու. ցածրադիր, որն անտառազուրկ է, և լեռնային, որն անտառապատ է: Առաջին ենթագոտին գտնվում է ծովի մակերևույթից մինչև 900մ բարձրության վրա, իսկ երկրորդը՝ 900մ-ից բարձր: Գյուղատնտեսական կուլտուրաների մշակության հողերը լեռնադարչնագույն են, կարբոնատային, երկրորդ ենթագոտում՝ լեռնանտառային, դարչնագույն, կրազուրկ և գորշ ավազային, իսկ անտառներից վերև գտնվող

մերձալպյան և ալպյան գոտիներում՝ լեռնամարգագետնային: Տեղումների տարեկան միջին քանակությունը տատանվում է 500-700մմ սահմաններում, օդի տարեկան միջին ջերմաստիճանը՝ + 9-ից +120:

172. Մարզն ունի 62 համայնք, որից 5-ը քաղաքային և 57-ը գյուղական: Բնակչությունը՝ 2011թ.-ի ապրիլի 1-ի դրությամբ, կազմել է 134.7 հազ. մարդ, որի գերակշիռ մասը՝ 61%-ը, կազմում է գյուղական բնակչությունը: Մարզի քաղաքային և գյուղական բնակչության առկա հարաբերակցության պայմաններում աղքատության կրճատումը մեծապես պայմանավորված է գյուղական բնակավայրերում աղքատության մակարդակի կրճատումով:

173. Մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը և տեղը հանրապետության գյուղատնտեսությունում_ Մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2010 թվականին կազմել է 28.3 միլիարդ դրամ, մինչդեռ 2009թ.-ին այն կազմում էր 24.5 միլիարդ դրամ: Հանրապետության գյուղատնտեսական արտադրանքի ընդհանուր ծավալում այն կազմել է 4.4%:

174. Գյուղատնտեսության ոլորտում գերակշռել է անասնապահության ճյուղը. այն կազմել է 15.6 միլիարդ դրամ, իսկ բուսաբուծության ճյուղը՝ 12.7 միլիարդ դրամ: 2008թ. 25.4 մլրդ դրամի համախառն արտադրանքից 10.9 մլրդ բուսաբուծության ճյուղում է, 14.5 մլրդ-ը՝ անասնաբուծության:

175.Մարզի գյուղատնտեսության ներկայիս մասնագիտացումը՝ բուսաբուծություն. Մարզի բնակլիմայական պայմանները բարենպաստ են այգեգործության, հատկապես կորիզավոր, հնդավոր, մերձարևադարձային պտղատեսակների (տեսակարար կշիռը ՀՀ ծավալում՝ 6.2%), հատապտուղների (տեսակարար կշիռը ՀՀ ծավալում՝ 7.2%) և խաղողի (տեսակարար կշիռը ՀՀ ծավալում՝ 7.6%) արտադրության զարգացման համար: Զարգացման հեռանկար ունեն նաև մեղվաբուծությունը, ծխախոտագործությունը և կերարտադրությունը: Մարզում արտադրվող հիմնական մշակաբույսերն են. կարտոֆիլ, խաղող, ցորեն, գարի, հաճար, եգիպտացորեն, ոլոռ, լոբի, բանջարեղեն, պտուղ, հատապտուղ:

7.1.1. Անասնաբուծություն

176. Մարզն ունի մսակաթնային անասնապահության և հատկապես խոզաբուծության ուղղվածություն: Խոզերի գլխաքանակով հանրապետության մարզերի մեջ զբաղեցնում է առաջատար դիրք:

177.Գյուղատնտեսական արտադրության կազմակերպման ձևերը և դրանց չափերը. Մարզում գյուղատնտեսական արտադրությունը հիմնականում կազմակերպվում է գյուղացիական տնտեսությունների միջոցով: 2011թ.-ի հունվարի 1-ի դրությամբ մարզում գործում են 28342 գյուղացիական տնտեսություններ: Յուղատնտեսական առևտրային կազմակերպությունների թիվը մարզում կազմել է 15, գյուղարտադրանքի շուկաների թիվը՝ 1: Մարզում գործող գյուղացիական տնտեսությունների 66.8%-ը (14.6 հազ. տնտեսություն) զբաղվում է անասնապահությամբ:

178. 2010թ.-ի հունվարի 1-ի դրությամբ մարզի 1 գյուղացիական տնտեսությանը և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպությանը միջին հաշվով բաժին է ընկնում 1.2հա,այդ թվում 0.84 հա վարելահող,որը հնարավորություն չի ընձեռում իրականացնել արդյունավետ տնտեսվարում և ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառում: Եթե հաշվի առնենք նաև գյուղատնտեսական արտադրության ռիսկայնությունը, ապահովագրության բացակայությունը, հողերի մասնատվածությունը, անհրաժեշտ տեխնիկայի պակասը, ապա հասկանալի է դառնում, թե ինչու տնտեսությունների զգալի մասը հրաժարվում է հող մշակելուց: Ուստի անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել գյուղատնտեսական արտադրության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու, օր.՝ տնտեսությունների խոշորացման՝ կոոպերացիայի սկզբունքով հողերի համատեղ մշակության և հողի շուկայի լիարժեք ձևավորման ուղղությամբ:

***179.* Մարզի գյուղատնտեսական հողերի օգտագործման վիճակը** - Գյուղատնտեսական հողերի օգտագործման վիճակը բնութագրվում է գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածություններով և ցանքերի կառուցվածքով:

180. 2008թ.-ի համեմատությամբ 2011թ.-ի ցանքատարածությունների կառուցվածքում զգալի փոփոխություններ չկան: 2011թ.-ի բերքի տակ դրված ցանքատարածությունը՝ 14250հա, 19 հա-ով ավել է 2007թ.-ի ցանքատարածությունից: Օգտագործվում է մարզի վարելահողերի միայն 56%-ը, այսինքն՝ 11.35 հազար հա-ը վերածվել է խոտհարքի կամ արոտավայրի: Չօգտագործվող հողերի 4728.6հա-ը սահմանամերձ է: Չցանված վարելահողերի 38.7%-ը բաժին է ընկնում Նոյեմբերյանի տարածաշրջանին, 31.5%-ը՝ Իջևանին, 25.5%-ը՝ Բերդին, մնացած 4.3%-ը՝ Դիլիջանին:

181. Մարզի ցանքատարածությունները կազմում են հանրապետության 5.0%-ը, մինչդեռ 2007-ին այն կազմում էր 4.7%-ը: Հանրապետության մեջ մարզը զգալի մաս ունի տեխնիկական մշակաբույսերի մշակության տարածքով (39.1%), որից ծխախոտը՝ 45.5%:

182. Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի ցանքատարածություններն ըստ տարածաշրջանների և դրանց կառուցվածքը մարզի կտրվածքով, (2011թ.-ի բերքի տակ կատարված ցանքատարածությունների համատարած հաշվառման հանրագումարները, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն)

Աղյուսակ 7.2

h/h	Տարածաշրջան/ Մշակաբույսեր	Իջևան	Նոյեմբերյան	Բերդ	Դիլիջան	Զբաղեցրած տարածքը հա	Տեսակարար կշիռը, %
1	Հացահատիկ և հատիկաընդեղեն	1870	3059	3311	70	8310	58.4
2	Տեխնիկական մշակաբույսեր	43	1023	64	0	1130	7.9
3	Կարտոֆիլ	589	287	497	358	1731	12.1
4	Բանջարեղեն	358	224	344	15	941	6.6
5	Բոստանային	3	68	2	0	73	0.5

	մշակաբույսեր						
6	Կերային մշակաբույսեր	498	270	1118	179	2065	14.5
Ընդամենը ցանքատարածություն, հա		3361	4931	5336	622	14250	100

183. Մշակաբույսերի ընդհանուր ծավալում մարզում առավել բարձր տեսակարար կշիռ ունեն հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունները (58.3%), այնուհետև՝ կերային մշակաբույսերը (14.5%) և կարտոֆիլը (12.1%): Մարզի ընդհանուր ցանքատարածության մեջ գերակշռում են Տավուշի (37.4%) և Նոյեմբերյանի (34.6%) տարածաշրջանները: Կերային մշակաբույսերի համեմատաբար բարձր տեսակարար կշիռը հիմնականում պայմանավորված է առվույտի (1446հա) և կորնգանի (291հա) ցանքերով, որը բավականին դրական երևույթ է և կնպաստի անասունների մթերատվության բարձրացմանը: Ցանվել է 36 հա միամյա խոտ, 15 հա կերի արմատապտուղ, 25 հա եգիպտացորեն սիլոսի և կանաչ կերի համար:

184. Տավուշի մարզի բազմամյա տնկարկների տարածքների և կառուցվածքի վերաբերյալ պատկերացում են տալիս Աղյուսակ 7.3-ի տվյալները:

185. Բազմամյա տնկարկների տարածքները և կառուցվածքը 2011թ.-ի հունվարի 1-ի դրությամբ, Տավուշի մարզ (տես՝ Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները և համախառն բերքը 2010 թվականին, ՀՀ ԱՎԾ, 2011թ., էջ 33-36)

աղյուսակ 7.3

հ/հ	Մշակաբույսերի անվանումը	Զբաղեցրած տարածքը, հա	Տեսակարար կշիռը, %	Մարզի տեսակարար կշիռը հանրապետության մեջ, %
1	Պտուղ և հատապտուղ	2350	64.1	6.2
	այդ թվում՝ հնդավոր	819	23.6	6.2
	կորիզավոր	965	26.3	4.8
	ընկուզազգիներ	174	4.8	10.3
	մերձարևադարձայիններ	239	6.5	35.1
	հատապտուղներ	1530	4.2	7.2
2	Խաղող	1313	35.9	7.6
	Ընդամենը Բազմամյա տնկարկներ	3663	100	6.3

186. Մարզի բազմամյա տնկարկների տարածքը զբաղեցնում է հանրապետության 6.3%-ը, սակայն մի շարք պտղատեսակներով, մասնավորապես մերձարևադարձային տեսակներ (35.1%) և հատապտուղներ (7.2%), մարզը հանրապետությունում զգալի տեսակարար կշիռ ունի: 2007թ.-ի մարզային ցուցանիշների համեմատությամբ ավելացել են բոլոր պտղատեսակների տարածքները:

187.Ներկայացված ցուցանիշները վկայում են, որ Տավուշի մարզի գյուղատնտեսության ոլորտի առջև ծառացած առաջնահերթ հիմնախնդիր է հողային ռեսուրսների նպատակային օգտագործման ավելացումը, որի համար անհրաժեշտ է առաջին հերթին անմշակ վարելահողերը դարձնել ինքնահոս եղանակով ոռոգելի, այնուհետև ոռոգվող տարածքներում հիմնել պտղատու և խաղողի այգիներ, ինչպես նաև նպաստել եկամտաբեր այլ մշակաբույսերի ներդրմանը:

188. Գյուղատնտեսության ոլորտում աշխատուժի օգտագործումը *- 2009թ. տվյալներով 82000 գյուղական բնակչությունից գյուղատնտեսությամբ զբաղվում է 31300մարդ, կամ 38%-ը: Այսպիսով, գյուղատնտեսության բնագավառում ծառացած հիմնախնդիրների մեջ առանձնանում է նաև աշխատուժի լիարժեք օգտագործումը, որը գյուղական բնակավայրերում աղքատության կրճատման կարևորագույն գործոններից է:*

189. Բուսաբուծության ճյուղում ստեղծված իրավիճակը--*Բուսաբուծության ներկայիս մակարդակի և առաջիկա միտումների գնահատման համար ստորև ներկայացվում են գյուղատնտեսական մշակաբույսերի հիմնական արտադրական ցուցանիշները:*

190. *Գյուղատնտեսական մշակաբույսերի 2006-2010թթ.-ի հիմնական արտադրական ցուցանիշները (տես՝ 'ՀՀ մարզերը թվերով, 2005-9թթ.', ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2010թ., էջ 38-42 և Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները և համախառն բերքը 2010թ. /ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2011թ./:*

աղյուսակ 7.4

Ցանքատարածություն, հազ.հա					Բերքատվություն, գ/հա					Համախառն բերք, հազ. տ				
2006թ	2007	2008	2009	2010	2006	2007	2008	2009	2010	2006	2007	2008	2009	2010
Հացահատիկ և հատիկաընդեղեն														
8.5	8.6	7.4	7.03	8.0	12.5	26.1	27.8	29.4	19.8	9.9	21.8	20.6	20.7	14.6
Կարտոֆիլ														
2.3	1.8	1.8	1.9	1.9	46.6	109.	137.5	135	76	10.8	19.8	25.5	25.5	14.5
Բանջարեղեն														
0.98	0.92	0.9	0.96	0.94	55.3	86.9	92.4	87.1	77.4	5.4	8.0	8.3	8.4	7.3
Բոստան														
0.11	0.06	0.09	0.12	0.08	107.	214	172.4	137.	191.4	1.2	1.2	1.6	1.7	1.6
Պտուղ և հատապտուղ														
2.107	2.34	2.339	2.348	2.35	18.9	51.2	53.1	50.1	27.2	3.4	10.2	10.7	10.8	5.9
Խաղող														

1.319	1.347	1.345	1.312	1.313	78	104.2	48.0	78.4	88.5	10.3	13.7	6.3	10.3	11.6

191. Համեմատելով աղյուսակի 2006-10թթ.-ի տվյալները՝ կարելի է փաստել, որ գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունները կրճատվել են և բացարձակ, և հարաբերական ցուցանիշների գծով: Պտղի և հատապտղի համախառն բերքը սկսած 2007թ.-ից անընդհատ ավելացել է, 2010թ.-ին՝ կտրուկ կրճատվել: Ինչ վերաբերում է խաղողագործությանը, ապա խաղողի տարածքները մնացել են նույնը, իսկ համախառն բերքը ավելացել է: 2007թ. այն կազմել է 13700 տոննա:

192. Ցուցանիշների փոփոխության գնահատումը հնարավորություն է տալիս հետևություն անել, որ մշակաբույսերի բերքատվությունը ցածր է: Ուստի անհրաժեշտ է ավելացնել բուսաբուծական մթերքի արտադրության ծավալները, բարձրացնել արտադրանքի և արտադրության արդյունավետությունը, բարելավել սերմնաբուծության համակարգը:

7.1.2. Սերմնաբուծությունը և տնկարանային տնտեսությունը

193. Բուսաբուծության ճյուղի արդյունավետ վարման հիմքը և վճռական գործոններից մեկը սերմնաբուծության և տնկարանային տնտեսության զարգացումն է՝ բարձրորակ սերմերի և տնկանյութի արտադրության, պահպանման և օգտագործման համապատասխան համակարգի ձևավորման հիման վրա:

194. Հանրապետության ագրարային հատվածում իրականացված համակարգային փոփոխություններին ու հողի սեփականաշնորհմանը զուգընթաց, տարբեր պատճառներով տեղի ունեցած գործընթացների հետևանքով, խարխլվել է նախկինում գոյություն ունեցող սերմնաբուծության և տնկարանային տնտեսության համակարգը, որի արդյունքում կտրուկ կերպով նվազել է բարձրորակ սերմերի և տնկանյութի արտադրությունը: Յուղացիական տնտեսությունները հաճախ օգտագործում են անհայտ ծագման, չստուգված և ցանքի համար ոչ բավարար պիտանիություն ունեցող սերմացուներ և տնկանյութ, ինչի հետևանքով էլ դեռևս ցածր է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը և արտադրության արդյունավետությունը: Սերմացուների ներկրումների ծավալները եղել են խիստ սահմանափակ: Մարզում չի հաջողվել ապահովել որակյալ սերմերի և տնկանյութի անհրաժեշտ ծավալների արտադրություն: Սորտաթարմացման և սորտափոխանակման աշխատանքները կատարվում են տարերայնորեն, չեն ստեղծվում սերմերի պահուստային և ապահովագրական ֆոնդեր:

195. ՀՀ կառավարության, ՀՀ գյուղատնտեսության նախարարության, միջազգային կազմակերպությունների և տնտեսավարող սուբյեկտների կողմից վերջին տարիներին սերմի և տնկանյութի արտադրության բարելավման ուղղությամբ ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ:

196. <<ՀՀ-ում 2010-2014թթ. աշնանացան ցորենի սերմնաբուծության զարգացման ծրագրի>> շրջանակներում 2010թ. մարզի 4 համայնքի 67.5 հա-ի վրա հիմնվել են սերմնաբուծական տնտեսություններ, որոնք 2011թ. կատանան շուրջ 150 տոննա 1-ին

վերարտադրության սերմացու: 40 տոննա կհատկացվի այլ գյուղացիական տնտեսությունների, իսկ մնացածը կտնօրինվի սերմնաբուծական տնտեսությունների կողմից տնտեսությունը զարգացնելու նպատակով: Ծրագիրը շարունակական է:

197. Հանրապետության պարենային անվտանգության ապահովման, գյուղատնտեսության և առաջին հերթին բուսաբուծության զարգացման համար անհրաժեշտ է խթանել սերմնաբուծությունը և զարգացնել տնկարանային տնտեսությունը՝ պայմաններ ստեղծելով մարզում բարձրորակ սերմերի արտադրության ու օգտագործման համար:

198. Ներդրումները բուսաբուծության ճյուղում-Ստորև ներկայացվում են բուսաբուծության ճյուղում 2008-2011թթ.-ին իրականացված և 2012-2014թթ.-ի համար նախատեսվող աշխատանքները:

Աղյուսակ 7.5. Գյուղացիական տնտեսությունվունեերին տրամադրվել են տարբեր մշակաբույսերի սերմացուներ և տնկիներ

Հ	**Անվանումը** 2008թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
1	Աշնանացան ցորենի սերմացու, տ.	64.5	-	20	140
2	Գարնանացան գարու սերմացու, տ.	-	-	-	80.0
3	Եգիպտացորենի սերմացու, տ.	14.4	-	-	22.3
4	Պտղատու տնկիներ, հատ	-	4150	1673	2650

1. **199. ՀՀ պետբյուջե** - <<ՀՀ-ում 2010-2014թթ. ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրով>> 4 համայնքի 5 շահառուի տրամադրվել է 20 տոննա աշնանացան ցորենի էլիտային սերմացու, 2011թ. առաջին վերարտադրության 40 տոննա սերմացու այլ գյուղացիական տնտեսությունների տրամադրելու համար հետ վերադարձնելու պայմանով:Բացի 40 տոննան, նախատեսված է ևս 80 տոննա 1-ին վերարտադրության սերմացուի և շուրջ 20 տոննա ցորենի էլիտային սերմացուի տրամադրում:

2011 թվականին ՀՀ Տավուշի մարզի 5 տնտեսավարողների տրամադրվել է 24175 կգ աշնանացան ցորենի էլիտային վերարտադրության սերմացու՝ հաջորդ տարի բերքահավաքից հետո 1:2 փոխհարաբերությամբ 1-ին վերարտադրության սերմացու հետ վերադարձնելու պայմանով և 150 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու՝ հաջորդ տարի բերքահավաքից հետո 1:2 փոխհարաբերությամբ 80 դրամ հետ վերադարձնելու պայմանով:Ծրագիրը շարունակական է:

200. <<Հայաստանի Հանրապետությունում 2011թ. գարու արտադրության զարգացման ծրագրով>> և <<ՀՀ-ում 2011թ. գարնանացան գարու սերմարտադրության զարգացման ծրագրով>> մարզին տրամադրվել է 25.055 տոննա գարնանացան գարու 1-ին վերարտադրության և 54.18 տոննա գարնանացան գարու էլիտային սերմացու: Այն պայմանագրով տրամադրվել է 594 գյուղացիական տնտեսության՝ գումարը

/համապատասխանաբար՝ 70 դրամ և 100 դրամ/ բերքահավաքից հետո վճարելու պայմանով: Ընդհանուր գումարը կազմում է 7.2 մլն. դրամ:

201. <<ՀՀ-ում 2011թ. եգիպտացորենի արտադրության զարգացման ծրագրով>> մարզին տրամադրվել է 19.3 տ եգիպտացորենի հիբրիդ սերմացու: Այն պայմանագրով տրամադրվել է 796 գյուղացիական տնտեսության /գումարը 1 կգ-ի դիմաց՝ 200 դրամ/ բերքահավաքից հետո վճարելու պայմանով: Ընդհանուր գումարը կազմում է 3.9 մլն. դրամ: <<Հայաստան Համահայկական Հիմնադրամի>> կողմից 2009-2010թթ. 2 խմբաքանակով մարզի 6 համայնքի տրամադրվել է 5823 տնկի, հիմնվել 20 հա այգի: Դիտավանում հիմնվել է տնկարան և ջերմոց: Տնկարանի, տնկիների, սերմերի և սածիլների ընդհանուր արժեքը կազմել է 20.5 մլն. դրամ:

202. <<Հայաստան Համահայկական Հիմնադրամի>> կողմից 2011թ. 6 համայնքի 73 շահառուի տրամադրվել է 2650 հատ պտղատու տնկի: Տրամադրվել է նաև 3.0 տոննա եգիպտացորենի, 50 տոննա առվույտի, 37.5 կգ ճակնդեղի սերմացու: Ընդհանուր գինը կազմել է 44.8 հազ. եվրո:

203. <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզում 2013-2014 թվականներին՝ <<Հայկական միրգ>> բաց բաժնետիրական ընկերության միջոցով կհիմնվի շուրջ 100 հեկտար այգի, իսկ <<Թամարա ֆրութ>> փակ բաժնետիրական ընկերության կողմից առաջարկվող օրգանիկ այգիների հիմնման ծրագրի շրջանակներում արդեն հիմնվել է 15 հեկտար հատապտղի օրգանիկ այգի>>:

204. *Անասնաբուծության ճյուղում ստեղծված իրավիճակը-Մարզի անասնաբուծության ներկայիս մակարդակի և առաջիկա միտումների գնահատման համար ստորև ներկայացվում են անասնապահության ճյուղը բնութագրող հիմնական ցուցանիշները (Աղյուսակ 12):*

205. *Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը (հազ. գլուխ) և անասնապահական մթերքի արտադրության ծավալները 2005-2010թթ.-ին (տես՝ 'Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, 2005-2009թթ.', ՀՀ ԱՎԾ, էջ 42,*

206. <<<< Տավուշի մարզի անասնագլխաքանակը/հունվարի 1-ի դրությամբ/ և անասնապահական հիմնական մթերքների արտադրության ծավալները>>:

Աղյուսակ 7.6

Տարեթիվ	Խոշոր եղջերավոր անասուներ ,հազ.գլուխ	այդ թվում՝ հազ.գլուխ	խոզեր հազ.գլուխ	Ոչխարներ և այծեր հազ.գլուխ	Իրացված միս կենդանի քաշով, հազ.տ	Կաթ , հազ. տ	Ձու, մլն. հատ
2008թ.	37.8	19.4	7.9	25.1	9.4	45.9	37.4
2009թ.	33.4	15.9	8.6	16.1	7.6	32.4	44.3
2010թ.	33.7	16.3	13.4	14.1	7.6	34.8	44.8
2011թ.	33.7	16.3	13.7	14.6			

207. Խոշոր եղջերավորների և խոզերի գլխաքանակը վերջին տարիների միջին տվյալներով կազմել է հանրապետության համապատասխանաբար 5.9%-ը և 11.9%-ը, իսկ մսի իրացումը և կաթի արտադրությունը՝ 6.1%-ը և 5.8%-ը: Անասնապահական մթերքի արտադրության ծավալների վերաբերյալ մարզային տվյալները վկայում են, որ մսի և կաթի իրացման ծավալները տարեցտարի ավելանում են, թեպետ հանրապետության ծավալում մարզի տեսակարար կշիռը 2004թ.-ից մնում է գրեթե անփոփոխ: Չնայած անասնաբուծության ճյուղում մարզում նկատվող դրական միտումների, գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակին վերաբերող մարզային ցուցանիշները հանրապետության ծավալում ունեն անկման միտում. այս երևույթն անհրաժեշտ է հաշվի առնել նախատեսվող ծրագրային միջոցառումներում:

208. Սկսած 2007թ.-ից մարզում տարեցտարի աճել է խոզերի գլխաքանակը: 2007թ.-ի 7700 գլխից 2011թ. այն դարձել է 13700 գլուխ:

209. 2012-15թթ.-ին անհրաժեշտ է շարունակել գյուղկենդանիների մթերատվության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ավելացնել անասնապահական մթերքի արտադրության ծավալները, բարձրացնել դրանց որակն ու արտադրության արդյունավետությունը:

210. Տոհմային գործը-Անասնագլխաքանակի մասնատումը, կերի կայուն բազայի բացակայությունը, կերային մշակաբույսերի ցանքատարածությունների նվազումը ոչ միայն հանգեցրեցին անասնագլխաքանակի և անասնապահական մթերքի և հումքի արտադրության կրճատմանը, այլև լուրջ խոչընդոտներ ստեղծեցին լայնածավալ տոհմասելեկցիոն համալիր միջոցառումների իրականացման համար: Վերջինից անմասն չմնաց Տավուշի մարզը: Լուրջ խոչընդոտներ ծառացան գյուղատնտեսական կենդանիների լավագույն ցեղերի գենոֆոնդի պահպանման, ինչպես նաև արհեստական սերմնավորման աշխատանքներում:

211. Մարզում անասնաբուծության զարգացման, բարձր մթերատու և տոհմային հատկանիշներով օժտված կենդանիներ աճեցնելու և նախիրներն ու հոտերը որակյալ կազմով համալրելու համար անհրաժեշտ է ստեղծել տոհմային տնտեսություններ, ակտիվացնել տոհմասելեկցիոն աշխատանքները, ընդլայնել գյուղկենդանիների արհեստական սերմնավորման ծավալները:

1) 2009թ. Վորդ Վիժն-ի շրջանակներում մարզի 3 համայնքներում կատարվել է 360 գլուխ խոշոր եղջերավոր անասունի արհեստական սերմնավորում՝ կաթնատու <<Ջերսեյ>> և կաթնամսատու<<Սիմենթալ ցեղերի սերունդ ստանալու նպատակով:
2) 2009թ. Մարզի 10 համայնքներում նույն ծրագրի շրջանակներում կատարվել է 200 գլուխ կովերի արհեստական սերմնավորում Շվից և Հոլշտեն բարձրարժեք ցեղատեսակների ցուլերի դոզաներով:
3) 2010թ. Նույն ծրագրով Այգեձոր, Դիտավան, Կոթի համայնքներում տրամադրվել են անհրաժեշտ սարքավորումներ և ավելի քան 400 դոզա տոհմային կովերի սերմնահեղուկ վերոհիշյալ համայնքներում կովերի արհեստական սերմնավորում կատարելու համար: Ծրագիրը շարունակվել է նաև 2011թ՝ ջերսեյ և Սիմենթալ ցեղերի սերմնահեղուկով, կատարվել է ևս 203 կովերի արհեստական սերմնավորում:
4)Հայաստան Համահայկական Հիմնադրամի ծրագրերի շրջանակներում 2010թ. մարզ են ներկրվել 50 գլուխ <<Ֆլեգվի>> ցեղի կաթնամսատու տեսակի երինջներ, որոնք 2011թ արհեստական տրամադրվեցին 50 գյուղաիական տնտեսության, որպես տոհմային կորիզ/44.8մլն.դրամ/:
5)2011թ. սկսվեց << Համայնքների գյուղատնտեական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի>> համայնքի արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգի շրջանակներում Սևքար, Սարիգյուղ, Ն. ծաղկավան, Լուսաձոր, Կիրանց, Աչաջուր համայնքներում ստեղծվել են արոտօգտագործոքղների կոոպերատիվներ: Սկսվել են ջրարբիացման և ճանապարհների վերանորոգման նախագծանախահաշվային աշխատանքները/մոտ 600մլն դրամ/:

7.1.3. Անասնաբուժությունը

212. Ելնելով հանրապետության առանձին տարածաշրջաններում տիրող կենդանիների վարակիչ հիվանդությունների համաճարակային վիճակից և ղեկավարվելով 'Անասնաբուժության մասին' ՀՀ օրենքով՝ մարզում (պետպատվերի շրջանակներում) կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների նկատմամբ կայուն անասնահամաճարակային վիճակ ապահովելու, ինչպես նաև կենդանիների և մարդու համար ընդհանուր ու վարակիչ (ինֆեկցիոն) հիվանդությունները կանխելու նպատակով յուրաքանչյուր տարի իրականացվում են հակաանասնահամաճարակային կանխարգելիչ միջոցառումներ, որոնց անցկացման համար պետբյուջեից հատկացվում են որոշակի ֆինանսական միջոցներ՝ համապատասխան պատվաստուկներ և ախտորոշիչ պարագաներ ձեռք բերելու համար:

213. Մարզի համայնքներում պետպատվերի շրջանակում ներառված կենդանիների հիվանդությունների նկատմամբ անասնաբուժական սպասարկման մատուցումն իրականացվում է եռակողմ պայմանագրի հիման վրա (ՀՀ գյուղատնտեսության նախարարություն՝ 'Պատվիրատու', ՀՀ մարզերի տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավար՝ 'Պատվիրակալ' և համայնքը սպասարկող անասնաբուժական մասնագետ՝ 'Կատարող'):

214. Նախկինում հանրապետությունում պայքարի միջոցառումներ էին իրականացվում կենդանիների 55 անվանում վարակիչ հիվանդությունների դեմ: Եթե 1992թ.-ին կանխարգելիչ միջոցառումներ են իրականացվել կենդանիների 25 հիվանդությունների դեմ, ապա 2002թ.-ին՝ 14, իսկ 2003թ.-ին՝ 7 վարակիչ հիվանդությունների դեմ: Պայքարի միջոցառումների անվանացանկի կրճատումը հիմնականում պայմանավորված է եղել ֆինանսական ռեսուրսների անբավարարությամբ: 2006-2007թթ.-ին պայքարի միջոցառումների թիվը ավելացել է 2 անվանում հիվանդություններով, իսկ 2008թ.-ից պատվաստումները իրականացվում են 10 անվանում հիվանդությունների դեմ՝ բրուցելյոզ, տուբերկուլինացիա, սիբիրախտ, պաստերելիոզ, դաբաղ եռավալենտ, էմկար, կարմրախտ, ժանտախտ, ժանտախտ Հ շտամ, վարոատոզ: Սակայն ներկայացված ծավալները զգալիորեն պակաս են իրականում պահանջվող ծավալներից:

215. Այստեղ առաջարկվում է աստիճանաբար ընդլայնել անասնաբուժական պարտադիր միջոցառումների մեջ ներառվող հիվանդությունների ցանկը, բարձրացնել անասնաբույժների աշխատանքի արդյունավետությունը և նրանց մասնագիտական ու տեխնիկական կարողությունները:

216. Ներդրումներն ՀՀ պետական բյուջեով՝ անասնաբուժության գծով.

1) 2008թ.-ին տրամադրել է 55.2 միլիոն դրամ / պետպատվերի շրջանակներում/ 10 անվանում հիվանդությունների դեմ պատվաստումներ իրականացնելու համար:

2) 2009թ.-ին անասնաբուժական միջոցառումների պարտադիր կատարման համար ՀՀ կառավարությունը հատկացրել է 52.5 միլիոն դրամ, 2010թ.-ին՝ 54.3 միլիոն դրամ: Միջոցները նպատակաուղղվել են խոշոր և մանր եղջերավոր անասունների, խոզերի, ձիերի, թռչունների և մեղուների՝ 10 անուն հիվանդությունների դեմ պատվաստումների կատարմանը:

217. **Գյուղատնտեսական մթերքի իրացումը և ապրանքայնության մակարդակը -** Գյուղատնտեսության կայունության, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ապահովման և գյուղատնտեսության վերարտադրության համար կարևոր հանգամանք է արտադրանքի իրացման խնդրի լուծումը, որը բնութագրվում է արտադրության ապրանքայնության մակարդակով: յուղմթերքի ապրանքայնության մակարդակն իրենից ներկայացնում է տնտեսության կողմից վաճառված, ապրանքափոխանակման և ծառայությունների դիմաց բնամթերքով տրված ծավալների տեսակարար կշիռների հանրագումար:

218. Ստորև համեմատության համար ներկայացվում են և 2007-11թթ.-ի հունվարի 1-ի դրությամբ ապրանքայնության մակարդակի ուղղությամբ կատարված ուսումնասիրությունների արդյունքները:

Աղյուսակ 7.7. Գյուղատնտեսական մթերքի ապրանքայնության մակարդակը (տես՝ Գյուղատնտեսական մթերքի իրացումը (օգտագործումը) գյուղացիական տնտեսությունների կողմից ՀՀ ԱՎԾ/

աղյուսակ 7.7

Մթերքի անվանումը	Ապրանքայնության մակարդակը Տավուշի մարզում, %		Ապրանքայնության մակարդակը ՀՀ-ում, %
	2007թ	2011թ	2011թ.
Հացահատիկ	14.3	8.8	23.8
Կարտոֆիլ	11.9	6.3	35.0
Բանջարանոցային մշակաբույսեր	18.8	10.3	74.3
Պտուղ	36.9	51.5	35.0
Խաղող	65.7	46.0	89.7
Միս	81.4	73.3	76.6
Կաթ և կաթնամթերք	41.0	32.4	49.4
Ձու	39.0	25.0	40.4
Բուրդ	20.7	16.1	37.9
Մեղր	51.6	43.7	50.0

219. Աղյուսակից 7.7-ից երևում է, որ 2011թ.-ի հունվարի 1-ի դրությամբ մարզի գյուղատնտեսական մթերքի ապրանքայնության մակարդակը հանրապետության միջինի համեմատ բավականին ցածր է, և այն չի կարող ապահովել գյուղատնտեսության արդյունավետ վերարտադրություն: Ներկայացված տվյալները վկայում են, որ մարզում 2007թ.-ի հունվարի 1-ի համեմատությամբ բարձրացել է միայն պտղի ապրանքայնության մակարդակը:

7.2. Ոռոգման համակարգ

220. Վարելահողերը և բազմամյա տնկարկները մարզում կազմում են 29.1 հազար հեկտար: 2011թ. հուլիսի 1-ի դրությամբ մշակվել է նշյալ հողատեսքերի 17.9 հազար հեկտարը կամ 61.5 %:

221. Մարզի տարածաշրջաններում ոռոգումն իրականացվում է «Ուտիք», «Իջևան» և «Նոյեմբերյան» ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ) կողմից:

222. 2011թ.-ի նոյեմբերի 1-ի դրությամբ ոռոգված գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը մարզում կազմել է 4200 հա, 2010թ.-ին՝ 3910հա, 2009թ.-ին՝ 3625հա, 2008թ.-ին՝ 3392հա: Թեպետ ոլորտում 2008-11թթ.-ին իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ, և ցուցանիշները վկայում են տեղի ունեցող դրական տեղաշարժերի մասին, այնուամենայնիվ, անհրաժեշտ են զգալի ներդրումներ և համակարգված գործողություններ ոռոգման խնդիրներն ամբողջությամբ լուծելու համար: Մարզի տարածքը սպասարկող «Ուտիք», «Իջևան» և «Նոյեմբերյան» ՋՕԸ-ների համար նմանատիպ ցուցանիշներ սահմանվել են ՀՀ կառավարության 10.03.2011թ. «2012-2016 թվականներին ջրօգտագործողների ընկերություններին ընթացիկ դրամաշնորհների տեսքով պետական ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացը կանոնակարգելու մասին» N398-Ն որոշմամբ 2012-2015թթ. սպասարկման հողատարածքների նվազագույն չափ է սահմանվել համապատասխանաբար՝ 3800, 3819, 3838, 3857 հա, իսկ ոռոգման ջրի կորուստների առավելագույն ընդունելի մակարդակները 2012-2015թթ. «Ուտիք», «Իջևան» և «Նոյեմբերյան» ՋՕԸ-ների համար համապատասխանաբար՝ 30.87%, 24.09% և 34.51%:

223. Համակարգում կան դեռևս լուծում պահանջող բազմաթիվ խնդիրներ, որոնցից են ոռոգման ներտնտեսային ցանցի անբավարար վիճակը, ոռոգման ջրի մեծ կորուստների առկայությունը, մեխանիկական ջրամատակարարման բարձր տեսակարար կշիռը՝ հատկապես Նոյեմբերյանի տարածաշրջանում, ոռոգելի տարածքների սակավությունը: Նշյալ խնդիրները հասցեագրելու նպատակով անհրաժեշտ է առաջին հերթին ավելացնել ոռոգվող հողատարածքները, անմշակ վարելահողերը դարձնել ինքնահոս եղանակով ոռոգելի, կրճատել էներգիայի ծախսերը և ոռոգման ջրի կորուստները, գույքագրել ոռոգման գոյություն ունեցող համակարգերը և ոռոգման կարիքները, վերականգնել ջրանցքերը, կառուցել փոքր և միջին կարգավորման ջրամբարներ, վերակառուցել պոմպակայանները:

224. Բնագավառում իրականացված ներդրումները 2008-11թթ. կազմում են 3842.87 մլն ՀՀ դրամ: Կառուցվել է 87.4 կմ ոռոգման ջրագիծ, որը հնարավորություն կտա 2012 թվականից ոռոգելու ընդհանուր 8000 հա հողատարածք**/հավելված 3/**:

7.2.1. ՄԱՐԶԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ԼՈՒԾՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՂ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ՝

225. Իջևանի տարածք՝

1) Իջևանի տարածաշրջանի համայնքների /Աչաջուր, Ենոքավան, Դիտավան, Սևքար, Բերքաբեր, Սարիգյուղ, Ն.Ծաղկավան, Կիրանց, Վազաշեն/ սարամասերի ջրարբիացման ջրատարի

վերակառուցում, որը հնարավորություն կտա հիմնովին լուծել Սևքար և Սարիգյուղ համայնքների խմելու ջրամատակարարման խնդիրը: / 35 կմ -750.0մլն ՀՀ դրամ / :

2) Գետառվիտ-Լուսաձոր ջ/կ վերականգնում /50.0 մլն ՀՀ դրամ/:

3) 'Զարդոշան ' կոչվող հանդամասի Կիրանց գետից 17 կմ ինքնահոս ջրագծի կառուցում. կվոռոգվի Ջողազի ջրամբարի համակարգի տակ գտնվող 2000 հա ոռոգելի տարածքից շուրջ 650 հա / Բերքաբեր , Սարիգյուղ, Ծաղկավան, Կիրանց, Սևքար գյուղերի / 3000.0 հազ. ԱՄՆ դոլար/:

3) Իջևան ՀԷԿ-ի դերևացիոն ջրանցքի գլխամասային հանգույցի վերակառուցում / 100.0 մլն ՀՀ դրամ/:

4) Սրանոցի և Բերքաբերի ջրանցքների հիմնանորոգում //42 + 16/մլն դրամ/

5) Իջևան ՋՕԸ-ի ներքին ցանցի վերակառուցում/ 200.0 մլն ՀՀ դրամ/:

6)'Կարմիրի մոստ' կամուրջի հատվածից մինչև Վազաշեն՝ մոտ 40կմ երկարությամբ ջրագծի կառուցում: Տեխնիկատնտեսական հիմնավորումը տրված է ՀՀ կառավարության աշխատակազմի <Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ> ՊՀ-ի կողմից:

7)Կիրանց գետի վրա 1-2 մլն խմ ջրամբարի կառուցում-1800 մլն դրամ

226. Նոյեմբերյանի տարածք

1) Դեբեդավանի ջրանցքի վերակառուցման հարցը, որը սնում է նաև Պտղավան 2 և Զեյթուն 1; 2 պոմպակայաններին հնարավորություն կտա ոռոգելու Հաղթանակ, Պտղավան, Բագրատաշեն և Դեբեդավան համայնքների հողատարածքները/ 300.0 մլն դրամ/:

2)Պտղավան-1 և Զեյթուն-1 ջ/կ-երի գլխամասերի վերակառուցում/200.0 մլն դրամ/:

3)Կարմիր աղբյուր/Ոսկեպար/-Կոթի ոռոգման համակարգի ներքին ցանցի ընդլայնում/Ոսկեպար, Բաղանիս, Ոսկևան, Կոթի/-170 մլն դրամ:

4) Նոյեմբերյան ՋՕԸ-ի ներքին ցանցի վերակառուցում/ 300.0 մլն ՀՀ դրամ/:

5) Հայ առու և Խան արխ ոռոգման համակարգի հիմնանորոգում՝ 30.0 մլն դրամ:

6) Բազմաստիճան ջ/կ 2-րդ աստիճանի /25.0 մլն դրամ/, Լճկաձորի/25.0 մլն դրամ/ և Արճիս-Շնող ջ/կ-երի/25.0 մլն դրամ/ ագրեգատների հիմնանորոգման և Լալվարի ջ/կ-ի խողովակաշարի վերակառուցում/1 կմ-15.0մլն դրամ/:

7) Զեյթուն-Հաղթանակ-1 ձախ ջյուղի ջրանցքի 7.2 կմ հատվածի հիմնանորոգում և վերակառուցում-200մլն դրամ:

8) Բարեկամավանի ոռոգման համակարգի վերականգնում 91.250մլն.դրամ

227. Բերդի տարածաշրջան

1) Տավուշի ձախափնյա առաջին աստիճան Ջ/Կ-ի վերագործարկում, որը ոռոգման ջուր կմատակարարի Թովուզ , Ն Կ Աղբյուր և Վ.Կ.Աղբյուր համայնքների 600 հա հողերին: / 30.0մլն դրամ/:

2) Հախումի պոմպակայանի հիմնանորոգում – 10.0 մլն դրամ

3) Այգեձորի ջրատարի 300 գծմ հատվածի վերակառուցում

4) Հախում գետի վրա, Քարագյուղ կոչվող տարածքում 1 մլն խմ ծավալով ջրամբարի կառուցում-900 մլն դրամ

228. Ներդրումները գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքներում 2008-2011թթ.-ին

1) Բուսաբուծության ճյուղում.

ա.Մարզում գործում է խաղողի մթերման 5 գործարան և կետ (Իջևանի, Բերդավանի, Դեբեդավանի, Տավուշի /2006թ.-ին ճանաչվել է սնանկ/ և քաղաք Երևանի կոնյակի գործարանի Բերդի մասնաճյուղը), որոնց կողմից մթերվել է խաղող. 2008թ.-ին՝ 4924տ., 2009թ.-ին՝ 5500տ., 2010թ.-ին՝ 7413տ.:

բ.Մարզում կան նաև պահածոների գործարաններ: 2008թ. վերագործարկվել է Այրումի պահածոների գործարանը: 2008թ. մթերել է 730 տ պտուղ և հատապտող,2009թ.՝200տ և2010թ.՝105տ:Վարագավանի պահածոների գործարանը մթերում է հիմնականում հատապտուղ. 2008թ.-ին՝ 60տ., 2009թ.-ին՝ 65տ., 2010թ.-ին՝ 29տ

գ.Գործում են նաև ծխախոտի մթերման 3 կետեր. Ազատամուտում, Հաղթանակում և Վարագավանում: Մթերվում է Վիրջինիա սորտի ծխախոտ կանաչ վիճակում:2008թ. մթերվել է 300տ,2009թ.՝380տ,2010թ.՝600տ:

2) Անասնաբուծության ճյուղում.

ա.2008թ. ՄԱԿ-ի զարգացման ծրագրի /ՄԱԶԾ/, <<Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն>> հիմնադրամի /ՔԱՐԴ/, գյուղապետարանների համատեղ միջոցներով Վարագավան, Տավուշ և Ներքին Կարմիր Աղբյուր համայնքներում ստեղծվել են <<Կաթ սպառողների ասոցիացիա>> սպառողական կոոպերատիվներ: Վարագավանում և Տավուշում սառնարանները 1600 լ տարողությամբ են, իսկ Ն.Կ.Աղբյուրում՝ 1400 լ: Ծրագրերի արժեքները կազմում են. Վարագավանում՝ 28 մլն. դրամ, Ն.Կ.Աղբյուրում՝ 8.4 մլն. դրամ, Տավուշում՝ 23.15 մլն. դրամ:

բ.2010թ. Ազատամուտ համայնքում <<Հայաստան Համահայկական Հիմնադրամի>> հովանավորությամբ ստեղծվեց կաթի մթերման կետ: Սառնարանի հզորությունը 6200 լ է, ծրագրի արժեքը կազմում է 35 մլն. դրամ: Նշված մթերման կետերը սակայն չեն գործում կաթի գնի ցածր լինելու պատճառով:

229. Վերոնշյալ մթերող և վերամշակող կազմակերպություններից բացի, մարզում գործում են նաև վարկային ակումբներ, ֆերմերային միություններ, ասոցիացիաներ, կոոպերատիվներ, որոնք հիմնադրվել են անհատների, գյուղացիական տնտեսությունների նախաձեռնությամբ, ինչպես նաև ՔԱՐԴ-ի, Ուորլդ Վիժնի աջակցությամբ: Նշյալ օղակները կարևոր դեր են խաղում մարզի ագրոպարենային համակարգի կատարելագործման շղթայում, նպաստում են համայնքային կյանքի աշխուժացմանը, գյուղատնտեսության և բիզնեսի ոլորտներում արտադրական գործունեության խթանմանը: Այնուհանդերձ, մարզում մեծ հիմնախնդիր է մնում պտղի և անասնապահական մթերքի մթերումը: Անհրաժեշտ է աջակցել գյուղմթերք արտադրողներին իրացման և արտահանման գործում, բարձրացնել գյուղմթերքի ապրանքայնության մակարդակը, քանի որ դրանք են պայմանավորում գյուղացիական տնտեսությունների կայունությունը և գյուղական բնակավայրերում աղքատության կրճատումը: Այս խնդիրների լուծմանը մեծապես նպաստում են նաև ճանապարհները, որոնց բարելավմանն են ուղղված ԲՊԿՉՆ ԾԻ-ի, ՄԶՆ, ՀՄՀ-ի, այլ կազմակերպությունների ջանքերը: Միջ-/ներհամայնքային, դաշտամիջյան, հեռագնա սարամասերի ճանապարհների բարելավման կարևորությունն ընդգծվում է ՄԶԾ-ի համայնքային ենթակառուցվածքների ռազմավարության մեջ:

230. **Գյուղատնտեսության տեխնիկական ապահովվածությունը**-Արտադրական ռեսուրսների օգտագործման բնագավառում կարևորվում է գյուղատնտեսական տեխնիկայով ապահովվածության վիճակը: Մարզում գյուղատնտեսական տեխնիկայի առկայության, դրա տեխնիկական վիճակի և տեխնիկայով գյուղացիական տնտեսությունների ապահովվածության վերաբերյալ 2007 և 2011թթ.-ի համեմատական տվյալները ներկայացված են աղյուսակում:

231. Գյուղատնտեսական տեխնիկայի առկայությունը, տեխնիկական վիճակը և գյուղտեխնիկայող գյուղացիական տնտեսությունների ապահովվածությունը՝

Աղյուսակ 7.8 Գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակի մասին, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, տեղեկանքներ, ք. Իջևան 2007-2011թթ./

Տեխնիկայի տեսակը	Տավուշի մարզ, 2011թ.-ի հունվարի 1-ի դրությամբ		Տավուշի մարզ, 2007 թ.հունվարի 1-ի դրությամբ	
	Առկա քանակը, միավոր	Սարքինության մակարդակը, %	Առկա քանակը, միավոր	Սարքինության մակարդակը, %
Տրակտորներ	1133	68	1132	71.6
Բեռնատար Ավտոմեքենաներ	2189	74.1	1988	76.4
Հացահատիկահավաք կոմբայններ	75	58	78	76.9
Տրակտորային կցասայլեր	556	84.2	542	80.6
Տրակտորային խոտհնձիչներ	141	86.5	81	82.7
Կերահավաք կոմբայններ	7	28.6	16	31.3
Հատիկազտիչ մեքենաներ	23	91.3	23	52.2
Տրակտորային շարքացաններ	97	85.6	91	82.4
Տրակտորային գութաններ	315	83.8	296	85.5
Կուլտիվատորնե	107	87.9	79	81.0
Հավաքիչ-	66	83.3	61	80.3

մամլիչներ

232. Ներկայացված տվյալների համաձայն՝ 2011թ.-ին 2007թ.-ի համեմատությամբ ընդհանուր գյուղտեխնիկայի քանակը ավելացել է 322 միավորով՝ 4387-ից հասնելով 4709-ի: Անկում են ունեցել կերհավաք կոմբայնների հացահատիկահավաք կոմբայնների գծով ցուցանիշները: Սարքինության մակարդակի առումով նկատվում է որոշակի դրական միտում բացառությամբ կերահավաք կոմբայնների,տրակտորների և բեռնատարների,հացահատիկահավաք կոմբայնների,տրակտորային գութանների:

233. Գյուղմեքենաների ցուցանիշները հիմնականում գերազանցում են ծանրաբեռնվածության կողմնորոշիչ նորմերը: Ընդհանուր առմամբ, տեխնիկական հավաքակազմը մարզում ֆիզիկապես և բարոյապես մաշված է, ծառայության ժամկետը հիմնականում գերազանցում է 20 տարվա սահմանը, առկա տեխնիկան իր հզորություններով չի համապատասխանում ներկայիս հողօգտագործման պայմաններին:

234. Այս բնագավառում առաջնահերթ խնդիր է տեխնիկայով ապահովվածության մակարդակի բարձրացումը և տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացումը՝ կոոպերացիայի և այլ կազմակերպական ձևերով համատեղ օգտագործման մեխանիզմների ներդրման միջոցով:Աշխատանքները գյուղտեխնիկայի ձեռքբերման ուղղությամբ: Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման ուղղությամբ 2008-2011թթ-ին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1) <u>ՀՀ կառավարություն 2008-2011թթ-ի</u> ընթացքում ՀՀ կառավարության կողմից մարզին զեղչված գներով տրամադրվել է 10 փոքրաձավալ տրակտոր և 1 հացահատիկահավաք կոմբայն:
2) <u>Համաշխարհային բանկ.</u> 2008-2009թթ-ին Համաշխարհային բանկի <<Գյուղական կազմակերպությունների և փոքրաձավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագրի>> կողմից մարզի 9 համայնքներում /Զորաթան, Նորաշեն, Վ.Կ.Աղբյուր, Նավուր, Թովուզ, Բարեկամավան, Դեղձավան, Արճիս, Այգեհովիտ/ իրականացվել է գյուղատնտեսական պարկերի համալրման աշխատանքներ, որի համար ներդրվել է 245,739,300 ՀՀ դրամ: Ձեռք է բերվել ընդամենը 39 միավոր տեխնիկա: Գյուղտեխնիկայի ձեռքբերման համար համայնքները կատարել են կանխիկ ներդրում 10%-ի չափով:
3) <<Հայաստան Համահայկական հիմնադրամի>> կողմից Այգեհովիտ և Սարիգյուղ համայնքներում 2011թ. ստեղծվել են Ագրոբազաներ, ձեռք է բերվել տեխնիկա, ընդհանուր արժեքը կազմել է 46.9 մլն դրամ:
4) <<Գյուղատնտեսության տեխնիկական վերազինման և գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացման միջոցառումների ծրագրով>> 2011-2015թթ. նախատեսվում է մարզին հատկացնել 200 միավոր տեխնիկա, որից 20 հատ հացահատիկահավաք կոմբայն, 50 հատ տրակտոր: Ընդհանուր արժեքը կազմում է 3.3 մլն. ԱՄՆ դոլլարին համարժեք դրամ:

235. ***Գյուղատնտեսների մասնագիտական կարողությունները*** - Գյուղատնտեսության զարգացման համար կարևոր նշանակություն ունի գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսությամբ զբաղվող գործարարների մասնագիտական կարողությունների ուժեղացումը, խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների մատչելիության բարձրացումը, դրանք առավել նպատակային և հասցեագրված դարձնելը:

236. Գյուղատնտեսների կարողությունների բարձրացմանն ուղղված աշխատանքները- Առաջիկա տարիներին կշարունակվի գյուղատնտեսների, ֆերմերների գիտելիքների հարստացմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Խորհրդատվական ծառայությունները պետք է բխեն գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսական կազմակերպությունների շահերից և համապատասխանեն շուկայական տնտեսության պահանջներին: Խորհրդատվության արդյունավետությունն ապահովելու համար նպատակահարմար է նախապես ուսումնասիրել և բացահայտել գյուղատնտեսության առաջնահերթ խնդիրները և ծրագրերի իրագործման ընթացքում ապահովել հետադարձ կապը գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսական կազմակերպությունների հետ: Անհրաժեշտ է հզորացնել գյուղատնտեսների մասնագիտական կարողությունները գյուղմթերքի արտադրության և վերամշակման առաջավոր տեխնոլոգիաների, տնտեսավարման արդյունավետ ձևերի (կոոպերացիայի) արմատավորման, նոր ներդրվող թունաքիմիկատների, պարարտանյութերի օգտագործման կանոնների և այլնի վերաբերյալ:

237.Գյուղատնտեսության վարկավորումը-Գյուղատնտեսության ոլորտի առանձնահատկություններով պայմանավորված գյուղացիական տնտեսություններն արտադրական գործընթացում ունենում են շրջանառու միջոցների համալրման անհրաժեշտություն: Բացի այդ, գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողները հաճախ ունենում են խոշոր ներդրումների անհրաժեշտություն: Վերջիններիս ապահովման հիմնական ձևը վարկավորումն է, որն իրականացվում է առևտրային բանկերի, միկրովարկավորման կազմակերպությունների միջոցով: Նախորդ՝ 2004-7թթ.-ի ՄԶԾ-ի տվյալներով՝ Համաշխարհային բանկի և յուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի միջոցներով վարկավորվել է առկա գյուղացիական տնտեսությունների 8.1%-ը, տրամադրվել է 1778 վարկ:

238.Վերոնշյալ օրինակները վկայում են այն մասին, որ վերջին տարիներին վարկավորման հնարավորությունները մարզում ընդլայնվել են: Սակայն խնդիր է շարունակում մնալ վարկավորման կարճաժամկետությունը, չափը, տոկոսադրույքը (միջինում 24%), բանկերում գրավադրման պայմանները, փաստաթղթերի կարգավորման հետ կապված քաշքշուկը: Բանկերի և վարկավորման կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունները ձեռնտու չեն մարզի աղքատ գյուղացիական տնտեսություններին և չեն բավարարում վարկավորման պահանջը: Շատ աղքատ գյուղացիական տնտեսություններն ընդհանրապես չեն դիմում վարկատու կազմակերպություններին: Սա խոչընդոտ է հանդիսանում գյուղատնտեսության վերարտադրության, տեխնիկական հագեցման, արտադրության արդյունավետության ապահովման համար: Ուստի կարևոր խնդիր է շարունակում մնալ գյուղատնտեսական վարկերի հասանելիության ապահովումն աղքատ գյուղացիական տնտեսությունների և կազմակերպությունների համար:

239. Մարզում գործող վարկատու կազմակերպությունները-Ստորև ներկայացվում են այն կառույցները, որոնք տրամադրում են վարկեր գյուղատնտեսական արտադրությամբ կամ գյուղատնտեսական հումքի վերամշակմամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց:

1) Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ. Գյուղատնտեսական վարկերի տրամադրման տևողությունն է 1-ից 84 ամիս, առավելագույն գումարը՝ 30 միլիոն դրամ, տարեկան տոկոսադրույքը՝ 20-24%:
2) Ֆինքա. 'Ֆինքա'-ն միկրովարկային կազմակերպություն է, որը գյուղատնտեսական վարկեր է տրամադրում մարզում 2007թ.-ի հունվարից: Ներկայումս գործում է միայն խմբային վարկի տարբերակը, որում պետք է ընդգրկվեն առնվազն 3 անդամներ: Վարկերը տրամադրվում են 12-16 ամիս ժամկետով, վարկի միջին գումարը՝ 200 հազար դրամ, տարեկան տոկոսադրույքը՝ 24%: Ներկայումս կազմակերպությունն ունի 551 հաճախորդ:
3) Արեգակ. 'Արեգակ' վարկային կազմակերպությունը գործում է Տավուշի մարզում 2007թ.-ի փետրվարից: Կազմակերպությունը տրամադրում է վարկեր 5 հոգուց բաղկացած կանանց խմբերի: Վարկերը տրամադրվում են մինչև 1 տարի ժամկետով, 1.7% պարզ տոկոսադրույքով, առավելագույն գումարը՝ 1.08 միլիոն դրամ խմբի յուրաքանչյուր անդամին: Ներկայումս կազմակերպության ծառայություններից օգտվում է 104 խումբ (520 կին): Գյուղական բնակավայրերում տրամադրված վարկերը կազմում են ընդհանուր վարկային պորտֆելի մոտ 40%-ը:
4) Կամուրջ. 'Կամուրջ' միկրոձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամը գործում է մարզում 2002թ.-ից: յուղատնտեսության ոլորտում կազմակերպությունը տրամադրում է միայն խմբային վարկեր (խմբի անդամների թիվը՝ 10-15 հոգի): Վարկերը տրամադրվում են 3-12 ամիս ժամկետով, ամսական 2.7% տոկոսադրույքով, առանց գրավադրման: Վարկի գումարը կարող է կազմել 300-750 հազար դրամ խմբի յուրաքանչյուր անդամին: Վարկի տոկոսադրույքը հաշվարկվում է վարկի նվազող մնացորդային գումարի վրա:

Վարկային ներդրումները դոնորների կողմից

- ՀՄՀ-Հայաստան. 2008-13թթ.-ին ՀՄՀ-Հայաստանի 'Ջրից դեպի շուկա' ենթածրագրի շրջանակներում նախատեսվում է մատչելի պայմաններով տրամադրել նպատակային վարկեր մարզում գյուղատնտեսությամբ զբաղվող շահառու խմբերին: Դրանք անհրաժեշտ են հիմնականում գյուղատնտեսական հումքի վերամշակման փոքր կարողությունների ձևավորման, տնկարանային տնտեսությունների զարգացման, սերմնաբուծության, տոհմային գործի բարելավման համար:

240. Ապահովագրական համակարգը-Մարզում բավականին լուրջ հիմնախնդիր է գյուղատնտեսական արտադրության ռիսկայնությունը, որը հողերի չօգտագործման հիմնական պատճառներից մեկն է: Մարզում հաճախակի տեղի են ունենում բնական աղետներ. վաղ գարնանային հեղեղումներ, հողմահարություն, ցրտահարություն, երաշտ, կարկտահարություն: Հետևաբար ապահովագրական համակարգի ձևավորումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն: Մարզում համակարգի ներդրման դեպքում անհրաժեշտ է անպայմանորեն հաշվի առնել գյուղատնտեսության առանձնահատկությունները և գյուղատնտեսությունում տնտեսավարողների շահերը***:***

Գյուղատնտեսական կորուստները բնական աղետների հետևանքով

Ստորև ներկայացվում են ապահովագրական համակարգի ձևավորման անհրաժեշտությունը փաստող որոշ տվյալներ 2008-2011թթ.-ի համար:

- 2008թ. հունվար-փետրվարի ցրտահարությունից 20-100%-ով տուժել են մարզի 24 համայնքների 840 հա պտղատու և խաղողի այգիները, պատճառվել է շուրջ 440 մլն. դրամի վնաս:
- 2009թ. մայիսի 24-ի կարկտահարությունից 10-100%-ով տուժել են մարզի 8 համայնքներ, 845 հա ցանքատարածությունները, խոտհարքները և բազմամյա տնկարկները՝ պատճառվել է շուրջ 244 մլն. դրամի վնաս:
- 2009թ. օգոստոսի 6-ից 8-ը կարկտահարությունից 10-80%-ով տուժել են մարզի 13 համայնքների 885 հա ցանքատարածությունները և բազմամյա տնկարկները, պատճառվել է շուրջ 336 մլն. դրամի վնաս:
- 2010թ. մայիսի 24-28-ը կարկտահարությունից 10-100%-ով տուժել են մարզի 2 համայնքների 114 հա ցանքատարածությունները և բազմամյա տնկարկները, պատճառվել է շուրջ 30 մլն. դրամի վնաս:
- 2010թ. հունիսի 12, 23, 24-ին կարկտահարությունից 30-100%-ով տուժել են մարզի 26 համայնքների 5075 հա ցանքատարածությունները և բազմամյա տնկարկները, պատճառվել է 1 մլրդ 226 մլն. դրամի վնաս:
- 2010թ. հունիսի 11 և 20-ին կարկտահարությունից 10-60%-ով տուժել են մարզի 7 համայնքների 1289 հա ցանքատարածությունները, բազմամյա տնկարկները և խոտհարքները: Պատճառվել է շուրջ 130 մլն. դրամի վնաս:

241. *Ոչ գյուղատնտեսական գործունեությունը գյուղական բնակավայրերում* (սույն հատվածը համահունչ է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 2007թ.-ին մշակված յուղական զարգացման ռազմավարության դրույթներին): ՀՀ տնտեսական քաղաքականության կարևոր ուղղություններից մեկն է գյուղատնտեսության ոլորտի և գյուղական բնակավայրերի ներդաշնակ զարգացման ապահովումը: Յուղի կայուն զարգացումը կախված է գյուղաբնակների կենսամակարդակի բարձրացումից, նրանց եկամուտների ավելացումից, գյուղատնտեսությունում ու վերամշակող արդյունաբերությունում զբաղվածության աճից, քաղաքաշինության, ձեռնարկատիրության և զբոսաշրջության բնագավառներում գործունեության արդյունավետության բարձրացումից: Նշյալ բնագավառների զարգացման գերակայություններից են.

1) գյուղական տարածքներում ձեռնարկատիրական ակտիվության խթանումը՝ պետություն-մասնավոր հատված համագործակցության զարգացման ու ՓՄՁ պետական աջակցության ծրագրերի իրականացման միջոցով,

2) պատմաճարտարապետական հուշարձանների պահպանումը,

3) գյուղական տարածքների բնակավայրերի սանմաքրման բարելավումն ու աղբահանության աշխատանքները,

4) ագրոտուրիզմի զարգացումը, որին նպաստում են ագրոֆոնի բազմազանությունը, գյուղատնտեսական մթերքի ու սննդամթերքի բարձր համային հատկանիշներն ու տեսականու տնտեսական մատչելիությունը, էկոլոգիական հարաբերական մաքրությունը, անտառների բուժիչ կլիման, գեղազարդ բնությունը, դեղաբույսերի, մրգերի, որսակենդանիների բազմազանությունը:

242.Տավուշի ՄԶԾ-ի շրջանակներում անհրաժեշտ է ընդլայնել ու զարգացնել ոչ գյուղատնտեսական արտադրությունն ու ծառայությունները, որոնք ապահովում են բարձր հավելյալ արժեք: Մասնավորապես առաջարկվում է.

1) Ներգրավել երկարաժամկետ և մատչելի ֆինանսական ռեսուրսներ՝ խրախուսելու կաթի, մսի, պտղի, հատապտղի, սնկի, դեղաբույսերի, բրդի, կաշվի արտադրությունն ու վերամշակումը,

2) Խթանել հանքարդյունաբերության զարգացումը (մարզը հարուստ է տարբեր քարատեսակներով /կրաքար, դոլոմիտ, ֆելզիտ, բենտոնիտ/ ու հանքային ջրերի պաշարներով)՝ ուշադրություն դարձնելով հանքավայրերի շահագործման և արտադրության արդյունքում առաջացած թափոնների կառավարման խնդիրներին, ինչպես նաև այդ շահագործված հանքավայրերի զբոսաշրջության գրավչության վրա բացասական ազդեցության բացառման խնդիրներին,

3) Խթանել արհեստագործության՝ գորգագործության, ձեռագործության, քանդակագործության զարգացումը (մարզում առկա են համապատասխան մարդկային ռեսուրսներ. հմուտ վարպետներ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտներ),

4) Աջակցել զբոսաշրջության զարգացմանը՝ ստեղծելով ու բարեկարգելով տուրիզմի ենթակառուցվածքները, ուսումնասիրելով ու պահպանելով մարզի պատմամշակութային հուշարձանները, բարեկարգելով ճանապարհները,

5) Նպաստել տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների մատչելիության ապահովմանը՝ արտաքին և ներքին շուկաներում տիրող իրավիճակի մասին տեղեկանալու, շուկայավարման գործընթացների, ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործման

վերաբերյալ խորհրդատվություն, ուսուցում ստանալու նպատակով: Վերջինիս համար կարող են օգտագործվել մարզում գործող բիզնես կենտրոնների, տուրիզմի տեղեկատվական կենտրոնների, ՓՄՁ ՀԱԿ-ի, այլ կառույցների կարողությունները:

243.Վերոնշյալ բնագավառներում գործունեության արդյունավետության բարձրացման, գյուղական բնակչության կյանքի որակի բարելավման, գյուղական տարածքների համաչափ զարգացման համար ՄՀԾ-ի ռազմավարությունը պետք է ուղղվի մարզում տիրող իրավիճակի վերլուծությանը և զարգացման ուղղությունների կանխորոշմանը, միջազգային փորձի ուսումնասիրությանը, համայնքային, մարզային և կենտրոնական իշխանությունների ջանքերի համատեղմանը՝ հասարակության, սփյուռքահայության, դոնոր հանրության ու գործարարների ակտիվ ներգրավմամբ մշակելու և իրականացնելու գյուղական բնակավայրերի զարգացման նպատակային ծրագրեր ու հայեցակարգեր:

7.2.2.Գյուղատնտեսության ոլորտի նպատակները և ռազմավարական ուղղությունները

244.Գյուղատնտեսության ռազմավարության գլխավոր նպատակն է ավելացնել գյուղացիական տնտեսությունների եկամուտները և կրճատել աղքատությունը գյուղական բնակավայրերում: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է.

1) ապահովել մարզի հողային ռեսուրսների նպատակային օգտագործումը, մասնավորապես՝ անմշակ հողերը դարձնել ինքնահոս եղանակով ոռոգելի, նպաստել եկամտաբեր մշակաբույսերի ներդրմանը, լրացնել անհրաժեշտ գյուղտեխնիկայի պակասը, նվազեցնել գյուղատնտեսական արտադրության ռիսկայնությունը, բարձրացնել վարկային միջոցների հասանելիությունը աղքատ ֆերմերների համար,

2) ապահովել աշխատուժի արդյունավետ օգտագործումը գյուղատնտեսության և վերամշակող արդյունաբերության ոլորտներում՝ որպես գյուղական աղքատության կրճատման հիմնական գործոն,

3) քայլեր ձեռնարկել գյուղացիական տնտեսությունների խոշորացման (օր.՝ կոոպերացիայի սկզբունքով հողերի համատեղ մշակության, գյուղտեխնիկայի համատեղ օգտագործման) և հողի շուկայի լիարժեք ձևավորման ուղղությամբ՝ գյուղատնտեսական արտադրության կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

245. Ստորև ներկայացվում են գյուղատնտեսության ոլորտի 2012-15թթ.-ի ռազմավարական ուղղություններն ու միջոցառումները:

1) Բարելավել ոռոգման համակարգը, մասնավորապես՝ կառուցել ինքնահոս համակարգեր, ջրամբարներ, վերակառուցել պոմպակայանները, վերականգնել ջրանցքերը, բարելավել ոռոգման ներտնտեսային ցանցը, զարգացնել ջրօգտագործողների ընկերությունների կարողությունները՝ շահագործելու և պահպանելու երկրորդական և երրորդական ոռոգման համակարգերը

2) Սերմնաբուծության համակարգի բարելավման միջոցով բարձրացնել գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը, համախառն արտադրանքի և արտադրության արդյունավետությունը

3) Զարգացնել սերմնաբուծական տնտեսության համակարգը՝ պայմաններ ստեղծելով մարզում բարձրորակ սերմերի/տնկանյութի արտադրության ու օգտագործման համար

4) Ավելացնել պտղատեսակների և խաղողի այգետարածքները, ինչպես նաև նպաստել եկամտաբեր այլ մշակաբույսերի ներդրմանը

5) Իրականացնել բույսերի պաշտպանության պայքարի կենտրոնացված միջոցառումներ (հատկապես պտղատու այգիներում)

6) Ընդլայնել բազմամյա կերային մշակաբույսերի տարածքները

7) Ապահովել խոտհարքների և արոտների արդյունավետ օգտագործումը

8) Մեղմել արտադրության, արտադրության սպասարկման, նյութատեխնիկական ապահովման բնագավառում ծառացած խնդիրները՝ ձևավորելով միասնական գործունեության / կոոպերացիայի սկզբունքով գործող կառույցներ

9) Տոհմային գործի և անասնաբուժական ծառայությունների բարելավման միջոցով բարձրացնել գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը, անասնապահական մթերքի որակը, արտադրության արդյունավետությունը և ապրանքայնության մակարդակը

10) Արհեստական սերմնավորման աշխատանքների ընդլայնման միջոցով պահպանել և կատարելագործել կենդանիների տոհմային հատկանիշները

11) Ստեղծել տոհմային տնտեսություններ, կոոպերատիվներ, ձևավորել տոհմաբուծական ծառայություններ

12) Ստեղծել և շահագործել անասնագերեզմանոցներ

13) Բարձրացնել գյուղտեխնիկայով ապահովվածության մակարդակը և տեխնիկայի օգտագործման արդյունավետությունը՝ կոոպերացիայի և այլ կազմակերպական ձևերով համատեղ օգտագործման մեխանիզմների ներդրման միջոցով

14) Մարզի գյուղատնտեսության մասնագիտացմանը համապատասխան՝ աջակցել գյուղատնտեսական հումքի՝ պտղի, կաթի, մսի, բրդի, կաշվի վերամշակման կարողությունների զարգացմանը, վերամշակող կազմակերպությունների արդյունավետության բարձրացմանն ու ընդլայնմանը

15) Աջակցել գյուղմթերք արտադրողներին արտադրանքը կազմակեպված իրացնելու, արտահանելու գործում

16) Բարելավել միջ-/ներհամայնքային / դաշտամիջյան / հեռագնա սարամասերի ճանապարհների վիճակը, ապահովել հուսալի գործող կապ և հաղորդակցություն

17) Բարձրացնել գյուղմթերքի ապրանքայնության մակարդակը գյուղացիական տնտեսությունների կայունությունը և գյուղական բնակավայրերում աղքատության մակարդակը կրճատելու նպատակով

18) Ցուցաբերել տեխնիկական աջակցություն մարզի ֆերմերներին և գյուղատնտեսական կազմակերպություններին (սեմինար-պարապմունքներ, խորհրդատվական, տեղեկատվական ծառայություններ)

19) Ապահովել գյուղատնտեսական վարկերի հասանելիությունն աղքատ գյուղացիական տնտեսությունների և գյուղատնտեսական կազմակերպությունների համար

20) Ստեղծել և զարգացնել գյուղատնտեսության ապահովագրության համակարգը

21) Խրախուսել ոչ գյուղատնտեսական գործունեությունը գյուղական բնակավայրերում (հանքարդյունաբերություն, արհեստագործություն, զբոսաշրջություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ և այլն)

22) Մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքների կազմակերպում և իրականացում

Գյուղատնտեսության ոլորտի ռազմավարական ծրագրերի ֆինանսավորումը

աղյուսակ 7.9

Միջոցառման անվանումը	**Իրականացման ժամանակահատվածը**	**Ֆինանսավորման աղբյուրը**	**Ֆինանսավորման ծավալը /հազ. դրամ/**
1	**2**	**2**	**4**
Մրցունակ ագրոպարենային համակարգի կայացում և կայուն զարգացում			
1.Գյուղատնտեսական հողատեսքերի միավորում և տնտեսությունների խոշորացում	2012-2015	գյուղացիական տնտեսություններ	100000.0
2.սերմնաբուծության և տնկարանային տնտեսությունների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում	2012-2015	ՀՀ պետբյուջե, այլ աղբյուրներ	50000.0

3.անասնապահության ոլորտում տոհմային գործի բարելավում, արոտավայրերի օգտագործման արդյունավետության բարելավում	2012-2015	ՀՀ պետբյուջե, Համաշխարհային բանկ, Հայաստան Համահակական հիմնադրամ, համայնքներ	մոտ 1100000.0
4.գյուղտեխնիկայի հավաքակայանների արդիականացում, կոոպերատիվ հիմունքներով տեխնիկական միջոցների համատեղ օգտագործման մեխանիզմների ներդրում	2011-2015թթ	այլ աղբյուրներ, համայնքներ, մասնավոր ներդրողներ	1200000.0
5.գյուղմթերքների վերամշակման ոլորտի տեխնիկական վերազինում	2012-2015	վարկային ծրագրեր	300000.0
6.գյուղատնտեսական ոլորտում ռիսկերի կանխարգելում, տարերային աղետների մեղմացում	2012-2015	ՀՀ պետբյուջե	500000.0
7.սուբսիդիաների և սուբվենցիաների, ինչպես նաև արտոնյալ վարկերի տրամադրում	2012-2015	ՀՀ պետբյուջե, համայնքներ, ծրագրեր	250000.0

8.կոոպերատիվների, ընկերությունների և այլ միավորումների ստեղծում	2012-2015	գյուղացիական տնտեսություններ	10000.0
Սննդանթերքի ինքնաբավության ապահովում 1.բազմամյա տնկարկների տարածքների ավելացում **2.բանջարաբուծության զարգացման ծրագրերի իրականացում** **Սննդամթերքի անվատանգության և որակի ապահովում**	2012-2015 2012-2015 2012-2015	ՀՀ կառավարություն, <Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ> ՊՀ, այլ ծրագրեր այլ դոնորներ, գյուղացիական տնտեսություններ ՀՀ պետբյուջե, այլ դոնորներ	2100000.0 75000.0 62000.0

Աղյուսակ 7.10 ՄԶԾ ծրագրավորվող գյուղատնտեսության ոլորտի ֆինանսավորումը
2012-2015թթ. /մլն դրամ /

ՄԶԾ ոլորտը	Պլանավորվող ֆինանսավորումը 2012-2015թթ				
	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	Ընդամենը 2012-2015թթ
Գյուղատնտեսություն	**5644.0**	**6914.2**	**5186.2**	**1727.2**	**19471.8**

Գյուղատնտեսության ոլորտի տրամաբանական հենքը

Ոլորտային նպատակներ/ ակնկալվող արդյունքներ	Արդյունքային ցուցանիշներ	Կարևոր նախապայմաններ
Ոլորտային նպատակ՝ Ավելացնել գյուղացիական տնտեսությունների եկամուտները և կրճատել աղքատությունը գյուղական բնակավայրերում	1.Գյուղացիական տնտեսությունների աղքատության մակարդակը % 2.Գյուղատնտեսության համախառն արտադրան, մլրդ դրամ 3.Գյուղատնտեսության համախառն արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետության ծավալում %	Ֆինանսական ռեսուրսների առկայություն Բնակլիմայական գործոնի ազդեցություն
Արդյունք 1. Ոռոգման համակարգի բարելավում	1.1. Ոռոգվող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսը, հա 1.2.Էլեկտրաէներգիայի ծախսի տեսակարար կշիռը, % 1.3. Ջրի կորուստների տեսակարար կշիռը, % 1.4.Վերանորոգված ոռոգման և տեխնիկական ջրի ջրագծերի երկարությունը, կմ Թիրախ՝ 2008թ.-ին 40կմ /ԳՀՄՀ, ՄՋՆ/ Ներդրման չափ՝ 2.9 մլն. ԱՄՆ դոլար /ԳՀՄՀ/, 2.0 մլն. ՀՀ դրամ /ՄՋՆ/ 1.5. Վերակառուցված պոմպակայանների թիվը Թիրախ՝ 2011թ.-ին 2 հատ, /ՀՄՀ/ Ներդրման չափ՝ 1,900.0 հազար ԱՄՆ դոլար /ՀՄՀ/ 1.6. Վերականգնված ջրանցքները Ներդրման չափ՝ 2009-11թթ.-ին 745.0 հազար ԱՄՆ դոլար երրորդ կարգի ջրանցքների վերականգնման համար /ՀՄՀ/ 1.7. Ոռոգման ծառայություններից բնակչության բավարարվածության աստիճանը, % /2007թ. ԱՎԾ հետազոտություն/	Ֆինանսական և տեխնիկական ռեսուրսների առկայություն Համակարգի ընթացիկ պահպանման հնարավորություն Բնակլիմայական գործոնի ազդեցություն
Արդյունք 2.	2.1. Գուղատնտեսական մշակաբույսերի համախառն	Ֆինանսական

Ոլորտային նպատակներ/ ակնկալվող արդյունքներ	Արդյունքային ցուցանիշներ	Կարևոր նախապայմաններ
յուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և արտադրության արդյունավետության բարձրացում	բերքը, հազ.տ. 2.2. Գուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը, ց/հա 2.3. Սերմնաբուծական և տնկարանային տնտեսությունների թիվը 2.4. Խոշորացված ֆերմերային տնտեսությունների, ձևավորված կոոպերատիվների թիվը	ռեսուրսների առկայություն Որակյալ սերմերի, տնկանյութի առկայություն Բնակլիմայական գործոնի ազդեցություն
Արդյունք 3. Գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ավելացում, հիվանդությունների կանխում, անասնապահական մթերքի որակի և արտադրության արդյունավետության բարձրացում	3.1. Կաթի արտադրության ծավալները, հազ.տ. 3.2. Իրացված միսը կենդանի քաշով, հազ.տ. 3.3. Ընդհանուր անասնագլխաքանակը (խոշոր եղջերավոր անասուններ, խոզեր, ոչխարներ, այծեր), հազ. գլուխ 3.4. Արհեստականորեն սերմնավորված անասնագլխաքանակը, հազ. գլուխ 3.5. Համաճարակների դեմ պատվաստված անասնագլխաքանակը, հազ. գլուխ Ներդրման չափ՝ 2008թ.-ին 55.2 միլիոն ՀՀ դրամ (պետբյուջե) 3.6. Գյուղկենդանիների հիվանդացության մակարդակը, %	Տոհմային գործի բարելավման համար անհրաժեշտ ռեսուրսների առկայություն Անասնաբուժական կանոնների ճիշտ և ժամանակին կիրառում յուղկենդանիների հիվանդությունների բռնկման կանխարգելում
Արդյունք 4. Հողային և մարդկային ռեսուրսների լիարժեք օգտագործման ապահովում	4.1. Օգտագործվող վարելահողերի մակերեսը, հա 4.2. Չօգտագործվող հողերի մակերեսը, հա 4.3. Գյուղատնտեսությունում զբաղվածների տեսակարար կշիռը, %	Ֆինանսական, մարդկային և տեխնիկական ռեսուրսների

Ոլորտային նպատակներ/ ակնկալվող արդյունքներ	Արդյունքային ցուցանիշներ	Կարևոր նախապայմաններ
	4.4. Վերամշակող արդյունաբերությունում զբաղվածների տեսակարար կշիռը, %	առկայություն
Արդյունք 5. Գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների բարելավում	5.1. Գյուղացիական տնտեսությունների թիվը 5.2. Առևտրային կազմակերպությունների թիվը 5.3. Գյուղարտադրանքի շուկաների թիվը 5.4. Կաթի ընդունման կետերի թիվը/9/ 5.5. Մթերող և վերամշակող կազմակերպությունների թիվը /խաղող-5/,պտուղ,հատապտուղ-4.ծխախոտ-100 հատ չորանոց/;սպանդանոցներ-1 հատ, սառնարանային տնտեսություն-5 հատ/ 5.6. Նորացված գյուղտեխնիկա ունեցող համայնքների թիվը	Ֆինանսական և տեխնիկական ռեսուրսների առկայություն Արտադրական ենթակառուցվածքների և գյուղտեխնիկայի ընթացիկ պահպանման հնարավորություն Բնակլիմայական գործոնի ազդեցություն
Արդյունք 6. յուղմթերքի իրացման հնարավորությունների ընդլայնում	6.1. Գյուղարտադրանքի իրացման ծավալները, % 6.2. Մեծածախ առևտրում ընդգրկված ֆերմերների թիվը 6.3. Գյուղարտադրանքի (հացահատիկ, կարտոֆիլ, բանջարանոցային մշակաբույսեր, պտուղ, խաղող, միս, կաթնամթերք, ձու, բուրդ, մեղր) ապրանքայնության մակարդակը, % 6.4. Վերականգնված ներ-/միջհամայնքային, դաշտամիջյան ճանապարհների երկարությունը, կմ	Ֆինանսական և տեխնիկական ռեսուրսների առկայություն
Արդյունք 7. Գյուղացիական տնտեսությունների մասնագիտական կարողությունների	7.1. Տեխնիկական աջակցություն ստացած ֆերմերների, գյուղացիական կազմակերպությունների, համայնքների թիվը 7.2. Ֆերմերների բավարարվածության աստիճանը	Տեխնիկական աջակցության նպատակայնություն

Ոլորտային նպատակներ/ ակնկալվող արդյունքներ	Արդյունքային ցուցանիշներ	Կարևոր նախապայմաններ
բարձրացում՝ ուղղված եկամտաբեր, շուկայամետ գյուղատնտեսության զարգացմանը	մատուցված ծառայությունների որակից, % (ՀՄՀ)	Առաջարկվող ծառայություններից օգտվելու ցանկություն գյուղացիական տնտեսությունների կողմից
Արդյունք 8. Գյուղատնտեսության վարկավորման մատչելիության բարձրացում, արդյունքում՝ գյուղացիական տնտեսությունների տնտեսական բազայի ամրապնդում և գյուղարտադրության զարգացում	8.1. Առևտրային բանկերից և միկրոֆինանսավորման կառույցներից վարկային միջոցներ ստացած գյուղացիական տնտեսությունների /կազմակերպությունների թիվը 8.2. ՀՄՀ ջրից դեպի շուկա ենթածրագրի շրջանակներում տրամադրված վարկերի քանակը	Վարկերի հասանելիություն գյուղացիական տնտեսությունների, կազմակերպությունների համար
Արդյունք 9. յուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի զարգացում	9.1. Գյուղատնտեսական արտադրության բարձր ռիսկի նվազում, % 9.2. Ապահովագրական համակարգին առնչվող, ապահովագրության հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի փաթեթի առկայություն 9.3. Գյուղացիական տնտեսությունների, գյուղատնտեսական կոոպերատիվների իրավական կարգավիճակի հստակեցման դեպքերի թիվը	Պետական աջակցություն համակարգի զարգացմանը

7.2. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

7.2.1.Բնապահպանության ոլորտի հիմնախնդիրները

246. 2012-2015թթ. Տավուշի մարզային զարգացման ծրագրում բնապահպանական խնդիրները հիմնականում կարևորվել էին կենսաբազմազանության պահպանության առումով՝ հաշվի առնելով, որ մարզի տարածքում է գտնվում Դիլիջան ազգային պարկը և հանրապետության անտառային պաշարների 50%-ը:

247. Տավուշի մարզի բնապահպանական հիմնախնդիրները հիմնականում կապված են անտառային էկոհամակարգերի գերշահագործման հետ, որը եթե ինչ-որ չափով արդարացված էր էներգետիկ ճգնաժամի տարիներին, երբ արժեքավոր ծառատեսակներն օգտագործվում էին որպես վառելափայտ, ապա վերջին 10 տարիներին հիմնականում պայմանավորված է անտառկառավարման և վերահսկողության իրականացման թերություններով: Ապօրինի և անկանոն անտառահատումների պատճառով անտառների բնական վերաճի պայմանները խաթարվել են և առանց լրացուցիչ անտառվերականգնման աշխատանքների և բնականաբար դրա հետ կապված լրացուցիչ ֆինանսական ներդրումների հնարավոր չէ վերականգնել հանրապետության անտառային էկոհամակարգերի նախկին վիճակը:

248. Ապօրինի անտառհատումների հետևանքով ակտիվացել են հողերի էռոզիոն երևույթները և սողանքները: Բուսածածկի վերացումը նպաստել է մակերևութային հոսքի կարգավորման թուլացմանը, և դրա արդյունքում ավելացել են հեղեղների պատճառած վնասները, իսկ բնական աղբյուրների զգալի մասը սակավաջուր է դարձել: Հողերի դեգրադացիայի մյուս հիմնական պատճառը դա մշակվող գյուղատնտեսական հողերի ծավալների նվազումն է:

249. Հայաստանի Հանրապետության 2003թ. մշակված Կայուն զարգացման ծրագրում անտառային ռեսուրսների արդյունավետ կառավարման և պահպանության խնդիրները կարևորվել են որպես աղքատության նվազեցման քաղաքականության իրականացման երաշխիք: ՀՀ նախագահի 07.02.2007թ. ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատվել է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը: Այդ փաստաթղթում նույնպես բնապահպանական խնդիրների և բնական պաշարների արդյունավետ կառավարման խնդիրների շարքում առանձնակի կարևորվել է անտառային պաշարների օգտագործման արդյունավետության բարձրացումը, անտառածածկույթի պահպանումը և վերականգնումը, ինչպես նաև բնակչության բնապահպանական իրազեկության ու կրթվածության ապահովումը:

250. Անտառային ռեսուրսների պահպանության հարցը փոխկապակցված է հողերի, կենսաբազմազանության, ինչպես նաև ջրային ռեսուրսների պահպանության հետ: ՀՀ բնապահպանության նախարարության 2010թ. հաշվետվության մեջ թերությունների ու բացթողումների շարքում նշվել է նաև հանրապետության անտառների պահպանման և դրանց

արդյունավետ օգտագործման նկատմամբ վերահսկողության ոչ բավարար լինելը: Տավուշի մարզի անտառային էկոհամակարգերի պահպանության խնդիրը եղել է նաև էկոլրագրողների կողմից ընտրված Հայաստանի 3 թեժ խնդիրների շարքում:

251. Վերը նշված խնդիրները վերջին տարիներին եղել և մնում են կառավարության ուշադրության կենտրոնում, և դա կարելի է համարել կարևոր նախադրյալ Տավուշի մարզի անտառային ռեսուրսների կառավարման համակարգի բարելավման համար:

252. Մարզի 2012-2015թթ. զարգացման ծրագրի բնապահպանության ոլորտի եռամյա պլանի նպատակն է եղել բարելավել բնապահպանական իրավիճակը մարզում՝ մասնավորապես իրականացնելով. ա) անտառների վերականգնում և անտառային ռեսուրսների արդյունավետ կառավարում, <<ԲՀՊՏ-ի կառավարման համակարգի բարելավում>> բ) հանրային իրազեկում բնապահպանական խնդիրների վերաբերյալ, ներառյալ բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների իրազեկության բարձրացումը և շրջակա միջավայրի պահպանությամբ զբաղվող ՀԿ-ների կարողությունների բարելավումը, գ) էներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործման խթանումը:

253 .Ծրագրերի կազմման համար հիմք էին ծառայել դոնորների և շահագրգիռ կողմերի հետ իրականացված քննարկումները և առաջարկությունները, միաժամանակ փորձ էր արվել գնահատել այդ խնդիրների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալները և դրանց տրամադրման իրատեսությունը:

254. Մարզային բնապահպանական կառույցները և ընդհանրապես բնակչությունը բավականին սուղ և թերարժեք տեղեկատվություն է ստանում մարզում իրականացվող բնապահպանական ծրագրերի, Դիլիջան ազգային պարկի գործունեության, անտառների հավատարմագրային կառավարման հետ կապված նոր գործընթացների վերաբերյալ: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության ընթացակարգերով նախատեսված հանրային լսումների գործընթացը, որը լուրջ լծակ է հանրային իրավունքի պաշտպանության իրականացման համար, կրում է ձևական բնույթ: Սա կարելի է համարել հասարակության իրավագիտակցության և իրազեկության բարձրացմանը նպատակաուղղված սահմանափակ աշխատանքի, տեղեկատվության տարածման համար օգտագործվող միջոցների (հիմնականում թերթերի փոքր տպաքանակի և մարզերում դրանց սպառողների սահմանափակ քանակի հետ) և մասամբ իրենց կարծիքի արտահայտման արդյունավետության նկատմամբ թերհավատ վերաբերմունքի հետևանք:

255. Տավուշի մարզում ներկայումս առկա են 36 օգտակար հանածոների հանքավայրեր, որոնցից շահագործվում են 26-ը, որոնցից երկուսը՝ հանքային ջրերի հանքավայրերեր են: Մարզի մնացած 10 հանքերևակումներում իրականացվում են երկրաբանա-հետախուզական ուսումնասիրություններ:

256. Էկոհամակարգերի վրա ճնշման նվազեցման համար անհրաժեշտ են համալիր միջոցառումներ, քանի որ միայն գյուղատնտեսության և բնական ռեսուրսների շահագործման վրա հենված տնտեսությունը հանգեցնում է բնական ռեսուրսների սպառման, որը չի կարող կարգավորվել միայն վերահսկողության ուժեղացմամբ**:**

7.2.2. 2012-2015թթ. զարգացման պլանով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքը և խնդիրները

257. ՄԶԾ իրականացման դիտարկվող ժամանակահատվածը բավականին կարճ է, որպեսզի գնահատվի իրականացված միջոցառումների, մասնավորպես անտառային ռեսուրսների և բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրական և կառավարման համակարգի բարեփոխումների ազդեցությունը մարզի բնապահպանական վիճակի վրա, սակայն ծրագրերի իրականացման ընթացքի վերլուծությունը ՈԱԽ-ի կողմից թույլ է տվել գնահատել, թե ինչքանով նախատեսված միջոցառումները արդիական են նոր ժամանակահատվածի համար, բացի այդ, բացահայտվել են ծրագրերի իրականացման մեխանիզմների թերությունները:

258.Վերլուծության համար հիմք են ծառայել կառավարման մարմինների և միջազգային աջակցության ծրագրերի հաշվետվությունները, վիճակագրական տեղեկագրքերը, տարեկան աշխատանքային պլանի մոնիտորինգի և գնահատման հաշվետվությունները, առանձին միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ ՈԱԽ անդամների կարծիքը, ինչպես նաև գնահատվել են վերջին 3 տարիների ընթացքում օրենսդրական դաշտի փոփոխությունները և ՀՀ կառավարության կողմից ընդունված ռազմավարական փաստաթղթերն ու ծրագրերը:

259. ՄԶԾ-ով նախատեսված միջոցառումները ֆինանսավորվել են պետական բյուջեի, լոբալ բնապահպանական հիմնադրամի և միջազգային աջակցության այլ գրանտային ու վարկային միջոցներից:

260. Հաշվի առնելով, որ մարզի 23 համայնքներում առկա են սողանքային գոտիներ, որոշակի աշխատանքներ են կատարվել բնակավայրերի և ինժեներական ենթակառուցվածքների պահպանության համար:

261. Ընթացքի մեջ են համայնքների վարչական տարածքներում գտնվող անտառների գույքագրման, քարտեզագրման և սահմանների ճշտման աշխատանքները, որոնց հիման վրա կկազմվեն կառավարման պլաններ և պետք է սկսվի հավատարմագրային կառավարման գործընթացը:

262. Հայաստանի վերականգնվող էներգիայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից իրականացվող վերականգնվող էներգիայի զարգացման ծրագրով մասնավոր ներդրողներին արտոնյալ պայմաններով տրամադրվել են վարկային միջոցներ փոքր հիդրոկայանների կառուցման համար: Նախատեսված է 23 փոքր ՀԷԿ-երի կառուցումով կավելանա Աղստևի գետավազանում, 33770 կՎտ ընդհանուր դրվածքային հզորությամբ:

Իրականացվել է նաև կենսագազի կայանների տեղադրում 7,2 մլն դրամ ընդհանուր ներդրումներով:

263. ԵԱՀԿ գրասենյակը Տավուշի մարզպետարանի հետ ստորագրած հուշագրի շրջանակներում Դիլիջան և Իջևան քաղաքներում հիմնադրել է Օրհուսի կենտրոններ, որոնք լայնածավալ բնապահպանական միջոցառումներ ու ծրագրեր են իրականացնում մարզում: Մարզում գրանցված 66 հասարարակական կազմակերպություններից (ներառյալ մասնաճյուղերը և միությունները) 17-ը ունեն բնապահպանական ուղղվածություն: Այդ կազմակերպություններին համապատասխան օժանդակության պայմաններում դրանք կարողացել են ապահովել մարզի բնապահպանական հիմնախնդիրներին և գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության բավարար մակարդակ:

264. Բացի դրանից, բնապահպանական իրավիճակի բարելավմանը նպաստել են ոռոգման համակարգի վերակառուցման և զարգացման աշխատանքները, գազամատակարարման համակարգի ընդլայնումը: Այսպես, եթե 2002-2003թթ. Տավուշի մարզում փայտով ջեռուցվող տնատիրությունները կազմում էին 74.5%, ապա 2010-2011թթ. դրանք կազմել են միայն 40%): Համագործակցված միջոցառումների արդյունքում 2011թ մարզում տնկվել է 12 հազար հատ ծառ, որոնք ունեն կպչողականության բարձր տոկոս:

265. Այլ մարզերի համեմատ Տավուշի մարզում կարելի է միանշանակ արձանագրել զգալի առաջընթաց բնապահպանական խնդիրների լուծման առումով: Սակայն պետք է նշել, որ 2008-2011թթ. ՄԶԾ նախատեսված միջոցառումներն իրականացվել են ոչ ամբողջ ծավալով, դեռևս չի հաղթահարված ՄԶԾ-ի մշակման սկզբում վերհանված այն խնդիրը, որը վերաբերում է մարզում տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների և ծրագրերի մասին մարզային կառույցների հետ համաձայնեցման, արդյունքների քննարկման և տեղեկատվության տրամադրման համակարգման խնդրի կարգավորմանը:

266. Պետք է նշել, որ մարզում իրականացվող բարեփոխումները, այդ թվում՝ նաև բնապահպանական ոլորտում դեռևս բավարար չեն արձանագրելու բնական ռեսուրսների պահպանության և զարգացման կայուն երաշխիքներ: Օրենսդրության կիրարկման մեխանիզմները բավարար չեն մշակված, և օբյեկտիվ վերահսկողության իրականացման համար հակակոռուպցիոն ռիսկերը հաղթահարված չեն:

267. 2008-2011թթ. ՏԱՊ-ի շրջանակներում նախատեսված միջոցառումներից չեն իրականացվել հետևյալ աշխատանքները՝ արտադրական և կենցաղային կոշտ թափոնների տեղադրման համակարգի կատարելագործում (գործող աղբավայրերի բարեկարգում և նորերի ստեղծում) և կեղտաջրերի մաքրման պարզ տեխնոլոգիաների կիրառում գետային ավազանների աղտոտման կանխարգելման համար: Անհրաժեշտ է նաև մարզի տարածքում աղտոտված հողերի մոնիտորինգի իրականացումը: Հաշվի առնելով, որ ընդհանուր առմամբ մարզի օդային ավազանի աղտոտման մակարդակը գնահատվում է որպես լավ, հողերի և ջրերի աղտոտման խնդիրը էական և արդիական է մարզում օրգանական գյուղատնտեսության և տուրիզմի զարգացման համար:

7.2.3. Բնապահպանության ոլորտի 2012-2015թթ. զարգացման ուղղությունները

268. <<Դիլիջան>> ազգային պարկի մասնակցային կառավարում-Մարզի բնապահպանական հիմնախնդիրները հիմնականում կապված են Դիլիջան ազգային պարկի կառավարման պլանի արդյունավետ իրականացման հետ, որը կարող է երաշխավորել մարզում բնապահպանական իրավիճակի բարելավման կայուն հիմքեր: Սակայն ազգային պարկի կառավարման պլանի իրականացումը չի կարող դիտարկվել առանց կառավարման առկա համակարգի փոփոխության: Ըստ ԱՊ կանոնադրության շահագրգիռ համայնքների մասնակցության, որոշումների կայացման գործընթացների թափանցիկության ապահովման համար ինստիտուցիոնալ պայմանները դեռևս չեն ստեղծված: ԱՊ հարակից համայնքները չեն մասնակցում համայնքների շահերին անմիջականորեն առնչվող որոշումների ընդունման գործընթացին, դրանով էլ մասամբ բացատրվում է ԱՊ վերահսկողական գործառույթների թուլությունը և հարակից համայնքների հետ կոնֆլիկտների առկայությունը:

269. Միևնույն ժամանակ, ԱՊ կառավարման պլանում առաջարկվում է 2012թ. կառավարման վարչարարության կատարելագործման համար ստեղծել խորհրդակցական մարմին: Այդ խորհրդակցական մարմնի աշխատանքի արդյունքում ակնկալվում է նաև, որ ԱՊ, տարածքային կառավարման մարմնի ու տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության և վստահության մթնոլորտի համար կստեղծվեն համապատասխան պայմաններ:

270. Բնօգտագործման ոլորտը կարգավորող իրավական ակտերը, թույլտվությունների և սահմանափակումների ոչ օպտիմալ համակարգը, բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման չարդարացված բարդ ընթացակարգը բնակչության համար ստեղծում են հիմքեր կենսառեսուրսների ապօրինի օգտագործման համար:

271. <<Դիլիջա>> ազգային պարկին հարակից համայնքներում տնտեսավարող սուբյեկտների գործունեության ակտիվացումը կնպաստի բնական ռեսուրսների վրա ճնշման նվազեցմանը: 2010թ. դրությամբ հարակից համայնքներում ձկնաբուծական գործունեություն են իրականացնում շուրջ 11 կազմակերպություններ, անտառօգտագործող կազմակերպությունների թիվը հասնում է 77-ի, շուրջ 80 կազմակերպություններ զբաղվում են հանգստի կազմակերպման, հյուրանոցային և ռեստորանային սպասարկման բնագավառներում: Սակայն հաշվի առնելով նախկինում արձանագրված բացասական փորձը, վարձակալների կողմից տարածքների կառուցապատման աշխատանքները պետք է անցնեն բնապահպանական լիարժեք փորձաքննություն, այդ թվում նաև տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակության ներգրավման միջոցով, որը կնվազեցնի հնարավոր անցանկալի կոնֆլիկտներն ապագայում:

272. Էկոտուրիզմի զարգացումը կարող է նպաստել Դիլիջանի տուրիստական սեզոնի երկարացմանը: Ռեկրեացիոն գոտու գրավչությունը բարձրացնելու համար պետք է կանոնակարգել տարերայնորեն իրականացվող կառուցապատումը, որը հաշվի չի առնում լանդշաֆտների պահպանության տարրական նորմերը, դրանով նվազեցնելով տարածքի գրավչությունը: Պետք է հաշվի առնել նաև, որ <<Դիլիջան՝ ազգային պարկին հարակից համայնքներում ամբողջությամբ բացակայում է կոյուղու համակարգը, իսկ Դիլիջան քաղաքի կոյուղու կոլեկտորը չի վերականգնվել երկրաշարժից հետո, և կեղտաջրերն անարգել թափանցում են Աղստև ավազան: Տուրիզմի ու հանգստի գոտիների զարգացմանը զուգընթաց պետք է ապահովել կեղտաջրերի մաքրման կենսաբանական ինքնավար համակարգերի կիրառման խնդիրը և ապահովել զարգացման պլաններում այդ ենթակառուցվածքների վերականգնման համար համապատասխան միջոցներ:

273. Մարզի բնապահպանական հիմնախնդիրներից է նաև <<Հայանտառ >> ՊՈԱԿ-ի կառավարման տակ գտնվող պետական երեք արգելավայրերի /Գանձաքարի՝ 908 հա, Իջևանի՝ 5908 հա և Արջատխլենու՝ 40 հա/ սահմանների հստակեցման և արգելավայրային ռեժիմի պահպանման ու համապատասխան կառավարման իրականացմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև պետական արգելավայրերի և բնության հուշարձանների բնապահպանական խնդիրները և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները կամ առաջնահերթ ծրագրերը: Որպես կենցաղային թափոնների կառավարման բարելավման առաջնահերթ միջոցառում է մնում մարզում կենցաղային աղբի կուտակման համար կափարիչով կոնտեյներների տեղադրման, փակ թափքերով աղբատար մեքենաների շահագործման խնդիրը:

274. Անտառկառավարման աշխատանքներում համայնքների մասնակցության պայմանների ապահովում - Անտառների հավատարմագրային կառավարման գործընթացում համայնքների իրավունքների և շահերի պաշտպանության խնդիրն արդիական է պլանավորվող ժամանակահատվածի համար: Տեղական ինքնակառավարման մարմինների հետ պետական կառավարման համագործակցությանը կարող է նպաստել նաև 24.05.2007թ. Կառավարության N 806 որոշումը, որով ամրագրվել է, որ պետական անտառները կամ անտառային հողերն օգտագործման տալու ընթացակարգով նախատեսված է, որ մրցութային հանձնաժողովի կազմում պետք է ներգրավվեն տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, որոնց վարչական տարածքում է գտնվում անտառօգտագործման տրամադրվող տարածքը: Այդ մեխանիզմի նպատակային օգտագործման համար կարևոր է աջակցել տեղական ինքնակառավարման մարմիններին բնապահպանական մոտեցումների և համայնքային շահերի պաշտպանության երաշխիքների ապահովման համար: Կարևոր է տեղական ինքնակառավարման մարմինների և հանրության բնապահպանական իրավագիտության ուսուցման դասընթացների կազմակերպմանը տալ շարունակական բնույթ:

275. Անտառտնտեսությունները անտառահատված տարածքների բնական և արհեստական վերարտադրության, պլանտացիոն անտառաբուծության կազմակերպման

աշխատանքներում պետք է առավելագույնս օգտագործեն տեղական համայնքների հետ համագործակցության տարբեր եղանակները, ինչպես մասնավոր տնկարկների հիմնումը, անտառի կողմնարդյունքի հավաքման և մշակման մեջ համայնքների բնակիչների ներգրավումը:

276. Այս գործընթացի արդյունավետությունը կբարձրանա, եթե վարձակալության տրվող տարածքների կադաստրային արժեքները լիարժեք գնահատվեն և հաշվի առնվեն անտառային հողերի բնապահպանական և ռեկրեացիոն արժեքները:

277. Կենցաղային և արտադրական թափոնների կառավարման բարելավում- Բավականին հրատապ է դարձել կոշտ կենցաղային և արտադրական թափոնների հավաքման, տեղադրման և աղբավայրերի կառավարման խնդիրը, որը բացասական ազդեցություն է թողնում ինչպես բնակավայրերի էկոլոգիական վիճակի, այնպես էլ մարզի որպես ռեկրեացիոն գոտու գրավչության վրա: Այն պահանջում է աշխատանքների իրականացում մի քանի ուղղություններով՝ խոշոր բնակավայրերի հատակագծերով նախատեսված աղբավայրերի կառավարման պլանների մշակում, առաջնահերթ նվազագույն ներդրումներ պահանջող բարելավման և ցանկապատման աշխատանքների իրականացում, միջհամայնքային աղբավայրերի նախագծում և դրանց շահագործման համար տեխնիկական միջոցների տրամադրում, ՏԻՄ-երին անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում կազմակերպելու համար աղբահանության աշխատանքները: Միաժամանակ անհրաժեշտ է ուժեղացնել վերահսկողությունը համայնքների տարածքների սանիտարական վիճակի նկատմամբ:

278. Ամենացավոտ հարցը բնակավայրերում կոյուղու ցանցի քայքայված և վտանգված վիճակն է: Հաշվի առնելով, որ մարզի ջրային ավազանների աղտոտվածության հիմնական աղբյուրը դա կենցաղային կեղտաջրերն են և գյուղատնտեսական գործունեության հետևանքով առաջացող թափոնները, անհրաժեշտ է ուսումնասիրել գոյություն ունեցող կեղտաջրերի մաքրման ոչ ծախսատար տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները: Այդ խնդիրն առանձնապես սուր է Դիլիջան, Իջևան և Նոյեմբերյան քաղաքային համայնքների համար:

279. Ջրօգտագործողների միջև կոնֆլիկտային իրավիճակների բացառման համար անհրաժեշտ է ակտիվացնել ջրավազանային կառավարման մարմիններում տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և մարզի բնապահպանական բաժնի մասնագետների մասնակցությունը:

280. Մասնավոր համագործակցության խթանում բնապահպանական ծրագրերի իրականացման համար հեռանկարային կարող է լինել համաֆինանսավորման սկզբունքով պետական և համայնքային, ինչպես նաև մասնավոր ներդրողների ներգրավման միջոցով իրականացվող բնապահպանական նախագծերի մշակումը և իրականացումը: Այդ մեխանիզմով կարող են իրականացվել ինչպես անտառապատման, այնպես էլ ձկնաբուծության, մեղվաբուծության, խոտաբույսերի և հատապտուղների հավաքի ու վերամշակմանը միտված

զարգացման ծրագրեր: Միաժամանակ նման ծրագրերը կապահովեն աշխատատեղեր մարզում և կնվազեցնեն ճնշումը բնական ռեսուրսների վրա:

281. Հաշվի առնելով օդերևութաբանական արտակարգ երևույթների հաճախացումը և դրանց հետևանքով մարզի գյուղատնտեսության վարման ռիսկայնությունը, անհրաժեշտ է ապահովել հուսալի կանխատեսումների և նախազգուշացումների ծառայություններ, ինչպես նաև շահառու սպառողներին այդ տեղեկատվության հասանելիության ապահովման արդյունավետ ուղիներ: Պետական աջակցության շրջանակներում պետք է ապահովել հակակարկտային համակարգի ներդնումը մարզում, ինչպես նաև ապահովել ոռոգելի տարածքների բաժնեմասի ավելացումը:

282. Սողանքների, սելավների և ջրհեղեղների հետևանքով հասցվող վնասի նվազեցման համար պետք է ուսումնասիրվեն առավել խոցելի տարածքները: Հաշվի առնելով, որ արտակարգ իրավիճակների և հողերի դեգրադացիայի կանխարգելման համար զգալի ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ վտանգավոր տարածքների կառուցապատման ինժեներապաշտպանական միջոցառումների կազմակերպման համար, մարզային և համայնքային իշխանությունների կողմից կմշակվի համաձայնեցված միջոցառումների պլան:

ՄԶԾ ծրագրավորվող բնապահպանական ոլորտի ֆինանսավորումը 2012-2015թթ./մլն.դրամ/

Աղյուսակ 7.11

ՄԶԾ ոլորտը	Պլանավորվող ֆինանսավորումը 2012-2015թթ.				
	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	Ընդամենը
Բնապահպանություն	**20.0**	**25.0**	**30.0**	**40.0**	**115.0**

Բնապահպանության ոլորտի տրամաբանական հենքը

Ոլորտ. բնապահպանություն		
Խնդիր	**Ցուցանիշ**	**Ռիսկեր**
Բարելավել բնապահպանական իրավիճակը Տավուշի մարզում	Կենսաբազմազանության պահպանության համար, մասնավորապես անտառների կայուն կառավարման համար ապահովված են պայմանները ԱՊ կենսաբազմազանության մոնիտորինգի հաշվետվություն Անտառկառավարման պլաններ ունեցող անտառտնտեսություններ, հա Անտառշինական աշխատանքների ծավալը, պաշտպանիչ անտառաշերտեր, հա Հեղեղումների հետևանքով հողերի էռոզիայի կանխարգելման աշխատանքների իրականացման ծավալները, հա, մլն դրամ Ամրացված գետերի հուներ, կմ Տեղադրված գաբիոններ, հատ Աղբավայրեր, որոնք ունեն ցանկապատեր, թիվ	<u>Կազմակերպչական՝</u> Անտառների կառավարման մեջ թափանցիկության և անկախ մոնիտորինգի համակարգը չի ձևավորվել <u>Քաղաքական՝</u> Ապօրինի անտառհատումների դեմ պայքարի համար բավական քաղաքական կամք չի դրսևորվում <u>Ֆինանսական՝</u> ֆինանսական միջոցների ծավալները չեն ավելացել
Առաջնահերթ ծրագրեր		
Արդյունք 1. Մարզային կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և Դիլիջան ազգային պարկի համագործակցության համար	Դիլիջան ԱՊ խորհրդատվական մարմինն ստեղծվել է, և պարբերաբար իրականացվում են աշխատանքների ծրագրավորման և հաշվետվությունների քննարկման միջոցառումներ Համայնքների թիվը, որոնք մասնակցում են ԱՊ տարածքների պլանավորման, կառավարման աշխատանքներին Նախագծերի թիվը, որոնք անցել են հանրային	Ռիսկեր՝ Կոնֆլիկտներ Դիլիջան ԱՊ ՊՈԱԿ-ի և համայնքների միջև Շահերի բախումներ գործունեության

ինստիտուցիոնալ հիմքերն ստեղծված են Խնդիրներ՝ • Ձևավորել Դիլիջան ԱՊ կառավարման խորհրդատվական մարմին • Ապահովել տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությունը բնական ռեսուրսների, մասնավորապես անտառների հողերի և արոտավայրերի կառավարման գործընթացում • Իրականացնել հանրային կարծիքի ուսումնասիրություն ԱՊ տարածքում իրականացվող ծրագրերի վերաբերյալ • Ապահովել համայնքների տարածքներում իրականացվող նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հանրային լսումներ • Մարզի բնապահպանական ՀԿ-ների և լրատվամիջոցների կարողությունների զարգացում ԱՊ կենսաբազմազանության մոնիտորինգի իրականացման և հանրային իրազեկման մեջ նրանց ներգրավելու համար	քննարկումներ Ակտիվ գործող ՀԿ-ների թիվը և իրականացված ծրագրերի ծավալը (դրամ) Հանրային լսումներ անցած նախագծերի թիվը ՀԿ-ների մասնակցությամբ իրականացված ծրագրերի թիվը, ծավալը (դրամ)	թափանցիկության բացակայություն Մեղմում՝ Դիլիջան ԱՊ կառավարման պլանով նախատեսված է խորհրդատվական մարմնի ստեղծում որպես ԱՊ կառավարման արդյունավետության բարձրացման մեխանիզմ Համայնքները շահագրգռված են մասնակցելու կառավարման գործընթացներին Մարզում կան ակտիվ ՀԿ-ներ, Դիլիջան քաղաքում գործում է Օրհուսի կենտրոնը

Արդյունք 2. Անտառների կառավարման պլանների իրականացման մեջ համայնքների մասնակցության պայմաններն ապահովված են Խնդիրներ՝ • Մշակել ընթացակարգեր անտառների արտոնագրային կառավարման որոշումներին ՏԻՄ մասնակցության ապահովման համար • Հիմնել համայնքային անտառներ • Հիմնել տնկարանային տնտեսություններ համայնքային հողերի վրա • Կազմակերպել համայնքային անտառկառավարման և անտառային տնկանյութի աճեցման ուսուցողական դասընթացներ ՏԻՄ-երի համար “Անտառային գիտափորձարարական կենտրոն” ՊՈԱԿ Զիկատարի կենտրոնի բազայի վրա • Ոչ բնափայտային անտառային մթերքի վերամշակման և իրացման համար ՓՄՁ աջակցության տրամադրում	Անտառային ռեսուրսների կառավարման գործընթացներում համայնքների մասնակցության արդյունավետ մեխանիզմները մշակված են Հանրային լսումների թիվը Համայնքների թիվը, որտեղ իրականացվել են ուսուցողական սեմինարներ Ուսուցում անցած տեղական ինքնակառավարման մարմինների մասնագետների թիվը Հիմնադրված անտառի մակերեսը, հա Համայնքային անտառների ծավալը, հա Վերականգնված անտառների մակերեսը, հա Բարեկարգված անտառային ճանապարհներ, կմ Հիմնադրված /վերականգնված տնկարանային տնտեսությունների քանակը, տարեկան արտադրվող տնկիների քանակը, հազ. տնկի Իրացված ոչ բնափայտային անտառային մթերքի ծավալը, կգ, հազ. դրամ	Ռիսկեր՝ Շահերի անհամապատաս-խանություն համագործակցության ստեղծման համար ՏԻՄ-երի կողմից անտառների կառավարման համար աջակցության մեխանիզմները չեն հստակեցվել ՏԻՄ-երի կողմից անտառների կառավարման համար հմտությունների բացակայություն

Արդյունք 3. Արտադրական և կենցաղային թափոնների տեղադրման համակարգը կատարելագործված է և տարերայնորեն առաջացող աղբյուրների առաջացումը կանխարգելված է Խնդիրներ՝ o Խոշոր բնակավայրերի աղբավայրերի կառավարման պլանների կազմում o Միջհամայնքային աղբավայրերի նախագծում Տեղական ինքնակառավարման մարմիններին աջակցություն՝ աղբահանության պայմանագրային հարաբերությունների ձևավորման համար	Մարզում թափոնների կառավարման համար պայմաններն ապահովված են Բնակավայրեր, որոնք մշակել են աղբավայրերի կառավարման պլաններ, թիվ Աղբավայրեր, որոնք ցանկապատվել են, թիվ Մարզի քաղաքներում մշակված աղբավայրերի կառավարման պլաններ, ցանկապատված գործող աղբավայրեր Նոյեմբերյան, Բերդ, Դիլիջան համայնքներում Միջհամայնքային աղբավայրերի մշակված նախագծեր, թիվ Կազմակերպված է աղբահեռացման միջհամայնքային կազմակերպություն, թիվ Համայնքներ, որոնք ունեն աղբահեռացման պայմանագրեր, թիվ	*Ռիսկեր՝* *Ֆինանսական միջոցների բացակայությունը* *ՏԻՄ-երը չեն կարևորում խնդիրը* *Մեղմում* *Թափոնների կառավարման հիմնախնդիրը կառավարության գերակայությունների շարքում է* *Աղբավայրերի վերակառուցման/ կառուցման խնդիրը նախատեսված է քաղաքների գլխավոր հատակագծերով*
Արդյունք 4. Հողային ռեսուրսների օգտագործման և պահպանության արդյունավետության բարձրացում Խնդիրներ՝ ▪ գաբիոնների կառուցում ▪ Հենապատերի ամրացում	*Հողերի դեգրադացիայի կանխարգելման աշխատանքներն իրականացվում են պետական, համայնքային և մասնավոր համագործակցության շրջանակներում* *Տեղադրված գաբիոններ, հատ* *Ամրացված հենապատեր, մ* *Հեղեղումների հետևանքով հողատարման կանխարգելման համար հիմնված անտառտնկարկներ, հա* ▪ *Մարզի տարածքում հիմնվել է 12 հա անտառ* ▪ *Սևքար համայնքում հիմնվել է 3…հա անտառ*	*Ռիսկեր՝* *Համայնքների կողմից անտառտնկման համար բավարար շահագրգռվածություն չի ցուցաբերվի* *Հանքավայրի ռեկուլտիվացման համար*

▪ Գետերի հուների մաքրում ▪ Հողերի էռոզիայի կանխարգելման համար անտառվերականգնման /անտառհիմնման աշխատանքների իրականացում ▪ Լքված հանքավայրերի ռեկուլտիվացիա		*ֆինանսական միջոցների բացակայությունը*
Արդյունք 5. Ջրային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում և գետերի մեջ առանց նախնական մշակման թափվող կեղտաջրերի ծավալների նվազեցում Խնդիրներ՝ ▪ Ջրավազանային կառավարման խորհրդի աշխատանքներում ՏԻՄ-երի և հանրային մասնակցության ապահովում ▪ Կեղտաջրերի մաքրման պարզ տեխնոլոգիաների կիրառմամբ մաքրման կայանների ստեղծում	*Ջրային ռեսուրսների աղտոտման կանխարգելման աշխատանքները դրված են կայուն հիմքերի վրա* *Ջրավազանային կառավարման մարմիններում ՏԻՄ-երի մասնակցությունն ապահովված է* *Կեղտաջրերի մաքրման պարզ կայանների նախագծերը մշակված են* *Արտադրական և նոր կառուցվող կենցաղային սպասարկման* կազմակերպությունները *կահավորված են կեղտաջրերի մաքրման պարզ կայանքներով* *Մարզի հորատանցքերը գույքագրված են, արդյունահանման ծավալները ճշտված են*	*Ռիսկեր՝* *Ջրահեռացման խնդիրը ջրավազանային կառավարման մարմնի կողմից չի կարևորվում*

Արդյունք 6. Բնապահպանական հիմնախնդիրների և իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացում Խնդիրներ՝ ▪ Բնապահպանական ծրագրերի իրականացման համար հասարակական կազմակերպություններին աջակցության տրամադրում	*Իրականացված ծրագրերը, դրամ* *ՀԼՄ հրապարկված հոդվածներ, հեռուստահաղորդումներ*	*Ռիսկեր՝* Ֆինանսական միջոցների բացակայությունը

8. ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

283. 2012-15թթ.-ի ՄԶԾ-ի համայնքային ենթակառուցվածքների բաժինը բաժանվում է 5 բաղադրիչների: Դրանք են. (1) ճանապարհաշինությունը, (2) խմելու ջրամատակարարումը, (3) գազամատակարարումը և (4) բազմաբնակարան շենքերի պահպանումը,(5) քաղաքաշինությունը: Բնակչությանը նշյալ բնագավառներում մատուցվող ծառայությունների որակն ու հասանելիությունն ուղղակիորեն կապված են մարզի տնտեսական աճի և աղքատության կրճատման հետ: Մասնավորապես՝ սոցիալական ծառայությունների մատչելիությունը, գյուղմթերքի իրացման հնարավորությունների ընդլայնումը, բնակչության շարժունության աստիճանի բարձրացումը, մարզում զբոսաշրջության զարգացումը մեծապես պայմանավորված են համայնքային ենթակառուցվածքների բարվոք վիճակով:

284. Ստորև ներկայացվում են մարզի համայնքային ենթակառուցվածքները, դրանց ներկայիս վիճակը, խնդիրները, ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ կատարված, նախատեսվող, ինչպես նաև առաջարկվող աշխատանքները:

8.1. ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

285. ՄԶԾ-ում աղքատությունը բնորոշվում է որպես կենսաբանական, սոցիալական, հոգևոր-մշակութային նվազագույն պահանջմունքները բավարարելու անհնարինություն: Աղքատության սահմանման մեջ նշված պահանջմունքների բոլոր երեք խմբերի բավարարման հնարավորությունների վրա, ի թիվս այլ գործոնների, անմիջականորեն ազդում է նաև մարդկանց ֆիզիկական մեկուսացվածությունը: Ուսումնասիրությունների համաձայն, որքան համայնքները հեռու են մարզկենտրոնից ու մայրաքաղաքից, այնքան այդ համայնքների բնակչությունն ավելի է հակված աղքատության:

286. Սակայն ֆիզիկական մեկուսացվածությունը պայմանավորված է ոչ միայն վերը նշվածով, այլև առավելապես այդ հեռավորությունները կապող ճանապարհների անմխիթար վիճակով: Այս առումով աղքատության և ճանապարհային ցանցի միջև առկա կապն ուղղակի է: Առանց բարվոք ճանապարհային ցանցի առկայության հնարավոր չէ ապահովել հուսալի և բոլորի համար հասանելի տրանսպորտային ծառայություններ: Ճանապարհային ցանցն ազդում է աղքատության վրա որպես տնտեսական աճի, եկամուտների բաշխման և հիմնական սոցիալական ծառայությունների հասանելիության վրա ազդող գործոն:

287. Աղքատության հաղթահարման տեսանկյունից ճանապարհաշինարարության ոլորտում իրականացվելիք քաղաքականությունը պետք է ուղղված լինի ճանապարհային ցանցի վերականգնմանը և պահպանմանը:

288. Համայնքների ֆիզիկական մեկուսացվածությունը վերացնելու նպատակով անհրաժեշտ է ռեսուրսներն ուղղել համայնքային նշանակության ճանապարհների

շինարարությանը՝ հաշվի առնելով աղքատության վրա վերջիններիս առավել մեծ ազդեցության աստիճանը:

289. Տավուշի մարզն ընդգրկում է 152.6կմ միջպետական նշանակության , 459.6 կմ հանրապետական նշանակության / որից 282.6 կմ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության ենթակայության, 177 կմ-ը՝ մարզի ենթակայության/, 189 կմ մարզային նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ:

290. 2008թ. ՀՀ պետական բյուջեով միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման համար նախատեսվել է 508.152 մլն դրամ գումար: Նշված ծրագրի շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ ձմեռային պահպանության են ենթարկվել 339.9կմ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներ՝ 144.208մլն. դրամ արժեքով և իրականացվել են նույն նշանակության 350.5 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագորման աշխատանքներ, որոնց ‘Գարուն-ամառ-աշուն’ սպասարկման արժեքը կազմել է 363.944 մլն դրամ:

291. 2008թ. ՀՀ պետական բյուջեով Տավուշի մարզի մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների համար նախատեսվել է 45.0մլն. դրամ գումար: Տավուշի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվել են ձմեռային պահպանության աշխատանքներ 26.6մլն դրամ արժեքով՝ 95.1կմ երկարությամբ ավտոճանապարհների համար և 41.3 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ՝ 18.4 մլն դրամ պայմանագրային արժեքով:

292. 2008թ. ՀՀ պետական բյուջեով Տավուշի մարզում հիմնանորոգվել են՝ Մոտեցում Մակարավանքի հուշարձանին ՝4.1կմ, 200.0մլն դրամ արժեքով, Մոտեցում Սևքար գյուղին՝ 0.5կմ, 35.0մլն. դրամ արժեքով, Մ-4-Ենոքավան-Կարմիր գյուղ՝ 6.3կմ, 370.0 մլն. արժեքով, Մ-16–Ոսկեպար 1.9կմ, 90.2 մլն դրամ արժեքով, Նոյեմբերյան - Դովեղ՝ 2.5կմ,123.8մլն դրամ արժեքով հանրապետական և տեղական նշանակության ավտոճանապարհները:

293. 2008թ. ՀՀ պետական բյուջեով 1988թ դեկտեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած երկրաշարժի 20-ամյա տարելիցի միջոցառումների ծրագրով Տավուշի մարզում իրականացվել են՝ Մ-4 Երևան - Սևան - Իջևան Ադրբեջանի սահման/կմ 107+500/ Հաղարծին գյուղի մոտ կամրջի նորոգման աշխատանքները՝ 17.705 մլն դրամ արժեքով, Թովուզ - Վ.Ծաղկավան /կմ0+350/ կամրջի նորոգման աշխատանքները՝ 57.0 մլն դրամ արժեքով, Իջևան -Նավուր - Բերդ - Այգեպար /Թովուզ - Այգեպար հատված/ 6.0կմ երկարությամբ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները՝ 387.005մլն դրամ արժեքով:

294. 2009թ. ՀՀ պետական բյուջեով միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման համար նախատեսվել է 501.658 մլն դրամ գումար: Նշված ծրագրի

շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ ձմեռային պահպանության են ենթարկվել 339.9կմ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներ՝ 143.244մլն. դրամ արժեքով և իրականացվել են նույն նշանակության 342.9 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքները, որոնց 'Գարուն-ամառ-աշուն' սպասարկման արժեքը կազմել է 358.414 մլն դրամ:

295. 2009թ. ՀՀ պետական բյուջեով Տավուշի մարզի մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների համար նախատեսվել է 74.583մլն. դրամ գումար: Տավուշի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվել են ձմեռային պահպանության աշխատանքներ 36.656մլն դրամ արժեքով՝ 125.8կմ երկարությամբ ավտոճանապարհների համար և իրականացվել են 72.386 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ՝ 37.927 մլն դրամ պայմանագրային արժեքով:

296. 2009թ. Տավուշի մարզում իրականցվել են մոտեցում Մակարավանքի հուշարձանին հանրապետական նշանակության ավտոճանապարհի 1.1կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքները՝ 124.9 մլն դրամ արժեքով, Վարագավանք տանող հանրապետական նշանակության ավտոճանապարհի 2.6 կմ հատվածի հիմնանորոգման աշխատանքները ՝ 395.8 մլն դրամ արժեքով, Բերդ - Թովուզ - Ն.Կ. Աղբյուր 7.2 կմ երկարությամբ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները՝ 515.0 մլն դրամ արժեքով, Դիլիջան քաղաքի Շամախյան թաղամասի ճանապարհի 1.02 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքները՝ 103.0 մլն դրամ արժեքով, իրականացվել են Մ-4 ք. Երևան- Սևան-Իջևան 89-րդ կմ ստորին հենապատի վերականգնման և Մ-8 Վանաձոր-Դիլիջան 39-րդ կմ սողանքային երևույթներից վնասված հատվածի վերականգնման աշխատանքները համապատասխանաբար՝ 28.0 և 87.0 մլն դրամ արժեքներով, իրականացվել է Հ-37 Այգեհովիտ - Վազաշեն - Պառավաքար 11-րդ կմ-ի փլուզված հատվածի վերականգնման նպատակով 1.3 կմ երկարությամբ նոր ավտոճանապարհահատվածի կառուցման աշխատանքները՝ 200.0 մլն դրամ արժեքով, ընթացքի մեջ են Հ-36 - Իջևան-Գանձաքար 6.97կմ երկարությամբ ավտոճանապարհի, Չինարի -Այգեձոր- Վ.Կ.Աղբյուր-Բերդ 32.5 կմ երկարությամբ ավտոճանապարհի, Բերդ-Նավուր-Իծաքար 11.0 կմ երկարությամբ ավտոճանապարհների հիմնանորոգման աշխատանքները: 'Վարձատրվող հասարակական աշխատանքներ' ծրագրով մարզի 25 գյուղական համայնքներում իրականացվել են ներհամայնքային ճանապարհների բարեկարգման, խճապատման աշխատանքներ՝ 21.2 մլն դրամ գումարի չափով: Իջևան և Դիլիջան քաղաքներում համայնքային բյուջեների հաշվին իրականացվել են քաղաքային փողոցների վերանորոգման աշխատանքներ՝ համապատասխանաբար 30.0 և 108.0 մլն դրամ գումարների չափով:

297. Ընդհանուր առմամբ 2009թ. մարզի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, համայնքային ենթակայության ճանապարհների, արհեստական կառուցվածքների /կամուրջներ, հենապատեր և այլն/ հիմնանորոգման, վերանորոգման, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների իրականացման նպատակով ներ է դրվել 3295.324մլն դրամ գումար /2008թ. մարզում ճանապարհաշինության ուղղությամբ ներդրումների չափը կազմել է 2338,020 մլն դրամ/ Հավելված1/:

298. 2010թ. ՀՀ պետական բյուջեով միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման համար նախատեսվել է 474.304 մլն դրամ գումար:

299. Նշված ծրագրի շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ իրականացվել է 335.53կմ՝ 128.222 մլն դրամ արժեքով ձմեռային պահպանության աշխատանքներ և նույն նշանակության 373.56 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ՝ 346.304 մլն դրամ արժեքով:

300. 2010թ. ՀՀ պետական բյուջեով Տավուշի մարզի մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների համար նախատեսվել է 72.9 մլն. դրամ գումար:

301. Նշված ծրագրի շրջանակներում Տավուշի մարզպետարանի պատվիրատվությամբ նախատեսված իրականացվել է 127.9 կմ՝ 37.3 մլն դրամ արժեքով ձմեռային պահպանության աշխատանքներ և նույն նշանակության 69.2 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներ՝ 35.6 մլն դրամ արժեքով:

302. 2010թ. ՀՀ պետական բյուջեով Տավուշի մարզում իրականացվել է Հ-37 Այգեհովիտ-Վազաշեն-Պառավաքար հանրապետական նշանակության ավտոճանապարհի 11-րդ կմ-ի փլուզված 1.3 կմ երկարությամբ ճանապարհահատվածի վերականգնման աշխատանքները՝ 197.7 մլն դրամ արժեքով: Շինարարական աշխատանքները ավարտվել են:

303. 2010թ. Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ Տավուշի մարզում իրականացվել են մոտեցում Մակարավանքի հուշարձանին ավտոճանապարհի 3.676 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգման աշխատանքները՝ / Աչաջրի գյուղամիջյան հատված/ 397.0 մլն դրամ արժեքով, Մ-4- Լուսահովիտ 5.5կմ երկարությամբ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները՝ 659.0մլն դրամ արժեքով, Նորաշեն-Մովսես 8.8կմ երկարությամբ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները՝՝ 701.0մլն դրամ արժեքով:

304. 2010թ. ՀՀ կառավարության կողմից իրականացվող բնածին և տարերային աղետների հետևանքով ճանապարհներին պատճառված վնասների վերականգնման ծրագրով իրականացվել են Մ-4 Երևան-Սևան-Իջևան կմ 110+300 /Հաղարծնի հատված/ փլուզված հատվածի վերականգնման աշխատանքները՝10.0մլն դրամ արժեքով, Մ-4 Երևան-Սևան-Իջևան կմ 114-րդ /Հովքի հատված/ սողանքային գոտու փլուզված հատվածի վերականգնման աշխատանքները՝ 70.0մլն դրամ արժեքով, Մ-4 Երևան-Սևան-Իջևան կմ 114-րդ /Հովքի հատված/ սողանքային գոտու շրջանցիկ ճանապարհի վերականգնման աշխատանքները՝ 185.0մլն դրամ արժեքով, Մ-4 Երևան-Սևան-Իջևան կմ 84+000-կմ 96+000 /սերպանտինների հատված/ վթարային տեղամասերի վերականգնման աշխատաքները՝ 21.0մլն դրամ արժեքով,Մ-4 Երևան-Սևան-Իջևան կմ 95-րդ կմ /Դիլիջանի հատված/ փլվածքի վերականգնման աշխատանքները՝ 38.0մլն դրամ արժեքով, Մ-16 Մ-4-Ոսկեպար- Նոյեմբերյան-Մ-6 /Ոսկեպար-Բաղանիս հատված/ փ-

31-րդ փլուզված հատվածի վերականգնման աշխատանքները՝ 57.0մլն դրամ արժեքով /աշխատանքները դադարեցվել են փլուզումների շարունակման պատճառով, ֆինանսավորվել է 31.0մլն դրամ/, Հ-30 -Գոշ ավտոճանապարհի կմ 2+900 քարաթափության մաքրման աշխատանքները՝ 4.5 մլն դրամ արժեքով, Մ-4-Հաղարծին / վանք տանող ճանապարհ/ ավտոճանապարհի կմ4-կմ6 փլուզված հատվածների վերականգնման աշխատանքները՝ 6.5 մլն դրամ արժեքով, Հ-37 Մ-4-Այգեհովիտ-Վազաշեն –Պառավաքար-Այգեպար ավտոճանապարհի կմ4+400 -կմ 4+500 / գ. Այգեհովիտի հատված/ վթարային տեղամասերի վերականգնման աշխատաքները՝ 13.0մլն դրամ արժեքով:

305. Դիլիջանի համայնքների միության կողմից՝ Գերմանական ԳՏՀ կազմակերպության,ՄԱԿ-ի պարենային ծրագրի, Դիլիջան և Աղավնավանք համայնքների համատեղ ֆինանսավորմամբ իրականացվել են Դիլիջանի Հակոբջանյան փողոցի հենապատի վերանորոգման և Աղավնավանքի վերին և ներքին թաղամասերը կապող գետանցի ճանապարհի վերանորոգման աշխատանքները համապատասխանաբար՝ 8.446մլն դրամ և 4.694 մլն դրամ արժեքներով:

306. Դիլիջանի քաղաքապետարանի կողմից՝համայնքային բյուջեի միջոցներով իրականացվել են 2910 գծմ Սայաթ-Նովա փողոցի հիմնանորոգման, 826 գծմ Անդրանիկի թաղամաս տանող ճանապարհի վերանորոգման, 513 գծմ Գորկի-Մյասնիկյան փողոցի հիմնանորոգման, 630 գծմ ՈՒսանողական փողոցի վերանորոգման աշխատանքները համապատասխանաբար՝ 200.513մլն դրամ, 59.515 մլն դրամ 135.009 մլն դրա և 9.576 մլն դրամ արժեքներով / ընդամենը՝ 404.631 մլն դրամ/:

307. Ընդհանուր առմամբ 2010թ. մարզի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, արհեստական կառուցվածքների /կամուրջներ, հենապատեր և այլն/ հիմնանորոգման, վերանորոգման, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների իրականացման նպատակով ներդրումները կազմել է 3.3 մլրդ դրամ /2009թ. մարզում ճանապարհաշինության ուղղությամբ ներդրումների չափը կազմել է 3295,3 մլն դրամ/:

308. 2011թ. ՀՀ պետական բյուջեով միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման համար նախատեսվել էր 510.0 մլն դրամ գումար: Նշված ծրագրի շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ իրականացվել է 335.53կմ երկարությամբ ավտոճանապարհների ձմեռային պահպանության աշխատանքներ և նույն նշանակության 373.56 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության աշխատանքներ:

309. 2011թ. ՀՀ պետական բյուջեով Տավուշի մարզի մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների համար նախատեսվել է 72.9 մլն. դրամ գումար: Նշված ծրագրի շրջանակներում Տավուշի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվել էր 122.6 կմ երկարությամբ

ավտոճանապարհների ձմեռային պահպանության աշխատանքներ և նույն նշանակության 69.2 կմ ավտոճանապարհների ընթացիկ պահպանության աշխատանքներ:

310. 2011թ. ՀՀ պետական բյուջեով Տավուշի մարզում իրականացվել էր զբոսաշրջության զարգացման նպատակով Վարագավանք տանող 1.5կմ ճանապարհի ասֆալտբետոնե ծածկով վերականգնման աշխատանքները՝ 339.430 մլն.դրամ նախահաշվային արժեքով:

311. 2011թ. ՀՀ պետբյուջեով Համաշխարհային բանկի աջակցությամբ <<Կենսական նշանակության ճանապարհների բարելավման >> ծրագրով նախատեսված էր հիմնանորոգել Բերդ- Արծվաբերդ- Այգեձոր- Չինարի 32.5 կմ ընդհանուր երկարությամբ ավտոճանապարհը՝ 537.327 մլն.դրամ արժեքով և 6,97 կմ ընդհանուր երկարությամբ Իջևան-Գանձաքար հանրապետական նշանակության ավտոճանապարհը՝ 440,0 մլն.դրամ արժեքով: Վերջինիս շինարարական աշխատանքներն ավարտված են:

312. 2011թ. ՀՀ պետական բյուջեով ՀՀ Կառավարության կողմից իրականացվող բնածին և տարերային աղետների հետևանքով ավտոմոբիլային ճանապարհներին պատճառված վնասների վերականգնման ծրագրով վերականգնվել են Մ-4 Երևան-Սևան-Իջևան միջպետական նշանակության ա/ճ կմ 104+200 /գ.Թեղուտի հատված/ քանդված հատվածի վերականգնման աշխատանքները՝ 12,0մլն դրամ պայմանագրային արժեքով և Մ-16 Մ-4-Ոսկեպար-Նոյեմբերյան-Մ-6 միջպետական նշանակության ա/ճ 30-րդ կմ-ի ու 31-րդ կմ-ի փլուզված հատվածների /գ. Ոսկեպարի և գ. Բաղանիսի հատվածներ/ վերականգնման աշխատանքները՝ 48,0 մլն դրամ պայմանագրային արժեքով, Հ-37 Մ-4-Այգեհովիտ-Վազաշեն-Այգեպար հանրապետական նշանակության ավտոճանապարհի քանդված հատվածների վերականգնման աշխատանքները՝ 6.2 մլն դրամ պայմանագրային արժեքով:

313. ՀՀ պետական բյուջեով ՀՀ պահուստային ֆոնդի հաշվին <<Հրատապ լուծում պահանջող հիմանխնդիրների> առաջին ծրագրով Տավուշի մարզում իրականացվել էր Իջևան քաղաքի Մետաղագործների փողոցի և արտաքին ջրահեռացման համակարգի վերանորոգման՝ 37,2 մլն դրամի, Իջևան քաղաքի Երտասարդական փողոցի վերանորոգման՝ 37.1 մլն դրամ, ք. Իջևանի Իջևանյան և Ասլանյան փողոցների վերանորոգում՝ 46.6 մլն,, Բերդ քաղաքի Մաշտոցի փողոցի վերականգնման՝ 46.8 մլն, Նոյեմբերյան քաղաքի Դպրոցականների փողոցի վերանորոգման՝ 28.1 մլն դրամ, Դիլիջան քաղաքի Հովվագետի գետանցման աշխատանքների ավարտման՝ 11.2 մլն դրամ և Նորաշենի արտաքին ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքները՝ 13.2 մլն դրամի աԱշխատանքները ավարտված են:

314. 2011թ հրատապ երկրորդ ծրագրով ՀՀ պետբյուջեից Տավուշի մարզի Իջևանի Երիտասարդական և Գանինի փողոցների վերանորոգման համար հատկացվել է 30.0մլնդրամ, Իջևան քաղաքի դեպի ՍՈՍ մանկատուն տանող փողոցի վերանորոգման համար 19.0մլն.դրամ, Բերդի Մաշտոցի փողոցի վերանորոգման համար 30.0մլնդրամ, Նորաշենի համայնքային ճանապարհի խճապատման համար 10.0մլն.դրամ, Նոյեմբերյանի Դպրոցականների փողոցի վերանորոգման համար 30.0մլն.դրամ, Կողբի համայնքային ճանապարհի վերանորոգման համար 20.0մլն.դրամ:

315. 2012թ. ՀՀ պետական բյուջեով միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման համար նախատեսվել է 510.0 մլն դրամ գումար: Նշված ծրագրի շրջանակներում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ իրականացվում է 335.5կմ երկարությամբ ավտոճանապարհների ձմեռային պահպանության աշխատանքներ: 2012թ. ՀՀ պետական բյուջեով Տավուշի մարզի մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքների իրականացման համար նախատեսվել է 72.858 մլն դրամ գումար: Նշված ծրագրի շրջանակներում ՀՀ Տավուշի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվում է 133.7 կմ երկարությամբ ավտոճանապարհների ձմեռային պահպանության աշխատանքներ: 2012թ. ՀՀ պետբյուջեով Համաշխարհային բանկի աջակցությամբ <<Կենսական նշանակության ճանապարհների բարելավման >> ծրագրով նախատեսված է հիմնանորոգել Բերդ- Արծվաբերդ- Այգեձոր- Չինարի 32.5 կմ ընդհանուր երկարությամբ ավտոճանապարհը՝ 2 մլրդ 100 միլիոն դրամ արժեքով /որից կմ0+000կմ-22+000՝ 1.293մլրդ դրամ, կմ22+000կմ- 32+500՝ 798մլն դրամ, և Բերդ-Իծաքար 11.0 կմ ընդհանուր երկարությամբ ավտոճանապարհը 988.8 միլիոն դրամ արժեքով: Կնքված են կապալառու կազմակերպությունների հետ պայմանագրերը: 2012թ. ՀՀ պետական բյուջեով Տավուշի մարզում նախատաեսված է իրականացնել Թեղուտ-Հաղարծին 2.5կմ երկարությամբ ավտոճանապարհի վերանորոգման աշխատանքները՝ 80.0մլն դրամ արժեքով: Բացի այն, որ ճանապարհաշինարարական ծրագրերը նպաստում են զբոսաշրջության, գյուղատնտեսության զարգացմանը, բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը, դրանց իրականացման անմիջական կարևորությունը կայանում է նրանում, որ արդյունքում կրճատվում են տրանսպորտային ծախսերը, աճում է երթևեկությունը, ստեղծվում են առավել նպաստավոր և անվտանգ պայմաններ հասարակական տրանսպորտի կանոնավոր աշխատանքի համար: Այստեղ հարկ է նշել, որ մարզում գործում են 18 ներմարզային երթուղիներ, որոնք սպասարկվում են 6 ուղևորատար կազմակերպությունների կողմից: Կանոնավոր գործում են միջմարզային երթուղիները: Ներքաղաքային երթուղիների սպասարկում իրականացվում է Իջևան և Դիլիջան քաղաքներում: 2012-15թթ.-ին կանխատեսվող և նույն ժամանակահատվածի համար առաջարկվող ճանապարհաշինական ծրագրերը ներկայացված են **հավելված 4,5-ում:**

8.2. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ

316. Բնակչությանը մատուցվող հիմնական հանրային ծառայությունների, այդ թվում՝ խմելու ջրի որակը, մատչելիությունը եւ հասանելիությունը բնակչության կենսամակարդակի վրա ուղղակիորեն ազդող հիմնական գործոններից են: Կայուն զարգացման ծրագրի համաձայն՝ հանրային ծառայությունների ոլորտում իրականացվելիք քաղաքականության հիմնական նպատակը պետք է հանդիսանա բնակչությանը հասանելի, մատչելի և որակյալ ծառայությունների մատուցման ապահովումը: ՄԱԿ-ի կողմից հռչակված Հազարամյակի զարգացման նպատակների համաձայն՝ անվտանգ ջրամատակարարմանն անհասանելի բնակչության տեսակարար կշիռը մինչև 2020թ.-ը պետք է կիսով չափ կրճատված լինի: Հայաստանի պարագայում դա նշանակում է, որ մինչև 2020թ.-ը կենտրոնացված ջրամատակարարումը պետք է հասանելի դառնա բնակչության առնվազն 90%-ին:

317. Ջրամատակարարման համակարգի ընկերությունների կառավարման արդյունավետության բարձրացումը. Ոլորտի ընկերությունների կառավարման համակարգի բարեփոխումներն իրականացվող քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը պետք է լինեն: Քաղաքականությունը խմելու ջրի համակարգի ընկերությունների համար պետք է ուղղված լինի վերջիններիս ֆինանսական կենսունակության բարձրացմանը՝ շահագործման ծախսերի արդյունավետության բարձրացման և մատուցված ծառայությունների դիմաց վճարի հավաքագրման մակարդակի բարելավման հաշվին: Ընդհանրապես, վճարի հավաքագրման մակարդակի բարելավումը և շահագործման ծախսերի արդյունավետության բարձրացումը խմելու ջրի համակարգի ընկերությունների ֆինանսական առողջացման հիմնական աղբյուրներից են:

318. Ներկա պահին ոլորտի ընկերությունների համակարգերի շահագործումն սկսվել է իրականացվել արտոնագրային կառավարման սկզբունքով, որով հստակորեն սահմանվում են ընկերությունների կառավարիչների խրախուսման մեխանիզմները և պատասխանատվության շրջանակները: Ընկերությունների կառավարիչների աշխատանքի գնահատման հիմնական չափանիշ է հանդիսանում մատուցված ջրի դիմաց վճարի հավաքագրման ցուցանիշը և շահագործման, հատկապես էլեկտրաէներգիայի ծախսի տեսակարար կշիռը:

319. Ջրի հաշվառման համակարգի բարելավումը. Խմելու ջրի ոլորտի ընկերությունների կառավարման համակարգի բարելավման առումով մեծ նշանակություն ունի համակարգում ջրի հաշվառման խնդիրը: Սպառողների համար առանձնացված ջրաչափերի տեղադրումը հնարավորություն է տվել նվազեցնել ջրի ոչ արդյունավետ օգտագործումը և դրանով իսկ նպաստել ջրամատակարարման տևողության երկարաձգմանը: Ներկայումս մարզում տեղադրված է մոտ 14200 ջրաչափ, 2003թ.-ին դրանց թիվը կազմում էր 4868ջրաչափ,իսկ 2008թ. -8500: Ջրաչափերի տեղադրման գործընթացին զուգահեռ բարձրացել է վարձավճարների հավաքագրման մակարդակը, ինչը կորուստների նվազեցման և շուրջօրյա ջրամատակարարման անցնելու նախապայման է: Վարձավճարների գանձման մակարդակը 2011թ.-ի հուլիսի 1-ի դրությամբ 115 մլն դրամ հաշվարկային եկամուտի դիմաց կազմել է 110 մլն դրամ կամ կատարվել է 96%-ի չափով՝ նախորդ տարվա 92%-ի դիմաց: Համեմատության համար հարկավոր է նշել, որ 2008թ. նույն ժամանակահատվածում 75 մլն հաշվարկային եկամուտի դիմաց այն կազմել է 67 մլն դրամ կամ 89%:

320. Դիլիջան և Բերդ քաղաքներում ջրամատակարարումն իրականացվում է բաց աղբյուրներից՝ ջրի մաքրման կայանների /Գոլովինո, Ֆրոլովո, Բլդան, Սորան/ (ՋՄԿ) միջոցով, իսկ Իջևան և Նոյեմբերյան քաղաքներում՝ կապտաժներից, ինքնահոս և մեխանիկական եղանակներով:

321. Մարզի ջրամատակարարումը հիմնականում իրականացվում է ինքնահոս եղանակով և միայն 15%-ը՝ մեխանիկական եղանակով: Սպասարկվում են 57 գյուղական և 5 քաղաքային համայնքներ: Արտաքին ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 1150կմ, որից քաղաքային՝ 215կմ, իսկ ներքին ցանցի ընդհանուր երկարությունը 470կմ է, որից քաղաքային՝ 212կմ:

322. Տավուշի մարզի ջրամատակարարման համակարգի գլխամասային կառուցվածքներում ներգրավված են 115 կապտաժներ, 17 բաց աղբյուրներ, 10 խորքային հորեր, 4 պոմպակայան (Բերդավան, Ոսկեպար, Իջևան, Այրում), 132 ՕԿՋ, 4 ՋՄԿ (1-ը՝ Բերդի տարածաշրջանում, 3-ը՝ Դիլիջանի):

323. Մարզի խմելու ջրի ընդհանուր տնօրինվող ռեսուրսները կազմում են 725 լ/վրկ: Բնագավառում գործող խողովակաշարերի ընդհանուր երկարության 65-70%-ը կառուցվել է ավելի քան 40 տարի առաջ, որի հետևանքով ջրամատակարարման ներքին և արտաքին համակարգերը գտնվում են անբավարար վիճակում: Կատարված մասնագիտական գնահատումների համաձայն՝ ջրամատակարարման համակարգի արտաքին և ներքին ցանցերի ընդհանուր կորուստները կազմում են 50-55%:

324. Իջևան քաղաքը սնող ջրաղբյուրները մակերևութամոտ են, և ամռան շոգ ամիսներին որոշ թաղամասերում ջրամատակարարման հետ կապված բարդություններ են առաջանում: Աանհրաժեշտ է վերանորոգել և կառուցել 47կմ ընդհանուր արտաքին և ներքին ցանց, 5 հատ ՕԿՋ, 15 կմ կոյուղագիծ:

325. Իջևանի տարածաշրջանում անհրաժեշտ է վերանորոգել և կառուցել 17 կմ ընդհանուր երկարությամբ արտաքին և ներքին ցանց, 12 հատ ՕԿՋ և 3 կապտաժներ,

326. Դիլիջան քաղաքի ջրամատակարարումն իրականացվում է 3 ՋՄԿ-ների միջոցով, որոնց նախագծային հզորությունը 140 լ/վրկ է: Բլդանի ՋՄԿ-ն ենթակա է հիմնանորոգման: Շամախյան թաղամասում անհրաժեշտ է կառուցել նոր ՋՄԿ, քանի որ բնակչության ջրամատակարարումն իրականացվում է սանիտարական նորմերի կոպիտ խախտումներով:

327. Անհրաժեշտ է վերանորոգել և կառուցել 37 կմ ընդհանուր երկարությամբ արտաքին և ներքին ցանց, նոր ԿՄԿ/կոյուղու մաքրման կայան/, 2 հատ ՕԿՋ, 5 կմ կոյուղագիծ:

328. Բերդ քաղաքի ջրամատակարարումն իրականացվում Սորանի ՋՄԿ-ի միջոցով, որի հզորությունը 50 լ/վրկ: Անհրաժեշտ է վերանորոգել և կառուցել 5 կմ ընդհանուր երկարությամբ արտաքին և ներքին ցանց, 3 կմ կոյուղագիծ Բերդի տարածաշրջանում անհրաժեշտ է կառուցել 26կմ ընդհանուր երկարությամբ նոր ջրագծեր:

329. Նոյեմբերյան քաղաքը սնող ջրամբարները մակերևութամոտ են, և ամռան ամիսներին ելքերը կտրուկ պակասում են: Անհրաժեշտ է հիմնանորոգել 1 հատ ՕԿՋ, Գիժ սար ջրատարից վերակառուցել 15 կմ երկարությամբ հատված, հիմնանորոգել 3 կմ կոյուղագիծ: Նոյեմբերյանի տարածաշրջանում անհրաժեշտ է կառուցել 6 կմ ընդհանուր երկարությամբ ջրագիծ, 3 ՕԿՋ-ներ և հիմնանորոգել 1 ՕԿՋ:

330. Այրում քաղաքի ջրամատակարարումն իրականացվում է Այրումի պոմպակայանից և ‘‘Լոռի-Բերդ’’ ջրատարից: Անհրաժեշտ է հիմնանորոգել 3 կմ երկարութամբ ներքին ցանց:

331. Գյուղական համայնքներում ջրի վարակազերծման նպատակով գլխամասային կառույցների և ՕԿՋ-ների սանիտարական պահպանման գոտիների վերականգնում:

332. Բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի կառուցվածքները և ներքին ցանցերը տեխնիկապես մաշված են, խմելու ջրի վարակազերծում չի կատարվում կամ կատարվում է անբավարար մակարդակով: Գյուղական բնակավայրերում տեխնիկական և մասնագիտական ռեսուրսների կարիք է զգացվում:

333. Մարզի բնակչությանը բարորակ խմելու ջրով ապահովելու նպատակով խիստ կարևոր է ջրամատակարարման համակարգերով տրվող խմելու ջրի շարունակական վարակազերծումը, ինչի համար պետք է կառուցվեն քլորակայաններ և տեղադրվեն համապատասխան սարքեր:

334. Իջևանի, Նոյեմբերյանի և Բերդի տարածաշրջանների երեքական համայնքներում անհրաժեշտ է իրականացնել աշխատանքներ նոր ջրաղբյուրներ ներգրավելու ուղղությամբ:

335. Ջրամատակարարման ոլորտում ներդրումների ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են արտաքին ֆինանսական ռեսուրսները: 2008-2011թթ.-ին միջազգային կազմակերպությունների վարկային ու դրամաշնորհային միջոցներով և կառավարության համաֆինանսավորմամբ մարզում իրականացվել և իրականացվում են խմելու ջրի մատակարարման համակարգերի կառուցման և վերակառուցման աշխատանքներ՝ Համաշխարհային բանկի, ‘‘Հայաստան’’Համահայկական հիմնադրամի, ԳՏԶԾ-ի, ՀՏԶԾ/ՌԵՍԿԱՏ/ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ‘‘Հայաստանյան միջեկեղեցիական բարեգործական կլոր սեղան’’ հիմնադրամ,Լոս-Անջելեսի ‘Հայրենիք’ միության, Ասիական զարգացման բանկի, ‘‘Հայջրմուղկոյուղի’’ ՓԲԸ-ի և այլ կազմակերպությունների ծրագրերի շրջանակներում:
Ջրամատակարարման բնագավառում իրականացված նախատեսվող և առաջարկվող աշխատանքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է **հավելվածներ 6 և 7** -ում:

8.3.ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

336. 2011թ.-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ մարզում գազիֆիկացված են 43 բնակավայրեր, որոնցից 1-ը՝ Ենոքավանը, այս տարի: 2012թ. երկրորդ եռամսյակից կսկսվի Կոթի, Բարեկամավան, Ոսկեվան, Ոսկեպար, Բաղանիս և Ջուջևան համայնքների գազամատակարարման վերականգնումը: Ներկայումս կատարվում են աշխատանքներ գյուղերը սնող մայրուղի գազատարների վրա, որից հետո կսկսվի ներքին բաշխիչ ցանցերի կառուցումը: Ընդ որում, աշխատանքները կատարվում են ՀՀ ԿԱ ,,ԳՏՏԶԾ ԾԻԳ’’ ՊՀ-ի ծրագրով: Արդեն պատրաստ է գազաբաշխիչ կայանը՝ ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Միքայել Վարդանյանի ֆինանսավորմամբ:

337. Նույն ՀՀ ԿԱ ,,ԳՏՏՋԾ ԾԻԳ'' ՊՀ -ի ծրագրով ավարտվել է մնացած 19 համայնքների գազիֆիկացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմումը:

338. Ըստ տարածաշրջանների գազիֆիկացված համայնքների պատկերը հետևյալն է՝ Իջևան - 16, Դիլիջան - 3, Նոյեմբերյան - 9, Բերդ - 15:

339. 2011թ.-ին Տավուշի մարզում 'ՀայՌուսգազարդ' ՓԲԸ և համայնքների ներդրումներով գազամատակարարման վերականգնման, գազիֆիկացման և ներքին բաշխիչ ցանցերի ընդլայնման աշխատանքներ են իրականացվել:

340. Ինչպես այս, այնպես էլ մյուս գազ օգտագործող բնակավայրերում աստիճանաբար ավելանում է բաժանորդների թիվը, տեղադրվում են նոր հաշվիչներ, շարունակվում է նախկինում տեղադրված կենցաղային գազահաշվիչների տեսանելիության ապահովման և փչացածների փոխարինման գործընթացը:

341. Տավուշի մարզի 2011-2015թթ.-ի գազիֆիկացման և գազամատակարարման վերականգնման ծրագրով նախատեսված է գազամատակարարումը վերականգնել մարզի բոլոր բնակավայրերում: 2009-2011թթ. Իրականացված աշխատանքները ներկայացված են **հավելված 8-ում:**

8.4 Հիդրոէներգետիկա

342. Տնտեսության տարբեր ճյուղերի հետագա զարգացումը նոր պահանջներ է առաջադրում մարզի տարածքում նոր էներգետիկ հզորությունների ստեղծման համար: Ներկայումս ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված արտադրության լիցենզիաների համաձայն 01.10.2011 թվականի դրությամբ մարզում տարեկան 31,28 մլն. կՎտժ էլեկտրաէներգիա են արտադրում 11 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ մոտ 9993 կՎտ ընդհանուր հզորությամբ /տես **հավելված 9/**:

343. Մարզում 01.10.2011թ դրությամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն կառուցվում են 9 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ 13789 կՎտ ընդհանուր հզորությամբ: Փոքր հիդրոէլեկտրակայանների շահագործման դեպքում մարզում էլեկտրաէներգիայի արտադրությունը կավելանա 62,6 մլն. կՎտժ-ով, որը՝ իր հերթին, կհանգեցնի արդյունաբերական արտադրանքի ծավալի աճին և տասնյակ աշխատատեղերի ստեղծմանը /տես **հավելված 10/**:

344. Համաձայն ՀՀ կառավարության 22 հունվարի 2009 թվականի նիստի N3 արձանագրային որոշման հավանության է արժանացել՝ «Փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացման սխեման», ըստ որի նախատեսվում է Աղստև գետի ավազանում կառուցել ևս 23 ՓՀԷԿ-եր 33779 կՎտ

ընդհանուր դրվածքային հզորությամբ և 129,77 մլն. կՎտժ տարեկան արտադրանքով/տես **հավելված 11/**:

8.5.ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

8.5.1.Քաղաքաշինության ոլորտի իրավիճակի վերլուծություն

345. 2009-2010թթ. մարզի տարածքում կատարվել են աշխատանքներ քաղաքաշինական ծրագրերի կազմման և հիմնախնդիրների լուծման ուղղությամբ: Համաձայն 'Գնումների մասին' ՀՀ օրենքի մարզպետի կարգադրությամբ ստեղծվել է շինարարության պետպատվերի մրցույթների կազմակերպման ստորաբաժանում, որի կողմից սահմանված կարգով ՀՀ պետական գնումների գործակալություն ներկայացվել են նախագծա-նախահաշվային փաստաթղթեր, թերությունների ակտեր, գնման և վճարման ժամանակացույցեր: ՀՀ գնումների գործակալության կողմից անց են կացվել կապալառու կազմակերպությունների ընտրությունների մրցույթներ: Հաղթող ճանաչված բոլոր շինարարական կազմակերպությունների հետ ժամանակին կնքվել են աշխատանքային պայմանագրեր և կազմվել շինարարության կատարման ժամանակացույցեր:

346. 2009թ. մարզում կատարվել են 2894.85 մլն. դրամի շինարարական աշխատանքներ, այդ թվում 901.45 մլն դրամի աշխատանքներ ՀՀ պետական բյուջեի միջոցներով: Նշված գումարից 760.707 մլն. դրամի շինարարական աշխատանքները իրականացվել է քաղաքաշինության նախարարության, իսկ 140.743մլն դրամը՝ մարզպետարանի կողմից: 2009 թվականին մարզում 1993.4 մլն դրամի շինարարական աշխատանքներ են կատարվել ՀՍՆՀ-ի, 'Հայաստան' համահայկական հիմնադրամի, Արդարադատության դեպարտամենտի, ՆԳ նախարարության, Համաշխարհային բանկի , Բարեգործական և միջազգային այլ ներդրումային ծրագրերով:

347. Դպրոցաշինության բնագավառում ՀՀ պետ բյուջեով և այլ ներդրումային ծրագրերով կատարվել են 1051.9954 մլն դրամի շինարարական աշխատանքներ:
Առողջապահության ԾԻԳ-ով իրականացվել են Իջևանի հիվանդանոցի հիմնանորոգման աշխատանքները: 'Հայաստան' համահայկական հիմնադրամի միջոցներով իրականացվել են Խաշթառակի դպրոցի հիմնանորոգման , Ակնաղբյուրի ջրագծի, Ակնաղբյուրի համայնքային կենտրոնի, Ազատամուտի կաթի ընդունման կետի, Դիտավանի համայնքային կենտրոնի , Նոյեմբերյանի հիվանդանոցի հիմնանորոգման և Դիտավանի, Ակնաղբյուրի գազաֆիկացման աշխատանքները: Բարեգործական ծրագրով Իջևանում կառուցվել է ՍՈՍ մանկական գյուղ:

348. 2010թ. մարզում կատարվել են 6363.3264 մլն. դրամի շինարարական աշխատանքներ, այդ թվում քաղաքաշինական ոլորտում՝ 313.5227 մլն. դրամի աշխատանքներ ՀՀ պետական բյուջեի միջոցներով: Նշված գումարից 288.2707 մլն. դրամի շինարարական աշխատանքները իրականացվել է քաղաքաշինության նախարարության, իսկ 25.252 մլն. դրամի՝ մարզպետարանի կողմից: 2010 թվականին մարզում 578.1522 մլն. դրամի շինարարական աշխատանքներ են կատարվել ՀՍՆՀ–ի, "Հայաստան" համահայկական հիմնադրամի և բարեգործական այլ ներդրումային ծրագրերով:

349. Դպրոցաշինության բնագավառում ՀՀ պետական բյուջեով և այլ ներդրումային ծրագրերով կատարվել են 476.8614 մլն. դրամի շինարարական աշխատանքներ:

350. ՀՍՆՀ-ի ծրագրի միջոցներով իրականացվել են Այգեհովիտի տարրական դպրոցի հիմնանորոգման, Բերդի թիվ 2 դպրոցի մարզադահլիճի և ջեռուցման համակարգի կառուցման, Կողբի դպրոցի ջեռուցման համակարգի կառուցման, Իջևանի երաժշտական դպրոցի վերանորոգման, Վազաշենի համայնքային կենտրոնի կառուցման աշխատանքների ավարտման, Դիլիջանի բժշկական կենտրոնի նոր մասնաշենքի ջեռուցման համակարգի կառուցման և Չինարիի համայնքային կենտրոնի վերանորոգման աշխատանքները:

351. ՍԻ-ԷՅԶ-ԷՖ-ի Հայաստանի գրասենյակի կողմից հիմնանորոգվել է Սևքարի մանկապարտեզը:

352. Մոտ 600,0 մլն դրամի շինարարական աշխատանքներ են կատարվել համայնքների միջոցներով և 1000.0 մլն. դրամի շինարարական աշխատանքներ կատարվել են անհատների միջոցներով:

353.Մարզի տարբեր տարածաշրջաններում վերջին տարիներին սողանքային երևույթների և սելավների պատճառով մեծ վնաս է հասցվել ոչ միայն բնակելի ֆոնդին, այլև ինժեներատեխնիկական կառուցվածքներին:

354. Կատարված ուսումնասիրությունների արդյունքում ՀՀ կառավարություն է ներկայացվել 2011-2013թթ. քաղաքաշինական ծրագրերի ռազմավարական ուղղությունները: Դրանք են՝

1) սողանքային երևույթների դիտարկումների իրականացումը,
2) սողանքային գոտում գտնվող բնակարանատերերին պետական աջակցության տրամադրումը,/ հավելված 3/
3)դդդպրոցական, առողջապահական և այլ կուլտուր-կենցաղային օբյեկտների կառուցումը, վերակառուցումը և հիմնանորոգումը,
4)բնակարանային ֆոնդի պահպանում,
5) վթարային բնակելի շենքերի ուժեղացում,
6)անավարտ բնակելի շենքերի ավարտումը և բնակարանաշինական խնդիրների լուծումը:

355. 2010թ. մարզի 5 քաղաքային և 57 գյուղական համայնքների ղեկավարների քաղաքաշինության բնագավառում իրականացված գործունեության վերաբերյալ կատարվել են պլանային և ընթացիկ ստուգումներ, հայտնաբերվել են 2 ապօրինի կառույցներ, որոնց վերաբերյալ կազմվել են համապատասխան արձանագրություններ:

356. Համայնքների ղեկավարներին տրվել են հանձնարարականներ՝ քաղաքաշինական օրեքների պահանջները կատարելու, և օրենքի անխաղտելիության մասին:

357. Նախատեսվել և կատարվել են սանմաքրման, կանաչապատման, փողոցների բարեկարգման, գյուղական բնակավայրերի փողոցների խճապատման, ոռոգման և

սելավատարների ջրատարների մաքրման ու նորոգման, խմելու ջրագծերի կառուցման և վերանորոգման աշխատանքներ:

358. Մարզում հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման համար ՀՀ պետական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացվել է 632000,0 հազար ՀՀ դրամ, որից 25200,0 հազար ՀՀ դրամը հատկացվել է նախագծային աշխատանքների կազմման համար, իսկ 606800,0 հազար ՀՀ դրամը շինարարական աշխատանքների իրականացման համար:

359. 2012-2014թթ. ՀՀ պետական բյուջեում ընդգրկելու նպատակով ՀՀ կառավարություն է ներկայացվել Տավուշի մարզի քաղաքաշինության ոլորտի վերաբերյալ բյուջետային հայտ կապիտալ ներդրումների համար: Քաղաքաշինական բնագավառում կատարված աշխատանքներին զուգահեռ դեռևս կան հրատապ լուծում պահանջող խնդիրներ, որոնց համար կազմվել են համապատասխան առաջարկություններ/բխում է սույն ծրագրից/, որը ներկայացվել է ՀՀ Կառավարությանը և ՀՀ-ու գործող մի շարք միջազգային կազմակերպությունների: Մարզում առկա հանքավայրերից արդյունահանում և վերամշակում են ֆելզիտ, բազալտ, անտառներից ստանում տարբեր տեսակի շինափայտ, գործում են միջնորմային սալիկների, Ե/Բ կոնստրուկցիաների և դռների ու պատուհանների արտադրամասեր: Գործող շին. Կազմակերպությունների տեխնիկական հագեցվածությունը 40% է, այն էլ հիմնականում հին:
Քաղաքաշինության ոլորտի պահանջվող ֆինանսավորումը 2012-2015թթ. Ներկայացված է **աղյուսակ 8.1 ում,** իսկ Տավուշի մարզի առաջնահերթ վերանորոգման կարիք ունեցող դպրոցների (ըստ վթարայնության աստիճանի և տարիների**)** ցանկը՝ **հավելված 2 ում:**

աղյուսակ 8.1

ՄԶԾ ոլորտը	Պլանավորվող ֆինանսավորումը 2012-2015թթ/մլն դրամ/				
	2012թ.	2013թ.	2014թ	2015թ.	Ընդամենը 2012-2015թթ
Քաղաքաշինություն	195.0	4450.6	4133.25	4812.3	13591.15

360. Քաղաքացիական պաշտպանության կառույցների հիմնանորոգում-Անհրաժեշտ է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

1) Մարզային պահեստային կառավարման կետերի հիմնանորոգում, տեխնիկական զինվածությամբ և գույքով ապահովում

2) Առկա քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցների վերանորոգում, անհրաժեշտ գույքով և տեխնիկական միջոցներով կահավորում

3) Բնակչության պատսպարման համար անհրաժեշտ պաշտպանական կառույցների նախագծում և կառուցում

2. Անհրաժեշտ է ժամանակակից հրշեջ տեխնիկական միջոցներով հրշեջ փրկարարական ջոկատները վերազինելու նպատակով՝ գոյություն ունեցող հրշեջ փրկարարական ջոկատների շենքերի վերակառուցում և նորերի կառուցում:

361. Տարածական պլանավորում՝

1) Մարզի տարածքային հատակագծման նախագծի մշակման նպատակով անհրաժեշտ է ապահովելով համայնքների տարածքային հատակագծման աշխատանքները կազմել մարզի տարածքային հատակագծման աշխատանքները:

2) Համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի (գլխավոր հատակագիծ և քաղաքաշինական գոտիավորման նախագիծ) մշակման և ներդրման նպատակով անհրաժեշտ է պետական աջակցություն:

3)Ներկայումս մարզի 4 քաղաքային /Իջևան, Դիլիջան, Բերդ, Նոյեմբերյան, կազմվել է պետբյուջեի միջոցներով/ համայնքներ և Թեղուտ գյուղական համայնքը /սեփական բյուջեի հաշվին/ ունեն գլխավոր հատակագծեր:

Անհրաժեշտ է ժամանակակից հրշեջ տեխնիկական միջոցներով հրշեջ փրկարարական ջոկատները վերազինելու նպատակով՝ գոյություն ունեցող հրշեջ փրկարարական ջոկատների շենքերի վերակառուցում և նորերի կառուցում:Մարզի մի քանի բնակավայրերի դեռևս վտանգ է սպառնում քարաթափերի խնդիրը: ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում շենքերին և շինություններին վտանգ սպառնացող քարաթափերի տեղամասերի գույքագրման աշխատանքների ծրագիրը հաստատելու մասին» N 957–Ն որոշմամբ հաստատված ծրագրի ժամանակացույցում ներառվել է ՀՀ Տավուշի մարզի Այգեձոր և Տավուշ գյուղերի քարաթափերի տեղամասերում ինժեներաերկրաբանական և տեղաչափագրական հետազննությունների համալիր աշխատանքների իրականացումը:

8.5.2. ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

362. Բազմաբնակարան շենքերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2002թ.-ին ընդունվել է ‘Բազմաբնակարան շենքի կառավարման մասին’ Հայաստանի Հանրապետության օրենքը, որում ամրագրվել են բազմաբնակարան շենքերի կառավարման հիմնական սկզբունքները: Բազմաբնակարան շենքերի կառավարման համակարգի ներդրմանն ուղղված քաղաքականության հիմնական նպատակը բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների՝ համատիրությունների և սեփականատերերի միությունների հզորացումն է: Նշյալ օրենքի 31րդ հոդվածի համաձայն՝ պետական աջակցությունը պետք է ուղղված լինի բազմաբնակարան շենքի կառավարման մարմիններին տեխնիկական և ֆինանսական օժանդակության տրամադրմանը, որը ներառում է.

1) ֆինանսական և ներդրումային աջակցությունը,

2) բազմաբնակարան շենքերն սպասարկող ենթակառուցվածքների ստեղծմանն ու զարգացմանը նպաստելը,

3) տեղեկատվական և խորհրդատվական օգնությունը,

4) նորարարական գործունեության և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցությունը,

5) կադրերի պատրաստումը և վերապատրաստումը,

6) վիճակագրական հաշվետվությունների և հաշվապահական հաշվառման պարզեցված համակարգերի ստեղծումը և այլն:

363. ՄԶԾ-ի շրջանակներում առաջարկվում է ցուցաբերել աջակցություն բազմաբնակարան շենքերի պահպանմանը, մասնավորապես՝ տանիքապատմանը, քանի որ համայնքապետարանները հնարավորություն չունեն տեղական բյուջեի միջոցներով վերանորոգել շենքերի տանիքները: Նպատակահարմար է համայնքների բյուջեների միջոցներն օգտագործել միջազգային բարեգործական կազմակերպությունների հետ համատեղ ներդրումային ծրագրեր իրականացնելու համար:

364. Ստորև ներկայացվում են բազմաբնակարան շենքերի տանիքների վիճակը, կատարված և առաջարկվող աշխատանքներն ըստ մարզի համայնքների, որի մասին ավելի մանրամասն ներկայացված է **հավելվածներ 12-13 ում**:.

1) ք. Իջևան՝ Իջևան քաղաքում կան բազմաբնակարան 105 շենքեր՝ 64580քմ ընդհանուր մակերեսով, որից 2004-2007թթ.-ին.

ա. ՀՀ պետական բյուջեի միջոցներով վերանորոգվել են 5 շենքերի տանիքներ՝ 4285քմ մակերեսով և

բ. Ուորլդ Վիժն կազմակերպության միջոցներով՝ 7 շենքերի տանիքներ՝ 1250քմ մակերեսով:

365. Այսպիսով, վերանորոգված է Իջևան քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների ընդամենը 10%-ը: Մնացած 93 շենքերի ընդհանուր մակերեսը կազմում է 59045քմ: Պահանջվում է մոտավորապես 889.875 միլիոն դրամ ներդրում դրանց տանիքների վերանորոգման համար: Առաջնահերթ վերանորոգման ենթակա են 25-ը՝ 17559քմ ընդհանուր մակերեսով, որի համար կպահանջվի 235.33 միլիոն դրամ ներդրում:

1) ք. Դիլիջան՝ Դիլիջան քաղաքում բազմաբնակարան շենքերի թիվը հասնում է 100-ի, ընդհանուր մակերեսը՝ 79440քմ:

ա. 2008-2010թթ.-ին ՀՀ պետական բյուջեի միջոցներով վերանորոգվել է 49 շենքի տանիք՝ 44000քմ ընդհանուր մակերեսով,

բ. Մնացած 51-ի ընդհանուր մակերեսը կազմում է 35440քմ:

366. Վերջիններիս վերանորոգման համար կպահանջվի 531.6 միլիոն դրամ գումար: Առաջնահերթ վերանորոգման ենթակա են 8-ը՝ 9600քմ ընդհանուր մակերեսով, որի համար կպահանջվի մոտ 144.0 միլիոն դրամ:

1) ք. Բերդ՝Բերդ քաղաքի շենքերի թիվը կազմում է 28, ընդհանուր մակերեսը՝ 18530քմ, որից.

ա. 2004-2007թթ.-ին ՀՀ պետական բյուջեի միջոցներով վերանորոգվել է 9 շենքի տանիք՝ 6150քմ ընդհանուր մակերեսով:

367. Առաջնահերթ վերանորոգման ենթակա են 19-ը՝ 12760քմ ընդհանուր մակերեսով, որի համար կպահանջվի 191.4 միլիոն դրամ:

1) ք. Նոյեմբերյան՝Նոյեմբերյան քաղաքի շենքերի թիվը կազմում է 18, ընդհանուր մակերեսը՝ 10060քմ, որից.

ա. 2007թ.-ին ՀՀ պետական բյուջեի միջոցներով վերանորոգվել է 4 շենքի տանիք, մակերեսը՝ 1890քմ,

բ. Մնացած 14-ի ընդհանուր մակերեսը կազմում է 8170քմ: Պահանջվող գումարը՝ 122.5 միլիոն դրամ:

368. Առաջնահերթ վերանորոգման ենթակա են 10-ը՝ 7010քմ ընդհանուր մակերեսով, որի համար կպահանջվի 105.05 միլիոն դրամ:

1) ք. Այրում՝ շենքերի թիվը՝ 20, որից.

ա. 2-ը ներկայումս վերանորոգվում է ՀՀ պետական բյուջեի միջոցներով,

բ. Մնացած 18-ի վերանորոգման համար պահանջվում է մոտավորապես 171.0 միլիոն դրամ: Ընդհանուր մակերեսը՝ 11400քմ:

369. Առաջնահերթ վերանորոգման ենթակա են 4-ը՝ 2400քմ ընդհանուր մակերեսով, որի համար կպահանջվի մոտ 36.0 միլիոն դրամ:

1) գ. Ազատամուտ՝ շենքերի թիվը՝ 22, որից.

ա. 1-ը 2007թ.-ին վերանորոգվել է Իջևանի համայնքների միության միջոցներով,

բ. 1-ը՝ Գերմանիայի տեխնիկական համագործակցության ծրագրի շրջանակներում,

գ. 1-ը՝ վերանորոգվում է ՀՀ պետական բյուջեով,

դ. Մնացած 19-ը՝ 15490քմ ընդհանուր մակերեսով, վերանորոգման կարիք ունեն: Պահանջվող գումարը՝ 232.5 միլիոն դրամ:

370. Առաջնահերթ վերանորոգման ենթակա են 10-ը՝ 6000քմ ընդհանուր մակերեսով, որի համար կպահանջվի մոտ 90.0 միլիոն դրամ:

1) գ. Այգեհովիտ - Կայանավան՝ շենքերի թիվը՝ 6: Վերանորոգման ենթակա են բոլոր 6 շենքերը, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 2540քմ: Պահանջվող գումարը՝ 38.1 միլիոն դրամ:

2) գ. Այգեպար՝ շենքերի թիվը՝ 12՝ 3850քմ ընդհանուր մակերեսով: Վերանորոգման ենթակա են բոլոր 12 շենքերի տանիքները: Պահանջվող գումարը՝ 50.0 միլիոն դրամ:

371. Բացի համայնքային ենթակառուցվածքների վերոհիշյալ 4 բաղադրիչները, առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում քաղաքաշինության ոլորտի հետևյալ խնդիրները՝ տարաբնակեցման հավասարակշռված համակարգի ձևավորումը, տարածաշրջանային զարգացման առկա անհամամասնությունների հաղթահարմանը նպատակաուղղված տարածական պլանավորումը, ճարտարապետության, կառույցների սեյսմակայունության ու հուսալիության ապահովման, բնակարանային և կոմունալ բնագավառների հիմնախնդիրները:

Աղյուսակ 8.2. ՄԶԾ ենթակառուցվածքների ծրագրավորվող ֆինանսավորումը 2012-2015թթ. ըստ ոլորտների

ՄԶԾ ոլորտը	Պլանավորվող ֆինանսավորումը 2012-2015թթ/մլն դրամ/				
	2012թ.	2013թ.	2014թ	2015թ.	Ընդամենը՝ 2012-2015թթ
Ճանապարհաշինություն՝այդ	*4534.658*	*2392,2*	*1866,8*	*1811,9*	***10605.558***

թվում					
Մարզային նշանակության ավտոճանապարհների և նրանց վրա գտնվող տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում	*4461.8*	*2200.0*	*1665.0*	*1600.0*	***9926.8***
Մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանում	*72,858*	*192,200*	*201,800*	*211,900*	***678,758***
Ջրամատակարարում ջրահեռացում	*2410.0*	*1250.0*	*1595.0*	*536.0*	***5791.0***
Գազամատակարարում	*400.0*	*400.0*	*400.0*	*400.0*	***1600.0***
Բազմաբնակարան շենքերի պահպանում	*100.0*	*100.0*	*100.0*	*100.0*	***400.0***
Ենթակառուցվածքներ Ընդամենը	**7444.658**	**4142,2**	**3961,8**	**2847,9**	**18396.558**

Համայնքային ենթակառուցվածքների ոլորտի տրամաբանական հենքը

Ոլորտային նպատակներ, արդյունքներ, միջոցառումներ	Արդյունքային ցուցանիշներ	Կարևոր նախապայմաններ. վտանգներ, արտաքին գործոններ
Ոլորտային նպատակ՝ Բարելավել տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների որակն ու մատչելիությունը մարզի բնակչության համար	1. Տրանսպորտի գործունեությունից բնակչության բավարարվածության աստիճանը, % (2011թ. ԱՎԾ հետազոտություն) 2.Անվտանգ խմելու ջրի հաստատուն մատչելիություն ունեցող բնակչության մասնաբաժինը, % (ԱՎԾ), 2015թ.-ին 86% (Հազարամյակի զարգացման նպատակ) 3.Գազիֆիկացված բնակարանների և բնակելի տների թիվը (ԱՎԾ)	Ֆինանսական ռեսուրսների առկայություն
Արդյունք 1. Մարզի ճանապարհային ցանցի բարելավում	Ցուցանիշներ. 1.1. Ճանապարհների անհարթության միջազգային համաթիվը (IRI)՝ կապված տրանսպորտային ծախսերի հետ, մ/կմ Ելակետ՝ 9.3մ/կմ, թիրախներ՝ 2011թ.-ին 7.7, 2013թ.-ին 5.0մ/կմ (ՀՄՀ-Հայաստան) 1.2. Պետական նշանակության ճանապարհների միջին օրական երթևեկությունը Ելակետ՝ 70 տրանսպորտային միջոց Թիրախ՝ 2011թ.-ին 150 տրանսպորտային միջոց (Տավուշի մարզպետարան) 1.3. Կառավարության բյուջետային ծախսերը մարզի ճանապարհների վերականգնման համար, միլիոն ՀՀ դրամ 1.4. Կառավարության բյուջետային ծախսերը մարզի ճանապարհների ընթացիկ պահպանման համար, միլիոն ՀՀ դրամ	Ֆինանսական ռեսուրսների առկայություն Ճանապարհների պահպանման կարողություն / պահպանման պլանների առկայություն

Ոլորտային նպատակներ, արդյունքներ, միջոցառումներ	Արդյունքային ցուցանիշներ	Կարևոր նախապայմաններ. վտանգներ, արտաքին գործոններ
<u>Միջոցառումներ.</u> 1.1 Պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգում կամ կառուցում 1.2 Համայնքային նշանակության ճանապարհների հիմնանորոգում 1.3 Պետական նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների վերանորոգում 1.4 Համայնքային նշանակության ճանապարհների վերանորոգում 1.5 Պետական նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանություն և շահագործում 1.6 Պետական նշանակության տրանսպորտային	Ցուցանիշներ. 1.1 Հիմնանորոգված կամ նոր կառուցված պետական նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը Թիրախ՝ 2008-11թթ.-ին 84 կմ (ՀՄՀ) Ներդրման չափ՝ 5.2 միլիոն ԱՄՆ դոլար (ՀՄՀ) Թիրախ՝ 2008թ.-ին 21 կմ (պետբյուջե) Ներդրման չափ՝ 1,234.5 միլիոն ՀՀ դրամ 2008թ.-ին (պետբյուջե) 1.2 Հիմնանորոգված համայնքային ճանապարհների երկարությունը 1.3 Վերանորոգված պետական նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը 1.4 Վերանորոգված համայնքային նշանակության ճանապարհների թիվը, երկարությունը Թիրախ՝ 2008թ.-ին 10 համայնքային ճանապարհներ (ՄՋՆ) Ներդրման չափ՝ 43.521 միլիոն ՀՀ դրամ (ՄՋՆ) 1.5 Պահպանության և շահագործման ենթարկված պետական նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը Թիրախ՝ 2008-11թթ.-ին 340կմ Ներդրման չափ՝ 1,286.8 միլիոն ՀՀ դրամ 2008-10թթ.-ին (պետբյուջե) 1.6 Ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը	Ֆինանսական, մարդկային և տեխնիկական ռեսուրսների առկայություն Բնակլիմայական գործոնի ազդեցություն

Ոլորտային նպատակներ, արդյունքներ, միջոցառումներ	Արդյունքային ցուցանիշներ	Կարևոր նախապայմաններ. վտանգներ, արտաքին գործոններ
օբյեկտների՝ կամուրջների, ջրթող արհեստական կառուցվածքների վերանորոգում 1.7 Համայնքային նշանակության տրանսպորտային օբյեկտների՝ կամուրջների, ջրթող արհեստական կառուցվածքների վերանորոգում 1.8 Դաշտամիջյան ճանապարհների վերականգնում	Թիրախ՝ 2011թ.-ին 2006թ.-ի համեմատությամբ պատահարների թիվը կրճատել 10%-ով 1.7 Վերանորոգված պետական նշանակության տրանսպորտային օբյեկտների թիվը, հատ/գծմ Ներդրման չափ՝ 87.8 միլիոն ՀՀ դրամ 2008թ.-ին (պետբյուջե) 1.8 Վերանորոգված համայնքային նշանակության տրանսպորտային օբյեկտների թիվը, հատ/գծմ 1.9 Վերականգնված դաշտամիջյան ճանապարհների երկարությունը, կմ	
<u>Արդյունք 2.</u> Խմելու ջրամատակարարման համակարգի բարելավում	<u>Ցուցանիշներ.</u> 2.1. Էլեկտրաէներգիայի ծախսի տեսակարար կշիռը, % (Ջրային տնտեսության պետական կոմիտե) 2.2. Ջրի կորուստների տեսակարար կշիռը, % (ՋՏՊԿ) 2.3. Տեղադրված ջրաչափերի թիվը (ՋՏՊԿ) 2.4. Մատակարարված ջրի դիմաց հավաքագրված վճարները, միլիոն ՀՀ դրամ (ՋՏՊԿ) 2.5. Ջրամատակարարման համակարգի պահպանման ծախսերը, միլիոն ՀՀ դրամ (ՋՏՊԿ)	Ֆինանսական և տեխնիկական ռեսուրսների առկայություն
Միջոցառումներ. 2.1 Խմելու ջրի ջրագծերի կառուցում կամ նորոգում 2.2 ՋՄԿ-ների, ՕԿՋ-ների,	Ցուցանիշներ. 2.1 Կառուցված/վերանորոգված ջրագծերի/ջրատարների երկարությունը, կմ Թիրախ՝ 2008թ.-ին 12կմ, 3 համայնք	Ֆինանսական և մարդկային ռեսուրսների առկայություն

Ոլորտային նպատակներ, արդյունքներ, միջոցառումներ	Արդյունքային ցուցանիշներ	Կարևոր նախապայմաններ. վտանգներ, արտաքին գործոններ
կապտաժների կառուցում, նորոգում, վարակազերծման սարքավորումների տեղադրում, սանիտարական պահպանման գոտիների ստեղծում, ջրի որակի նկատմամբ լաբորատոր հսկողության իրականացում 2.3 Կոյուղու անցկացում և վերականգնում 2.4 Ջրաղբյուրների ներգրավում	Ներդրման չափ՝ 105.5 միլիոն ՀՀ դրամ (ՀԲ ԳՁՓԱԳՋԾ / Համայնքների տնտեսական զարգացման ծրագրեր) Ներդրման չափ՝ 2008-11թթ.-ին 480.0 միլիոն ՀՀ դրամ (Ասիական զարգացման բանկ) 2.2 Կառուցված/վերակառուցված/վերանորոգված ՋՄԿ-ների, ՕԿՋ-ների, կապտաժների թիվը 2.3 Վերականգնված կոյուղագծերի երկարությունը, կմ 2.4 Նոր ներգրավված ջրաղբյուրների թիվը	Համակարգի պահպանման կարողություն Բնակլիմայական գործոնի ազդեցություն
<u>Արդյունք 3.</u> Գազամատակարարման համակարգի բարելավում	<u>Ցուցանիշներ.</u> 3.1. Անտառահատումների կրճատում, % 3.2. Մարզում տեղադրված գազի հաշվիչների թիվը 3.3. Մատակարարված գազի դիմաց հավաքագրված վճարները, միլիոն ՀՀ դրամ 3.4. Ծախսերը մարզում գազամատակարարման համակարգի վերականգնման համար, միլիոն ՀՀ դրամ 3.5. Ծախսերը մարզում գազամատակարարման համակարգի պահպանման համար, միլիոն ՀՀ դրամ	Ֆինանսական և տեխնիկական ռեսուրսների առկայություն
<u>Միջոցառումներ.</u> 3.1 Գազատարների կառուցում կամ վերանորոգում 3.2 Հանրակրթական դպրոցների, մանկապարտեզների, արվեստի և երաժշտական դպրոցների	<u>Ցուցանիշներ.</u> 3.1Գազի բաշխիչ ցանցի միագիծ երկարությունը 3.2Գազիֆիկացված համայնքների թիվը Թիրախ՝ 2008-11թթ.-ին 43 համայնք (‘ՀայՌուսգազարդ’ ՓԲԸ) Ներդրման չափ՝ 1,551.4 միլիոն ՀՀ դրամ (‘ՀայՌուսգազարդ’ ՓԲԸ)	Ֆինանսական և մարդկային ռեսուրսների առկայություն Համակարգի ընթացիկ պահպանման

Ոլորտային նպատակներ, արդյունքներ, միջոցառումներ	Արդյունքային ցուցանիշներ	Կարևոր նախապայմաններ. վտանգներ, արտաքին գործոններ
կաթսայատների	Թիրախ՝ 2008-11թթ.-ին 3 համայնք (ԳԶՄՀ) Ներդրման չափ՝ 166.5 միլիոն ՀՀ դրամ (ԳԶՄՀ) 3.3Գազիֆիկացված կաթսայատների թիվը	կարողություն Բնակլիմայական գործոնի ազդեցություն
<u>Արդյունք 4.</u> Բազմաբնակարան շենքերի պահպանում	<u>Ցուցանիշներ.</u> 4.1. Վերանորոգված տանիքների թիվը 4.2. Վերանորոգված տանիքների մակերեսը, քմ	Ֆինանսական ռեսուրսների առկայություն

9. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

9.1.Տարածքային կառավարում

9.1.1. Վարչատարածքային բաժանում

372. Հայաստանի տարածքային կառավարման ներկայիս համակարգը նախանշվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, որն ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ին, համաձայն որի ՀՀ վարչատարածքային միավորներն են մարզերն ու համայնքները, և որով անցում կատարվեց վարչատարածքային բաժանման նոր երկաստիճան կառավարման համակարգին (հանրապետական և տեղական ինքնակառավարում):

373. Հիմնվելով Սահմանադրության վրա՝ ՀՀ Ազգային Ժողովը 1995թ.-ի նոյեմբերին ընդունեց ‘ՀՀ վարչատարածքային բաժանման մասին’ ՀՀ օրենքը: Տավուշի մարզում ընդգրկվեցին նախկին Իջևանի (կազմավորվել է 1930թ.-ին), Նոյեմբերյանի (կազմավորվել է 1937թ.-ին) և Շամշադինի (կազմավորվել է 1930թ.-ին) վարչական 3 շրջանները, ինչպես նաև հանրապետական ենթակայության Դիլիջան քաղաքը՝ շրջակա մի քանի բնակավայրերով:

374. Սահմանադրությունը վարչատարածքային բաժանման հիմքում դնում է իշխանության տարբերակման և տարանջատման գաղափարը: Մարզերում իրականացվում է պետական կառավարում: Տարածքային կառավարման համակարգի մեջ բացի մարզպետից և մարզպետարանից մտնում են նաև մարզային ենթակայության կազմակերպությունները, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունները, որոնք մի կողմից ուղղակիորեն ենթարկվում են համապատասխան վերադաս մարմիններին, սակայն, հանդիսանալով պետական կառավարման մարմիններ, միաժամանակ գտնվում են համապատասխան մարզպետների համակարգման ոլորտում: (օր.՝ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, գանձապետարանի, հիգիենիկ հակահամաճարակային տեսչության տարածքային ծառայությունները և այլն):

375. 2005թ.-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում տարածքային կառավարման գործող համակարգը, ըստ էության, փոփոխությունների չենթարկվեց: Վերափոխված Սահմանադրության 88.1 հոդվածով սահմանվում է, որ ՀՀ կառավարության կողմից նշանակված մարզպետներն իրագործում են կառավարության տարածքային քաղաքականությունը և, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, համակարգում են գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը:

9.1.2 Գերակայություններ և հիմնախնդիրներ

376. Տարածքային կառավարման բնագավառում դեռևս չլուծված խնդիրներից կարևորագույնը մարզպետարանների իրավասությունների ոչ հստակ սահմանումն է: Ներկայումս մարզպետների գործունեությունը հիմնականանում կարգավորվում է ‘Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին’ ՀՀ Նախագահի հրամանագրով, որի համաձայն մարզպետներին իրավասություններ են վերապահված տնտեսական և հասարակական կյանքի տարբեր բնագավառներում, սակայն դրանց իրականացումը պարզաբանող դրույթների ձևակերպումը հստակ չէ:

377. Հաշվի առնելով խնդրի համապետական բնույթը՝ մարզպետների լիազորությունների հստակ սահմանումը 2012-2015թթ.-ի պետք է դիտարկել ընդհանուր օրենսդրության վերափոխման համատեքստում:

378. Կարևոր հիմնախնդիրներից է մարզային խորհրդի դերի ակտիվացումը, հաշվի առնելով, որ այն մարզպետարանի և ՏԻՄ-երի միջև տեղեկատվության փոխանակման, առկա հիմախնդիրների քննարկման, գերակայությունների սահմանման, մարզի բնակչության բոլոր հատվածների հետ անմիջական կապ հաստատելու, ինչպես նաև զարգացման պլանավորման ու ծրագրերի իրականացման հետ կապված գործընթացները քննարկող ու հաստատող ամենակարևոր խորհրդակցական մարմինն է:

379. Տարածքային կառավարման բնագավառում 2012-2015թթ.-ի գործունեության կարևորագույն ուղղություններն ըստ առաջնահերթությունների հետևյալներն են.

1) Կանոնակարգել մարզպետարանի, ՏԻՄ-երի, ինչպես նաև ոչ-պետական հատվածի փոխհարաբերությունները: Սա ենթադրում է մարզպետարանի աշխատակազմի պաշտոնների անձնագրերի դրույթների հստակեցում, որը պետք է հաշվի առնի երկրում և մարզում տեղի ունեցող հանրային ոլորտի վերափոխումները և դրանց շրջանակներում տարածքային կառավարման մարմինների գործառույթների արդյունավետ իրականացումը:

2) Մասնագիտական հսկողության արդյունավետ կազմակերպման համար կառավարության կողմից անհրաժեշտ է մշակել և սահմանել պետության կողմից պատվիրակած լիազորությունների իրականացման կարգերն ու չափորոշիչները, ինչը կնպաստի ինչպես այդ լիազորությունների արդյունավետ իրականացմանը, այնպես էլ դրանց կատարման նկատմամբ պատշաճ հսկողության իրականացմանը:

3) Վերահսկողության գործառույթի հստակեցմանը զուգահեռ՝ ավելի մեծ կարևորություն տալ մարզպետարանի համակարգման գործառույթին՝ ելնելով ԿԶԾ-ով ամրագրված զարգացման ու աղքատության հաղթահարման գերակայությունների տրամաբանությունից:

4) Մշակել ոլորտային աշխատանքային խմբերի, մարզային զարգացման հանձնաժողովների, մարզի ՓՄՁ ԶՄԽ-ի կազմավորման մեխանիզմները, մշակել և հաստատել նրանց անդամների պարտականությունների և իրավասությունների ցանկը:

5) Մշակել մարզպետարանի և մարզում գործող պետական կառավարման մարմինների միջև տեղեկատվական հոսքերի կարգավորման հայեցակարգ, որը թույլ կտա միասնականացնել սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրներին վերաբերող տվյալները, ստեղծել միասնական տվյալների բազա, որն ի վերջո կծառայի որպես մարզային կյանքի բոլոր բնագավառների համար բոլորի կողմից ընդունված պաշտոնական տեղեկատվության աղբյուր: Այս ուղղությամբ հատկապես կարևորվում է ԱՎԾ-ի տարածքային ստորաբաժանումների հետ փոխհարաբերությունների արդյունավետության բարձրացումը:

6) Հստակեցնել, պարզեցնել և արդյունավետ դարձնել մարզպետարանի կողմից ՏԻՄ-երին տրամադրվող մեթոդաբանական օգնությունը:

380. ՀՀ Տավուշի մարզպետարանի կառավարման կազմակերպական կառուցվածքը- Մարզպետարանի կառավարման կազմակերպական կառուցվածքը ներկայացված է հավելված 14-ում:

381. Իրավիճակը շտկելու նպատակով 2012-2015 թվականների համար, օրինակ, մարզպետի առաջարկությամբ ՀՀ կառավարության կողմից պետք է իրականացվի մարզպետարանի կառավարման կազմակերպական կառուցվածքի կատարելագործում: Այս ուղղությամբ արդեն իսկ արձանագրվել է որոշակի առաջընթաց հատկապես Մեծ Բրիտանիայի ՄԶՆ-ի հետ համագործակցության շրջանակներում (ՀՏԶԾ և Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագիր): ՀՀՈԲԾ-ի հետ համագործակցության արդյունքում մշակվեց մարզպետարանի կառուցվածքային հարցերին վերաբերող մի փաստաթուղթ (տես՝ ՀՀ Տավուշի և Գեղարքունիքի մարզպետարանների կառուցվածքային և գործառութային բարեփոխումների ուսումնասիրություն), որի առաջարկություններից մի քանիսը կարող են օգտագործվել վերը նշված առաջարկությունը մշակելիս: Ընդհանուր մոտեցումը, սակայն, պետք է հիմնվի նոր ստորաբաժանումներ ստեղծելուց խուսափելու սկզբունքի վրա: Փոխարեն առաջարկվում է վերանայել և հստակեցնել մարզպետարանի աշխատակազմի պաշտոնների անձնագրերը և գործառույթները:

382. Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի հետ համագործակցության շրջանակներում մարզպետարանում ձևավորվեց Մոնիտորինգի և գնահատման համակարգ (ՄԳ համակարգը մանրամասնորեն ներկայացված է ՄԶԾ-ի 'Մոնիտորինգի և գնահատման համակարգ' բաժնում), որը պահանջեց համապատասխան լրացումներ մտցնել մարզպետարանի ՄԳ խմբի անդամների պաշտոնի անձնագրերում: Մարզպետարանի մոնիտորինգային գործունեության կազմակերպման և իրականացման հիմքում ընկած է երկու սկզբունք: Նախ և առաջ, ծրագրերի մոնիտորինգը պետք է իրականացվի համապատասխան ոլորտային ստորաբաժանումների մասնագետների կողմից, հետևաբար, առանձնացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծումը նպատակահարմար չէ: Մյուս կողմից, հարկավոր է ունենալ ոլորտային մոնիտորինգային հաշվետվությունները վերլուծող և ամփոփող որևիցե մարմին, որտեղ կկուտակվի պլանավորված ծրագրերի իրականացման ընթացքի մասին ողջ ինֆորմացիան: Այս նպատակով մարզպետարանում Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության կազմում ընդգրկված Ծրագրերի և ներդրումների բաժինը առանձնացվել է որպես առանձին կառուցվածքային ստորաբաժանում, որն անմիջականորեն

ենթարկվում է ՄԳ խմբի ղեկավար հանդիսացող մարզպետի տեղակալին, և իր բուն ծրագրային գործունեության հետ համատեղ իրականացնում է նաև ՄԳ խմբի աշխատանքների կազմակերպման և համակարգման, ինչպես նաև ամփոփ մոնիտորինգային հաշվետվությունների կազմման գործառույթները:

383. Հայաստանի Հանրապետության կառավարության 22.04.2009թ. N 239-Ն որոշման համաձայն մարզպետարանի աշխատակազմում ձևավորվել են քաղաքացիական ծառայության նոր պաշտոններ: Քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում կատարվել է փոփոխություններ և նոր պաշտոնների անձնագրերը ներկայացվել է ՀՀ Քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնեցմանը:

9.2. Քաղաքացիական ծառայություն

384. Տարածքային կառավարման համակարգի արդյունավետ գործունեության երաշխիքներից մեկը քաղաքացիական ծառայության համակարգն է: Ներկայումս կարելի է արձանագրել այն փաստը, որ համակարգը հաղթահարել է կայացման շրջանին բնորոշ դժվարությունները: Հստակ են քաղաքացիական ծառայության պաշտոնները, կազմակերպվել և օրենքով սահմանված ժամկետներում ու կարգով շարունակում են կազմակերպվել քաղաքացիական ծառայողների վերապատրաստումն ու ատեստավորումը: Քաղաքացիական ծառայության բոլոր պաշտոնները զբաղեցվում են օրենքով սահմանված կարգով՝ մրցույթների կամ ատեստավորման հիմա վրա: Պլանավորվող ժամանակաշրջանի համար անրաժեշտ է միջոցներ ձեռնարկել համակարգի հետագա կատարելագործման, քաղաքացիական ծառայողների մասնագիտական վերապատրաստման, պաշտոնների անձնագրերի հստակեցման և դրանց համապատասխան կադրային ապահովվածության ապահովման ուղղությամբ:

385. Քաղաքացիական ծառայության համակարգում ներկայումս կարևոր հիմնախնդիրներից մեկն այն է, որ մարզպետներին իրավունք է վերապահված համակարգել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը, սակայն վերջիններս ունեն գերատեսչական պատկանելություն և նրանց ղեկավարները, որպես քաղաքացիական ծառայողներ, ուղղակիորեն ենթարկվում են համապատասխան վերադաս մարմնին՝ անհասկանալի դարձնելով մարզպետի հետ փոխհարաբերությունների դրսևորումները:

386. Տարածքային կառավարման համակարգի արդյունավետությունը պահանջում է բարելավվել մարզպետի և գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը: Մասնավորապես, անհրաժեշտ է նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու միջոցով, մեխանիզմներ մշակել, համաձայն որոնց գործադիր իշխանության մարմինների տարածքային ծառայությունները պետք է տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնեն մարզպետին իրենց գործունեության, ինչպես նաև տվյալ ոլորտը բնութագրող ցուցանիշների մասին: Միաժամանակ մարզպետը պետք է հնարավորություն ունենա հանձնարարականներ տալ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին, ինչը պետք է ամրագրված լինի նրանց պաշտոնների անձնագրերում:

9.3. Էլեկտրոնային կառավարում

387. Իրականացված ծրագրի արդյունքում ներկայումս ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը, ինչպես նաև բոլոր մարզպետարաններն ունեն էլեկտրոնային կառավարման համակարգեր: Դա հնարավորություն է տալիս հրապարակային դարձնել տարածքային կառավարման մարմինների գործունեությունը՝ ապահովելով անհրաժեշտ տեղեկատվության հրապարակմամբ: Իհարկե, սա միայն առաջին քայլն է, որին պետք է հետևի կայքերում տեղադրված տեղեկատվության անընդհատ թարմացումը, ինչպես նաև համակարգիչներից օգտվելու՝ մարզպետարանի և պոտենցիալ սպառողների գիտելիքների բարձրացումը:

388. Մարզպետարանի աշխատակիցների մեծ մասի համակարգչային ոչ բավարար գիտելիքները հնարավորություն չեն տալիս ամբողջությամբ օգտագործելու գոյություն ունեցող համակարգը: Մյուս կողմից ինտերնետի տարածվածության ցածր աստիճանը և ոչ մատչելի լինելու հանգամանքը, ինչպես նաև բնակչության կողմից համակարգիչների կիրառման սահմանափակության պատճառով մարդիկ չեն գրում էլեկտրոնային նամակներ և չեն օգտվում արդեն իսկ ընձեռնված հնարավորությունից:

389. 2012-2015թվականների ընթացքում անհրաժեշտ է.

1)Ստեղծել միասնական տեղեկատվական ցանց համայնքների և մարզպետարանի միջև:

2) Էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով գնումների գործընթացի կազմակերպումը նույնպես բխում է ԿԶԾ 2-ի պահանջներից, և կոչված է բարձրացնելու համակարգի թափանցիկությունն ու մատչելիությունը մարզի բնակչության ավելի լայն շրջանակների համար**:**

390. Մշակվել և ներդրվել է մարզում գործող ծրագրերի տվյալների բազա: Այնուամենայնիվ, բազան տվյալներով համալրելու, այն թարմացնելու, ինչպես նաև դրանից օգտվելու կարողությունների զարգացման առումով դեռևս անելիքներ շատ կան: Մարզպետարանի ղեկավարությունը պլանավորում է դիմել հատկապես դոնոր կազմակերպություններին իրենց կողմից մարզում իրականացվող ծրագրերի ու միջոցառումների մասին տեղեկատվություն տրամադրելու խնդրանքով: Ընդ որում, հաշվի առնելով տվյալների բազայի կենսունակության, ինչպես նաև բազայում պարունակվող տվյալների արդիականության ապահովման անհրաժեշտությունը, պետք է համապատասխան գործընկերների հետ կնքել եռամյա փոխըմբռնման հուշագրեր, որոնցով և կկարգավորվեն տվյալների բազայի համալրման խնդիրները:

391. 2010թ. մարտի 1-ից ՀՀ պետական կառավարման համակարգը, որի մեջ մտնում են ՀՀ կառավարությունը, կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները, նախարարությունները, նախարարությունների կառավարման ոլորտում գործող պետական կառավարման մարմինները և մարզպետարանները անցել են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգին: <<Մալբերի>> համակարգի ներդրումը զգալի տեղաշարժ է մտցրել, ինչպես փաստաթղթաշրջանառության, այնպես էլ ընդհանուր գործավարության կանոնակարգման մեջ:

392. Համակարգի ներդրման արդյունքում զգալիորեն բարձրացել է՝
1/ փաստաթղթաշրջանառության արագությունը
2/ օպերատիվությունը
3/ կատարող ստորաբաժանումների պատասխանատվությունը
4/ ծառայողների համակարգչային գնահատման օբյեկտիվությունը
5/ հանձնարարականների կատարման ժամկետայնությունը
6/ թղթերի խնայողությունը
7/ պատասխանների և գրությունների ժամանակին առաքումը

393. Համակարգի ներդրմամբ պակասել է մատենավարությունը:

Վերջին 1.5 տարվա ընթացքում մարզպետարանի աշխատակիցները՝ մասնավորապես քաղաքացիական ծառայողները, ապահոված են համակարգիչներով, տպիչ և բազմացնող սարքերով:

394. Փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգը էլ ավելի արդյունավետ կգործեր եթե համակարգին միանային նաև, ինչպես մարզի համայնքները, այնպես էլ հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունները և ստորաբաժանումները, քանի որ դրանց հասցեագրված գրությունները, որոշումները կամ թղթակցությունները ուղարկվում են փոստով կամ հանձնվում են առձեռն, որի ընթացքում դրանք հաճախ տեղ են հասնում ուշացումներով:

9.4.Տեղական ինքնակառավարում և ապակենտրոնացում

9.4.1.Վարչատարածքային բաժանում և համայնքային կարողություններ

395. Մարզային զարգացումը դժվար է պատկերացնել առանց տեղական ինքնակառավարման համակարգի և համայնքային զարգացման: Ավելին, մարզի զարգացումը պետք է դիտարկել համայնքների զարգացման տեսանկյունից: Այսինքն, մի դեպքում մարզում առկա հիմնախնդիրները պետք է լուծվեն պետության աջակցությամբ՝ պետական բյուջեի միջոցների հաշվին, սակայն պետք է նկատի ունենալ, որ դրանք կրում են հատվածական բնույթ և կարող են պայմանավորված լինել կառավարության ծրագրերով, մյուս կողմից համայնքային հիմնախնդիրների լուծման հիմնական և արդյունավետ համակարգը պետք է տեսնել համայնքային կարողությունների ամրապնդման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների արդյունավետ իրականացման համատեքստում**:**

396. Հարկ է նշել, որ համաձայն ՀՀ Սահմանադրության 104 հոդվածի տեղական ինքնակառավարումը ոչ միայն համայնքի տեղական նշանակության հարցերը լուծելու իրավունքն է, այլև կարողությունը: Այսինքն՝ համայնքները պետք է բավարար կարողություն ունենան լուծելու տեղական ինքնակառավարման օրենսդրությամբ իրենց վերապահված հարցերը և իրականացնել լիազորությունները:

397. Հայաստանում ներկայիս ապակենտրոնացման քաղաքականությունը հիմնականում ուղղված է տարածքային և տեղական կառավարման մարմիններին լիազորությունների և

իրավասությունների փոխանցմանը: Այս գործընթացը զգալիորեն դանդաղում է երկու հիմնական պատճառներով: Առաջինը, համայնքները շատ փոքր են և մասնատված: Ապակենտրոնացման քաղաքականությունն առավել արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է խոշորացնել համայնքները՝ կրճատելով դրանց թիվը և միավորելով մի քանի բնակավայր մեկ համայնքի մեջ: Սա շատ նուրբ քաղաքական հարց է, և կառավարության կողմից խրախուսվող միջհամայնքային միավորումների ստեղծումն առաջին քայլն է այս ուղղությամբ:

398. Միջհամայնքային միավորումներին աջակցելու նպատակը ամրագրված է նաև ՀՀ կառավարության գործունեության ծրագրում, որը հաստատվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից: Այն նախատեսված է նաև ԿԶԾ-ում: Նոր կազմավորվելիք միջհամայնքային միավորումները պետք է ստանան պետության ֆինանսական և տեխնիկական աջակցությունը: Այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ է ներգարվվել նաև միջազգային կազմակերպությունների ջանքերն ու կարողությունները:

Աղյուսակ 9.1. Տավուշի մարզի գյուղական համայնքներն ըստ բնակչության թվի

Համայնքներ	Տավուշ	հայաստան
Մինչև 100 բնակիչ ունեցող	0	27
101-ից ինչև 200 բնակիչ ունեցող	1	79
201-ից ինչև 500 բնակիչ ունեցող	10	181
501-ից ինչև 1000 բնակիչ ունեցող	16	189
1001-ից ինչև 2000 բնակիչ ունեցող	22	309
2001-ից ինչև 5000 բնակիչ ունեցող	8	57
5001-ից ինչև 10000 բնակիչ ունեցող	0	29
Ընդամենը	**57**	**871**

399. Ինչպես երևում է ներկայացված աղյուսակի տվյալներից, մարզի 57 գյուղական համայնքներից 27-ը կամ շուրջ 47.3%-ն ունեն մինչև 1000 բնակիչ, իսկ 3000 ավել բնակիչ ունեն ընդամենը 8 գյուղական համայնքներ կամ ընդհանուրի մոտ 14%-ը:

400. Համայնքային բյուջեների ցուցանիշների **/հավելված 15/** վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ առաջնային խնդիրներն են համայնքների կարողությունների բարձրացումը և բյուջեների հավաքագրման ապահովումը:

401. Վերջին տարիների դրական տեղաշարժերից մեկը պետք է համարել այն, որ պետական բյուջեով նախատեսված դոտացիաները բոլոր համայնքներին հատկացվում են 100%-ով: Սակայն չլուծված հիմնախնդիրներից մեկը մնում է համայնքի բյուջեի հավաքագրման ապահովումը:

402. Ապակենտրոնացմանը խոչընդոտող երկրորդ կարևոր հանգամանքը մարզային և համայնքային մակարդակներում բավարար կարողությունների բացակայությունն է, որը թույլ կտա ստանձնել նոր լիազորությունները և առավել արդյունավետ կառավարել տեղերում: Այդ իսկ պատճառով, կարողությունների բարձրացումը ապակենտրոնացման ընթացքում կարևոր նախապայման է: Կարողությունների զարգացման տարբեր մեթոդներ կան: Նախ և առաջ դա ուսուցողական դասընթացներն են, որոնք կազմակերպվում են տեղական և կենտրոնական մակարդակով թե՛ կառավարության, թե՛ դոնորների կողմից: Դրանք հիմնականում ուղղված են կարողությունների զարգացմանը բյուջետավարման, համայնքային և մարզային զարգացման պլանավորման, մոնիտորինգի և գնահատման, ինչպես նաև բնակչությանը որակյալ ծառայությունների մատուցման բնագավառներում: Կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերը, անշուշտ, պետք է շարունակվեն և ընդլայնվեն:

403.Համայնքների բյուջեների հավաքագրման կարևոր նախապայմաններից մեկը պլանավորվող բյուջեների իրատեսությունն է և բազաների հստակությունը: Պլանավորվող ժամանակաշրջանում անհրաժեշտ է շարունակել համայնքների բյուջեներում հատկապես գույքահարկի, հողի հարկի, տուրքերի բազաների ճշգրտման աշխատանքները:

404. Այս բնագավառում մարզպետարանի կարևորագույն խնդիրներից է պետական մակարդակում ընթացող նոր նախաձեռնությունների մասին ՏԻՄ-երին տեղեկացնելը և համապատասխան մեթոդաբանական օգնություն տրամադրելը: Օրինակ, Հայաստանի ֆինանսիստների միության կողմից շրջանառության մեջ է դրվել պետական բյուջեից դոտացիաների տրամադրման նոր հայեցակարգը, որը լայնորեն քննարկելուց հետո դրվելու է համապատասխան օրենսդրական ակտի հիմքում: Սա նշանակում է, որ մարզպետարանը պետք է նախաձեռնի շրջանառվող նախագծի վերաբերյալ լայնածավալ հանրային ու մասնագիտական քննարկումներ դոտացիաների հաշվարկման նոր բանաձևերի ու մոտեցումների կիրառման համար ՏԻՄ-երի համապատասխան մասնագետներին վերապատրաստման ուղղությամբ:

405. Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման վարչատարածքային կարևոր խնդիրներից են համայնքների սահմանների նկարագրումն ու սահմանանիշերի տեղադրման աշխատանքները, համայնքների գլխավոր հատակագծերի կազմումը կամ դրանց ժամանակակից պայմաններին հարմարեցումը, համայնքների բյուջետային կարողությունների ամրապնդումն ու զարգացումը, ինչպես նաև բյուջեների հավաքագրման մակարդակի բարձրացումը՝ այն հասցնելով պլանավորված մակարդակին:

406. Տեղական ինքնակառավարման բնագավառի 2012-2015թթ.-ի գերակայություններն են.

1) ամրապնդել ու զարգացնել համայնքների բյուջետային կարողությունները, ինչպես նաև բարձրացնել բյուջեների հավաքագրման մակարդակը:

2) Ավարտել համայնքների սահմանների ճշգրտման և սահմանանիշերի տեղադրման աշխատանքները:

3) Նպաստել միջհամայնքային միավորումների ստեղծմանը:

4) Մեթոդաբանական և տեխնիկական աջակցություն ցուցաբերել համայնքներին բյուջեների կազմման ու բազաների ճշգրտման աշխատանքներում:

9.5.Համայնքային ծառայություն

407. ՀՀ Աժ-ի կողմից ընդունվել է օրենք 'Համայնքային ծառայության մասին', համաձայն որի ՀՀ կառավարության և ՀՀ տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատվել են օրենքից բխող բոլոր նորմատիվ-իրավական փաստաթղթերը: Համայնքների ղեկավարների կողմից հաստատվել են համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկերն ու պաշտոնների անձնագրերը: Ներկայումս ավարտվել է համայնքային ծառայողների երկրորդ վերապատրաստման աշխատանքները: 2010-2011թթ վերապատրաստվել են նաև համայնքի ղեկավարները և ավագանու անդամները: Ապահովվել է համայնքային ծառայության օրենսդրական փաստաթղթերի և հարցաշարերի տրամադրումը համապատասխան աշխատակազմերին: Մարզում ստեղծման փուլում է միասնական տեղեկատվական համակարգ, որը տեղեկություններ կպարունակի այս կամ այն պաշտոնին համապատասխան կադրերի վերաբերյալ՝ թափուր պաշտոնները հնարավորինս արագ համալրելու նպատակով: Իրականացվել է օրենսդրական փոփոխություններ, որը հնարավորություն է տալիս իրականացնել աշխատակազմերի քարտուղարների թափուր պաշտոնների համալրումը:

9.6. Տեխնիկական ապահովվածություն

408. Տեղական ինքնակառավարման համակարգում կարևոր և դեռևս ամբողջությամբ չլուծված խնդիրներից մեկը շարունակում է մնալ համայնքների տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացումը, որը կակտիվացնի նաև ապակենտրոնացման գործընթացը: Սակայն, համայնքները ժամանակակից տեխնիկայով և հեռահաղորդակցության համակարգերով (ինտերնետային կապ, ցանցային ծրագրեր և այլն) ապահովելը բավարար չէ այդ գործընթացի արդյունավետ իրականացման համար: Հարկավոր է նաև բարձրացնել ՏԻՄ-երի կարողությունները՝ ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ: Տեխնիկական աջակցություն այս բնագավառում տրամադրվում է բազմաթիվ դոնոր կազմակերպությունների կողմից:

409. 2013թ.-ին բոլոր համայնքները պետք է ապահովված լինեն ժամանակակից համակարգիչներով և իրենց գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ համակարգչային ծրագրերով: Համակարգչին տիրապետելու հմտությունները պետք է ներառվեն համապատասխան համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերում՝ իրականցնելով ծրագրերի ուսուցման և վերապատրաստման դասընթացներ:

410. Ցավալի իրողություն է այն, որ համայնքների մեծ մասը պատշաճ կերպով տեղեկացված չեն օրենսդրական փոփոխություններին, որոնք տեղի են ունենում տեղական ինքնակառավարման օրենսդրության մեջ: Պաշտոնական տեղեկագրերի ոչ մատչելի գները հնարավորություն չեն տալիս համայնքներին կազմակերպել բաժանորդագրություն և տեղեկանալ իրականացվող զարգացումներին ու փոփոխություններին: Այս խնդրի լուծման նպատակով մարզային թերթերի միջոցով պետք է կազմակերպվի տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող իրավական ակտերի ոչ պաշտոնական հրապարակում:

1/ Ցավալի իրողություն է այն, որ համայնքների մեծ մասը պատշաճ կերպով տեղեկացված չեն օրենսդրական փոփոխություններին, որոնք տեղի են ունենում տեղական ինքնակառավարման օրենսդրության մեջ: Այս խնդրի լուծման նպատակով մարզային թերթերի միջոցով պետք է կազմակերպվի տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող իրավական ակտերի ոչ պաշտոնական հրապարակում և համայնքներին ինտերնետային կայքով ապահովում:

9.7. Համայնքային զարգացման ծրագրեր

411. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքային բյուջեները կրում են ծրագրային բնույթ, այսինքն՝ դրանք ընդունվում են նախապես հաստատված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հիման վրա, 2012-2015թթ.-ին անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել համայնքային զարգացման ծրագրերի մշակման և հաստատման գործընթացին: Տեղական ինքնակառավարման օրենսդրությունը համայնքային զարգացման ծրագրերի մշակման միասնական մոտեցումներ և պահանջներ չի սահմանում, ինչի հետևանքով շատ համայնքներում սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերը չունեն իրատեսական հիմնավորումներ և չեն իրականացնում իրենց հիմնական ֆունկցիան: Նկատի ունենալով ներկա իրողությունը, ինչպես նաև մարզային և համայնքային զարգացման ծրագրերի ներդաշնակության ապահովման անհրաժեշտությունը, 2012-2015թթ.-ին անհրաժեշտ է մշակել համայնքի զարգացման ծրագրերի միասնական մեթոդաբանական ուղեցույցներ, և դրանց հիման վրա համայնքային զարգացման ծրագրերը համապատասխանեցնել միասնական կառուցվածքային չափանիշներին: Սա կպահանջի վերապատրաստման դասընթացներ, որոնց պետք է մասնակցեն ՏԻՄ-երի համապատասխան ծառայողները: Կարևորն այն է, որ միասնականությունը թույլ կտա խուսափել կրկնողություններից և բարձրացնել ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը:

412. Համայնքային զարգացման ծրագրերի որակը էապես պայմանավորված է դրանց առկա հիմնախնդիրների և համայնքի բնակչության ցանկությունների համապատասխանությունից: Հաշվի առնելով այն իրողությունը, որ դեռևս ձևավորված չէ բնակչության ակտիվ մասնակցությամբ ծրագրերի քննարկման և հաստատման ավանդույթ, նպատակահարմար է, որ մարզի տարածքում գոյություն ունեցող առավել ակտիվ հասարակական կազմակերպությունների և տեղեկատվական-վերլուծական կենտրոնների մասնակցությամբ, սկզբնական շրջանում պետության աջակցությամբ, սակայն հետագայում համայնքների և միջհամայնքային միավորումների միջոցներով, համայնքներում իրականացվեն հարցումներ և ուսումնասիրություններ՝ պարզելու համար բնակչության կարիքները, ցանկությունները, դժգոհությունները, ինչպես նաև սահմանելու համայնքային հիմնախնդիրների լուծման առաջնահերթությունները: Այս ուսումնասիրությունները պետք է հիմք հանդիսանան սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման համար: Այս առումով կարևոր դեր կարող են խաղալ Տավուշի մարզի զարգացման ծրագրերը և նրանց մշակման և իրականացման ընթացքում ձեռքբերված փորձը, որը հիմք կհանդիսանա համայնքների կողմից ծրագրերի կազմման մեթոդաբանության համար և կօգնի խուսափել կրկնողություններից, հաշվի առնելով, որ այս

խնդիրներին մարզում արդեն անդրադարձ է եղել 2008-2011թթ.-ի ՄԶԾ-ի շրջանակներում, և մի շարք համայնքներ ուղղակիորեն մասնակցել են համապատասխան աշխատանքներին:

413. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը հատկապես լուրջ դժվարությունների է հանդիպում փոքր համայնքներում, որոնք զրկված են բավարար ֆինանսական միջոցներից և որտեղ առավել ցածր մակարդակի վրա են գտնվում բյուջեների հավաքագրման ցուցանիշները, 2012-2015թթ.-ին անհրաժեշտ է քննարկել և համայնքների առանձնահատկություններից ելնելով առաջարկություններ ներկայացնել համայնքների խոշորացմանն ուղղված վարչատարածքային բարեփոխումներ իրականացնելու իմաստով:

414. Մնացյալ բոլոր դեպքերի համար 2012-2015թթ.-ին գործուն ջանքեր պետք է ներդրվեն միջհամայնքային համագործակցության ամրապնդման և խորացման ուղղությամբ: Հաշվի առնելով համայնքների միությունների արդեն իսկ կուտակած որոշ ակի փորձն ու համագործակցության դրական դրսևորումները, պետք է միջոցներ ձեռնարկվեն միջհամայնքային միավորումների ստեղծման ուղղությամբ:

415. Միջհամայնքային միավորումների կազմավորման համար էական են համարվում հետևյալ նախադրյալները:

1) Նոր վարչատարածքային բաժանման ժամանակ, որպես կանոն, հիմք է ընդունվել ‘մեկ բնակավայր մեկ համայնք’ սկզբունքը: Արդյունքում գյուղական համայնքների զգալի մասը փոքր են, սեփական միջոցները չեն բավարարում նույնիսկ ՏԻՄ աշխատակազմերիի աշխատավարձերի ապահովմանը:

2) Բնակչությանը մատուցվող ծառայությունների մի զգալի մասն իրականացվում է նախկին շրջանների տարածքներում և ապակենտրոնացում իրականացնելիս դրանք հնարավոր չէ տրոհել առանձին համայնքների միջև:

3) Համայնքների մասնագիտական և ֆինանսական ռեսուրսների սակավության պատճառով դժվարանում է համայնքներին նոր խնդիրներ վերագրելու գործընթացը, դանդաղում է կառավարման ապակենտրոնացման իրականացումը:

4) Միջհամայնքային միավորումների ձևավորումը կապահովի ռեսուրսների համակենտրոնացում, որը հնարավորություն կտա ոչ միայն բարելավել արդեն իսկ մատուցվող ծառայությունների որակը, այլև մատուցել նոր ծառայություններ և այլն:

9.8.Քաղաքացիական հասարակություն

416.Ժամանակակից արդյունավետ կառավարման նախապայմաններից մեկն ակտիվ քաղաքացիական հասարակության կայացումն ու որոշումների ընդունման գործընթացում բնակչության և քաղաքացիական ակտիվ խմբերի մասնակցության ապահովումն է: Քաղաքացիական հասարակության տարբեր խավերի մասնակցությունը կառավարման գործընթացներում ոչ միայն ժողովրդավարության ամրապնդման երաշխիքն է, այլև կարողությունների զարգացման բնագավառում կարևորագույն ուղիներից մեկը: Համայնքային և մարզային զարգացման ծրագրերի մշակման ընթացքում մասնակցային մոտեցումը կնպաստի տեղական մարմինների կարողությունների բարձրացմանը՝ համայնքների զարգացմանն ուղղված

այլընտրանքային կարծիքների հավաքագրման և համապարփակ ծրագրերի կազմման աշխատանքներում: Միևնույն ժամանակ, ՏԻՄ-երի ղեկավարները պետք է զարգացնեն իրենց կառավարչական հմտությունները՝ մասնակցային գործընթացները արդյունավետ համակարգելու նպատակով: Համայնքներում ՄԶԾ-ով նախատեսված միջոցառումներ իրականացնելիս, հատկապես դրանց պլանավորման, ինչպես նաև մոնիտորինգի և գնահատման ժամանակ, մասնակցային մոտեցումը կապահովի թափանցիկություն և հրապարակայնություն, ինչպես նաև կբարձրացնի բնակչության վստահությունը տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հանդեպ:

417. 2012-2015թթ.-ի ընթացքում տարածքային կառավարման մարմինների առավել թափանցիկ գործունեությունն ապահովելու նպատակով, մարզպետարանի աշխատակազմի, մարզի հասարակական կազմակերպությունների ջանքերով, նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) միջոցներ ձեռնարկել մարզային հեռուստատեսության հիմնադրման ուղղությամբ:

2) լոկալ հեռուստաընկերությունների միջոցով պարբերաբար հեռարձակել հաղորդումներ՝ ներկայացնելով մարզպետի, մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեությունը, ներկայացնելով գոյություն ունեցող հիմնախնդիրները և կատարվող ծրագրերը:

3) մարզային թերթերում պարբերաբար հրապարակել առավել լայն կիրառություն ունեցող օրենքներն ու նորմատիվ իրավական ակտերը, դրանցում կատարվող փոփոխությունները՝ տալով պարզաբանումներ և մեկնաբանություններ:

4) պատրաստել և համայնքներին առաքել հանրամատչելի տեղեկատվական թերթիկներ մարզի զարգացման ծրագրի, ինչպես նաև մարզի տարածքում պետական բյուջեի և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի մասին:

5) հասարակության հետ հարաբերությունները, այդ թվում տեղեկատվության տարածումը, կազմակերպել ոչ միայն մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների, այլև մարզի տարածքում գոյություն ունեցող հասարակական կազմակերպությունների ջանքերով:

6) հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին մասնակից դարձնել մարզխորհրդի նիստերին, ինչպես նաև մարզպետարանում ձևավորվող ժամանակավոր հանձնաժողովների աշխատանքներին:

418. 2012-2015թթ.-ի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովման ուղղությամբ նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1) ստեղծել բոլոր համայնքների պաշտոնական ինտերնետային էջեր:

2) փորձնական ծրագրեր իրականացնել մի շարք համայնքներում՝ կազմակերպելու համայնքի զարգացման ծրագրի, բյուջեի կամ գլխավոր հատակագծի հրապարակային քննարկումներ:

3) համայնքների հնարավորություններից ելնելով՝ հրապարակել համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի և համայնքային բյուջեների հանրամատչելի և վերլուծական ձեռնարկներ, և դրանք անվճար տարածել բնակչությանը:

4) հասարակական կազմակերպությունների և համայնքի ակտիվ հասարակական խմբերի ներկայացուցիչներին հրավիրել համայնքի ավագանու նիստերին:

5) համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու որոշումների մեկական օրինակ տեղադրել համայնքի ղեկավարի նստավայրի հանրության համար մատչելի վայրերում:

6) հասարակական կազմակերպությունների ջանքերով կազմակերպել բնակչության իրազեկման ծրագրեր, որոնց արդյունքում բնակչությանը իրավական տեղեկատվություն և խորհրդատվություն կտրամադրվի գույքային իրավունքների գրանցման, պայմանագրային հարաբերությունների հաստատման և բանկային վարկերի ստացման վերաբերյալ:

7) նախաձեռնել և իրականացնել համայնքային հանրաքվե՝ ստեղծելով դրա նախադեպը, և համայնքային հետաքրքրություն ունեցող հարցերի քննարկում հանրաքվեի միջոցով:

419. Քաղաքացիական հասարակության ակտիվության ապահովման համար անհրաժեշտ է հանրային կառավարման հարաբերություններում մշտական մասնակցային դեր վերապահել գոյություն ունեցող տարաբնույթ կազմակերպություններին և հասարակական խմբերին (օրինակ՝ համայնքների միություններ, Տավուշի մարզի ՀԿ ցանց, ՓՄՁ զարգացման մարզային խորհուրդ, դպրոցական խորհուրդներ, 'Դիլիջան' ազգային պարկ, Տավուշի մարզի առևտրաարդյունաբերական պալատ և այլն)***:***

420. Մարզի զարգացման ծրագրերի մշակման ինստիտուցիոնալ համակարգը- Անհրաժեշտ ենք համարում ՀՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 30-ի թիվ 1207-ն որշմամբ հաստատված Կայուն զարգացման ծրագրից այստեղ մեջբերել ՀՀ մարզերում համալիր զարգացման ծրագրերին վերաբերող հիմնարար դրույթները, ընդ որում դրանց փորձը հաշվի առնելով ,,ՀՀ կառավարությունը մշակել է տարածքային զարգացման հայեցակարգ,,.

1) Մարզերի զարգացման հիմնական գերակայությունները և ուղղությունները պետք է արտացոլվեն մարզերի զարգացման միջնաժամկետ համալիր ծրագրերում, որոնք կազմվում են մարզպետարանների կողմից և հաստատվում է ՀՀ կառավարության կողմից:

2) Մարզային զարգացման ծրագրերի (ՄԶԾ) հիմնական նպատակը ԿԶԾ-ով և Կառավարության այլ ռազմավարական ծրագրերով նախանշված գերակա զարգացման ուղղությունների ապահովումն է՝ հաշվի առնելով մարզերին բնորոշ առանձնահատկությունները:

3) ՄԶԾ-ների կազմումը և իրագործումը ընթանաում է քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությամբ:

4) ՄԶԾ-ները պարբերաբար վերանայվում են՝ կապված, նախ և առաջ, ԿԶԾ և Կառավարության այլ ռազմավարական ծրագրերի վերանայման և ընդունման հետ, ինչպես նաև հիմք ընդունելով ՄԶԾ-ների իրականացման ընթացքում ի հայտ եկած տարբեր հանգամանքները, որոնք ցուցահանվում են մոնիտորինգի և գնահատման գործառույթով:

5) ՄԶԾ-ների կազմման և իրագործման ընթացքում բարձրացվել են մարզային խորհուրդների դերը, իսկ մարզպետարաններում ստեղծվել են անհրաժեշտ կարողություններ՝ այդ ողջ գործընթացը համակարգելու և կառավարելու համար:

6) Միասնական մեթոդաբանությամբ կազմված ՄԶԾ-ների հիման վրա հստակեցվել և կանխորոշվել են ՀՀ Կառավարության տարածքային քաղաքականության գերակայությունները,

որոնք նախ և առաջ ուղղված են մարդկային և եկամտային աղքատության հաղթահարմանը և մարզերի զարգացման անհամամասնությունների նվազեցմանը:

7) Սոցիալական ենթակառուցվածքներում ՀՀ Կառավարության կողմից իրականացվող կապիտալ ծախսերի տարածքային կառուցվածքը նպատակադրվել է առաջին հերթին նվազեցնելու մարդկային աղքատության մակարդակը՝ գերակայությունը տալով այս առումով առավել աղքատ մարզերին:

8) Եկամտային աղքատությունը նվազեցնելու և մարզերի տնտեսական զարգացման անհամամասնությունները մեղմելու նպատակով ՀՀ Կառավարությունը.

ա. Միջոցներ է հատկացնում՝ ուսումնասիրելու համար յուրաքանչյուր մարզի տնտեսական ներուժը:

բ. Ըստ ամենայնի նպաստում է մարզերում գերակա ոլորտների զարգացման ծրագրերի կազմմանը և այդ ծրագրերի ներքին և արտաքին ներդրողներին և գործարարներին ներկայացմանը:

գ. Որոշակի ներդրումներ են կատարվել մարզային ենթակառուցվածքներում (այդ թվում՝ համագործակցելով մասնավոր հատվածի հետ)՝ նպատակ ունենալով էապես բարելավելու գործարարության զարգացման համար անհրաժեշտ պայմանները:

ե. Առանձին դեպքերում իրականացվելու են ուղղակի և անուղղակի ֆինանսական աջակցություն գործարարներին՝ առավել աղքատ մարզերում և տարածաշրջաններում (մասնավորապես՝ բարձր լեռնային և սահմանամերձ) գործունեություն ծավալելու նպատակով:

421. Ահա այս համատեքստում է, որ կարևորվում է Գեղարքունիքի և Տավուշի մարզերում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի ՄԶՆ-ի դրամաշնորհային ֆինանսավորմամբ 2003թ.-ից գործող Հայաստանի տարածքային զարգացման ծրագրի փորձը (2003-2008 և 2009-2011թթ-ների համար նախատեսված Հայաստանի տարածքային զարգացման ծրագիրը գործում է Գեղարքունիքի և Տավուշի մարզերում: Ծրագրերի նպատակն էր մարզերում աղքատության նվազեցումը և աղքատամետ զարգացման ծրագրեր կազմելու ու իրականացնելու բնագավառում մարզպետարանների կարողությունների ուժեղացումը: Այժմ մշակվել է ՀՀ Տավուշի մարզի 2012-2015թթ. Սոցիալ-տնտեսական զարգարգացման ծրագիրը:

422. Մարզպետարանի առաջնորդությամբ, արդեն որպես ավանդույթ մարզային զարգացման ծրագրի մշակման աշխատանքներին լծվել են մարզի քաղաքացիական հասարակությունը, մասնագիտացված կազմակերպությունները, դոնոր կազմակերպությունները, ճյուղային նախարարությունների և պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների ներկայացուցիչները: Առաջին անգամ Հայաստանում Տավուշի և Գեղարքունիքի մարզերում ստեղծվեցին և գործադրվեցին ՄԶԾ-ի մշակման աշխատանքները: 2012-2015 թթ.մարզի զարգացման ծրագրի մշակման աշխատանքները ավանդույթ է դարձել, ինչպես նաև ՄԳ գործընթացների մեխանիզմները, մարզերի զարգացման պլանավորման նոր ինստիտուցիոնալ համակարգը արդեն ավել մատչել են: Այս լայնածավալ աշխատանքները համակարգում է ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը:

423. Մարզային զարգացման ծրագրի մշակման ու հետագա գործունեության ընթացքում փորձարկվել են և հաջող գործադրվել այնպիսի նոր մեթոդներ ու կառույցներ և

ուժեղացվել են գործողները, ինչպիսիք են ,,Աղքատության մասնակցային գնահատումը,, համայնքային թիրախային խմբերը, ոլորտային աշխատանքային խմբերը (ընդ որում՝ իշխանության և հասարակության հավասարաչափ անդամակցությամբ), Մարզային զարգացման հանձնաժողովը և Տարեկան աշխատանքային պլանները, մոնիտորինգի և գնահատման կիսամյակային և տարեկան հաշվետվությունները և դրանց դերը հաջորդ ժամանակահատվածի պլանավորման ընթացքում, ինչպես նաև հրապարակայնության և բնակչության իրազեկվածության ապահովման գործառույթը:

424. ՄԶԾ-Ի նվաճումներից մեկը մարզային զարգացման պլանավորման ու իրականացման ինստիտուցիոնալ համակարգն է, որը խարսխված է ՄԶԾ-ների շուրջ ձևավորված Մոնիտորինգի և գնահատում բաժնում արձանագրված սկզբունքների վրա: ՄԶԾ-ների շուրջ ձևավորված գործընթացների գերակա նպատակներից են մարզում փաստացի առկա և պոտենցիալ միջոցների առավել արդյունավետ պլանավորումն ու օգտագործումը, իրականացնող մարմինների հաշվետվողականությունն ու նրանց գործունեության թափանցիկությունը, պոտենցիալ ներդրողներին առաջնահերթ ծրագրերի և միջոցառումների առաջադրումը: Այստեղ հարկավոր է նաև նշել, որ պլանավորման գործընթացն իր մեջ անպայմանորեն պարունակում է առաջնահերթ ծրագրերի ընտրության համար հստակ մշակված չափանիշները, որը պետք է իրականացվի ոլորտային աշխատանքային խմբերի համապատասխան մասնագետների կողմից:

425. Բխելով Հայաստանի Հազարամյակի զարգացման նպատակներից, ԿԶԾ-ից և գործող ոլորտային քաղաքականություններից, այն հնարավորություն է տալիս համակարգել գոյություն ունեցող մարդկային, ֆինանսական ու տեխնիկական ռեսուրսները և դրանք ուղղել լայն հասարակության հետ համաձայնեցված առաջնահերթությունների իրականացմանը: Բնականաբար, գործող ինստիտուցիոնալ համակարգը դեռևս կպահանջի զգալի լրամշակումներ և շահագրգիռ մարմինների առաջարկություններ և մեկնաբանություններ, սակայն մեր խորհին համոզմամբ, համակարգի ճկունությունը և համապարփակությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ այն խարսխված է Հայաստանում գործող վարչա-տարածքային բաժանման, բյուջետավարման, գնումների, միջնաժամկետ պլանավորման գործող համակարգերի օգտագործման (բոլոր տեսակի ֆինանսական միջոցների համար), մասնակցային ու հրապարակային գործընթացների պարտադիր կիրառման, ու հստակ հաշվետվողականության սկզբունքների վրա, թույլ է տալիս վստահ ասել, որ մշակված այս համակարգը դառցել է Հայաստանում մարզերի զարգացման պլանավորման ու ծրագրերի իրականացման մոդելի հիմքը: Բացի այդ, ունենալով արդեն ավելի քան 9 տարվա փորձ, Տավուշի մարզպետարանը պատրաստակամություն է հայտնում իր ուժերի սահմաններում հանդես գալ որպես այլ մարզերում ու մարզպետարաններում մոդելի տարածմանը նպաստող փորձի փոխանակման, մասնագիտական, ինչպես նաև մեթոդաբանական աջակցության ռեսուրս:

426. Հետևաբար անհրաժեշտ ենք համարում նշել, որ մարզպետարանը հավանություն տալով ինստիտուցիոնալ համակարգին, նպատակահարմար է գտնում ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը առաջարկել մոդելային այս համակարգը տարածել ՀՀ այլ մարզերում, ինչը հնարավորություն կտա միասնականացնել մարզային զարգացման ծրագրերի մշակման, միջոցների ծրագրավորման, դրանց մոնիտորինգի և գնահատման, ինչպես նաև հրապարակայնության հետ կապված խնդիրները: Բացի այդ, միջին ժամկետ ծրագրերը

նախատեսում են նաև տարեկան աշխատանքային պլանների կազմման աշխատանքներ, որոնք համահունչ են ծրագրային բյուջետավարման բնագավառում ընթացող վերափոխումների հետ, ինչպես նաև բավարարում են աղքատության գնահատման ու դրա վերացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվական մոնիտորինգային համակարգերին,:

Աղյուսակ 9.2. ՄԶԾ ծրագրավորվող տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտների ֆինանսավորումը 2012-2015թ.թ.(մլն. դրամ)

ՄԶԾ ոլորտը	**Պլանավորվող ֆինանսավորումը 2012-2015թ.թ.**				
	2012թ	**2013թ**	**2014թ**	**2015թ**	**Ընդամենը 2012-20115թթ.**
Տարածքային կառավարում և տեղական Ինքնակառավարում. Քաղաքացիական ծառայություն	15.0	15.0	15.0	15.0	60.0

Տավուշի *մարզային զարգացման պլանավորման և իրականացման ինստիտուցիոնալ համակարգ*

Գծապատկեր



Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտի տրամաբանական հենքը

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշ	Կարևոր նախապայմաններ
Տարածքային կառավարում		
Ոլորտային նպատակ՝ Մարզում պետական կառավարման (տարածքային կառավարման) արդյունավետության բարձրացում	Մարզպետարանի նոր, ընդլայնված ինստիտուցիոնալ համակարգի արդյունավետ գործարկում Օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացում	Օրենսդրության հստակեցում
Արդյունք 1. Մարզպետարանի և ՏԻՄ-երի միջև համագործակցության մակարդակի բարձրացում		Նորմատիվ իրավական դաշտի առկայություն, այդ թվում՝ մարզային մակարդակով
Միջոցառումներ 1.1 Կառավարության կողմից սահմանված չափորոշիչների յուրացում 1.2 Մարզպետարանում աշխատող քաղաքացիական ծառայողների մասնագիտական վերապատրաստման ապահովում		Օրենսդրական պահանջներ
Արդյունք 2. Մարզպետարանի վերափոխված կառավարման կազմակերպական կառուցվածք	Մոնիտորինգի և գնահատման աշխատանքների համակարգման և ՄԳ հաշվետվությունների ամփոփման նպատակով Ծրագրերի և ներդրումների բաժնի առանձնացում որպես կառուցվածքային ստորաբաժանում՝ մարզպետի տեղակալի անմիջական ենթակայության ներքո /համապատասխան ենթաօրենսդրական ակտի ընդունում/	
Միջոցառումներ 2.1 Համապատասխան		

կարգավորող որոշման նախագծի ներկայացում ՀՀ կառավարությանը		
Արդյունք 3. Սոցիալական ծառայությունների ապակենտրոնացում	3.1 Մարզպետարանի առանձնացված ստորաբաժանումներ հանդիսացող սոցիալական ծառայությունները կփոխանցվեն համայնքներին	ՀՀ կառավարության կողմից փորձնական ծրագրի իրականացման ընթացք
Միջոցառումներ 3.1 ՀՀ օրենսդրական բարեփոխումների իրագործում, համայնքներին համապատասխան տեղեկատվության տրամադրում		
Արդյունք 5. Մարզի բոլոր քաղաքային և խոշոր գյուղական համայնքներում ինտերնետային կենտրոնների ստեղծում, դրանց տեխնիկական միջոցներով և ինտերնետով ապահովում	Գործող ինտերնետ կենտրոնների թիվը մարզի քաղաքային և խոշոր գյուղական համայնքներում	Արդեն իսկ գոյություն ունի նման կենտրոն: Հնարավոր է օգտագործել տեղական հասարակական կազմակերպությունների տեխնիկական հնարավորությունները և տարածքները: Հանրակրթական դպրոցներն ապահովված են համակարգչային տեխնիկայով:
Միջոցառումներ 5.1 Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում, ծրագրային ապահովում և շահագործում, 5.2 Համապատասխան կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքում, 5.3 Հանրակրթական դպրոցների հետ կազմակերպական աշխատանքների իրականացում:		
Արդյունք 6. Մարզպետարանի և	Միասնական տեղեկատվական ցանցում ընդգրկված համայնքների	Արդեն իսկ գոյություն ունի նման կենտրոն:

համայնքների միջև միասնական տեղեկատվական ցանցի ստեղծում	թիվը	Հնարավոր է օգտագործել տեղական հասարակական կազմակերպությունների տեխնիկական հնարավորությունները և տարածքները: Հանրակրթական դպրոցներն ապահովված են համակարգչային տեխնիկայով:
Միջոցառումներ 6.1 Համապատասխան տեխնիկական ապահովում, 6.2 Ծրագրային ապահովում, 6.3 Կադրերի վերապատրաստում		Մարզպետարանում և համայքների մեծ մասում գոյություն ունեն համակարգիչներ
Արդյունք 7. Մարզպետարանի և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հարաբերությունների բարելավվում:		Հանրապետական գործադիր մարմնի տարածքային ծառայություններն ունեն իրենց գործունեությունը կարգավորող նորմատիվային-իրավական դաշտ
Միջոցառումներ 7.1 Մշակել իրավական ակտերի նախագծեր, որոնցով կարգավորվում են պետական կառավարման մարմինների միջև փոխհարաբերությունները:		
Տեղական ինքնակառավարում		
Ոլորտային նպատակ՝ Տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետության բարձրացում	1. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճան 2. Համայնքային մակարդակում	Բավարար ֆինանսական միջոցների առկայություն ՀՀ կառավարությունը շարունակում է ապակենտրոնացման

	հավաքագրվող հարկեր և տուրքեր, % նախորդ տարվա նկատմամբ	քաղաքականությունը:
Արդյունք 1. Համայնքային բյուջեների հավաքագրման ցուցանիշների աճ	1.1 Համայնքային բյուջեների հավաքագրման մակարդակ (% պլանավորված եկամուտների նկատմամբ)	գոյություն ունի բյուջետային ոլորտի հստակ կերպով կարգավորվող օրենսդրություն համայնքային բյուջեների հարկային եկամուտների հավաքագրման աստիճանի բարձրացում յուրաքանչյուր տարի ավելանում են պետական բյուջեից համայնքային բյուջեներին տրամադրվող դոտացիաների ծավալները
Միջոցառումներ 1.1 Հստակեցնել հողի հարկի, գույքահարկի և տուրքերի բազաները 1.2 Կազմել նախորդ տարիներից կուտակված ապառքների մարման ժամանակացույց և հետևողականորեն միջոցներ ձեռնարկել դրանց մարման ուղղությամբ:		
Արդյունք 2. բնակավայրի գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի կազմում	1.1 Մշակված գլխավոր հատակագծեր ունեցող համայնքների թիվը Թիրախ՝ (2012-2015թ. կիրականացվեն մարզի բոլոր համայնքներում բնակավայրերի գլխավոր հատակածերի կազմումը)	

Միջոցառումներ 2.1 Հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների կազմում 2.2 Բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմում		
Արդյունք 3. Տեղական ինքնակառավարման մարմինների տեխնիկական և մասնագիտական հմտությունների զարգացում	3.1. Ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով վերազինված աշխատատեղերի քանակը, % Թիրախ՝ (Աշխատատեղի 90%-ը կապահովվի համակարգիչներով 2012-2015թթ. ընթացքում) 3.2. 2012-2015թթ. նախատեսվում է մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերում համայնքային ծառայողների վերապատրաստում շուրջ 570 մարդ: 3.3. Վերապատրաստում ստացած համայնքապետարանների աշխատողների թիվը Թիրախ՝ (Տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով 2012-2015թթ. մարզում նախատեսվում է վերապատրաստել յուրաքանչյուր տարին շուրջ 80-100 մարդ:) 3.4.Տեղեկատվական համակարգ ունեցող համայնքների թիվը 20	Նոր ընտրված տեղական իշխանությունները շարունակում են համայնքային կարողությունների զարգացման համար մշակված մոտեցումների կիրառումը
Միջոցառումներ 3.1 Համայնքների աշխատակազմի աշխատատեղերի վերազինում ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով		Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն

3.2 Մարզում համայնքային ուսումնական կենտրոնի հիմնում 3.3 Համայնքների վարչական-տեղեկատվական համակարգի ձևավորում 3.4 ՏԻՄ-երի ղեկավարների և ավագանու անդամների մասնագիտական որակավորման բարձրացում վերապատրաստման միջոցով		
Արդյունք 4. Միջհամայնքային միավորումների կարողությունները բարձրացվել են	4.1. ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով վերազինված միջհամայնքային միավորումների քանակը, %	Գործող օրենսդրական դաշտը նպաստավոր է: Կան 4 համայնքների միություններ,որոնք ընդգրկում են համայնքների մոտ 77%-ը: Ենթադրվում է, կձևավորվեն նոր միջհամայնքային միավորումներ՝ ըստ ՏԻՄ-ի մասին 2002թ-ի օրենքի
Միջոցառումներ 4.1 Միջհամայնքային միավորումներին տեխնիկական աջակցության տրամադրում 4.2 Միջհամայնքային միավորման շենքային պայմանների բարելավում 4.3 Միջհամայնքային միավորումների շրջանակներում աղբահեռացման գործընթաց սկսել 4.4 Միջհամայնքային միավորումների իրավական հիմքերի ամրապնդում		Համայնքները սատարում են միջհամայնքային միավորումների ստեղծման գաղափարին:
Արդյունք 5. Համայնքների քառամյա զարգացման ծրագրերի	5.1.ՄԶԾ և համայնքների եռամյա զարգացման ծրագրերի համապատասխանեցման	Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան մարդկային

մշակման որակի բարձրացում և համապատասխանեցում մարզային զարգացման ծրագրին	դասընթացներին մասնակցած աշխատակազմի թիվը 5.2.ՄԶԾ-ին համապատասխանեցված համայնքային զարգացման ծրագրերի թիվը	ռեսուրսների առկայություն
Միջոցառումներ 5.1.ՄԶԾ-ի և համայնքների քառամյա զարգացման ծրագրերի համապատասխանեցում		
Արդյունք 6. Համայնքային հիմնախնդիրների կարգավորման գործընթացում ՀԿ-ների և ԶԼՄ-ների ներգրավվածություն	6.1Հանրային իրազեկման նպատակով պատրաստվող հաղորդումների թիվը 6.2.Բնակչությանը ուսուցում անցկացնող ՀԿ –ների թիվը յուրաքանչյուր համայնքում տարեկան 2 անգամ 6.3. ՏԻՄ և համայնքի ավագանու անդամների կողմից համայնքի բնակչությանը ներկայացված հաշվետվությունների թիվը	Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն
Միջոցառումներ *6.1. Տարբեր թեմատիկ հաղորդումների միջոցով հանրության իրազեկում;* *6.2. Համայնքների բնակչության իրազեկության բարձրացում հասարակական կազմակերպությունների միջոցով* *6.3. Ավագանու և բնակչության կապի ամրապնդում ՀԿ-ների նախաձեռնությամբ* *6.4. Համայնքներում տեղեկատվական տախտակների կանոնավոր գործընթացի վարում, համայնքներում ինտերնետային կայք էջերի ստեղծում, ինտերնետային կապի հասանելիություն*		Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն

Արդյունք 7. Հասարակական վերլուծական տեղեկատվական կենտրոնների ստեղծում ՀԿ-ների հիմքի վրա	Յուրաքանչյուր տարածքում հասարակական վերլուծական կենտրոնների թիվը	Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն
Միջոցառումներ *7.1* Մարզի համայնքների իրավական տեղեկատվական բազայի ստեղծում		Ֆինանսական միջոցների առկայություն Համապատասխան մարդկային ռեսուրսների առկայություն
Արդյունք 8. ՄԶԾ-ների ինստիտուցիոնալ և ՄԳ համակարգերիի արմատավորում		
Միջոցառումներ *8.1.* ՄԶՀ-ների և ՈԱԽ-ների անդամների տեխնիկական առաջադրանքների հաստատում *8.2.* Առաջնահերթ ծրագրերի ընտրության հստակ չափանիշների մշակում և հաստատում *8.3.* ՀԿ ցանցի հետ ՈԱԽ-ներում և ՄԶՀ-ում ՀԿ-ների ներկայացուցիչների անդամակցությունը կարգավորող փոխըմբռնման հուշագրի կնքում *8.4.* ՄԳ համակարգի շարունակականության ապահովում *8.5.* Իրազեկման միջոցառումների իրականացում	8.1. Հաստատված տեխնիկական առաջադրանքներ 8.2 ՄԶՀ-ի համապատասխան որոշում՝ հաստատված մարզպետի կողմից 8.3. Փոխըմբռնման հուշագրի կնքում 8.4 Տարեկան կտրվածքով իրականացված ՄԳ ուսումնասիրությունների թիվ Տարվա ընթացքում պատրաստված ՄԳ հաշվետվությունների քանակ 8.5. Կիսամյակային և տարեկան հրապարակված հաշվետվությունների թիվը 2012-2015թթ.-երին 2005-2007թթ.-երի ՄԶԾ-ի արդյունքների և 2012-2015թթ.-երի ՄԶԾ-ի ընթացքի մասին իրազեկման միջոցառումների քանակը և տեսակը	Անհրաժեշտ ֆինանսական միջոցները տրամադրվում են Ֆինանսական միջոցները առկա են Ֆինանսական միջոցները առկա են

9.9. Ռիսկերի նվազեցում

427. Մարզում առկա են 4 ապաստարաններ և 13 հակաճառագայթային թաքստոցներ, որոնք ունեն կապիտալ վերանորոգման կարիք:
Բերդի տարածաշրջանը ապահովված չէ ազդարարման համակարգով /շչակներով/ , անհրաժեշտ է ազդարարման համակարգը դարձնել կենտրոնացված:
Անհրաժեշտ է մարզի բնակչությանը ապահովել անհատական պաշտպանության միջոցներով, առկա միջոցները ժամկետանց են և ենթակա չեն հետագա օգտագործման:
1)<<Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանություն>>
ա. մարզի առավել վտանգավոր տարածքները- Ն. Ծաղկավան, Հովք, Հաղարծին, Գետահովիտ, Լճկաձոր- սողանքային գոտիներ Գոշավանք տանող ճանապարհ, Բերդ տանող ճանապարհի վրա Տավուշ գյուղի մոտ- քարաթափում
բ. բնական աղետներ- սողանք, սելավ, ջրհեղեղ, երկրաշարժ, կարկտահարություն. ուժեղ քամիներ, ցրտահարություն, քարաթափում, երաշտ, փլուզում:
գ. տեխնածին աղետներ- հրդեհներ, պայթյուններ
դ. բնական և տեխնածին աղետների ռիսկերի նվազեցում- անտառային ճանապարհների բարեկարգում, ջրավազանների, հիդրանտների կառուցում: Լճկաձորի սողանքային գոտու լիարժեք ուսումնասիրություն, մարզի սողանքային գոտիներում ռիսկերի նվազեցմանն ուղղված աշխատանքների իրականացում՝ ուսումնասիրություններ, հետազոտություններ, վերականգնողական աշխատանքներ, ազգաբնակչության ուսուցում:

10. ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

428. ՄԶԾ առաջընթացի վերլուծության և համապատասխան բարեփոխումների իրականացման տեսանկյունից չափազանց կարևորվում է իրականացվող միջոցառումների մոնիտորինգը և գնահատումը, որն անհրաժեշտ է նաև նպատակային շահագրգիռ կողմերի հետ հետադարձ կապի պահպանման և նրանց տեսակետներն ու կարիքները հաշվի առնելու համար: ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման համակարգը մշակվել է 2006թ.-ին և իրականացվել 2005-07թթ. Տարեկան աշխատանքային պլաններով նախատեսված միջոցառումների առաջընթացի ուսումնասիրման և վերլուծության նպատակով (ցքանի որ Ծրագրերի իրականացումը սկսվել է 2006թ.-ից, ապա 2006թ.-ի աշխատանքային պլանը ներառեց նաև 2005թ.-ի պլանով սահմանված միջոցառումները):

429. Ինչպես և ՄԶԾ-ը, այնպես էլ ՄԳ հայեցակարգի մշակումն ու իրականացումը ևս առաջին փորձն էր Հայաստանում՝ մարզային մակարդակում պլանավորված քաղաքականությունների առաջընթացի համակարգված գնահատման և վերլուծությունների առումով: Եվ այդ փորձը ցույց տվեց, որ համակարգը կենսունակ է և հուսալի, ինչը նշանակում է, որ այն թույլ է տալիս չափել իրականացվող միջոցառումների և ծրագրերի արդյունքները, բացահայտել դրանց իրականացման ընթացքում ի հայտ եկած խոչընդոտները և դժվարությունները ու կյանքի կոչել այն հանձնարարականները, որոնք թույլ կտան բարելավել քաղաքականությունների պլանավորման և իրականացման գործընթացները: Մոնիտորինգի և գնահատման

հայեցակարգի մշակման, իսկ հետագայում նաև դրա իրականացման նպատակով մարզպետարանի կազմում Մարզպետի հրամանով ձևավորվել է համապատասխան վարչություններից ոլորտային մասնագետներից բաղկացած ՄԳ խումբ, որի աշխատանքները համակարգվում են Տավուշի մարզպետի տեղակալի կողմից: ՄԳ համակարգով նախատեսված խմբի գործունեության արդյունքները ամփոփվում ևվերլուծում է մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի կողմից:

430. ՄԳ գործառույթի ինստիտուցիոնալացման նպատակով Տավուշի մարզպետի հրամանով ՄԳ խմբի անդամների պաշտոնի անձնագրերում որոշակի փոփոխություններ կատարվեցին, որոնք ենթադրում էին ՄԳ գործառույթի ամրագրում: Սա նշանակում է, որ եթե մինչ այդ մոնիտորինգի խումբը գործում էր Մարզպետի հրամանով, սակայն աշխատանքային պարտականությունների շրջանակը իրականում չէր ենթադրում ՄԳ գործառույթի իրականացում, ապա ներկայումս այս գործառույթը դարձել է նրանց առօրյա պարտականությունների մի մասը՝ ի պաշտոնե:

431. ՄԳ գործառույթի կենսունակությունն ապահովելու համար կարևոր էր նաև ՄԳ խմբի կարողությունների հզորացումը ՄԳ մեթոդաբանությունների և մեթոդների վերաբերյալ: Այս հարցում առաջին ՄԶԾ շրջանակում մարզպետարանին առանցքային աջակցություն են ցուցաբերել ՀՏԶԾ փորձագետները:

432. Ընդհանուր առմամբ, ՄԶԾ ՄԳ-ն մի պարզ համակարգ է, որը.

1) համապատասխանում է ԿԶԾ-ի մոնիտորինգի համակարգին,

2) ապահովում է այնպիսի մի մոտեցում, որը թույլ է տալիս ուշադրության կենտրոնում պահել առաջնայնություններն արտացոլող ցուցանիշները, հանգեցնում է հուսալի արդյունքի, ինչպես նաև երաշխավորում է ներդրված միջոցների դիմաց ցանկալի որակ՝ հատկապես միջոցների սահմանափակության պարագայում,

3) ճկուն է ՄԶԾ-ի փոփոխվող կարիքների հանդեպ,

4) նպաստում է վճռորոշ ցուցանիշների համար համայնքային մակարդակի տվյալների ստեղծմանը,

5) թափանցիկ է և ապահովում է արդյունքների մասին լայն իրազեկումը:

433. Տարեկան աշխատանքային պլան-ՄԶԾ-ի իրականացմանն աջակցելու, աշխատանքները համակարգելու, ինչպես նաև ՄԳ իրականացման համար պլանավորված միջոցառումները, արդյունքները և ֆինանսական ներդրումները ամփոփ ներկայացնող փաստաթղթի առկայության նպատակով յուրաքանչյուր տարեսկզբին ՄԳ խմբի կողմից մշակվում է Տարեկան աշխատանքային պլան (ՏԱՊ): ՏԱՊ-ի նպատակներն են.

1) Համախմբել բոլոր նախատեսվող միջոցառումները ՄԶԾ-ի գերակա նպատակների իրականացման շուրջ:

2) Շաղկապել նախատեսվող միջոցառումները ՄԶԾ-ների արդյունքների հետ՝ ‘տրամաբանական հենքի’ օգնությամբ:

3) Ներառել միջոցառումների իրականացման ցուցանիշները և արդյունքները տրամաբանական հենքում:

4) Սահմանել այն կազմակերպությունները, որոնք պատասխանատու են կոնկրետ միջոցառումները իրականացնելու համար:

5) Որոշակիացնել միջոցառումների իրականացման ժամկետները՝ ըստ եռամսյակների:

6) Սահմանել դեռևս ֆինանսական միջոցներով չապահովված միջոցառումների համար ֆինանսավորման ռազմավարությունը:

434. Ընդհանուր առմամբ ՏԱՊ-ում ներկայացվում են այն միջոցառումները, որոնց իրականացման համար պատասխանատու է մարզպետարանը, ինչպես նաև արձանագրվում են այն հիմքերը, որոնց վրա կառուցվելու են մոնիտորինգի աշխատանքները: Այս փաստաթղթում ներկայացվում է նաև ֆինանսական խնդիրների նկարագիրը, ինչպես նաև ֆինանսական միջոցներով դեռևս չապահովված միջոցառումների իրականացման համար ֆինանսական աղբյուրների բացահայտման ռազմավարությունը:

435. ՏԱՊ-ի բոլոր նախատեսվող միջոցառումները ամփոփված են **Տրամաբանական հենքում**: Տրամաբանական հենքը կառավարման հզոր գործիք է, որը պարզաբանում է առանձին ծրագրերի կամ միջոցառումների նախագծման պատճառահետևանքային կապերը և դրանց փոխկապակցվածությունը Ծրագրի խնդիրների, ինչպես նաև արտաքին միջավայրի հետ: Սա արդյունավետ ու ճկուն մեթոդ է ծրագրերի ու միջոցառումների պլանավորման, մոնիտորինգի ու գնահատման, ինչպես նաև հաշվետվականության հետ կապված խնդիրները լուծելու համար:

436. Այսպիսով տրամաբանական հենքը օգնում է.

1) նկարագրել այն խնդիրները, որոնց իրականացմանն ուղղված է տվյալ միջոցառումը,

2) բացահայտել այն կարևոր նկատառումները, որոնք պետք է հաշվի առնել արտաքին գործոնների առումով, քանի որ դրանք կարող են ազդել դրված գերակա նպատակների իրականացման վրա,

3) սահմանել այն ցուցանիշները, որոնք կիրառվելու են տվյալ նպատակի իրականացումը չափելու համար,

4) բացահայտել, թե որ աղբյուրներից են ստացվելու յուրաքանչյուր ցուցանիշը չափելու համար անհրաժեշտ տվյալները,

5) հատկորոշել այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ է իրականացնել, ինչպես նաև սահմանել այն ժամկետները, որոնց սահմաններում պետք է իրականացվեն տվյալ նպատակները,

6) բացահայտել անհրաժեշտ միջոցները և ներդրումները:

437. ՄԶԾ-ի մոնիտորինգի համակարգը համապատասխանեցված է ՀՀ ԿԶԾ-ի մոնիտորինգի համակարգին և ներառում է այն կարևոր ցուցանիշները, որոնք հնարավոր կլինի գնահատել մարզային մակարդակով:

438. ՀՀ նախկին ԿԶԾ-ի մոնիտորինգի համակարգում տեղ էր գտել 177 ցուցանիշ, որոնցից 36-ը համարվում են 'հիմնական' (նպատակային), իսկ մնացած 141-ը որակվում են որպես 'գործոնային' (բացատրող) ցուցանիշներ (տես՝ ԿԶԾ մոնիտորինգի ցուցանիշների համակարգի հայեցակարգ): Ընդհանուր առմամբ, վերջինս վերաբերում է (ըստ ՀԲ-ի տերմինաբանության) միջանկյալ (մուտքի կամ ելքի) ցուցանիշներին, իսկ առաջինը՝ վերջնական (արդյունքի և ազդեցության) ցուցանիշներին:

439. Այդ ցուցանիշները դասակարգվում են ըստ հետևյալ բաղադրիչների.

1) Աղքատության կրճատում և բարեկեցության աճ (44 ցուցանիշ),

2) Կրթություն (29 ցուցանիշ),

3) Առողջապահություն (41 ցուցանիշ),

4) Հիմնական հանրային ծառայություններ և բնակարանային հիմնախնդիրներ (22 ցուցանիշ),

5) Քաղաքացիական մեկուսացվածություն և անհավասարություն (32 ցուցանիշ)
6) Բնապահպանական կայուն զարգացում (9 ցուցանիշ):

440. Ներկայումս ԿԶԾ-ն գտնվում է վերանայման փուլում և շատ շուտով պատրաստ կլինի նոր ԿԶԾ-ն: Նոր ԿԶԾ-ն կունենա մոնիտորինգի և գնահատման վերանայված և թարմացված տարբերակ: Լինելով ճկուն և 2006թ.-ի սկզբից գործող, նոր ՄԶԾ մոնիտորինգի համակարգ, այն օժտված է ԿԶԾ ՄԳ համակարգի և նրանում անհրաժեշտ փոփոխություններն արտացոլելու բավարար ներուժով:

441. Մարզային մակարդակով ԿԶԾ-ի հիմնական ցուցանիշների սահմանման հարցը քննարկման ընթացքում է: Կարևոր է նաև, որ յուրաքանչյուր տարածքային կառավարման մարմին (մարզպետարան) համագործակցի ԿԶԾ-ի քարտուղարության հետ՝ ԿԶԾ-ի պարբերական վերանայումների և նրա հետագա կատարելագործման համատեքստում: Ավելին, ՄԶԾ-ներում նախատեսվում են մի շարք գործողություններ, որոնց իրականացումը պետք է ապահովեն հենց տարածքային կառավարման մարմինները՝ այդպիսով աջակցելով ԿԶԾ-ի մոնիտորինգի գործընթացին: Դրանցից են.

1) ԿԶԾ-ով նախատեսված մարզում իրականացվող միջոցառումների մոնիտորինգ, վերլուծություն ու գնահատում,
2) մարզի մակարդակով ԿԶԾ-ի ցուցանիշների մոնիտորինգ ու վերլուծություն,
3) պետական աջակցության կարիք ունեցող ընտանիքների ու խոցելի խմբերի մոնիտորինգ և գնահատում,
4) քաղաքացիական հասարակության կառույցների զարգացման ու ԿԶԾ-ում նրանց մասնակցության ընդլայնման մոնիտորինգ, և
5) ԿԶԾ-ի մասին հանրության իրազեկության աստիճանի բարձրացում:

2007թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին մարզպետարանի ՄԳ խմբի անդամների համար կազմակերպվել և անցկացվել են առաջին պլանային դասընթացները:

442.ՄԶԾ-ն ունի մոնիտորինգի և գնահատման համապարփակ հայեցակարգ, որը բաղկացած է չորս հիմնական բաղադրիչներից.

1) քաղաքականության ուսումնասիրում,
2) ՄԶԾ ցուցանիշների և թիրախների վերանայում,
3) մասնակցային մոնիտորինգ և գնահատում
4) ազդեցության գնահատում:

443. *Քաղաքականության ուսումնասիրում*: Քաղաքականության վերլուծության հիմքը ՏԱՊ-ի տրամաբանական հենքն է և ենթադրվում է, որ մոնիտորինգի այս տեսակի ժամանակ ՄԳ խումբը քննության է առնում նախատեսված միջոցառումների առաջընթացը (այդ թվում՝ հատկացումները և գնումների ընթացակարգերն ու գործընթացները), բացահայտում է խոչընդոտները և հետազոտում գալիք ամիսներին անելիքները: Այս ուսումնասիրությունը կատարվում է տարին երկու անգամ՝ ՏԱՊ-ում ներառված միջոցառումների նկատմամբ առաջընթացը չափելու նպատակով:

444. *ՄԶԾ-ի ցուցանիշների և թիրախների վերանայում*: Յուրաքանչյուր տարվա վերջում մոնիտորինգի տարեկան հաշվետվության համար ՄԶԾ-ի ցուցանիշների ցուցակը թարմացվում է: Այդ ցուցակը ներառում է

ցուցանիշներ երկու աղբյուրներից. ՄԶԾ-ին հատուկ ցուցանիշներ՝ ՏԱՊ-ի տրամաբանական հենքից, և ցուցանիշներ՝ ԿԶԾ-ի մոնիտորինգի համակարգից:

445.Ցուցանիշները խմբավորված են ըստ ՄԶԾ-ի կարևորագույն թեմաների, այն է՝

1) Տնտեսական զարգացում
2) Կենսամակարդակ
3) ՓՄՁ զարգացում
4) Գյուղատնտեսության զարգացում
5) Առողջապահություն
6) Կրթություն
7) Սոցիալական պաշտպանություն
8) Համայնքային զարգացում
9) Շրջակա միջավայրի պաշտպանություն

Մասնակցային մոնիտորինգ և գնահատում: Յուրաքանչյուր տարվա վերջում ՀԿ-ների կողմից իրականացվում է մասնակցային մոնիտորինգի և գնահատման միջոցառում՝ մասնակցային որևէ մեթոդաբանության կիրառմամբ:

446. ՄՄԳ-ն որպես կանոն իրականացվում է ՄԶԾ-ի ոլորտների համար ներկայացուցչական ընտրանքի միջոցով՝ հաշվի առնելով տվյալ ոլորտում ներդրումների ծավալը և միջոցառումների իրականացման ժամկետները:

ՄԶԾ-ի շրջանակներում կիրառված մասնակցային մոնիտորինգի մեթոդաբանությունները

Համայնքային գնահատման քարտեր

Համայնքային Գնահատման Քարտեր (ՀԳՔ) մեթոդաբանությունը զարգացել է վերջին տարիներին և համարվում է ճկուն, որակական, հեշտ իրականացվող տեղական մոնիտորինգի, արձագանքների ստացման և մասնակցային պլանավորման գործընթաց, որը կարող է օգտագործվել տեղական խնդիրները վերհանելու և դրանք բարեփոխելու նպատակով: ՀԳՔ հիմնական նպատակներից մեկը մարդկանց ձայնը լսելի դարձնելն է, հատկապես խոցելի և աղքատ խմբերի, հանրային իրազեկության բարձրացումը, ինչը թույլ կտա կոլեկտիվ միջոցառումներ ձեռնարկել և ներքևից-վերև ճնշում գործադրել ցածրորակ ծառայությունների մատուցման դեմ:

Շահառուների գնահատում

'Շահառուների գնահատում' մեթոդաբանությունը առավելապես որակական տեղեկատվության ստացման միջոց է, որն ուղղված է ծրագրի ազդեցության և օգուտների վերաբերյալ տեղեկատվության բացահայտմանն ու վերլուծությանը, ինչը թույլ կտա քաղաքականություն մշակողներին ու պաշտոնյաներին բարելավելու ծրագրի մշակման և իրականացման ընթացակարգերը: Այս մեթոդաբանության առանձնահատկություններից մեկն այն է, որ այդ տեղեկատվությունը և վերլուծությունը բխում է ծրագրի շահառուների տեսակետներից, ընկալումներից և փորձից:

Ազդեցության գնահատում: Յուրաքանչյուր տարվա վերջում, մասնագիտական անկախ գնահատում իրականացնելու նպատակով, կազմակերպվում է ՄԶԾ որևէ ոլորտի միջոցառումների ազդեցության գնահատում: Այս հետազոտությունները թույլ են տալիս.

1) անցկացնել քաղաքականության ուսումնասիրության ու ցուցանիշների մոնիտորինգի եզրակացությունների համադրում,

2) ստանալ ՄԶԾ-ի իրականացման ու արդյունքների խորացված պատկեր՝ ըստ առանձին կարևորագույն ոլորտների և ունենալ մի մեխանիզմ, որի շնորհիվ կարելի է տեղերից ստանալ ՄԶԾ-ի արդյունավետության վերաբերյալ կարծիքներ (ինչպես, օրինակ, աղքատների համար առանձին ծառայությունների մատչելիությունը):

447. ՄԳ համակարգի առաջին և երկրորդ տարրերն իրականացվում են մարզպետարանի ՄԳ խմբի կողմից: Այս երկու տարրերը կարելի է համարել ներքին մոնիտորինգ և գնահատում: Իսկ երրորդ և չորրորդ տարրերը համարվում են արտաքին ՄԳ տեսակ, քանի որ դրանք հիմնականում իրականացվում են քաղաքացիական հասարակության սուբյեկտների և անկախ մասնագետների կողմից՝ ապահովելով նաև ՄԳ համակարգի համապարփակությունը և չեզոքությունը: Բացի այդ այս տարրերի առկայությունը թույլ է տալիս հանրության լայն շրջանակներին մասնակցելու և վերահսկելու մարզային մակարդակում զարգացման նախաձեռնությունների պլանավորման, իրականացման և գնահատման գործընթացները: Կարևոր է նշել նաև, որ վերջին երկու տարրերը հնարավորություն են տալիս քանականան տվյալները համալրել որակական գնահատականներով, ինչն ամբողջական է դարձնում ՄԳ ընդհանուր պատկերը և օգնում բարձրացնել պլանավորման արդյունավետությունը:

448. Այնուամենայնիվ, ՄՄԳ և ազդեցության գնահատումը ևս համակարգվում է մարզպետարանի ՄԳ խմբի կողմից, քանի որ վերջինս պատասխանատու է ողջ համակարգի գործառնության համար: Սակայն, այս պարագայում մարզպետարանի ՄԳ խմբի մասնակցությունը սահմանափակվում է իրականացնողներին ցուցաբերվող տեխնիկական աջակցությամբ և տեղեկատվության տրամադրմամբ: Այսպիսով՝ ամրապնդվում է նաև կապը մարզային իշխանությունների և մարզի քաղաքացիական հասարակության խմբերի հետ:

Ոչ նյութական մշակութային արժեքների պահպանում


ՄԳ խմբի ղեկավար՝ մարզպետի տեղակ
՝ Տեխնիկական առաջադրանքի մշակում, ՀԿ-ների և փորձագետների ընտրության չափանիշների սահմանում և բաց մրցույթի հայտարարում
՝ Ընտրող հանձնաժողովի ստեղծում և բաց մրցույթի կազմակերպում
՝ ՀԿ-ներին և փորձագետներին աջակցության ապահովում
՝ Հաշվետվությունների հաստատում, ներառում Տարեկան ՄԳ հաշվետվությունում
՝ ՏԱՊ-ի տրամաբանական հենքի առաջընթացի վերլուծություն
՝ ՄԶԾ և մարզային մակարդակում ԿԶԾ ցուցանիշների վերլուծություն
՝ ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվությունների պատրաստում
՝ ՄԳ տարեկան հաշվետվության ներկայացում
ՄԳ խումբ
՝ ՄԳ գործընթացի համակարգում և վերահսկում
՝ ՄԳ համակարգի ֆինանսական և տեխնիկական ապահովում
՝ ՄԳ տարեկան սեմինար-խորհրդակցության կազմակերպում
՝ Տարեկան ՄԳ հաշվետվության նախագծի
՝ Տեխնիկական առաջադրանքի մշակում
՝ Մասնակցություն՝ ընտրող հանձնաժողովի ախատանքներին
՝ ՀԿ-ներին և փորձագետներին իրազեկում՝ ՄԶԾ և ՏԱՊ-ի միջոցառումների և ոլորտային քաղաքականությունների վերաբերյալ
՝ ՀԿ-ների և փորձագետների աշխատանքներին աջակցության ապահովում
՝ Հաշվետվությունների հաստատում, ներառում Տարեկան ՄԳ հաշվետվությունում
ՄԳ տարրերը
Քաղաքականությունների ուսումնասիրում
ՄԶԾ ցուցանիշների և թիրախների վերանայում
Մասնակցային ՄԳ
Ազդեցության գնահատում

449. ՄԶԾ-ի մոնիտորինգի ցիկլը--Յուրաքանչյուր տարվա ընթացքում, սկսած հունվարից մոնիտորինգի տվյալները օգտագործվում են ՄԶԾ-ի տարեկան վերանայման և ՏԱՊ-ի մշակման նպատակով: Ընդհանուր առմամբ, ՄԳ ցիկլը ենթադրում է.

1) միջանկյալ (կիսամյակային) ընթացիկ հաշվետվություն, որը պատրաստվում է հուլիս-օգոստոս ամսիներին և հիմնվում է քաղաքականությունների ուսումնասիրության վրա,

2) տարեկան հաշվետվություն, որը պատրաստվում է տարվա վերջում և հաջորդ տարվա սկզբին: Այն կազմվում է ՄԳ համակարգի բոլոր տարրերի վերաբերյալ առկա հաշվետվությունների ամփոփ վերլուծության արդյունքում,

3) մոնիտորինգի սեմինար-խորհրդակցություն, որը անց է կացվում հաջորդ տարվա մարտ ամսին, որի ընթացքում բոլոր ներգրավված կողմերի հետ միասին քննության են առնվում մոնիտորինգի տարեկան ընթացիկ հաշվետվությունը և սահմանվում են հաջորդ տարվա հիմնական խնդիրները:

450. ՄԳ հաշվետվությունների բովանդակությունը՝ մոնիտորինգի միջանկյալ և տարեկան հաշվետվությունները պատրաստվում են մարզպետարանի ՄԳ խմբի կողմից:

451. Միջանկյալ հաշվետվությունը ներառում է տրամաբանական հենքի հիման վրա կատարած քաղաքականությունների վերլուծության արդյունքները: Այն մշակվում է ՏԱՊ-ի տարվա առաջին կիսամյակում իրականացված և իրականացվելիք միջոցառումների առաջընթացի գնահատման արդյունքում: Միջանկյալ հաշվետվությունը պատրաստվում է հուլիս-օգոստոս ամիսներին:

452. Տարեկան հաշվետվությունը ամփոփում է տարվա ընթացքում ՏԱՊ-ով նախատեսված բոլոր միջոցառումների վերաբերյալ ՄԶԾ ՄԳ համակարգի չորս տարրերի իրականացումից ստացված արդյունքների ամփոփ վերլուծությունները: Այն պատրաստվում է դեկտեմբեր-հունվար ամիսներին և ներառում է հետևյալ բաժինները.

1) ԿԶԾ-ի մոնիտորինգի պետական համակարգի ամփոփագիրը՝ շեշտը դնելով մարզին հատուկ հիմնախնդիրների վրա:

2) ՄԶԾ-երի շրջանակներում իրականացված միջոցառումները և դրանց գծով կատարված ծախսերը:

3) Տարվա ընթացքում իրականացված գնումները:

4) ՄԶԾ-ով սահմանված միջոցառումների իրականացման ընթացքի ամփոփումը, քաղաքականությունների ուսումասիրության արդյունքները՝ տարվա կտրվածքով:

5) Տարեկան առաջընթացը՝ ՄԶԾ-ի մոնիտորինգի ցուցանիշների նկատմամբ:

6) Մասնակցային մոնիտորինգի և գնահատման ամփոփ արդյունքները:

7) Ազդեցության գնահատման ամփոփ արդյունքները:

8) Հաջորդ տարվա հիմնախնիդրներ, այդ թվում՝ քաղաքականությունների ուրվագծում:

453. Տարեկան սեմինար-խորհրդակցություն՝ ՄԳ տարեկան հաշվետվությունը պատրաստելուց հետո կազմակերպվում է ՄԳ արդյունքները ամփոփող տարեկան սեմինար-խորհրդակցություն, որին մասնակցում են ինչպես մարզային խորհրդի, այնպես էլ քաղաքացիական հասարակության և դոնոր հանրության ներկայացուցիչները: Անհրաժեշտ է

հրավիրել նաև ԿԶԾ-ի մոնիտորինգի բաժնի անձնակազմին, որպեսզի քննարկվեն նաև ՄԶԾ ՄԳ արդյունքների և եզրակացությունների ԿԶԾ-ի գործընթացին համահունչության հարցերը: Այդ սեմինար-խորհրդակցության նպատակներն են.

1) ՏԱՊ-ի իրագործման առաջընթացի ներկայացում
2) ՄԶԾ ցուցանիշների նկատմամբ առաջընթացի վերլուծություն
3)ՄՄԳ արդյունքների եզրահանգումների ու հանձնարարականների ներկայացում
4) Ոլորտային ազդեցության գնահատման արդյունքների, եզրահանգումների ու հանձնարարականների ներկայացում
5) Հաջորդ տարվա խնդիրների իրագործման հետ կապված հարցերի քննարկում:

454. Տարեկան սեմինար-խորհրդակցությունը կարևոր իրադարձություն է, քանի որ այն կազմակերպվում է մոնիտորինգային գործունեության վերաբերյալ եզրակացությունների քննարկման և տարածման համար:

455. Սեմինար-խորհրդակցությունը պետք է դիտվի նաև որպես կարևոր մի նախաձեռնություն քաղաքացիական հասարակությունը ՄԶԾ-ի մոնիտորինգի մեջ ընդգրկելու, ինչպես նաև ՄԶԾ-ի հաջողությունները ցուցադրելու և նոր դոնորներ ներգրավելու համար:

456. **Ինստիտուցիոնալ դրույթներ-**ՄԶԾ-ով նախատեսվող միջոցառումների արդյունավետությունը, ինչպես նաև ՄԶԾ-ի ռազմավարական նպատակների կատարման առաջընթացը որոշելու համար անհրաժեշտ է մարզպետարանի կառուցվածքում ուժեղացնել մոնիտորինգի և գնահատման գործառույթը: Այդ ուղղությամբ առաջին քայլերն արդեն արված են: Մարզպետարանի կառուցվածքում ստեղծված է ՄԳ խումբ, որը բաղկացած է մարզպետարանի տարբեր վարչությունների և բաժինների մասնագետներից: Բացի այդ, նրանց պաշտոնի անձնագրերում արդեն իսկ ՄԳ գործառույթը ամրագրված է որպես անմիջապես պաշտոնից բխող պարտականություն:

457.Չափազանց կարևոր է այս խմբի կարողությունների շարունակական կատարելագործումը: Այդ ուղղությամբ մարզպետարանը պետք է պարբերաբար դասընթացներ կազմակերպի խմբի մասնագետների համար՝ ՄԳ նոր մեթոդաբանություններին և արդյունքների վերլուծության, ներկայացման մեթոդներին ծանոթացնելու նպատակով:

458. Մոնիտորինգի խմբի աշխատանքներին պարբերաբար պետք է հետևի Մարզային խորհրդի կազմում ընդգրկված մարզային զարգացման հանձնաժողովը: Նրա դերը վճռորոշ է մոնիտորինգի համակարգի կայացման և արդյունավետ գործառնության ապահովման գործում: ՏԶՀ-ն ներառում է շահագրգիռ կողմերի լայն շրջանակ (քաղաքացիական հասարակություն, ՀԿ-ներ) և նրանց կողմից վերահսկողությունը կապահովի մոնիտորինգային գործունեության հաշվետվականությունը և թափանցիկությունը:

459. Բացի այդ չափազանց կարևոր է ՄԶԾ ՄԳ համակարգի ինստիտուցիոնալացմանն ուղղված քայլերի իրականացումը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է հատկապես մասնակցային ՄԳ-ին և ազդեցության գնահատմանը: Լինելով արտաքին և անկախ ՄԳ տեսակներ՝ ՄԳ համակարգի այս տարրերի կանոնավոր իրականացումը նախ և առաջ

պայմանավորված է մարզային իշխանությունների կողմից դրանց կարևորության ճիշտ ընկալումից և համապատասխան կամք դրսևորելուց: Հաշվի առնելով այն, որ ՄԳ այդ տեսակների իրականացման համար անհրաժեշտ են որոշակի ֆինանսական ռեսուրսներ, ապա մարզային իշխանությունները պետք է հետևողական լինեն այդ ռեսուրսները ժամանակին հայթհայթելու, գրագետ և անկողմնակալ ուսումնասիրություններ կատարող սուբյեկտների ճիշտ ընտրությունը ապահովելու և նրանցից որակյալ վերլուծություններ ու իրատեսական հանձնարարականներ պահանջելու հարցերում:

460. Այս համակարգի կենսունակության և հետագա զարգացման երաշխիքը կլինի ՄԳ-ի որպես մարզային զարգացման ինստիտուցիոնալ համակարգի անբաժանելի մասի ամրագրումը ՄԶԾ մոդելի բաղադրիչների կազմում: Բոլոր մարզերում այս համակարգի արմատավորումը հնարավորություն կտա առավել արդյունավետ իրականացնել ԿԶԾ-ի ՄԳ համակարգը մարզային մակարդակում, բարձրացնել տարբեր դոնորների կողմից այս բնագավառում իրականացվող միջոցառումների հասցեականությունը, ինչպես նաև հստակեցնել ու միասնականացնել միջմարզային համեմատությունների անցկացման աշխատանքները:

ՄԶԾ ՄԳ համակարգը



461. 2012-2015 թթ. ՄԳ աշխատանքային պլան և հետագա քայլեր -Ստորև ներկայացվում է ՄԶԾ ՄԳ համակարգով նախատեսված աշխատանքները՝ տարեկան կտրվածքով:

1) ՏԱՊ-ի քաղաքականությունների ուսումնասիրում
2) ՄԶԾ-ի ցուցանիշների և ՏԱՊ-ի ոլորտային թիրախների վերանայում
ա. Ցուցանիշների ցանկի և դրանց սահմանումների վերջնական ձևակերպում
բ. Ցուցանիշների համար ելակետային տվյալների հավաքագրում
3) Մասնակցային մոնիտորինգի և գնահատման իրականացում
4) Ազդեցության գնահատման անցկացում
5) Մոնիտորինգի միջակյալ և տարեկան հաշվետվությունների պատրաստում
6) Տարեկան սեմինար-խորհրդակցության կազմակերպում:

462. Բացի վերոհիշյալ աշխատանքները՝ ՄԳ համակարգի կենսունակության ապահովման նպատակով մարզպետարանը համապատասխան քայլեր պետք է ձեռնարկի նաև հետևյալ ուղղություններով.

1) Մարզպետարանի մասնագետների կարողությունների հզորացմանն ուղղված դասընթացների պարբերաբար կազմակերպում:

2) ՄԳ բոլոր տարրերի լիակատար ու շարունակական իրականացման համար ֆինանսական ռեսուրսների հայթայթում, հատկապես ՄԳ արտաքին տարրերի համար:

3) Մասնակցային ՄԳ և Ազդեցության գնահատման բաղադրիչների իրականացման համար Տեխնիկական առաջադրանքների մշակում, այդ թվում՝ իրականացնողների ընտրության հստակ չափանիշների ձևավորում և մրցույթային կարգի սահմանում:

4) ՄԳ հաշվետվությունների հրապարակայնության ապահովման մեխանիզմների մշակում, իրագործում և դրանց կենսունակությանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացում, մասնավորապես՝ այդ նպատակով անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորում մարզպետարանի ընդհանուր ծախսերում:

5) ՀՀ նախարարությունների և այլ կառավարման մարմինների, ինչպես նաև դոնոր կազմակերպությունների հետ համագործակցության ակտիվացում՝ ՄԳ համակարգի հետագա զարգացման համար անհրաժեշտ ֆինանսական և տեխնիկական աջակցությունն ապահովելու նպատակով:

6) ՄԳ լիարժեք իրականացման նպատակով՝ մարզում իրականացվող միջոցառումների, դրանց ծավալների և ֆինանսական ներդրումների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ստացման համար, ճյուղային նախարարությունների և դոնոր հանրության հետ կապերի ամրապնդում:

7) Տեղեկատվական հոսքերի կայուն և թափանցիկ մեխանիզմների մշակում և իրագործում, տվյալների բազայի պարբերաբար թարմացում:

ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման ընթացակարգը

Մոնիտորինգի և գնահատման բաղադրիչը	Իրականացման նպատակը	Իրականացման ընթացակարգը	Արդյունքը	Իրականացնող կողմը
Քաղաքականության վերանայում	Տարին երկու անգամ՝ ՏԱՊ-ի նկատմամբ առաջընթացը չափելու նպատակով:	▪ ՝ ՏԱՊ-ի տրամաբանական հենքով նախատեսված միջոցառումների, դրանց արդյունքների և թիրախների վերլուծություն: ▪ ՝ ՏԱՊ-ի իրականացման ընթացքում ծագած հիմնախնդիրների բացահայտում: ▪ ՝ Հաշվետու հաջորդ ժամանակաշրջանում իրականացվելիք միջոցառումների արդյունավետության բարձրացմանն ուղղված հանձնարարականների մշակում: ▪ ՝ Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում:	Կիսամյակային հաշվետվություն	Մարզպետարանի ՄԳ խումբ

		▪ ՝ Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում:		
ՄԶԾ ցուցանիշների և թիրախների վերլուծություն	ՄԶԾ-ի ցուցանիշների վերլուծություն և ցուցակի թարմացում:	▪ ՝ ՄԶԾ և մարզային մակարդակում ԿԶԾ առաջընթացը գնահատող ելակետային ցուցանիշների հավաքագրում: ▪ ՝ Վերոհիշյալ ցուցանիշների թարմացում: ▪ ՝ Ցուցանիշների համեմատական վերլուծություն՝ ՄԶԾ ազդեցությունը գնահատելու նպատակով: ▪ ՝ Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում ▪ ՝ Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում:	Մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվություն	Մարզպետարանի ՄԳ խումբ
Մասնակցային մոնիտորինգ և գնահատում	ՄԶԾ-ի առաջընթացի վերաբերյալ	▪ ՝ ՄԶԾ համապատասխան ոլորտի/ների ընտրություն	Մասնակցային մոնիտորինգի և գնահատման	Քաղաքացիական հասարակության խմբեր, տեղական ՀԿ-

	հանրության կարծիքների և արձագանքների վերլուծություն	▪ ՝ ՄՄԳ մեթոդաբանության ընտրություն ▪ ՝ Հետազոտական գործիքների մշակում, մեթոդների և ընթացակարգերի հստակեցում ▪ ՝ Հետազոտական խմբի ձևավորում ▪ ՝ Դաշտային աշխատանքների իրականացում ▪ ՝ Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում ▪ ՝ Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում:	հաշվետվություն (այս հաշվետվության Գործադիր Ամփոփումը ներառվում է ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվության մեջ)	ներ
Ազդեցության գնահատում	ՄԶԾ որևէ ոլորտում մասնագիտական հետազոտություն	▪ ՝ ՄԶԾ համապատասխան ոլորտի/ների ընտրություն ▪ ՝ ՄՄԳ մեթոդաբանության	Ազդեցության գնահատման հաշվետվություն (այս հաշվետվության	Անկախ փորձագետներ

		ընտրություն ▪ ՝ Հետազոտական գործիքների մշակում, մեթոդների և ընթացակարգերի հստակեցում ▪ ՝ Հետազոտական խմբի ձևավորում ▪ ՝Դաշտային աշխատանքների իրականացում ▪ ՝ Արդյունքների վերլուծություն և հաշվետվության պատրաստում ▪ ՝ Շահագրգիռ բոլոր կողմերի իրազեկում	Գործադիր Ամփոփումը ներառվում է ՄԶԾ մոնիտորինգի և գնահատման տարեկան հաշվետվության մեջ)	

11. ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

463. Տավուշի մարզի զարգացման ծրագրի պլանավորված ֆինանսավորումը 2012-2015թ.թ. կազմել է *66682.8***մլրդ դրամ**, որը ներկայացվել է ստորև բերված Աղյուսակում,

464. ՄԶԾ հիմնական գերակայությունները պահպանվել են նաև 2012-2015թթ-ին համաձայն սույն վերանայված ՄԶԾ-ի: Դրա մասին է վկայում նաև ծրագրավորվող ՄԶԾ ֆինանսավորման ոլորտային կառուցվածքը, որը ներկայացված է Աղյուսակ 11.1-ում ՄԶԾ ծրագրավորվող ֆինանսավորումը 2012-2015թ.թ.(մլն. դրամ)

Աղյուսակ 11.1

/մլն.դրամ/

ՄԶԾ ոլորտ	Պլանավորվող ֆինանսավորումը, 2012-2015թթ.				
	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	Ընդամենը 2012-2015թթ..
ՓՄՁ աջակցություն	17.5	18.5	26.0	28.5	**90.5**
Գյուղատնտեսություն	5644.2	6914.2	5186.2	1727.2	**19471.8**
բնապահպանություն	20.0	25.0	30.0	40.0	**115.0**
կրթություն	**3247.622.4**	**3800.702.9**	**3937.460.5**	**3891.671.1**	**14877.46**
առողջապահություն	2.0	2.5	2.8	3.1	**10.4**
Սոցիալական պաշտպանություն	15.0	20.0	15.0	20.0	**70.0**
Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում	15.0	15.0	15.0	15.0	**60.0**
Ենթակառուցվածքներ, այդ թվում	**7444.658**	**4142,2**	**3961,8**	**2847,9**	**18396.558**
Ճանապարհաշինություն՝այդ թվում	*4534.658*	*2392,2*	*1866,8*	*1811,9*	***10605.558***
Մարզային նշանակության ավտոճանապարհների և նրանց վրա գտնվող տրանսպորտային օբյեկտների	*4461.8*	*2200.0*	*1665.0*	*1600.0*	***9926.8***

հիմնանորոգում					
Մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանում	*72,858*	*192,200*	*201,800*	*211,900*	***678,758***
ջրամատակարարում	*2410.0*	*1250.0*	*1595.0*	*536.0*	***5791.0***
գազամատակարարում	*400.0*	*400.0*	*400.0*	*400.0*	***1600.0***
Բազմաբնակարան շենքերի պահպանում	*100.0*	*100.0*	*100.0*	*100.0*	***400.0***
քաղաքաշինություն	195.0	4450.6	4133.25	4812.3	**13591.15**
Ընդամենը	16600.98	19388.7	17307.51	13385.67	**66682.86**

465. Ճանապարհների վերականգնմանն ու վերանորոգմանն ուղղվող ֆինանսական միջոցների պահանջը մեծ է: Հաշվի է առվել հաշվետու ժամանակահատվածում չվերանորոգված ճանապարհների լրացուցիչ մաշվածքը, նոր ճանապարահատվածների նորոգման ծրագրերը, ինչպես նաև գարնանային հեղեղումներից տուժած ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների վերականգնման անհրաժեշտությունը:

466. 2012-2015թ.թ. անհրաժեշտ է ամբողջովին ավարտել համապատասխան կարիքներ ունեցող դպրոցների կապիտալ վերանորոգումը: Այս ուղղությամբ նախատեսվող ծրագրերը ավելացնում են 2012-2015թթ. ՄԶԾ իրագործման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ծավալը:

467. Ընդհանուր առմամբ բազմակողմանի և երկկողմանի դոնորների հետ արդյունավետ և հետևողական աշխատանքը ՄԶԾ ֆինանսական ճեղքվածքի նվազեցման ամենահիրատեսական և գերակա ուղղությունն է: Այս առումով, Տավուշի մարզպետարանը համայնքների և հասարակական կազմակերպությունների աջակցությամբ ավելի ակտիվորեն է շարունակում դոնորների հետ համագործակցությունը հետևյալ հիմնական ուղղություններով.՝

1)2012-2015թ.թ. մարզային զարգացման ծրագիրը կներկայացվի դոնոր հանրությանը այդ նպատակով հատուկ կազմակերպված դոնոր ֆորումի ընթացքում;

2) Պլանավորվող ժամանակահատվածում պարբերաբար կիրականացվեն դոնորների այցելություններ Տավուշի մարզ (**դոնորների օրեր մարզում**) ավելի անմիջականորեն ծանոթանալու ՄԶԾ իրագործման ընթացքին;

3) Կկազմակերպվեն երկկողմանի հանդիպումներ առանձին ծրագրերի իրագործման առումով համապատասխան դոնորների հետ:

4) ՄԶԾ իրականացման հաշվետվությունները, մոնիտորինգի և գնահատման արդյունքները պարբերաբար կներկայացվեն բոլոր շահագրգիռ դոնորներին:

5) Առանձնահատուկ ուշադրություն կդարձվի հայկական սփյուռքի հետ համագործակցությանը (Հայաստան Համահայկական Հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրեր և այլն), ինչպես նաև արտերկրում բնակվող և աշխատող մարզի բնակչության հետ տարվող աշխատանքներին:

6) Ընդհանուր առմամբ ՄԶԾ ֆինանսական ներդրումները կուղղվեն.

ա. Դոնոր հանրության (մասնավորապես Եվրոմիության) կողմից ստացվող ֆինանսական միջոցները, մարզային իշխանությունների հետ ավելի ակտիվ համագործակցության պայմաններում:

բ. Համայնքների, մասնավորապես զարգացող համայնքային միավորումների կողմից լրացուցիչ ներդրված միջոցները:

7) Տարբեր աղբյուրներից ստացվող ֆինանսական միջոցների և համապատասխան ծրագրերի առավել ամբողջական հաշվառումը և ընդգրկումը ՄԶԾ-ում հանդիսանում է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման համալիր ծրագրերի մշակման կարևորագույն գերակայություններից մեկը: